ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ.ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՆ N 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Պրոբլեմային ուսուցման կազմակերպումը աշակերտների վերլուծական կարողությունների զարգացման համար

Մասնակից՝ Լուսինե Աղազարյան

Դպրոց՝ Վաղարշապատի N 4 հիմն. դպրոց

Վերապատրաստող՝ Կարինե Ավետիսյան

Վաղարշապատ 2021թ.

Բովանդակություն

1. Նախաբան էջ 1-2
2. Հետազոտական համատեքստ էջ 2-3
3. Գործնական համատեքստ էջ 4-5
4. Հետազոտական ընթացք էջ 5-9
5. Տվյալների մշակում և վերլուծություն էջ 10
6. Ամփոփում էջ 11
7. Գրականություն էջ 12

8.հավելվածներ

Պրոբլեմային ուսուցման կազմակերպումը աշակերտների վերլուծական կարողությունների զարգացման համար

նախաբան

Պրոբլեմային է կոչվում այն ուսուցումը, որի ընթացքում աշակերտները, ուսուցչի ղեկավարությամբ, իրենց ունեցած գիտելիքների հիման վրա լուծում են պրոբլեմային խնդիրներ, հաղթահարում են պրոբլեմային իրավիճակներ, որոնում գործողության նոր եղանակներ, կարգավորում և կողմնորոշում իրենց գործունեությունը, գործադրում պրոբլեմային շարադրանքի, մասնակի որոնողական, հետազոտական մեթոդներ, ինքնուրույն ձևակերպում իրենց մտահանգումներն ու եզրահանգումները, հասնում վերջնական նպատակի:

Պրոբլեմային ուսուցման դասավանդման շրջանակներում ուսուցչի դերը իրական խնդիրներ առաջադրելն է: Այս մեթոդը հայտնի է նաև այլ անվանումներով, օրինակ՝ նախագծի վրա հիմնված դասավանդում: Ուսուցման այս ձևը ունի մի շարք առավելություններ՝

1. Զարգանում է սովորողների տրամաբանական մտածողությունը:
2. Ուսումնական նյութը դարձնում էապացուցելի:
3. Ուսումնական գործընթացը դարձնում է հուզական:
4. Ընձեռնում է միջառարկայական կապերից օգտվելու հնարավորություն:
5. Ձեռք բերված գիտելիքները երկար ժամանակ մտապահվում են:
6. Մեծանում է աշակերտների ինքնագործունեություն կատարելու շրջանակը:

Պրոբլեմային դասավանդման մտավոր ակունքները սկիզբ են առել ամերիկացի փիլիսոփա մանկավարժ Ջոն Դյուիի աշխատություններից, որտեղ նա նշում էր, որ դպրոցները պետք է լինեն կյանքի իրական խնդիրների լուծման լաբորատորիաներ: Շվեյցարացի հոգեբան մանկավարժ Ժան Պիաժեն գտնում էր, որ օրինակելի մանկավարժությունը երեխային պետք է ներգրավի այնպիսի իրավիճակում, որտեղ նա բառիս ամենալայն իմաստով ինքնուրույն փորձեր, կանխագծումներ ու եզրահանգումներ կատարի, բացահայտի այլընտրանքային լուծման տարբերակներ:

Պատմություն առարկայի շրջանակներում պրոբլեմային ուսուցման ներդնումը

զարգացնում է աշակերտների վերլուծական կարողությունները: Ուսուցման հատուկ գծերն են խթանող հարցը կամ խնդիրը, օրինակ՝ <<Հայկական հարցը 1912-1914թթ>> թեմայում ընդհանրացնել մեծ տերությունների վերաբերմունքը Հայկական հարցի լուծման նկատմամբ և որոնողական, հետազոտական աշխատանքների, քննարկման հարցերի միջոցով գտնել լուծումներ:

Հետազոտական համատեքստ

Որպես հետազոտման խնդրահարույց թեմա ընտրվել է VIII դասարանի մի շարք աշակերտների առաջադիմության հետ կապված հարցերը: Աշակերտներից մի քանիսը՝ Վրեժը, Վարդանուշը, Միլենան պատմում են դասը ամբողջությամբ, շատ լավ հիշում են տարեթվերը, պատմական կերպարներին, սակայն չեն կարողանում վերլուծել կարևոր իրադարձությունների պատճառները, հետևանքները: Այս իրավիճակը ցույց է տալիս, որ այն հետազոտման կարիք ունի և եթե ցուցաբերվի ճիշտ և նպատակային մոտեցում, ապա հնարավոր կլինի կարճ ժամանակահատվածում հասնել էական առաջընթացի: Երեխաներից յուրաքանչյուրի խնդիրը անհատական է, ուստի նպատակահարմար է, որ դիտարկվեն որպես առանձին դեպքեր:

Պրոբլեմային ուսուցումը ամենահարմար ուսուցման ձևն էր, որ կարճ ժամանակահատվածում ցույց կտար որոշակի արդյունքներ: Միանշանակ է, որ առավելագույն հաջողությունների կարճ ժամանակահատվածում հնարավոր չէ հասնել, սակայն ցանկացած դրական փոփոխություն կվկայի, որ ճիշտ ուղու վրա ենք, իսկ եթե փոփոխություններ չլինեն հարկ կլինի փնտրել այլ ուղիներ:

Ես կարծում եմ, որ վերը նշված մեթոդը ամեն դեպքում կիրականացնի փոփոխություններ՝ հետաքրքիր դարձնելով դասը:

Կփորձեմ բնութագրել աշակերտներիս, նրանց դասի թեման ներկայացնելու ուրույն ոճը:

1. Վարդանուշը անգիր է անում դասը, սակայն հարցեր տալու դեպքում պարզ է դառնում, որ բացակայում են թեմայի շուրջ վերլուծական կարողությունները: Շատ պարտաճանաչ է, կատարում է ցանկացած հանձնարարություն, մեջբերումներ է անում սկզբնաղբյուրներից գեղարվեստական գրականությունից, բայց այստեղ և ամեն ինչ հենված է մեխանիկական անգիրի վրա: Ստանում է 7 միավոր, որը

համապատասխանում է թեմատիկ և գործնական աշխատանքների միավորներին: Չգտում է բարձրացնել գնահատականը, սակայն դա առայժմ չի հաջողվում:

2. Վրեժը շատ խելացի հետաքրքրասեր աշակերտ է, շատ գեղեցիկ շարադրում է դասը, կարողանում է մեջբերումներ անել, հիշում է նախորդ տարիներին ուսումնասիրած թեմաները, պատմական կերպարներին: Դժվարանում է վերլուծական մտածողություն դրսևորելիս, օրինակ՝ ցիտի Պապ Թագավոր գործունեության կարևոր դրվագները (Բարեփոխումներ, Վիրավի ճակատամարտի հաղթանակը), սակայն չի կարողանում բացատրել, թե ինչո±ւ էին անհրաժեշտ բարեփոխումները:Վրեժի գնահատականը ևս 7 է, սակայն հարկ է նշել, որ գրավոր աշխատանքները գրում է շատ հաջող:

3. Միլենան ուշիմ, խելացի, պարտաճանաչ աշակերտուհի է, սակայն ունի որոշակի անվստահություն իր ուժերի հանդեպ: Դասը ներկայացնելիս հանդիպում է դժվարությունների, քանի որ փաստերը չի կարողանում ներկայացնել ըստ տրամաբանական շղթայի, շատ հաճախ չի կարողանում վերլուծել կարևոր փաստերը, տալ տրամաբանական եզրահանգումներ, օրինակ՝ Իսրայել Օրու և Հովսեփ Էմինի գործունեությունը նկարագրելիս չի գտնում ընդհանուր գծեր Աբգար Թոխատեցու գործունեության հետ, չնայած հնչեցվում է հարց, թե ի±նչ գործիչների գիտեք ուշ միջնադարում: Գնահատվում է 8 միավոր, քանի որ միշտ բերում է լրացուցիչ տեղեկություններ, կարողանում է դասը ներկայացնել գծապատկերների աղյուսակների միջոցով:

VIII դասարանում կան բավականին ուշիմ և պատրաստակամ աշակերտներ, կան նաև ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներ: Այս հետազոտությանը կմասնակցեն բոլոր երեխաները, սակայն թիրախային խումբ կվերցվեն երեքը:

Պրոբլեմային դասերի համար ձևակերպվել են նպատակներ, որոնցից առաջնայինը աշակերտին օգնելն է զարգացնել իրենց մտավ և հետազոտական հմտությունները, աշակերտին դարձնել ինքնուրույն սովորողներ: Դրա համար ուսուցչի կողմից ընտրվել է հինգ չափանիշ.

1. Պետք է իրական լինի:Սա նշանակում է, որ խնդիրը պետք է խարսխված լինի ոչ թե գիտության տվյալ ճյուղի սկզբունքներին, այլ աշակերտի իրական կենսափորձին:

2. Խնդիրը պետք է որոշ չափով ոչ հստակ ձևակերպում ունենա, որպեսզի իր խորհրդավորությամբ ու խճճվածությամբ գրավի աշակերտին:

3. Խնդիրը պետք է իմաստալից լինի և համապատասխանի աշակերտների մտավոր զարգացման մակարդակին:

4. Խնդիրը պետք է բավարար չափով ընդգրկուն լինի, որպեսզի ուսուցիչը հնարավորություն ունենա իրագործել իր ուսուցողական նպատակը:

5. Ցանկալի է, որ օրինակելի խնդրի լուծումը խմբային աշխատանք ներառի: Շատ կարևոր է, որ ուսուցիչը հաշվի առնի հետևյալ նկատառումը, թե իրավիճակը հետաքրքիր կլինի աշակերտների տվյալ խմբի համար:

Ժամանակակից դիդակտիկայում գործադրվում են պրոբլեմային ուսուցման երեք մակարդակներ՝

Առաջին – ուսուցիչն առաջադրում է պրոբլեմը, ձևակերպում այն և աշակերտներին ուղղում դեպի լուծման ուղիների ինքնուրույն որոնումները:

Երկրորդ – աշակերտի մեջ դաստիարակվում է պրոբլեմը ինքնուրույնաբար ձևակերպելու և լուծելու ընդունակություն, իսկ ուսուցիչը միայն նշում է պրոբլեմը:

Երրորդ – ուսուցիչը նույնիսկ չի նշում պրոբլեմը, և աշակերտը ինքնուրույնաբար գտնում է և՛ խնդիրը, և՛ լուծումը:

Հետազոտության համար ընտրվել է ուսուցման առաջին մակարդակը, քանի որ դասի այս ձևը դեռ քիչ ծանոթ է աշակերտներին և կարիք ունի հետագա մշակման:

Պրոբլեմային ուսուցման գործընթացը հետազոտելու համար, ինչպես նշեցինք, ընտրվել է VIII դասարանը, որտեղ աշակերտները ուսումնասիրում են <<Հայաստանը XIX դարի առաջին կեսին>> թեման հետևյալ դասերով՝

I Արևելյան Հայաստանը XIX դարասկզբին

II Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման նոր փուլը:

III Թուրքմենչայի պայմանագիրը: Պարսկահայերի վերաբնակեցումը:

IV Ռուսական վարչաձևի հաստատումը Արևելյան Հայաստանում:

Առաջին և երկրորդ դասերի համար ընտրվել է սովորական դասը, որը ձևակերպվում է որպես նոր նյութի ուսումնասիրություն, իսկ երրորդ և չորրորդ դասերի համար ընտրվել է խմբային աշխատանքը: Աշակերտներին նախապես հանձնարարվել է ծանոթանալ Խաչատուր Աբովյանի <<Վերք Հայաստանի>> պատմավեպին՝ շեշտը դնելով Երևանի բերդի գրավման վրա, նաև տեղեկություններ հավաքել Վասիլ Բեհբութովի, Վալերիան

Մադաթովի, Իվան Պասկևիչի մասին: Երեխաները պիտի փաստեր իմանային նաև Ալեքսանդր Գրիբոյեդովի կենսագրությունից:

Աշխատանքի նկարագրություն համար նպատակահարմար է գտնվել ներկայացնել դասերը (պլանները հղումներում), դրանց ընթացքը, պրոբլեմային հարցերը: Մինչև դասը սկսելը ուսուցիչը ձևակերպում է դասի առանցքային, պրոբլեմային հարցեր: Կարևոր է, որ հարցերը բարդ չլինեն, որպեսզի աշակերտները կարողանան դրանք լուծել և խոչընդոտներից չհուսահատվեն:

Առաջին դասի թեման էր <<Արևելյան Հայաստանը XIX դարասկզբին: 1804-1813թթ. ռուս-պարսկական պատերազմը>>: Որպես դասի տիպ ընտրվել է նոր նյութի ուսումնասիրությունը:Ուսուցիչը նախապես ներկայացրել է դասի պրոբլեմային, լուծում պահանջող հարցերը՝

1. Ո±րն էր պատերազմի խորքային պատճառը (դիտարկել և' ռուսական, և' պարսկական կողմի մոտեցումը):
2. Մանրամասն հետազոտել Արևելյան Հայաստանի վարչատարածքային բաժանման ձևերը և պարսիկների վարած քաղաքականությունը հայ ժողովրդի նկատմամբ:Րաֆֆու վեպերը <<Սալբի>>, <<Հարեմ>>:
3. Ո±րն էր հայ ժողովրդի դիրքորոշումը և ինչո±ւ:

Առաջին դասը սկսվել է խթանման փուլով: Թիրախային խմբի աշակերտներից Միլենան բավականին աշխատանք է կատարել և սկսեց թվականներով որոնք միմյանց հետ կապված էին՝ 387, 591, 1555, 1639, 1783: Աշակերտուհին բացատրեց, որ սրանք Հայաստանի տարբեր տարիների բաժանման և օտարների տիրապետության տակ հայտնվելու թվերն էին, իսկ պատերազմի պատճառներից ամենագլխավորը այն փաստն էր, որ և' Պարսկաստանը և' Ռուսաստանը նպատակ ունեին տիրանալու Հարավային Կովկասին:Հայ ժողովուրդը հայտնվել էր շատ դժվար կացության մեջ, քանի որ կորցրել էր իր անկախությունը: Վրեժը ուշադրություն դարձրեց 1783 թվականին, որը թվերի շղթայի տրամաբանության մեջ չէր, սակայն անմիջականորեն առնչվում էր ռուսների Հարավային Կովկասը նվաճելու փաստի հետ: Աշակերտը վերհիշեց, որ սա Գեորգիևսկի դաշնագրի թիվն է, երբ Արևելյան Վրաստանը մտավ Ռուսական կայսրության հովանու տակ և փաստացի սկսվեց Հարավային Կովկասի նվաճումը ռուսների կողմից: Վարդանուշը տեղեկություններ էր բերել Արևելյան Հայաստանի վարչատարածքային

բաժանման, հայերի վիճակի մասին՝ ծանոթանալով և որպես սկզբնաղբյուր վերցնելով Րաֆֆու վեպերը: Աշակերտուհին որպես պրոբլեմային հարց վերցրել էր հայերի ծանր վիճակի խորքային պատճառները՝ շեշտը դնելով այն հանգամանքի վրա, որ Արևելյան Հայաստանը հայաթափվում էր, և բնակեցվում էր մահմեդականներով:

4. Աշակերտները որպես քննարկման հարց վերցրել էին, թե ռ±րն է հայ ժողովրդի դիրքորոշումը 1804-1813թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ և ինչպե±ս կվարվեին իրենք:Վարդանուշը և Միլենան նշեցին, որ սա հայ ժողովրդի համար մեծագույն պրոբլեմ էր:Ցանկացած կողմին օժանդակելու դեպքում ստանալու էին մյուս կողմի անբարյացակամ վերաբերմունքը: Վրեժը նշեց, որ այս պրոբլեմը լուծելիս հաշվի կառներ այն փաստը, որ ռուս ժողովուրդը քրիստոնյա է և նրանից ակնկալվում է ավելի մարդասեր վերաբերմունք: Որպես պրոբլեմային հարց վերցվել էր նաև Գյուլիստանի պայմանագիրը, որը հանգուցալուծեց 1804-1813թթ. ռուս-պարսկական պատերազմը: Վարդանուշը նշեց, որ շատ կարևոր էր Արևելյան Հայաստանի մի զգալի մասի անցումը Ռուսաստանի կայսրությանը: Աշակերտները կազմել էին նաև պատերազմի վերաբերյալ ժամանակագրական աղյուսակ:

Ամփոփելով առաջին հետազոտական դասը կարելի է նշել, որ այն հաջողված էր, թիրախային խմբի աշակերտները կարողացան որոշ չափով վերլուծել խորքային, պրոբլեմատիկ խնդիրները և դրանց հանգուցալուծումը:Ուսուցիչը իր մոտ նշումներ արեց, վեր հանեց դասի դրական և բացասական կողմերը:

Դրական – որոշակի չափով վերլուծվեցին պրոբլեմային հարցերը, երեխաները աշխատել էին նոր նյութի հետ, ունեին մեջբերումներ գեղարվեստական գրականությունից, կարողացան մեկնաբանել ռուս-պարսկական հարաբերությունները և հայ ժողովրդի դիրքորոշումը:

Բացասական – մի շարք փաստերի շարադրանքը թերի էր, կարիք ուներ հղման, շատ տեղերում պրոբլեմային հարցերը մնացին թերի լուծումներով:

Երկրորդ դասի թեման հետևյալն էր <<Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման նոր փուլը>>: Դասի տիպ նոր նյութի հաղորդումն էր՝պրոբլեմային հարցերի քննարկումով:Սկզբում երեխաները վերհիշում են նախորդ դասի առանցքային խնդիրները: Երեխաները ծանոթացել էին նոր թեմային, և դասը սկսվում էր Խաչատուր Աբովյանի <<Վերք Հայստանի>> վեպի մի հատվածով՝ <<Քանի որ մեր բերանումը շունչ

կա, պետք է գիշեր-ցերեկ մեր քաշած օրերը մտքըններս բերենք ու ռսի երեսը տեսնելիս՝ երեսներիս խաչ հանենք, Աստծուն փառք տանք, որ մեր աղոթքը լսեց, մեզ ռուս թագավորի հզոր, աստվածահաստատ ձեռի տակը բերեց>>: Ուսուցիչը ձևակերպում է հարցը <<Ինչո±ւ էր Խ. Աբովյանը ոգևորված ռուսների հաղթանակով, ո±րն էր ռուսական զորքի գլխավոր նպատակը>>:

Խթանման փուլում աշակերտները ներկայացնում են պատերազմի պատճառները: Միլենան պատմում է դասի սկիզբը՝ շեշտը դնելով այն հանգամանքի վրա, որ Աբաս Միրզան առաջինը խախտեց Գյուլիստանի պայմանագիրը: Հարց – ինչո±ւ, որն էր պարսից արքունիքի խնդիրը, պատասխան – չէին հաշտվում Արևելյան Հայաստանի մի մասի կորստի հետ: Հարց – ի±նչ էին ուզում ռուսները, պատասխան – նվաճել Արևելյան Հայաստանը: Հարց – եթե պարսկական զորքը առաջինը չհարձակվեր կսկսվե±ր արդյոք պատերազմը, պատասխան - այո, քանի որ Ռուսական կայսրության նպատակը ողջ Հարավային Կովկասի նվաճումն էր: Իմաստի ընկալման փուլում Վրեժը և Վարդանուշը լրացրեցին T աձև աղյուսակը, որը ներառում էր պատերազմի պատճառները և հետևանքները: Աշակերտները մեկնաբանում են Խ. Աբովյանի խոսքերը՝ շեշտը դնելով հետևյալ խնդրի վրա. լուծվեցի±ն արդյոք հայ ժողովրդի խնդիրները:

Կշռադատման փուլում դարձյալ օգտագործվեց T աձև աղյուսակ, որի նպատակն էր պատասխանել հետևյալ հարցերին ի±նչ գիտեինք և ի±նչ իմացանք: Երկրորդ հարցը նաև դառնում է քննարկման հարց երեխաները խոսում են կամավորական ջոկատների մասին. Հարց- ճի±շտ էր արդյոք հայ ժողովրդի ռուսամետ քաղաքանությունը:Վրեժը գտնում էր, որ ոչ, քանի որ մեծացնում էր պարսիկների առանց այն էլ վատ տրամադրվածությունը հայերի նկատմամբ:Միլենան գտնում էր, որ հարկավոր էր բարձրացնել համընդհանուր ազատագրական շարժում: Վարդանուշը գտնում էր, որ ռուս զինվորներն են բերելու հայ ժողովրդի փրկության բանալին:Երեխաները նորից են կարդում Խ.Աբովյանի խոսքերը, փորձում են բացատրել, թե ինչ տվեց Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացումը, փրկվե±ց արդյոք հայ ժողովուրդը բնաջնջումից:

Ամփոփելով երկրորդ հետազոտական դասը՝ կարելի է եզրակացնել, որ աշակերտների մոտ կային որոշակի դրական տեղաշարժեր, որոնք ներկայացվում են աղյուսակի տեսքով

Վրեժ	6	7
Միլենա	7	8
Վարդանուշ	7	7

Չնայած պրոբլեմային հարցերը խորապես չմեկնաբանվեցին, սակայն ակնհայտ էր, որ կար որոշակի առաջընթաց:Շատ գոհացուցիչ էր, որ Վրեժը սկսել է հարցերին ավելի խորքային նայել, տալիս է ավելի հանգամանալից մեկնաբանություններ:Կարևոր է նաև այն փաստը, որ երեխաները սկսել են աշխատել սկզբնաղբյուրների հետ, իսկ սա հնարավորություն է տալիս ավելի արդյունավետ քննարկել և լուծել պրոբլեմային հարցերը:

Երրորդ և չորրորդ դասերը անցկացվելու են խմբային աշխատանքի ձևով:Այս երկու թեմաների մասին աշակերտներին նախապես տրվել էին ուղեկցող հարցեր, լրացուցիչ նյութեր, որոնք ավելի մատչելի կդարձնեն դասերի ուսումնասիրումը:Երեխաներին հանձնարարվել էր նաև տեղեկություններ գտնել Ալեքսանդր Գրիբոյեդովի մասին: Որպես պրոբլեմային հարց երրորդ դասի համար վերցնում է հետևյալը. <<Ինչո±ւ տեղի ունեցավ հայերի վերաբնակեցումը, ի±նչ կլիներ հայ ժողովրդի հետ, եթե մնային պարսիկների տիրապետության Խոյի, Սալմաստի, Մակուի գավառներում>>:Եթե խաներին տրվել էր նաև հետևյալ խնդիր հարցադրումը. <<Ինչպե±ս իրենք կձևակերպեին Թուրքմենչայի պայմանագիրը, ո±րն էր պայմանագրի հայանպաստ կետը>>: Դասի թեման էր <<Թուրքմենչայի պայմանագիրը: Պարսկահայերի վերաբնակեցումը>>: Դասարանը բաժանվում է 3 խմբի:Խմբերը նախորոք ծանոթացել էին և' դասին և' դասից բխող պրոբլեմներին:Խթանման փուլում երեխաները տեղեկություններ են տալիս ռու-պարսկական պատերազմների և հայ ժողովրդի մասնակցության մասին, դուրս է գրում 1826-1828թթ. ռուս-թուրքական պատերազմի կարևոր իրադարձությունները:II խումբը ներկայացնում է Թուրքմենչայի պայմանագրի դրույթները՝ տրամագրի միջոցով համեմատելով այն Գյուլիստանի պայմանագրի հետ: III խումբը քննարկման հարցի միջոցով ներկայացնում է հայերի վերաբնակեցման փաստը:

Խմաստի ընկալման փուլում ուսուցիչը խմբերին տալիս է պրոբլեմային հետևյալ հարցերը, որոնց շուրջ նախօրոք կատարվել էին հետազոտություններ:

I խումբ – Ինչպիսի±ն պիտի լիներ հայերի դիրքորոշումը 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ:II խումբ - Կարևո±ր էր արդյոք պայմանագիրը հայ ժողովրդի համար, ինչպե±ս կձևակերպեին պայմանագիրը իրենք, ո±ր կետերը կառանձնացնեին որպես հայանպաստ: Վրեժը կատարել էր պայմանագրի բոլոր կետերի ուսումնասիրությունը և առանձնացրել էր հետևյալ կետերը.

1. Երևանի և Նախիջևանի խանության անցումը Ռուսաստանին:
2. Պայմանագրի 13-րդ հոդվածը՝ Գերիների փոխանակումը:

Աշակերտը շատ հաջող մեկնաբանեց, թե ինչո±ւ է առանձնացրել հատկապես սրանք, նաև 13-րդ հոդվածը կապեց մերօրյա դեպքերի հետ:Ուսուցչի հարցի, թե հետևյալ պատմական կերպարներից, (Ի. Պասկևիչ, Ա. Գրիբոյեդով, Վ. Մաթադով) ով է իրեն ավելի դուր գալիս, Վրեժը նշեց Ա. Գրիբոյեդովին, որպես մարդ, ով փորձում էր պայմանագրի կետերը դարձնել հայանպաստ: Որպես իր կողմից խնդրի լուծում աշակերտը առաջարկեց ավելացնել կետ, ըստ որի բարելավելու էին հայ ժողովրդի վիճակը դրանում:

III խումբը, որի մեջ էին և՝ Վարդանուշը, և՝ Միլենան, ներկայացրեցին հայերի վերաբնակեցման փաստը: Այստեղ աշակերտուհիները այն կարծիքի էին, որ խնդիրը հայ ժողովրդի նկատմամբ պարսից իշխանությունների վատ վերաբերմունքն էր, որի ձևավորման գործում մեծ դեր էր խաղում հայերի ռուսամետ քաղաքականությունը: Հայ ժողովուրդը Ռուսաստանի տիրապետության տակ անցնելը դիտում էր որպես փրկություն:

Կշռադատման փուլում խմբերը ներկայացնում են իրենց քննարկումների արդյունքները՝ կատարելով քառաբաժան վարժությունը:

Ամփոփելով երրորդ հետազոտական դասը՝ կարելի է ասել, որ կար որոշակի առաջընթաց: Վերլուծելով առաջընթացի պատճառները՝ կարելի է ասել, որ լրացուցիչ տեղեկությունների հավաքագրումը, հարցերի շուրջ ավելի շատ տեղեկություններ ստանալը զարգացնում է վերլուծական կարողությունները:Մեծ դեր են խաղում նաև պրոբլեմային իրավիճակները և դրանց հանգուցալուծումները:Վրեժի մոտ կար շատ մեծ առաջընթաց սա կապված էր նաև նյութի հետաքրքիր լինելու հետ:Վարդանուշը երրորդ

դասին ակտիվ չէր, իսկ Միլենան բավականին հաջող ձևակերպեց պարսկահայերի ծանր վիճակը որպես պրոբլեմ և վերաբնակեցումը որպես լուծում՝ կարևորելով նաև Արևելյան Հայաստանի ժողովրդագրական պատկերի փոփոխությունը (ավելացավ հայերի թիվը):

Վերջին հետազոտական դասի թեման հետևյալն էր <<Ռուսական վարչաձևի հաստատումը Արևելյան Հայաստանում>>: Ինչպես արդեն նշել ենք, այս անգամ ևս կիրառվեց խմբային աշխատանքը:Դասարանը բաժանվեց երեք խմբի:Խմբերին նախօրոք հանձնարարվել էր դուրս գրել դասից պրոբլեմային հարցեր, որոնց լուծումները իրենք պետք է առաջարկեին I խումբ հայ ժողովրդի ցանկությունը ունենալ ինքնավարությունը և որպես խնդիր – ո±րն էր դրա խոչընդոտը: II խումբ ինչո±ւ Հայկական մարզը վերածվեց Երևանի նահանգի, III խումբ – ո±րն էր եկեղեցական կանոնադրության նպատակը: Խթանման փուլում կատարվեց մտագրոհ <<Ինքնավարություն>> հասկացության շուրջ:Իմաստի ընկալման փուլում I խումբը, որի մեջ ընդգրկված էր Վարդանուշը, սկսում է քննարկել առաջադրված հարցը: Ո±րն էր հայկական ինքնավարության կարևորությունը և ինչո±ւ Ռուսական կայսրությունը չգնաց հայերին ընդառաջ:Այստեղ աշակերտուհին հանդիպեց դժվարության, չկարողանալով պատասխանել հարցին: Վրեժը պատասխանեց, շեշտը դնելով այն փաստի վրա, որ ինքնավարությունը ուղիղ ճանապարհ էր դեպի անկախություն:II խումբը կազմել էր ժամանակագրական աղյուսակ՝ ներկայացնելով Արևելյան Հայաստանի վարչատարածքային բաժանման ընթացքը: Նրանք նաև որպես խնդիր վերցրին և մեկնաբանեցին, թե ինչո±ւ Հայկական մարզը վերածվեց Երևանի նահանգի: III խումբը քննարկման հարցի միջոցով ներկայացրեց, թե որն էր 1836 թվականի մարտի 11-ի եկեղեցական կանոնադրության նպատակը: T աձև աղյուսակի միջոցով ներկայացվեցին դրական և բացասական կողմերը:Այս դեպքում ևս կշռադատման փուլը ավարտվեց քառաբաժանով:

Չորրորդ դասը բավականին արդյունավետ էր, սակայն մտահոգիչ էր այն փաստը, որ Վարդանուշը դարձյալ հանդիպում է դժվարությունների պրոբլեմները վերլուծելիս և դրանց հանգուցալուծումները գտնելիս:Զգալի առաջընթաց կար Վրեժի և Միլենայի մոտ: Հարկ է նշել Վրեժի հուզական վերաբերմունքը ռուս-պարսկական պատերազմների նկատմամբ, որը արտահայտվեց Օշականի Ճակատամարտի մասին խոսելիս:

Տվյալերի մշակում և վերլուծություն

Ամփոփելով բոլոր չորս դասերը կարելի է դրանց արդյունքները ներկայացնել աղյուսակի տեսքով: Աղյուսակը կազմելիս հաշվի է առնվել այն փաստը, որ հետազոտման ժամանակահատվածը կարճ էր

	I դաս	II դաս	III դաս	IV դաս
Վրեժ	6	7	8	8
Միլենա	7	8	8	8
Վարդանուշ	7	7	7	7

Վարդանուշի հետ աշխատելիս և արդյունքներ ակնկալելիս հարկավոր է գտնել նոր, ավելի արդյունավետ մոտեցումներ:

Ինչպես արդեն նշեցինք մեթոդի էությունը պրոբլեմային ուսուցման ստեղծումն է, որը նպաստում է աշակերտների մտածողության մակարդակի բարձրացմանը: Այն ընձեռում է ստեղծված իրավիճակը գիտակցելու, առաջադրված խնդրում եղած հակասությունները հայտնաբերելու, անհայտը որոնելու, ունեցած գիտելիքները փորձարկելու, պրոբլեմը լուծելու, վերջնական նպատակին հասնելու հնարավորություն:

Պատմության դասերը արդյունավետ դարձնելու համար պրոբլեմային ուսուցումը անհրաժեշտ է:Այն տալիս է մտորելու, նոր բան փնտրելու, հայտնաբերելու, վերլուծելու հնարավորություն: VIII դասարանում անցկացված չորս դասերի առաջադրած խնդիրները և հարցերը ունեցան կարճաժամկետ, փոքր-ինչ մակերեսային բնույթ:Դա էր հիմնական պատճառը, որ չվերցվեցին խորքային, պրոբլեմային հարցեր, որոնց հետազոտությունը կտևեր շատ ավելի երկար:Սակայն հարցադրումները, պրոբլեմների առաջադրումը, դրանց շուրջ մտորումները թույլ են տալիս աշակերտներին հասնել որոշակի հաջողությունների:

ԱՄՓՈՓՈՒՄ

Եթե կատարվի անդրադարձ բոլոր 4 դասերին, կարելի է ասել, որ պրոբլեմային ուսուցմանը կնպաստեն նաև գործնական աշխատանքները, ռեֆերատները: Գործնական

աշխատանքները կարող են լինել սկզբնաղբյուրի ուսումնասիրությունը, սահմանային հարցերը: Արդյունավետ կլիներ նաև այն մեթոդը, երբ երեխաները իրենք հենց սկզբնաղբյուրից կգտնեին և կուսումնասիրեին խնդիրները:

Ինչպես արդեն նշվել է նախորդ բաժնում, հետազոտական աշխատանքի ժամանակը կարճ էր և ընտրվել էին հիմնականում մակերեսային պրոբլեմային հարցեր: Ավելի երկար ժամանակ ունենալու դեպքում կարելի էր հանձնարարել այնպիսի խնդիրներ, որոնց լուծելու համար հարկավոր կլինեին մի քանի թեմաներ՝ շաղկապելով հիմնական գաղափարները:Կարելի էր նաև մտածել և ցածր առաջադիմությամբ աշակերտներին հանձնարարել ուսումնասիրության համար ավելի մատչելի առօրեական հարցեր:

Պրոբլեմներ առաջադրելը երեխային դարձնում է ավելի մտածող, տրամաբանող: Լինում են շատ դեպքեր, երբ աշակերտը հենց խնդրահարույց հարցի միջոցով է հասկանում և մեկնաբանում նոր դասը: Հատկապես պատմություն առարկան սովորողի առաջ բացում է անսպառ հնարավորություններ զգալու, կարծիքը վերանայելու համար: Խմբային աշխատանքը ևս նպաստում է այս ամենին:

Հետազոտական աշխատանքը շատ հետաքրքիր ընթացք ունեցավ, աշակերտների մտքերը, գաղափարները երևացին յուրովի: Այսպիսի դասերը պետք են, սրանք նաև հուշում են ուսուցչին, թե որտեղ են թերանում աշակերտները: Կան աշակերտներ, որոնց ունակությունները մինչև վերջ էլ չեն բացահայտվում և զանազան մեթոդների կիրառումը ցույց է տալիս դրանց արդյունավետության աստիճանը: Շատ կարևոր էր, որ երկու աշակերտների մոտ /Վրեժ, Միլենա/ արդյունքը երևաց բավականին արագ:

Ավարտելով հետազոտությունս ուզում եմ մեջբերել ռուս նշանավոր քիմիկոս Դմիտրի Մենդելեևի խոսքերը <<Ուսուցիչների ամբողջ հպարտությունը աշակերտների մեջ է, իրենց ցանած սերմերի ածի մեջ>>:

Գրականության ցանկ

1 Ամիրջանյան Յ., Մանկավարժություն, Երևան 2005

2. Կառուցողական կրթության հիմքերը և մեթոդները Ա. Առնաուդյան, Ի. Օհանովա, Գ. Հովհաննիսյան, Ա. Զոհրաբյան, Ք. Գրիգորյան, Մ. Դավթյան Երևան 2004

3. Подласыи ИП., Педагогика в двух томах., М., 2002

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ. ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՆ №5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ստեղծարարության զարգացումը դպրոցահասակ երեխաների մոտ

Մասնակից՝ Աննա Հարությունյան

Դպրոց՝ Ամբերդի Հ. Նավասարդյանի անվան միջնակարգ դպրոց

Վերապատրաստող՝ Կարինե Ավետիսյան

Վաղարշապատ 2021թ.

Բովանդակություն

1.Նախաբան 2էջ

2.Հետազոտական համատեքստ 2էջ

3.Գործնական համատեքստ 3էջ

4-5.Հետազոտության ընթացք ,տվյալների մշակում 4էջ

6.Եզրակացություն 1էջ

7.Գրականություն 1էջ

1. Նախաբան

Կրթության ոլորտը դիտարկվում է որպես երկրի կայուն զարգացման,նաև մարդկային ռեսուրսի պահպանման և վերարտադրման նախապայմաններից:Անվիճելի է այն փաստը, որ ստեղծագործական ունակություններով օժտված է յուրաքանչյուր անձ: Անհրաժեշտ է միայն հայտնաբերել այդ ունակությունները և ձևավորել անկրկնելի ունակություններով ստեղծագործող անհատականություն: Պետք չէ անձի ստեղծագործական ունակություն ասելով հասկանալ գեղագիտական, էսթետիկական ուղղությունը: Ստեղծագործությունը առկա է յուրաքանչյուր աշխատանքում, պետք է միայն շարժել երևակայություն:

Ստեղծագործական ընդունակությունների զարգացման խնդիրը միշտ եղել է և կա արդիական խնդիր, որովհետև ստեղծագործող անհատները միշտ էլ պահանջարկ են վայելում և նրանք են որոշում մարդկության զարգացման առաջընթացը: Ժամանակակից հոգեբանների և մանկավարժների աշխատությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ստեղծագործական ընդունակությունները հայտնաբերվում են դեռևս վաղ տարիքում:Ակնհայտ է, որ կրթական բարեփոխումների գլխավոր արդյունքն այսօր պետք է լինի դպրոցն ավարտող երիտասարդի, ինչպես իր, այնպես էլ հասարակության բարեկեցության համար անձնական պատասխանատվություն կրելու կարողությունն ու պատրաստակամությունը: Դրա համար դպրոցի գործունեության ռազմավարությունը պետք է ուղղված լինի զարգացնող կրթությանը, որի ընթացքում ուսուցչի և հոգեբանի ուշադրության կենտրոնը աշակերտի մտածողությունն ու ուսումնական գործունեությունն է, այլ ոչ միայն ուսուցանելու մեթոդներն ու տեխնոլոգիաները:Ներկայումս միջնակարգ և բարձրագույն դպրոցի խնդիրն է ոչ միայն սովորողների կրթության բարձր մակարդակի ապահովումը,այլև նրանց մտածողության բազմակողմանի զարգացումը,իրենց գիտելիքներն ինքնուրույն լրացնելու և ժամանակակից տեղեկատվության օվկիանոսում կողմնորոշվելու ունակությունը:Ստեղծարարությունը արդի ժամանակաշրջանի թերևս կարևորագույն քննարկվելիք հասկացություններից է:Կ.Ռոջերսը համարում էր,որ այն արդիական է դառնում,եթե հաշվի ենք առնում այն հանգամանքը,որ միայն ստեղծագործական մոտեցումը թույլ կտա հարմարվել վիթխարի արագությամբ զարգացող աշխարհում:

Հետազոտության նպատակն է.

.Բացահայտել աշակերտների ստեղծարար ունակությունները,

.Օգտագործելով դրանք՝ բարձրացնել սովորելու մոտիվացիան,

.Մեծացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը,

.Նպաստել սովորողի վերլուծական կարողությունների խթանմանը:

Խնդիրս հետևյալնէ.

.Աշակերտների թույլ վերլուծական կարողությունները,

.Համագործակցային աշխատանքը միմյանց հետ:

2. Հետազոտական համատեքստ

Ստեղծագործական ընդունակությունների զարգացման խնդիրը միշտ եղել է և կա արդիական խնդիր, որովհետև ստեղծագործող անհատները միշտ էլ պահանջարկ են վայելում և նրանք են որոշում մարդկության զարգացման առաջընթացը: Արդի հարափոփոխ աշխարհում՝տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների առկայության պայմաններում յուրաքանչյուրիս համար հրամայական է դարձել այդ զարգացումներին և փոփոխություններին համընթաց քայլելը,առաջ շարժվել՝ հաղթահարելով ծառացած խնդիրները:Այսօր պահանջված են ուրույն մտածողություն ունեցող ,ստեղծագործ մասնագետները,քանի որ միայն բավարար չէ միակ ճիշտ լուծում ունեցող խնդիրներին արձագանքելը,անհրաժեշտ են այլընտրանքներ,նորարական լուծումներ:Մերօրյա ստեղծարար անձը պահանջված է հասարակության բոլոր ոլորտներում,ավելին՝ ժամանակակից կյանքի արագ փոփոխվող տեմպն ապահովում են հենց ստեղծարար,ճկուն անձիք:Ինչպես նշել է պրոֆեսոր Ա. Մասլոն,պետք է մշակվի ուսուցման նոր տիպ՝ուղղված նոր ,գործունյա,ստեղծարար,ազատ մարդու ստեղծմանը:Անժխտելի է ,որ ստեղծարարությունը չափազանց արժեքավոր է մարդկանց և հասարակության համար:Թինա Սիլինգը այն սահմանում է մեկ բառով՝հրահրող,Գրիշկևիչը այն սահմանում էր որպես նոր զգացումներ,որոնք օգտակար են,Նոլլերն այն համարում է գիտելիքի,երևակայության և գնահատման գործառույթ:Ըստ հոգեբանների՝ստեղծարար մտածողությունը մարդու հոգեբանական այնպիսի առանձնահատկություններն են,որոնցից կախված է գիտելիքների,կարողությունների, հմտությունների ձեռքբերումը:Ըստ ամերիկյան հետազոտող-մանկավարժ Պոլ Թորենսի <<Ստեղծարար մտածողության գնահատման մեթոդիկա>>աշխատության՝ <<ստեղծարարությունը>> ոչ թե հատուկ,այլ ընդհանուր կարողություն է,որը հիմնվում է ընդհանուր ինտելեկտի,անձնային որակների և արդյունավետ մտածողության վրա[1]: Յուրաքանչյուրիս ստեղծարարության դրսևորման համար անհրաժեշտ են հաղթահարել այնպիսի պատնեշներ,ինչպիսիք են ինքնաքննադատությունը,անհաջողության վախը, ծուլությունը, նախապաշարմունքները և այլն:Մ.Նելկեն առանձնացնում է ստեղծարարության հետևյալ արգելակները՝ապահովագրումը,պարզևատրումը, մրցակցությունը,կաղապարային մտածողությունը և այլն:Ապահովագրումն այն է,

[1] https://www.bibar.am

որ անձն իրեն սխալվելու հնարավորություն չի տալիս:Պարգևատրում.նա ,ով աշխատում է պարգևատրման համար,հազվադեպ է ստեղծարար այն պատճառով,որ ավելի շատ հետաքրքրված է իր պարգևատրմամբ,քան թե խնդիրը լուծելով:Մրցակցություն.այնտեղ ,որտեղ անհրաժեշտ է խրախուսել ստեղծարարությունը,այդտեղ մրցակցությունը կիրառելի չէ:

Ստեղծարարությունը նոր բան ստեղծելու գործողություն է:Սովորողներին `որպես ապագա մասնագետների,ստեղծարարության զարգացումն այլ որակների հետ համադրությամբ ուսուցման գործընթացում հնարավորություն կընձեռնի լավագույնս հաղթահարել ժամանակակից աշխարհի մարտահրավերները:

3. Գործնական համատեքստ

Հետազոտական աշխատանքի համար ընտրել եմ 11-րդ դասարանում <<Հայոց պատմություն>>առարկան՝հաշվի առնելով,որ այստեղ վերլուծական և ստեղծարար կարողությունները թույլ են զարգացած:Այստեղ սովորողները դժվարանում են հստակ վերլուծել պատճառն ու նշել հետևանքները:

Աշխատանքս կազմակերպելու համար ընտրել եմ հետևյալ դասի տիպերը՝

- Համակցված դաս,
- Նոր նյութի յուրացման դաս,
- Կարողությունների և հմտությունների ձևավորման դաս:

Մինչև աշխատանքիս անցնելը մանրամասն պլանավորել եմ յուրաքանչյուր դաս:Յուրաքանչյուր դասիս համար կազմել եմ դասապլան՝հաշվի առնելով դասարանի առանձնահատկությունները:Դասապլանում կարևորել եմ նպատակներն ու վերջնարդյունքները տրված թեմայի համար:

Նպատակներ.

- Նպաստել Հայաստանի սոցիալ-տնտեսական դրության վերաբերյալ գիտելիքների ձեռքբերմանը,
- Արևելյան և Արևմտյան Հայաստանի վիճակը տվյալ ժամանակաշրջանի կարևոր փաստերն ու իրադարձությունները բացատրել,վերլուծել,
- Նպաստել աշակերտների մոտ 19դ.երկրորդ կեսի ռուս-թուրքական պատերազմնբերի,Հայկական հարցի և դրա դրսևորումների մասին գիտելիքների ձեռքբերմանը
- Տվյալ ժամանակաշրջանի կարևոր փաստերն ու իրադարձությունները բացատրել,վերլուծել:

  Վերջնարդյունքներ.
- Բնութագրել Արևելյան և Արևմտըան Հայաստանի սոցիալ-տնտեսական ընդհանուր վիճակը,
- Համեմատել Արևելյան և Արևմտյան Հայաստանի սոցիալ -տնտեսական վիճակը,
- Ներկայացնել ռուս-թուրքական պատերազմը/պատճառ,ընթացք,հետևանք/,
- Բացատրել Արևելյան հարցի էությունը,Հայկական հարցի բովանդակությունը:

Օրվա դասի պլանը կառուցել եմ ԽԻԿ համակարգով:ԽԻԿ-ը ժամանակակից մեթոդների ուսուցման համակարգ է,որը ուսուցման գործընթացը բաժանում է հետևյալ փուլերի.

- Խթանում
- Իմաստի ընկալում
- Կշռադատում

Բնութագրելով յուրաքանչյուր փուլում ուսուցչի անելիքները՝ ԽԻԿ-ը նաև առաջ է քաշում մի շարք մեթոդներ՝ տվյալ փուլին անհրաժեշտ արդյունքին հասնելու համար[2]:

Խթանման փուլի հիմնական նպատակներից է նոր նյութի վերաբերյալ բացահայտել սովորողների գիտելիքները,քննարկվելիք նյութի մեջ ներգրավելով ակտիվացնել աշակերտներին,աշակերտների մոտ ձևավորել գիտելիներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում:

Խթանման փուլի համար նպատակահարմար է կիրառել հետևյալ մեթոդները՝մտագրոհ,խմբավորում,պրիզմա,մտածիր զույգ կազմիր-քննարկիր,ձնագնդի և այլն:

Իմաստի ընկալման փուլի նպատակներից են սովորողների մոտ հետաքրքրության աճի պահպանումը, տեղեկատվության ընկալման ինքնավերահսկման ապահովումը,նոր և հին տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր կառույցի ստեղծումը:

Իմաստի ընկալման փուլում նպատակահարմար է կիրառել T-աձև աղյուսակը,Վենի դիագրամը,խճանկարը,փոխգործուն նշանների համակարգը,խորանարդումը և այլն:

Կշռադատման փուլի նպատակներից են սովորողի նոր ստացած տեղեկատվության արտահայտումը սեփական բառերով և ձևակերպումներով,նոր գիտելիքների միաձուլումն արդեն ունեցածին,դրանց աստիճանական ինտեգրացումը:Այս փուլում կարող ենք կիրառել խորանարդում,քառաբաժան և այլ մեթոդներ:

Հետազոտական աշխատանքիս համար առանձնացրել և կիրառել եմ հետևյալ մեթոդները.

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ-նպատակը,որ սովորողները կարողանան իրար հետ համագործակցելով սովորել,փոխանակել կարծիքներ,քաջալերել միմյանց,

Մտագրոհ-քանի որ խթանում է ստեղծագործական մտածողությունը,միտքը միտք է ծնում,հեշտ է հասկանալ և կիրառել,դասի մասնակցային սկիզբ ապահովող լավագույն մեթոդներից է,

[2] https://forum.armedu.am

Կիսատ նախադասություն-կիսատ նախադասությունների լրացումն օգնում է աշակերտներին ամփոփել դասը:Իր ընտրությամբ,ուսուցիչը կարող է տալ կիսատ նախադասություններից մի քանիսը՝ աշակերտներին հնարավորություն ընձեռելով ընտրել իրենց ցանկությամբ այն կիսատ նախադասությունները ,որոնք կուզենան ավարտել:

<<Խաթարված հերթականություն>>-այս վարժությունը կնպաստի գիտելիքների և կարողությունների զարգացմանը,

Հինգրոպեանոց ազատ շարադրանք-համագործակցային ուսուցման մեթոդ,որը կարող ենք կիրառել ելնելով դասի նպատակից՝ խթանման կամ կշռադատման փուլում,

3-2-1հնարը-արդյունավետ է կշռադատման փուլում,

ԳՈՒՀ/գիտեմ,ուզում եմ իմանալ,սովորեցի/-դասը սկսելու հայտնի հնար:

Դասապլանում ինչպես նշեցի կարևորել եմ նպատակներն ու վերջնարդյունքները:Վերջնարդյունքներն այն ակնկալիքներն են,որոնք պետք է ստանամ թեմայի վերջում:

4. Հետազոտության ընթացքը,
5. Տվյալների մշակում և վերլուծություն

Ինչպես նշվեց <<Գործնական համատեքստ>>բաժնում հետազոտական աշխատանքի համար ընտրել եմ 11-րդ դասարանում <<Հայոց պատմություն>>առարկան,որտեղ այս ընթացքում ուսումնասիրելու ենք <<Ռուսաստանի գաղութային քաղաքականությունը արևելահայերի նկատմամբ,Արևմտահայերի տնտեսական և սոցիալական դրությունը,1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմը և հայերը,Հայկական հարցի մրջազգայնացումը>>թեմաները/տես հավելվածում/:

11-րդ դասարանում չկան ներառված աշակերտներ,ուստի աշխատանքս կազմակերպել եմ հաշվի առնելով այդ հանգամանքը:

Մինչև ուսումնասիրվող թեմայով դասի անցկացումը,երեխաներին տվել եմ գիտելիքների ստուգման թեստ,որն ինձ օգնեց բացահայտելու,թե աշակերտները որքանով էին հիշում տվյալ թեման,քանի որ նրանք միջին դպրոցում նրանք արդեն իսկ ուսումնասիրել են այս թեմաները:

Ստորև ներկայացված է գիտելիքների ստուգման թեստի արդյունքները.

N	Անուն ,ազգանուն	Գնահատական
1	Արման Անդրեասյան	4
2	Ամալյա Արզումանյան	6
3	Սյուզաննա Գեղամյան	4
4	Միքայել Խաչատրյան	3
5	Թագուհի Համբարձումյան	3
6	Էրիկ Մաղաքյան	7
7	Սեդա Մնացակյան	5
8	Մելինե Մնացականյան	6
9	Հարություն Պողասյան	4
10	Լիլիա Սաֆարյան	7

Առաջին դասի թեման <<Ռուսաստանի գաղութային քաղաքականությունը և արևելահայերի աղգային ու սոցիալական շարժումներ>>-ն է:Դասին ներկա էին տասներեք աշակերտներից տասը:Տվյալ դասը նոր նյութի յուրացման դաս է:

Նոր նյութի յուրացման ժամանակ ուսուցիչը պետք է իրականացնի հետևյալ քայլերը՝ուսուցանվող նյութն անցնելիս պետք է հաշվի առնել աշակերտների մտային ակտիվության ժամանակ ճանաչողության գործընթացի օրինաչափությունները ,մատնանշի

ուսուցանվող նյութի առավել կարևոր հատվածները,ձևավորի հիշելու և հիշողության մեջ պահելու մոտիվացիա,զարգացնի մտապահման տեխնիկան[3] :

Օրվա դասի պլանը կազմել եմ ԽԻԿ համակարգով:Առանձնացրել եմ թեմայի նպատակներն ու վերջնարդյունքները:

Նպատակներ.

- Իմանալ, թե ինչու փակվեցին դպրոցները,
- Ինչպես արձագանքեց հայ ժողովուրդը դրան,
- ԻմանալԱրևելյան Հայաստանում որտեղ բռնկվեցին գյուղացիական ելույթներ:

Վերջնարդյունքներ.

- Կարողանալ հիմնավորել ,թե ինչու փակվեցին դպրոցները,
- Հիմնավորել,որ հայության պայքարը տվեց իր արդյունքները:

Խթանման փուլում մտագրոհով փորձեցի ի մի բերել այն գիտելիքները,որոնք աշակերտները ունեին արևելահայերի դրության մասին:

Իմաստի ընկալման փուլում նոր նյութը հաղորդեցի կարճ դասախոսության մեթոդով,այնուհետև հանձնարարվեց ինքնուրույն կարդալ թեման:

Կշռադատման փուլում ավանդական հարցաշարի միջոցով պարզեցինք աշակերտների յուրացման աստիճանը:

Երկրորդ դասը պլանավորեցի կրկին ԽԻԿհամակարգի միջոցով՝ ներառելով մի շարք մեթոդներ/տես հավելվածում/:Երկրորդ դասի թեման էր <<Արևմտահայերի տնտեսական և սոցիալական դրությունը>>:

Խթանման փուլում օգտագործել եմ մտագրոհ և ԳՈՒՍ մեթոդները:Գրատախտակին գծեցի M-աձև աղյուսակ,որի առաջին սյունակում գրեցի,թե ինչ գիտեն արևմտահայերի մասին,երկրորդ սյունականում գրեցի թե ինչ են ուզում իմանալ՝հարցնելով նրանց,երրորդ սյունակը բաց թողեցի՝ նոր նյութի յուրացումից հետո լրացնելու համար:

Իմաստի ինկալման փուլում կիրառել եմ Վենի դիագրամ,որի միջոցով կկարողանան համեմատել արևելահայերի և արևմտահայերի սոցիալ-տնտեսական դրությունը:

Կշռադատման փուլում լրացնում ենք ԳՈՒՍ-ի երրորդ սյունակը:

Երրորդ դասի թեման էր՝ <<1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմը և հայերը>>:

Երրորդ դասը ևս ընթացավ ԽԻԿ համակարգով:

[3] Թ.Թովմասյան,Ա.Աբազյան,<<Մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար>>Երևան2019

Խթանման փուլում կիրառել եմ <<գուշակություն>>հնարը՝մի փոքր այլ տարբերակով:Նախօրոք կպչուն թղթերի վրա գրված և գրատախտակին էր փակցված թեմային վերաբերող բառեր,օրինակ՝ ավերածություն,բռնազավթում,ազատագրում ,թուրքեր նայլն:Երեխաները նախ գուշակեցին դասի թեման :Մտագրոհով փորձեցի ի մի բերել այն գիտելիքները,որոնք ունեին աշակերտները ռուս-թուրքական պատերազմների վերաբերյալ:

Իմաստի ընկալման փուլում դասարանը բաժանեցի երեք խմբի:Կպչուն թղթեր էի նախօրոք փակցրել գրատախտակին հակառակ կողմով,որոնցից մեկի վրա գրված էր պատերազմի պատճառները և սկիզբը,մյուսի վրա՝ընթացքը,երրորդի վրա՝ավարտը և հաշտության պայմանագիրը:Յուրաքանչյուր խմբից մեկ աշակերտ եկավ և այդպես ընտրեց իրենց ներկայացնելու հատվածը:Այսպես էի արել ՝արդարության սկզբունքով առաջնորդվելով:Դասագրքից սովորելով իրենց հանձնարարված հատվածները,դիտեցին նաև սահիկաշար թեմայի վերաբերյալ և ներկայացրին:

Կշռադատման փուլում կիրառեցի<< 3 2 1>>հնարը:Նախօրոք առանձնացված թղթեր բաժանեցի և հանձնարարեցի վրան գրել 3 բան ,որ սովորեցին,2բան, որ հեշտ էր և 1 բան,որը դժվար էր:

Չորրորդ դասի թեման էր՝<<Հայկական հարցի միջազգայնացումը>>:Այս դասը ևս պլանավորել էի ԽԻԿ համակարգի միջոցով:

Խթանման փուլում հաննձնարարեցի հինգրոպեանոց շարադրանք թեմայի վերաբերյալ:

Իմաստի ընկալման փուլը կազմակերպեցինք <<Փոխներգործուն գրառումների համակարգ>>մեթոդով:Սկզբում հանձնարարվեց կարդալ նոր թեման և լրացնել աղյուսակը,որի համար տրվեց ժամանակ:Ապա կազմեցին զույգեր և միավորեցին իրենց ստացած գիտելիքները,որից հետո ներկայացրին իրենց գրառումները:

Կշռադատման փուլում <<Կիսատ նախադասություններ >>մեթոդով ամփոփեցինք նոր նյութը:

Պլանավորած դասերից հետո աշակերտներին նորց տրվեց ձեռք բերված գիտելիքների ստուգման թեստ,որի արդյունքները ներկայացված են ստորև.

N	Անուն ,ազգանուն	Գնահատական
1	Արման Անդրեասյան	5
2	Ամալյա Արզումանյան	7

3	Սյուզաննա Գեղամյան	5
4	Միքայել Խաչատրյան	4
5	Թագուհի Համբարձումյան	4
6	Էրիկ Մաղաքյան	8
7	Սեդա Մնացակյան	6
8	Մելինե Մնացականյան	7
9	Հարություն Պողասյան	5
10	Լիլիա Սաֆարյան	8

Ներկայացված աղյուսակների արդյունքներից պարզ է դառնում,որ երեխաների մոտ զգացվում է ոչ սրընթաց,այնուամենայնիվ աճ:Նրանց մոտ զարգացավ թիմային աշխատանքը,անձնական և սոցիալական հմտությունները:Ստացված թեստի արդյունքները փաստում են ,որ մենք կարող ենք ճիշտ է աստիճանաբար,բայց այնուամենայնիվ հասնել մեր առջև դրված նպատակներին:

6. Եզրակացություն

Հետազոտական աշխատանքիս նպատակն էր վեր հանել աշակերտների ստեղծարար կարողությունները,վերլուծական կարողությունները:Եթե ավանդական ուսուցման ժամանակ երեխաները պասիվ սովորողներ են հանդիսանում,տարբեր մեթոդների կիրառման արդյունքում նրանք կարող են դառնալ դասապրոցեսի ակտիվ մասնակիցներ:
Իհարկե չեմ փաստի ,որ ամբողջությամբ հասա իմ առջև դրված վերջնարդյունքներին,քանի ու ըստ իս չորս դասընթացը շատ քիչ է,բայց,այնուամենայնիվ,որոշակի առաջընթաց կարող եմ արձանագրել:Ինչպես հայտնի աֆորիզմն է ասում.<<Մի վախեցեք դանդաղ շարժվելուց,վախեցեք անընդհատ նույն տեղում մնալուց>>:
Անվիճելի է այն փաստը,որ ստեղծագործական ունակություններով օժտված է յուրաքանչյուր անձ:Անհրաժեշտ է միայն հայտնաբերել այդ ունակությունները:

7. Գրականություն

1. Ամիրջանյան Յու.Ա., Սահակյան Ս.Ս., Մանկավարժություն, Եր. 2005
2. Նալչաջյան Ա., Հոգեբանական բացատրական բառարան, Երեվան 1984Թ
3. Թոփուզյան Ա.,Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրները մանկավարժության մեջ, Երևան 2009 թ.
4. Թ.Թովմասյան,Ա.Այվազյան<<Մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար>>Երևան 2019,
5. https://www.bibar.am
6. https://Forum.armedu.am

Հավելված

Դասի պլան 1.

Դասարան-11,

Առարկան-Հայոց պատմություն,

Դասի թեման-Ռուսաստանի գաղութային քաղաքականությունը և արևելահայերի ազգային ու սոցիալական շարժումները,

Դասի տիպը-նոր նյութի հաղորդման դաս,

Միջառարկայական կապ-համաշխարհային պատմություն,

Կիրառվող մեթոդներ-Մտագրոհ,համառոտ դասախոսություն,

Դիդակտիկ նյութեր-դասագիրք,քարտեզ,

Դասի նպատակը.

- Իմանալ ինչու փակվեցին հայկական դպրոցները,
- Ինչպես դրան արձագանքեց հայ ժողովուրդը,
- Իմանալ Արևելյան Հայաստանի որ հատվածներում բռնկվեցին գյուղացիական ելույթներ,

Վերջնարդյունք.

- Կարողանա հիմնավորել,թե ինչու փակվեցին դպրոցները,
- Հիմնավորել,որ հայության պայքարը տվեց իր արդյունքները:

Դասի ընթացքը---

Կազմակերպչական մաս-հաճախումների ստուգում,

Խթանման փուլ---մտագրոհի միջոցով ի մի բերել աշակերտների ունեցած գիտելիքները՝

Իմաստի ընկալման փուլ---նոր նյութը հաղորդել համառոտ դասախոսության միջոցով,

Կշռադատման փուլ----հետևյալ հարցերի միջոցով պարզել,թե որքանով է ընկալվել նոր նյութը 1.Ինչու փակվեցին հայկական դպրոցները,2.ինչ նպատակ ուներ ցարական կառավարությունը դրանով,3.Ինչ արդյունք ունեցավ հայության պայքարը:

Կատարել գնահատում,հանձնարարել տնային առաջադրանք:

Դասի պլան 2.

Դասարան-11

Առարկան-Հայոց պատմություն,

Դասի թեման-Արևմտահայերի սոցիալական և տնտեսական դրությունը,

Դասի տիպը-Համակցված դաս,

Կիրառվող մեթոդներ-մտագրոհ,ԳՈՒՍ,Վենի դիագրամ,

Դիդակտիկ նյութեր-դասագիրք ,քարտեզ,

Դասի նպատակը.

- Իմանալ քանի նահանգների էր բաժանված Արևմտըան Հայաստանը,
- Իմանալ ինչու էր Օսմանյան կայսրությունը նշում գործադրում հայերի նկատմամբ,
- Հողատիրության ինչ ձևեր կային Օսմանյան կայսրությունում,
- Արդյունաբերական որ ճյուղերն էին զարգացած:

Վերջնարդյունք.

- Կարողանալ քարտեզի վրա ցույց տալ նահանգները,
- Կարողանա ներկայացնել Արևմտյան Հայաստանի արդյունաբերության ընդհանուր պատկերը,
- Համեմատել արևելահայ և արևմտահայ գյուղացիության դրությունը:

Դասի ընթացքը

Կազմակերպչական մաս-հաչախումների ստուգում,

Խթանման փուլ—մտագրոհի միջոցով վեր հանել սովորողների գիտելիքները արևմտահայերի դրության մասին:Այնուհետև կատարել ԳՈՒՍ մեթոդը:Գրատախտակին գծել Մ-աձև աղյուսակ :1-ին սյունակում նշել ինչ գիտեն,2-րդում նշել ինչ են ուզում իմանալ,իսկ 3-րդ սյունակը լրացնել նոր նյութի յուրացումից հետո:

Իմաստի ընկալման փուլ---սովորողներին հանձնարարել սովորել դասը,կազմել Վենի դիագրամ,որտեղ պետք է ներկայացնեն արևելահայերի և արևմտահայերի սոցիալ-տնտեսական դրությունը՝նշելով նմանություններ և տարբերություններ;

Կշռադատման փուլ---լրացնել աղյուսակի 3-րդ բաժինը՝նշելով ինր սովորեցի:

Գնահատել,հանձնարարել տնային առաջադրանք:

Դասի պլան 3.

Դասարան-11,

Առարկան-Հայոց պատմություն,

Դասի թեման-1877-1878թթ.ռուս-թուրքական պատերազմը,

Միջառարկայական կապ-համաշխարհային պատմություն,

Կիրառվող մեթոդներ-գուշակություն,մտագրոհ,խմբային աշխատանք,3 2 1

Դիդակտիկ նյութեր –դասագիրք,քարտեզ,

Դասի տիպը-համակցված դաս

Դասի նպատակը.

- Իմանալ երբ է սկսվել ռուս-թուրքական պատերազմը,
- Որ ռազմաճակատներում էր ընթանում,
- Ինչ կարևոր ճակատամարտեր են տեղի ունեցել:

Վերջնարդյունք.

- Կարողանալ նշել պատերազմի պատճառը,
- Կարողանալ ժամանակագրական հաջորդականությամբ ներկայացնել նշանավոր ճակատամարտերը,
- Կարողանալ ներկայացնել Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը:

Դասի ընթացքը.

Կազմակերպչական մաս-հաճախումների հաշվառում:

Խթանման փուլ-կիրառել գուշակություն մեթոդը:Նախօրոք կպչուն թղթի վրա գրված բառերը փակցնել գրատախտակին,որոնց վրա գրված են թեմային վերաբերող բառեր:Դասի թեման գուշակելուց հետո մտագրոհի միջոցով պարզել,թե ինչ գիտեն ռուս-թուրքական պատերազմի մասին:

Իմաստի ընկալման փուլ-դասարանը բաժանել երեք խմբի:Յուրաքանչյուր խումբ վիճակահանությամբ ընտրում է,թե ինչ է ներկայացնելու՝ մի խումբը պատերազմի պատճառը և սկիզբը,մյուսը՝ընթացքը,մյուսը՝ավարտը և հաշտությունը:

Կշռադատման փուլ-կիրառել 3 2 1 հնարը:Բաժանել նախապես առանձնացված թղթեր,որոնց վրա պիտի նշեն 3 բան,որ սովորեցին,2բան ,որը հեշտ էր,1բան ,որը դժվար էր: Կատարել գնահատում,հանձնարարել տնային աշխատանք:

Դասի պլան 4.

Դասարան-11,

Առարկան-Հայոց պատմություն,

Դասի թեման-Հայկական հարցի միջազգայնացումը,

Միջառարկայական կապ-համաշխարհային պատմություն,

Դասի տիպը-համակցված դաս,

Կիրառվող մեթոդներ-հինգրոպեանոց շարադրանք,<<փոխներգործուն գրառումների համակարգ>>,կիսատ նախադասություն,

Դիդակտիկ նյութեր-դասագիրք,քարտեզ,

Դասի նպատակը.

- Իմանալ երբ է կնքվել Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը,
- Իմանալ,որ հոդվածներն են վերաբերում հայերին,
- Ով էր հայկական պատվիրակության ղեկավարը:

Վերջնարդյունք.

- Կարողանալ ներկայացնել հայկական հարցի էությունը,
- Համեմատել Սան-Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերում Հայաստանին և հայերին վերաբերող հոդվածներն ու ձևակերպումները:

Դասի ընթացքը.

Կազմակերպչական մաս-հաճախումների հաշվառում,

Խթանման փուլ-հանձնարարել հինգրոպեանոց շարադրանք թեմայի վերաբերբալ:

Իմաստի ընկալման փուլում-կիրառել <<Փոխգործուն գրառումների համակարգ >>մեթոդը:Հանձնարարել ինքնուրույն կարդալ նյութը,այնուհետև լրացնել աղյուսակը,որտեղ պիտի նշեն ինչ սովորեցին,ինչը գիտեին,ինչն էր դժվար:

Կշռադատման փուլ-կիրառել կիսատ նախադասություն մեթոդը,որը շատ նպատակահարմար է յուրացրած դասն ամփոփելու համար:

Կատարել գնահատում:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ.ԳՈՐԿՈՒ

ԱՆՎԱՆ **N5** ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՌԱՋՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Մասնակից՝ Արևիկ Ավագյան

Դպրոց՝ <<Ջրարբիի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

Վերապատրաստող՝ Կարինե Ավետիսյան

Վաղարշապատ 2021

Բովանդակություն

Նախաբան 2

Հետազոտական համատեքստ 3

Գործնական համատեքստ և հետազոտական ընթացք 4

Տվյալների մշակում և վերլուծություն 14

Ամփոփում 15

Օգտագործած գրականություն 16

Հավելվածներ 17

Նախաբան

Կրթությունը ամենահզոր զենքն է, որըդու կարող ես օգտագործել աշխարհը փոխելու համար: Նելսոն Մանդելա

Որակյալ և արդիական կրթություն ապահովելու համար, մենք կարծում ենք, որ ճիշտ է կիրառել տարբերակված ուսուցում: Դա հնարավորություն է տալիս ուսումնական պրոցեսը կազմակերպել՝ հաշվի առնելով անձի անհատական առանձնահատկությունները: Ապահովում է բոլոր աշակերտների կողմից կրթության բովանդակության յուրացումը: Տարբերակումը բնորոշվում է սովորողների այնպիսի խմբերի ստեղծումով, որտեղ գործունեության նպատակը, բովանդակությունը,արդյունքները տարբերվում են:

Ունեմ 6-րդ դասարան: Այդ դասարանում առաջադիմությունը ինձ անհանգստացնում է (հիմնականում թույլ առաջադիմություն ունեցող աշակերտներ են): Այդ դասարանում խնդիրն այն է, որ կա մոտիվացիայի պակաս, չկա հետաքրքրություն ուսման նկատմամբ: Այս հետազոտությունը իրականացնելիս ես իմ առջև նպատակ եմ դրել բարձրացնել աշակերտների մոտ մոտիվացիան, հետաքրքրությունը առարկայի նկատմամբ: Նախատեսել եմ դա իրականացնել խմբային աշխատանքի միջոցով (ըստ առաջադրանքի): Այսօր հիմնականում բոլոր դպրոցներում, մասնավորապես բոլոր դասարաններում, կան թույլ, միջին, լավ, գերազանց առաջադիմություն ունեցող աշակերտներ, և տարբերակված ուսուցումը (խմբային աշխատանքը) ամենաարդյունավետ մեթոդն է վերջնարդյունքին հասնելու համար:

Հետազոտական համատեքստ

Տարբերակված ուսուցումը հնարավորություն է տալիս աշակերտներին որոշել, թե ուսումնական նյութի յուրացումը որ մակարդակում կարող է յուրացնել: Սակայն անհրաժեշտ պայման է, որ այն չպետք է ցածր լինի պարտադիր նվազագույն մակարդակից և ուսուցիչը ուսումնական նյութը պետք է ներկայացնի առավելագույն մակարդակով: Եթե մի աշակերտ ցանկանում է առարկան ուսումնասիրել նվազագույն մակարդակով, իսկ մյուսը՝ առավելագույն, ապա այդ հնարավորությունը նա պետք է ստանա: Այսպիսով, տարբերակումը հաշվի է առնում ոչ միայն աշակերտների ինտելեկտուալ ընդունակությունները, այլև հետաքրքրությունները:

Ստորև ներկայացնում ենք տարբերակված ուսուցման մասին մի քանի նշանավոր մանկավարժների կարծիքները.

Տարբերակումը ինդիվիդուալ ուսուցման միջոց է:

Վ.Մոնախով

Տարբերակումը միջոց է ուսումնական գործընթացը կազմակերպելու, որի ժամանակ հաշվի է առնվում սովորողների առանձնահատկությունները՝ ըստ նյութի յուրացման աստիճանի:

Ի.

Օսմոլովսկայա

Տարբերակումը սովորողներին բաժանում է խմբերի՝ ըստ իրենց կարողությունների և առանձնահատկությունների:

Ի. ՈՒինտ

Այսպիսով, հետազոտությունները ցույց են տալիս, որ բոլոր սովորողների կարիքները բավարարելու ամենաարդյունավետ ուղիներից մեկն ուսուցումը տարբերակելն է:

Գործնական համատեքստ

Հետազոտական ընթացք

Հետազոտական աշխատանքը ես իրականացնելու եմ Ջրարբիի միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանում: Առարկան՝ հայոց պատմություն, ժամանակահատվածը հոկտեմբերի 5-14-ը (4 դասաժամ): Ինչո՞ւ եմ ընտրել այդ դասարանը: 6-րդ դասարանում կա 29 աշակերտ: Աշակերտների մեծ մասը ունեն թույլ առաջադիմություն, չկա մոտիվացիա, չկա ձգտում ուսման նկատմամբ: Աշակերտների թիվը նույնպես խնդիր է: Իմ առջև նպատակ եմ դրել բարձրացնելու հետաքրքրությունը առարկայի նկատմամբ: Եվ դա փորձելու եմ անել խմբային աշխատանքի միջոցով:

6-րդ դասարանում իմ գործընկերները նույնպես ունեն այդ խնդիրը:Եվ մեր քննարկումների արդյունքում եկանք այն եզրահանգման , որ հաջողված դաս իրականացնելու համար պետք է կիրառել տարբերակված ուսուցում:

Որպես թիրախային խումբ ընտրել եմ 4 աշակերտ:

1.Արմենակյան Մարիանան խելացի, համեստ, ամաչկոտ , ընկերասեր, քչախոս աշակերտուհի է: Ճիշտ է,երբեք անպատրաստ դասերին չի ներկայանում, բայց քիչ է կարդում: Բանավոր հարցմանը ակտիվ մասնակցում է, բայց գրավոր աշխատանքները լավ չի գրում:

2. Դավթյան Վարդուհին ընկերասեր է, կամեցող, սակայն շատախոս և դասերին անուշադիր է: Նա նույնպես քիչ է կարդում, դժվար է արտահայտում իր մտքերը, գրավորները վատ է գրում:

3.Մկրտչյան Մովսեսը ընդունակ, հավասարակշիռ,աշխատասեր աշակերտ է, սակայն ունի թույլ հիշողություն: Դժվար է հիշում թվականները: Դասերին անուշադիր է:

4. Վարդազարյան Արտյոմը խելացի աշակերտ է, սակայն շատ շարժուն, անուշադիր , որը խանգարումէ իրեն: Չի սիրում կարդալ, տանը ոչինչ չի անում, գրավորները գրում է վատ, սակայն ունի լավ հիշողություն և տրամաբանություն:

Նախատեսել ենք առաջին երկու ժամերին այս չորս աշակերտներին ընդգրկել մեկ խմբի մեջ, իսկ հաջորդ երկու ժամերին դասարանը բաժանել չորս խմբի և նրանցից յուրաքանչյուրին ընդգրկել առանձին խմբերի մեջ:

Այսինքն, սկզբում նրանք կաշխատեն միասին, կօգնեն միմյանց, հնարավորինս կզարգացնեն համագործակցային հմտությունները, այնուհետև հանդես կգան որպես խմբի ղեկավար, որպես ուսուցիչ, կսովորեն և կսովորացնեն:

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Դասարան՝ VI

Առարկա՝ Հայոց պատմություն

Ուսուցիչ՝ Ա. Ավագյան

Դպրոց՝ «Ջրարբիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Դասի թեմա՝ Վանի թագավորության հիմնադրումը

Նպատակը՝ ուսումնասիրել նյութը, գաղափար ունենալ Վանի թագավորության մասին, զարգացնել համագործակցային հմտությունները

Վերջնարդյունք՝ աշակերտները կսովորեն

.ներկայացնեն երբ է ստեղծվել Վանի թագավորությունը

.բացատրել թագավորության ստեղծման գլխավոր պատճառը

.թվարկել պետության տարբեր անվանումները

.ներկայացնել Սարդուրի 1-ինի գահակալման ընթացքը

Մեթոդ՝ <<Մտագրոհ», «Խմբային աշխատանք», «Կարճ դասախոսություն», «Հարց ու պատասխան»

Միջառարկայական կապեր՝ համաշխարհային պատմություն

Դիդակտիկ նյութեր՝ դասագիրք

Դասի ընթացք՝

1.Խթանում

Մտագրոհ <<Վանի թագավորություն>>

2.Իմաստի ընկալում

Կարճ դասախոսություն

Կազմակերպել խմբային աշխատանք Առաջադրանք

1.ՈՒսումնասիրել ամբողջ նյութը .ե՞րբ է ստեղծվել Վանի թագավորությունը

2. ՈՒսումնասիրել ամբողջ նյութը .Ո՞րն էր դրա ստեղծման ամբողջ պատճառը

3. ՈՒսումնասիրել ամբողջ նյութը .Ո՞ր անուններով է հայտնի Վանի թագավորութ.

Կշռադատում՝

Աշխատանքի ներկայացում, քննարկում և գնահատում

Կատարել ձևավորող գնահատում (բանավոր պատասխաններին տալ հետադարձ կապ) և միավորային գնահատում:

Տնային առաջադրանք՝ Դաս1 /էջ 42-43

Նախորդ ժամին թեմատիկ աշխատանքով ամփոփելով նախնադարը հանձնարարեցինք նոր թեման՝ Վանի թագավորության հիմնադրումը: Դասը սկսեցինք <<Մտագրոհ>> մեթոդով: Արձագանքեցին ոչ բոլորը:

Այնուհետև դասախոսության միջոցով ներկայացրեցինք նոր թեման, ապա կազմակերպեցինք խմբային աշխատանք: Դասարանը բաժանեցինք 3 խմբի ՝ Ա. Մարիանային, Դ. Վարդուհուն, Մ.Մովսեսին և Վ. Արտյոմին ընդգրկեցինք մեկ խմբում: Յուրաքանչյուր խմբին հանձնարարեցինք ուսումնասիրել նյութը, գրավոր և բանավոր պատասխանել նախապես մեր կողմից կազմած հարցերին (ըստ բարդության աստիճանի): Մարիանան և Մովսեսը լիարժեք կատարեցին

առաջադրանքը, իսկ Վարդուհին և Արտյոմը բանավոր չկարողացավ պատասխանել, կառչում էին տետրից: Մովսեսին և Մարիանային գնահատեցինք 7, որովհետև կային որոշ թերություններ, խոսքը հստակ և սահուն չէր,իսկ Վարդուհուն և Արտյոմին՝ 6: Իսկ, ընդհանուր, անուշադիր էին, չէին լսում իրար և յուրացրին միայն իրենց հասանելիք հատվածը:

Հաջորդ դասին մի փոքը շատ ժամանակ կհատկացնեմ կշռադատման փուլին, որպեսզի հարց ու պատասխանի միջոցով աշակերտները յուրացնեն ամբողջ թեման:

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Դասարան՝ VI

Առարկա՝ Հայոց պատմություն

Ուսուցիչ՝ Ա. Ավագյան

Դպրոց՝ «Ջրարբիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Դասի թեմա՝ Տուշպա-Վանը՝ մայրաքաղաք

Նպատակը՝ ուսումնասիրել նոր նյութը, գաղափար ունենալ Տուշպա քաղաքի մասին

Վերջնարդյունք՝ աշակերտները կսովորեն ներկայացնել.

1. Ե՞րբ է հիմնադրվել Տուշպա մայրաքաղաքը

2. Ո՞վ է հիմնադրել

3. Ի՞նչ արձանագրություն է թողել Սարդուրի Ի-ը մայրաքաղաքի հիմնադրման կապակցությամբ:

4. Բացատրել մայրաքաղաքի ստեղծման անհրաժեշտությունը:

Մեթոդ՝ «Մտագրոհ», «Խմբային աշխատանք», «Կարճ դասախոսություն», «Հարց ու պատասխան»

Միջառարկայական կապեր՝ համաշխարհային պատմություն

Դիդակտիկ նյութեր՝ դասագիրք

Դասի ընթացք՝

Խթանում՝

Նախորդ նյութի ամփոփում

1. Ե՞րբ է ստեղծվել Վանի թագավորությունը:

2. Ո՞րն էր Վանի թագավորութան ստեղծման գլխավոր պատճառը:

3. Ի՞նչ անուններով էր հայտնի Վանի թագավորությունը:

4. Ո՞վ էր Սարդուրի Ի-ը:

Իմաստի ընկալում՝

Մտագրոհ «մայրաքաղաք»

Կարճ դասախոսություն

Կազմակերպել խմբային աշխատանք

Առաջադրանք

1. Ուսումնասիրել ամբողջ նյութը ուսումնասիրել նյութը և համառոտագրել

2. Ուսումնասիրել ամբողջ նյութը կազմել 3-ական հարցեր և

3. Ուսումնասիրել ամբողջ նյութը պատասխանել դրանց

Կշռադատում

Աշխատանքի ներկայացում, քննարկում և գնահատում

Կատարել ձևավորող գնահատում (ապահովել հետադարձ կապ) և միավորային գնահատում:

Տնային առաջադրանք՝ դաս 1 (էջ 44-45)

Գործնական աշխատանք՝ ներկայացնել Սարդուրի Ի-ի պատմական կերպար:

Ամփոփեցի նախորդ թեման: Ոչ բոլորը մասնակցեցին: Մարիան, Մովսեսը, Վարդուհին բոլոր հարցերին կարողացան պատասխանել, իսկ Արտյոմը դժվարացավ պատասխանել միայն հետևյալ հարցերին.

Ո՞րն է Վանի թագավորության ստեղծման գլխավոր պատճառը:

Իրականացրի <<Մտագրոհ>> մեթոդը, բոլորը ակտիվ մասնակցեցին: Այնուհետև կարճ դասախոսության միջոցով ներկայացրի նոր թեման՝ Տուշպա-Վանը՝ մայրաքաղաք, ապա կազմակերպեցի խմբային աշխատանք: Դասարանը բաժանեցի 3 խմբի: Բոլոր խմբերին հանձնարարեցի ուսումնասիրել նույն նյութը և համառոտագրել, կազմել 3-ական հարցեր և պատասխանել: Բոլոր խմբերին էլ կատարեցին առաջադրանքը:

Հետազոտման ենթակա 4 աշակերտներից Մարիանան և Մովսեսը հարցերը ինքնուրույն գրեցին գրատախտակին, իսկ Վարդուհին և Արտյոմը պատասխանեցին: Դասի ավարտին նրանք 4-ն էլ յուրացրին ամբողջ նյութը: Իհարկե, թերացումներ եղան թե՛ հարցեր կազմելիս, թե՛ բանավոր պատասխանելիս: Տրվեց հետադարձ կապ: Բոլորն էլ 7 գնահատվեցին: Մյուս աշակերտներին էլ հետաքրքրեց նման ձևով աշխատելը:

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Դասարան՝ VI

Առարկա՝ Հայոց պատմություն

Ուսուցիչ՝ Ա. Ավագյան

Դպրոց՝ «Ջրարբիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Դասի թեմա՝ Վանի թագավորության հզորացումը

Նպատակը՝ ուսումնասիրել նյութը, ծանոթանալ Իշպուինի և Մենուա արքաների գործունեությանը, զարգացնել համագործակցային հմտությունները

Վերջնարդյունք՝ աշակերտները կսովորեն

.գաղափար ունենալ Իշպուինի և Մենուա արքաների գահակալման շրջանների մասին

.ներկայացնել Իշպուինի և Մենուա արքաների բարեփոխումները

Մեթոդ՝

<<Կարճ դասախոսություն>>, ԳՈՒՍ աղյուսակ, հարց ու պատասխան

Միջառարկայական կապեր՝

Համաշխարհային պատմություն

Դիդակտիկ նյութեր՝

Դասագիրք, քարտեզ

Դասի ընթացքը՝

Խթանում

Նախորդ նյութի ամփոփում

Ի՞նչ-ե՞րբ-ո՞վ-ի՞նչ արձանագրություն

Իմաստի ընկալում

Կարճ դասախոսություն

Կազմակերպել խմբային աշխատանք

1. Իշպուինի արքա Առաջադրանք

2. Իշպուինի արքա ուսումնասիրել նյութը և համառոտագրել

3. Մենուա արքա առանձնացնել արքաների կատարած բարեփոխումները

4. Մենուա արքա

Կշռադատում

ԳՈՒՍ աղյուսակ

Աշխատանքի ներկայացում,քննարկում և գնահատում

Կատարել ձևավորող գնահատում (բանավորպատասխաններին տալ հետադարձ կապ) և միավորային գնահատում

Տնային առաջադրանք

Դաս 2 էջ 46-47

Նախորդ նյութի ամփոփում հետևյալ հարցադրումով

Ի՞նչ-ե՞րբ-ո՞վ-ի՞նչ արձանագրություն

Բոլորն էլ մասնակցեցին:

Կարճ դասախոսության միջոցով ներկայացրի նոր թեման՝ Վանի թագավորության հզորացումը, այնուհետև կազմակերպեցի խմբային աշխատանք, դասարանը բաժանեցի 4 խմբի,1-ին ավագ նշանակեցի Մաիրանային, 2-րդին՝ Մովսեսին, 3-րդին՝ Վարդուհուն, 4-րդին՝ Արտյոմին: Յուրաքանչյուր խմբի հանձնարարեցի ուսումնասիրել նյութը, համառոտագրել,առանձնացնել արքաների կատարած բարեփոխումները: Կշռադատման փուլում յուրաքանչյուր խումբ լրացրեց ԳՈՒՍ աղյուսակը: Հետազոտվող 4 աշակերտները հնարավորինս կատարեցին իրենց հանձնարարված աշխատանքը: Հիանալի հանդես եկան ուսուցչի դերում, խմբի յուրաքանչյուր անդամ տեղյակ էր իր թեմայից,լսում էին միմյանց և նույնիսկ ինձ հարցեր էին տալիս: Այդ 4 աշակերտներին կատարեցի միայն ձևավորող գնահատում:

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Դասարան՝ VI

Առարկա՝ Հայոց պատմություն

Ուսուցիչ՝ Ա. Ավագյան

Դպրոց՝ «Ջրարբիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Դասի թեման՝ Վանի աշխարհակալ տիրություն

Նպատակ՝ ուսումնասիրել նյութը, ծանոթանալ Արգիշտի 1-ինի և Սարդուրի 2-րդի գահակալման

ժամանակաշրջաններին, զարգացնել համագործակցային հմտությունները

Վերջնարդյունք՝ աշակերտները կսովորեն

.գաղափար ունենալ Արգիշտի 1-ինի և Սարդուրի 2-րդի գահակալման շրջանների մասին

.ներկայացնել ՝ ե՞րբ և ո՞վ է կառուցել Էրեբունին

.համեմատել Արգիշտի 1-ինի և Սարդուրի 2-րդի նվաճումները

Մեթոդ՝

<<Մտագրոհ>>,<<Կարճ դասախոսություն>>, <<Խմբային աշխատանք>>, <<Հարց ու պատասխան>>

Միջառարկայական կապեր՝

Համաշխարհային պատմություն

Դիդակտիկ նյութեր՝

Դասագիրք, քարտեզ

Դասի ընթացքը՝

Խթանում

Նախորդ նյութի ամփոփում

1. Ե՞րբ է գահակալել Իշպուինի արքան

2. Ե՞րբ է գահակալել Մենուա արքան

3.Ի՞նչ բարեփոխումներ է կատարել Իշպուինի արքան

4.Ի՞նչ բարեփոխումներ է կատարել Մենուա արքան

Իմաստի ընկալում

Մտագրոհ <<Էրեբունի քաղաք>>

Կարճ դասախոսություն

Կազմակերպել խմբային աշխատանք

1. Արգիշտի 1-ին հզոր արքա Առաջադրանք

2. Արգիշտի 1-ին հզոր արքա .ուսումնասիրել նյութը և համառոտագրել

3.Չորս ծովերի տերություն .կազմել 3-ական հարցեր և պատասխանել

4. Արգիշտի 1-ին հզոր արքա

Կշռադատում

Աշխատանքի ներկայացում, քննարկում և գնահատում

Կատարել ձևավորող գնահատում (բանավոր պատասխաններին տալ հետադարձ կապ) և միավորային գնահատում

Տնային հանձնարարություն՝

Դաս 3 /էջ50-53

Նախորդ նյութի ամփոփում հարց ու պատասխանի միջոցով: Բոլորը հնարավորինս մասնակցեցին: Այնուհետև իրականացրի մտագրոհ, ապա կարճ դասախոսություն: Կազմակերպեցի խմբային աշխատանք, դասարանը բաժանեցի 4 խմբի և հետազոտվող աշակերտներից յուրաքանչյուրին նշանակեցի որպես այդ խմբի ավագ: Հանձնարարեցի յուրաքանչյուր խմբին ուսումնասիրել նյութը, համառոտագրել, կազմել 3-ական հարցեր և պատասխանել:

Խմբերը հաջողությամբ կատարեցին առաջադրանքը: Արտյոմը նույնիսկ լրացումներ էր անում ընկերներին: Չորսն էլ ամբողջությամբ յուրացրեցին նոր թեման: Չորսին էլ 8 գնահատեցի: Ի՞նչու 8, որովհետև կային թերություններ, իրենց խոսքն այնքան էլ հստակ ու սահուն չէր:Այս ամենը կարող են փաստել իմ գործընկերները(տե՛ս հավելված բաժնում):

Տվյալների մշակում և վերլուծություն

Հետազոտական աշխատանքսիրականացնելիս դիտարկումներ եմ կատարել ոչ միայն 6-րդ դասարանում, նաև 7-րդ դասարանում, 9-րդ դասարանում, որտեղ կային այն նույն խնդիրները ինչ որ 6-րդ դասարանում:Այն ժամերին, երբ կիրառվում էր տարբերակված ուսուցում, խմբային աշխատանք ՝ ըստ աշակերտների ընդունակությունների, ըստ առաջադրանքի, հնարավոր է լինում հասնել վերջնարդյունքի:

Հարցում եմ կատարել, լսել գործընկերներիս կարծիքըտարբերակված ուսուցման հետ կապված (10 ուսուցիչ), բոլորն էլ դրական են արձագանքել: Գործընկերներս , ովքեր ներկա էին այդ 4 դասերին, դրական գնահատեցին իմ աշխատանքը(տե՛ս հավելված բաժնում): Խմբային աշխատանքի միջոցով ես կարողացա ապահովել դրական տեղաշարժ 6-րդ դասարանում:

Հետազոտությունից առաջ

Մարիանա	7	2	7
Վարդուհի	7	5	
Մովսես	8	2	7
Արտյոմ	6	6	

Հետազոտությունին հետո

Մարիանա	7	7	8
Վարդուհի	6	7	8
Մովսես	7	7	8
Արտյոմ	6	7	8

Ամփոփում

Այս հետազոտությունը ավարտելիս կարող եմ վստահաբար ասել, որ տարբերակված ուսուցման միջոցով հնարավոր է ամբողջությամբ հասնել վերջնարդյունքին: Այս մեթոդը թույլ չի տալիս աշակերտներին զգալ թույլ ուժեղ երեխաների մեջ: Բոլորը հավասար են, բոլորը զբաղված են:

Հետազոտական աշխատանքսսկսելիս իմ առջև նպատակ էի դրել 6-րդ դասարանում բարձրացնել մոտիվացիան, ուսման նկատմամբ հետաքրքրությունը: Հետազոտության ավարտին ես հասա նպատակիս: Բարձրացավ հետաքրքրությունը առարկայի նկատմամբ, բոլորը ակտիվ, մեծ հետաքրքրությամբ մասնակցում էին դասերին, նույնիսկ ինձ հարցեր տալիս: Ուշադիր լսում էին թե՛ ինձ , թե՛ միմյանց: Սիրով կատարում էին բոլոր առաջադրանքները:

Այսպիսով, տարբերակված ուսուցման ռազմավարության կիրառման արդյունքում ես հասա և՛ մոտիվացիայի բարձրացման ,և՛ առաջադիմության բարձրացման:

Օգտագործած գրականություն

1.<<101 գաղափար նորարարական մեթոդներ կիրառող ուսուցիչների համար>>, Բուդապեշտ,2006թ.:

2. Հանրակրթության պետական կրթակարգ:

3. Ամիրջանյան Յու. ,<<Մանկավարժություն>>. Երևան,2004թ.:

Ձևավորող դասավանդման ձևաթուղթ

Հյուրընկալվող ուսուցիչ Հ. Մովսիսյան	դասարան VI
Հյուրընկալող ուսուցիչ Հ. Հովսեփյան	Ամսաթիվ 05.10

Դասի կառուցվածքային բովանդակությունը

Թեմա

- Չափ- բաժանարարություն հ.ե.ա.մ.-ով

Նպատակներ

- Ուսումնասիրել եղանակ, գտնելու համար ամենափոքր ընդհանուր բազմապատիկ:
- Զարգացնել համեմատական հմտություններ:

Վերջնարդյունքներ

- Կիրառելու են ստացված գիտելիքները գործնական խնդիրներում:
- Կկարողանան գտնել տրված թվերի ամենափոքր ընդհանուր բազմապատիկը, կիրառելով ստացված գիտելիքները գործնական խնդիրներում:

Դասի ուժեղ կողմերը, առանձնահատկությունները	Հարցեր, որոնք առաջացան դասավանդման ժամանակ
Աշակերտները ցանկություն հայտնեցին ինքնուրույն կիրառել ձեռք բերված գիտելիքները գործնական խնդիրներում: Միայն աշխատեցրեցի այն աշխատանքները, որոնք ներկայացնում էին որոշակի դժվարություն ունեցող խնդիրներ, որոնք և լուծում էին աշխատանքում:	Ինչ կիրառություն ունի ամենափոքր ընդհանուր բազմապատիկը գործնականում:

Եթե Դուք անցկացնեիք այս դասը, ինչպե՞ս կանեիք, ի՞նչը կփոխեիք: Ի՞նչ կթողնեիք նույնը:

Երբ ես աշակերտներ, կանեի շատ բաներ:

Ի՞նչ եք կարծում, աշակերտներն ի՞նչ ստացան / սովորեցին այս դասի ընթացքում /:

Աշակերտները սովորեցին համագործակցել միմյանց հետ աշխատել: Իմացան գտնել բացթողումներ և ուղղումներ անել և ճանաչեցին սիմետրիկ կետերի անվանումները:

Հասա՞վ արդյոք ուսուցիչը վերջնարդյունքներին: Ինչպե՞ս դա իմացաք:

Ինձ թվում է որոշ մտքերի ես կետերի բացթողում եղավ, բայց ոչ շատ աննշանորեն:

Ի՞նչ սովորեցիք / վերահմաստավորեցիք այս դասալսման արդյունքնում /:

Սովորեցի աշակերտներին գնահատել և ինքնուրույն կետեր ճշտումներ:

Որևէ բան կկիրառե՞ք Ձեր դասին:

Կկիրառեմ ինքնաքննությունը և ուղղում կատարել ճիշտ սովորում:

Ձևավորող դասավանդման ձևաթուղթ

Հյուրընկալվող ուսուցիչ Ա. Պողոսյան	դասարան V1
Հյուրընկալող ուսուցիչ Ա. Ավագյան	Ամսաթիվ 07.10

Դասի կառուցվածքային բովանդակությունը

Թեմա

- Պոզալա - ձուկը ծովում

Նպատակներ

- Ծանոթանալ նոր գոյերի, գիշատիչ
- ունենալ պոզալա ծովային մասին

Վերջնարդյունքներ

- Աշակերտները կսովորեն կենդանի աշխարհում նոր է հիմնադրել պոզալա ծովային, որ է հիմնադրել, իր սպասողորդ է բացել պարզել ի՞նչ ծովային- հիմ. կարևորությունը, բաց. ծով. ...

Դասի ուժեղ կողմերը, առանձնահատկությունները	Հարցեր, որոնք առաջացան դասավանդման ժամանակ
Երգերն են ներգրավել են դասարանը, դասամեջ օգտագործվել են արդյունավետ և նպատակահարմար:	Ինչ կաներ շատ հետաքրքիր է ու ուսուցչի արդյունավետ և ինքնուրույն ծանոթ ուսումնական ուշադրությամբ հանգիստ դրական միջոցներ- ծանոթ:

Եթե Դուք անցկացնեիք այս դասը, ինչպե՞ս կանեիք, ի՞նչը կփոխեիք: Ի՞նչ կթողնեիք նույնը:

Ես կփորձեի բոլորին ավելի շատ ներգրավել գործողության մեջ՝ տրամադրելով հետաքրքրական և յուրահատուկ առաջադրանքներ:

Ի՞նչ եք կարծում, աշակերտներն ի՞նչ ստացան / սովորեցին այս դասի ընթացքում /:

Սովորեցին համեմատական ձևերը, իմացան երբ, ինչ և որտեղ է հիմնադրվել Սուզայի ճարտարապետությունը:

Հասա՞վ արդյոք ուսուցիչը վերջնարդյունքներին: Ինչպե՞ս դա իմացաք:

Հետաքրքիր հետաքրքրություններ, որոնցից ես կարող էր ավելի մանրամասն ուսումնասիրել այդ ճարտարապետական հուշարձանները:

Ի՞նչ սովորեցիք / վերաիմաստավորեցիք այս դասալսման արդյունքնում /:

Սովորեցի ևս մեկ հետաքրքրական և գեղեցիկ յուրահատկությունը՝ ճարտարապետության հիմնադրվելով պատմական ձևերից:

Որևէ բան կկիրառե՞ք Ձեր դասին:

Միգուցե ես էլ ուսանողներին կկիրառեմ, եթե գոհ մնամ էր և ուսուցանող:

Ձևավորող դասալսման ձևաթուղթ

Հյուրընկալվող ուսուցիչ Ա. Գրիգորյան դասարան 6-րդ

Հյուրընկալող ուսուցիչ Հ. Հովսեփյան Ամսաթիվ՝ 12.10.2024թ.

Դասի կառուցվածքային բովանդակությունը

Թեմա «Ջրի բազմազանությունը բնության մեջ»

Նպատակներ

- ուսումնասիրել ջրերը, ծանոթանալ դրանց և մեզ շրջապատող գործոնների հետ
- կարգալսել համապատասխան նյութեր

Վերջնարդյունքներ աշակերտները կսովորեն

- գիշատիչ բնության, դրանց և մեզ շրջապատող գործոնների հետ հարաբերության մասին
- ներկայացնել դրանց և մեզ շրջապատող բազմազանությունները

Դասի ուժեղ կողմերը, առանձնահատկությունները	Հարցեր, որոնք առաջացան դասալսման ժամանակ
բարձրացած աշակերտների ուսումնական մոտիվացիան կարգապահ աշակերտների համագործակցային հմտությունները ուսուցիչ հետաքրքրվել կամ բացատրել կատարվածը նրանց կողմից	հետաքրքրվել գնահատման ձևերի

Եթե Դուք անցկացնեիք այս դասը, ինչպե՞ս կանեիք. ի՞նչը կփոխեիք: Ի՞նչ կթողնեիք նույնը:

Դասի ընթացքում հանդիպումներ էր ավելի շատ աշակերտների հետ:
Կրճատ եմ անցկացնել դասը ոչ թե 45 րոպե:
Դասի կառուցվածքին փոքրիկ հրաշքներ եմ ավելացնի:

Ի՞նչ եք կարծում, աշակերտները ի՞նչ ստացան / սովորեցին այս դասի ընթացքում /:

1. Սովորեցին բազմապատկման գործողության հատկությունների և գործակիցների մասին:
2. Սովորեցին հանդգնություն դրսևորել:
3. Ձևավորվեց աշակերտների ճանաչողական հետաքրքրությունները

Հասա՞վ արդյոք ուսուցիչը վերջնարդյունքներին: Ինչպե՞ս դա իմացաք:

Այո, ուսուցչի հետ միասին վերլուծեցինք նրանց աշխատանքները: Ուրախանում աշակերտների ինքնուրույն և արագ մտածողության մասին

Ի՞նչ սովորեցիք / վերաիմաստավորեցիք այս դասալսման արդյունքնում /:

1. Օգտագործվեց գեղեցիկ ցուցադրման միջոց, գեղեցիկ ավարտ: Ինձ դուր եկավ և հիշվեցավ:
2. Դասատուն օգտագործվեց ուրախ ինքնավստահ

Որևէ բան կկիրառե՞ք Ձեր դասին:

Կկիրառեմ դասի ընթացքում փոքրիկ կարճ հանգստացնող րոպեներ:

Ձևավորող դասավանդման ձևաթուղթ

Հյուրընկալվող ուսուցիչ Հ. Մովսիսյան	դասարան 1
Հյուրընկալող ուսուցիչ Հ. Հովհաննիսյան	Ամսաթիվ 14.10

Դասի կառուցվածքային բովանդակությունը

Թեմա

- Մեծ աշխատասիրություն կերտենք

Նպատակներ

- Ստեղծագործել նյութը, համագործակցել հիմնական և միջնակարգ II-րդ փուլերում համակարգչային ծրագրերի հետ, կատարելագործել համակարգչային հմտությունները

Վերջնարդյունքներ

- Գործածել ստեղծագործական հիմնական I-ին և միջնակարգ II-րդ փուլերում ուղղանկյուն ձևի հետ, նկարագրել ձևի երկու կողմ և կատարել երկարությունների համեմատություններ հիմնական I-ին և միջնակարգ II-րդ փուլերում:

Դասի ուժեղ կողմերը, առանձնահատկությունները	Հարցեր, որոնք առաջացան դասավանդման ժամանակ
Ուշադրությունը մեծ է, կարողանում են պատճառաբանել, ինչու են նրանք այդպես կարծում, ունեն ստեղծագործական ունակություններ:	Ինչ կերպարվեստից, մշակութային դասերում են նրանք ավելի լավ աշխատում:

Եթե Դուք անցկացնեիք այս դասը, ինչպե՞ս կանեիք. ի՞նչը կփոխեիք: Ի՞նչ կթողնեիք նույնը:

Երբ ես անցկացնեի, կստուգեի կատարածի ճիշտությունը ցեմենտոգրի ջրով խառնելիս այն:

Ի՞նչ եք կարծում, աշակերտներն ի՞նչ ստացան / սովորեցին այս դասի ընթացքում /:

Գործնական պարապմունքի միջոցով I-ին և Սարդարի II-ի գործնական ունակությունները ցեմենտի, ծեփամածիկ երբ և ինչ է կատարվել շրխկոցների, ճեղքերի կարողացան ճիշտ և ամրակուռ խոնարհել:

Հասա՞վ արդյոք ուսուցիչը վերջնարդյունքներին: Ինչպե՞ս դա իմացաք:

Կարծում եմ որ վերջնարդյունքին, որովհետև նրանք ճիշտ ջրի քանակությունը գիտեին:

Ի՞նչ սովորեցիք / վերահմաստավորեցիք այս դասալսման արդյունքնում /:

Ես սովորեցի, որ պետք է լինել շատ ուշադիր կատարելու և ժամանակակից մեթոդներ կիրառող ուսուցիչ, որն ել կլինի արդյունավետ:

Որևէ բան կկիրառե՞ք Ձեր դասին:

Ես կարծում եմ, որ գործնական պարապմունքները շատ ավելի արդյունավետ են, որովհետև խոնարհությունը աշխատանքը ճշտությամբ արդյունք:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ.ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՆ N 5 ԴՊՐՈՑ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ՝ Թվային տեխնոլոգիաների կիրառության արդյունավետությունը պատմության դասավանդման ժամանակ

Մասնակից ՝ Խաչատրյան Գայանե Վարդանի

Դպրոց ՝ Մայր Աթոռ ս. Էջմիածնի Էօրնեկեան հանրակրթական դպրոց

Վերապատրաստող ՝ Ավետիսյան Կարինե Հրանտի

Վաղարշապատ 2021

Բովանդակություն

1. Նախաբան. 3
2. Հետազոտական համատեքստ. 4
3. Գործնական համատեքստ. 5
4. Հետազոտական ընթացք. 7
5. Տվյալների մշակում և վերլուծություն. 14
6. Ամփոփում. 17
7. Գրականություն 18
8. Հավելված. 19

Նախաբան

Արդի տեխնոլոգիաների ամենօրյա զարգացումը ներթափանցում է հասարակական կյանքի մի շարք ոլորտներ և նորանոր զարգացման հնարավորություններ ընձեռում մարդկության առաջընթացի համար: Կրթական համակարգը մարդկության զարգացմանն ու ձեռքբերումներին համընթաց պետք է շարժվի և բաց լինի նոր մարտահրավերների առջև, ինչպիսիք են նաև թվային տեխնոլոգիաների մուտքը կրթության ասպարեզ, որը վերջինիս հարստացնում է նոր ու բազմապիսի գործիքներով:

Այսու մեր ընտրած թեման արդիական է, քանի որ թվային տեխնոլոգիաների կիրառությունը ուսումնական գործընթացում ամենանորարար հարցերից է:Այսօր առանց դրա նույնիսկ կրթության զարգացումը պատկերացնել չի կարելի: Այն աստիճանաբար մեր հանրակրթության մեջ պիտի իր հաստատուն տեղն ունենա և դրա ամենապարզ լուծումներից մեկը կլինի նախ տեխնիկական հագեցվածությամբ դպրոցները զինելը, ապա ուսուցիչներին մինիմալ հմտություններով վերապատրաստելը և ապա դրանց կիրառությունը կլինի օգտակար ուսումնական գործընթացում: Դրա բացառումը կրթության մեջ կարող է խզում առաջացնել անհատի սոցիալականացման ձևավորման համար, քանի որ իրականությունը շատ հաճախ պարտադրում է ժամանակին համընթաց քայլեր կատարել կրթության մեջ, ինչն օրինաչափ է: Թվային տեխնոլոգիաների կիրառությունը շատ մեծ հնարավորություն է

տալիս առաջին հերթին կրթության շահառուին ՝ ինֆորմացիայի տարատեսակ աղբյուրներին հասանելի դարձնելու, դրանցից հմտորեն օգտվելու, կազմելու, ստեղծելու, ստեղծագործելու իմաստով, դասանյութն առավել պատկերավոր, հետաքրքիր, ու մատչելի հասկանալու առումներով: Ուսուցիչն իր հերթին անընդհատ ինքնակրթվելով և կատարելագործելով իր հմտությունները, հաղորդակից լինելով նորարություններին , դառնում է դրա կրողը, համակարգողն ու կիրառողը: Հանրակրթական ուսումնական չափորոշիչների նոր, վերամշակված պահանջները դարձյալ թվային տեխնոլոգիաների կիրառումը դիտարկում են որպես կրթությունը առավել որակյալ և բազմազան դարձնելու միջոց, և դրա կրառությանը մեծ տեղ են տալիս:

Հետազոտության թեմայի ընտրությունը կանգ է առել թվային տեխնոլոգիաների կիրառությանը պատմության դասավանդման ժամանակ , քանի որ կարծում ենք , որ պատմության դասերը միայն դասագրքի նյութով անցկացնելը երկարաժամկետ կտրվածքով , սովորողին և ինչու ոչ նաև դասավանդողին կարող են ձանձրացնել , պասիվացնել նրան և դասերը կլինեն միապաղաղ ու անհետաքրքիր, ուստի թվային տեխնոլոգիաների ներառումը դասապրոցեսի մեջ, դասը կդարձնի առավել ինտերակտիվ, բազմաբնույթ, առավել պատկերավոր,առավել դյուրըմբռնելի:

Հետազոտության նպատակն է թվային տեխնոլոգիաների կիրառմամբ դասապրոցեսը դարձնել աշակենտրակենտրոն, սովորողին ուղղորդել այնպես, որ գիտելիք ստանալուց և ինֆորմացվելուց բացի դառնա նաև ինքնուրույն հետազոտող , կառուցող , ստեղծագործող անհատ, ով թվային տեխնոլոգիաների կիրառումը կդարձնի միջոց մտածական կարողությունները զարգացնելու առումով, նաև նպատակ ենք դրել ընդգրկել դասարանի բոլոր աշակերտներին, նրանց տալ անհատական կամ խմբային առաջադրանքներ:

Հետազոտական համատեքստ

Իմ առջև խնդիր եմ դրել թվային տեխնոլոգիաների գործածության ամբ դասն անցկացնել առավել սկսիվ, ներառել դասարանի բոլոր աշակերտներին, ուսումնասիրել կիրառածս մեթոդի կոնկրետ ազդեցությունը դասարանի արդյունավետության բարձրացմանը, առաջադիմության բարձրացմանը և եթե այն հաջողվի, այդ փորձը կիրառեմ նաև դասավանդածս շատ այլ դասարաններում ևս:

Ընտրել եմ VIII-դասարանը, քանի որ նկատել եմ, որ դասարանի գրեթե բոլոր աշակերտները դասագրքային նյութով միայն լավ չեն ըմբռնում համաշխարհային պատմության նոր դարաշրջաններին վերաբերող թեմաները, լավ չեն պատկերացում, թե պատմական կոնկրետ իրադարձությունն ինչ հաջորդականությամբ են իրար հաջորդել, տերմինների բացատրության հարցում դժվարություններ ունեն առջև են կանգնում, գործիչների կատարած դերի հարցում կարևորագույնը քայլերը երկրորդականից դժվարությամբ են զատում ևայլն:

Թվային տեխնոլոգիաների կիրառմամբ ցանկանում եմ վերոնշյալ խնդիրներին լուծում տալ և դրական արդյունքի հասնել: Դրա համար կատարելու եմ հետևյալ քայլերը՝ նպատակին հասնելու համար.

- Օգտագործելու եմ մի շարք մեթոդներ դասի անցկացման համար
- Դասարանը բաժանելու եմ խմբերի, որպեսզի յուրաքանչյուրի ամիատական աշխատանքը դիտարկեմ
- Դասարանը ներկայացնելու են աշակերտները, հարցեր պատրաստելու են հիմնականում իրենք
- Դասի հետառնչվող նյութերը փնտրելու և պատրաստելու են իրենք (եթե հարկ լինի,մի փոքր կուղղորդեմ)
- Մեդիագործիքներով աշխատելու են և դասերի բովանդակությանը համապատասխան նյութերով են հանդես գալու:

Գործնական համատեքստ

Տեղեկատվական տեխնոլոգիաները դարձել են ժամանակակից հասարակությունների անբաժանելի մասը[1]: Թվային տեխնոլոգիաների հաջող գործարկումը առաջարկվում է որպես տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքին մասնակցելու կարևոր նախապայման (OECD, 2015): Covid-19 համաճարակը հետագայում ընդգծեց տեխնոլոգիայի կարևոր դերը մեր առօրյա կյանքում, հատկապես դպրոցներում դասավանդելու և սովորելու համար (Seufert, Guggemos, & Sailer, 2021): Դպրոցները մեծ դեր են խաղում աշակերտներին տեխնոլոգիաները

[1] Fraillon, Ainley, Schulz, & Friedman, 2014.

գիտակցաբար և պատասխանատվությամբ օգտագործելու մարտահրավերին նախապատրաստելու գործում: Տեխնոլոգիան ոչ միայն դռներ է բացում ժամանակակից հասարակություններում սոցիալական ներառման համար, այլ նաև առաջարկում է բազմազան հնարավորություններ ինչպես աշակերտների, այնպես էլ մանկավարժների համար՝ աջակցելու ուսուցման և սովորելու գործընթացներին:

Ուսուցիչների թվային հմտությունները , տեխնոլոգիական գիտելիքները, տեխնոլոգիական-մանկավարժական գիտելիքները, տեխնոլոգիական-բովանդակային գիտելիքները և տեխնոլոգիական-մանկավարժական-բովանդակային գիտելիքները անհրաժեշտ են տեխնոլոգիայով հաջող դասավանդման համար (Mishra & Koehler, 2006): Այժմ ավելի ու ավելի է ընդգծվում տեխնոլոգիայով դասավանդման տարբեր փուլերում խնդիրների լուծման հմտությունների գաղափարը (օրինակ՝ պլանավորում, իրականացում, գնահատում և փոխանակում) (տես Բավարիայի հետազոտական խումբ, 2017; Sailer et al., 2021)[2]: Նման մոտեցումները սահմանում են տեխնոլոգիայի հետ կապված ուսուցման հմտությունները ՝ որպես գիտելիքների բազա՝ զուգորդված ուսուցման հմտությունների հետ: Նրանք պնդում են, որ տեխնոլոգիայի հետ կապված ուսուցման հմտությունները տեղին են կրթական գործունեության խթանման համար, որտեղ սովորողները ակտիվորեն օգտագործում են թվային տեխնոլոգիաները (Digital Campus of Bavaria հետազոտական խումբ, 2017): Վերջերս կատարված ուսումնասիրությունը շեշտում է, որ ուսուցիչների տեխնոլոգիայի հետ կապված ուսուցման հմտությունները ցույց են տալիս ամուր փոխհարաբերություններ թե աշակերտների, թե նաև աշակերտների ծնողների հետ: (Sailer et al., 2021):

Ինչպես փաստում է «PBS and Grunwald Associates» հետազոտական կազմակերպությունը ուսուցիչներն ավելի ու ավելի են գտնում առցանց ուսուցում և գիտելիքների փոխանակում հարթակներ, որոնք օգտակար կլինեն և դա կարող է լինել հնարավորություն տալով ուսուցիչներին ավելի արդյունավետ պատրաստվել դասերին և հարմարեցնել դասերն ու ուսուցման արդյունքները: Հետազոտությունը հայտնում է, որ հարցված ուսուցիչների 97%-ն օգտագործել է թվային մեդիա

[2] Ertmer & Ottenbreit-Leftwich, 2010; Zimmerman & Campillo, 2003.

ինտերակտիվ խաղերի, գործունեության որոնման և կառավարման համար, դասի պլաններ և սիմուլյացիաներ[3]:

Թվային տեխնոլոգիաների ուսուցումն ու ուսուցանումը կարող են օգնել 5-ից 18 տարեկան սովորողներին գիտակցել տարբեր ձևերով սովորելու հնարավորության, տեղեկատվության ավելի շատ աղբյուրների հասանելիության մասին: Նվաճումների բարձրացման առումով այս օգուտները ներառում են կարճաժամկետ արդյունքներ, ինչպիսիք են ուսուցման նկատմամբ վերահսկողության ավելի մեծ զգացում ունենալը և հմտությունը կիրառելու ավելի մեծ վստահություն, միջնաժամկետ արդյունքների միջոցով, ինչպիսիք են գիտելիքների և հմտությունների ավելի արագ ձեռքբերումը և բարելավված ազդեցությունները, դրա մասին է խոսում սովորողների առաջադիմության աճը, ովքեր հասել են ավելի բարձր արդյունքնրի քննությունների կամ թեստի լրացման ժամանակ, որտեղ օգտագործվել է թվային տեխնոլոգիա:

Գոյություն ունեն մի շարք հետազոտություններ, որոնք ուսումնասիրել են թվային գործիքների և ռեսուրսների ազդեցությունը երեխաների նվաճումների վրա մի շարք ոլորտներում: Օրինակ, Հարիսոնը, ով կրթության տեսաբաններից է և մի շարք այլ հետազոտողներ հայտնաբերել են վիճակագրորեն նշանակալի բացահայտումներ՝ դրականորեն կապելով տեղեկատվականական տեխնոլոգիաների օգտագործման ավելի բարձր մակարդակները դպրոցական նվաճումների հետ, հետազոտությունը կատարվել է Անգլիայում, մի շարք առարկաների ուսուցման ժամանակ արձանագրել են դրական արդյունք տեխնոլոգիաների կիրառման և արդյունավետության ժամանակ[4]:

Հետազոտական ընթացք

Այսպիսով, հետազոտական աշխատանքը կատարվել է համաշխարհային պատմության 4 դասերի շրջանակներում ՝ «Արդյունաբերական զարգացման

[3] Literature Review on the Impact of Digital Technology on Learning and Teaching, https://dera.ioe.ac.uk/24843/1/00489224.pdf

[4] Digital learning in schools: What does it take beyond digital technology? https://www.sciencedirect.com/science/article/pii/S0742051X21000706

արդյունքները» , «Լուսավորության դարաշրջանը», «Հասարակության վերակառուցման հեղափոխական ուղին» (2 ժամով)։

Առաջին դասն անցկացնում ենք շրջված մեթոդով , նախապես աշակերտներին հանձնարարված է եղել կատարել թեմայի ուսումնասիրություն , բաժանել ենք դասարանը 3 խմբի (յուրաքանչյուր խմբում 4 հոգի) և ամենքին նախապես տվել հստակ հանձնարարություն։ Առաջին խումբը պետք է 15 րոպեի ընթաքում ներկայացներ դասի առաջին մասը, այն է՝ «Փոփոխություններ հասարակական կյանքում» հատվածից և այն ներկայացներ classtools.net մեդիագործիքի օգնությամբ՝ իրենց նախընտրությամբ ընտրելով այդ կայքի որևէ գործիք, որը և մատչելի կբացատրեր այդ հատվածը և նաև կներառեր հարցեր մյուս խմբի անդամներին։ 2-րդ խմբին հանձնարարված էր «Քաղաքների զարգացումը» հատվածը, իսկ խմբի անդամներին հանձնարարված էր համեմատություններ անցկացնել նոր դարերի քաղաքները միջնադարյան քաղաքների հետ, որը լավագույնս կստացվեր miro.com մեդիագործիքի օգնությամբ, որտեղ կարող էին դիագրամներ կազմելով կատարել այդ համեմատականները և այն պետք է ներկայացնեին առավելագույնը 10 րոպեում։ 3-րդ խումբը պետք է «Մարդկանց կենսապայմանների բարելավումը» հատվածը ներկայացներ ևս classtools.net մեդիագործիքի կիրառմամբ, նրանց տրվում էր 10 րոպե ժամանակ այն ներկայացնելու համար։

Դասը սկսում ենք ապահովելով տեխնիկական բոլոր այն միջոցները, որոնք անհրաժեշտ են դասն անցկացնելու համար, այն է՝ համակարգիչ, պրոյեկտոր, դասին հատուկ դասասենյակի կահավորում, նաև տետրեր ու գրիչներ՝ գրառումներ կատարելու համար։

Առաջին խմբի անդամները ներկայացնում են դասը, նրանք classtools.net-ի 3D gallery գործիքի օգնությամբ նախ տեղադրեցին մի քանի լուսանկարներ, դասարանին հարցեր ուղղեցին , թե այդ հավաքական նկարները սոցիալական որ դասն են արտացոլում և պատասխաններից հետո տեղադրեցին ձեռներեցների ու բանվորներ դասին վերաբերող հավաքական լուսանկարներ , բացատրեցին նոր դասի ներկայացուցիչների առանձնահատկությունները , տարբեր երկրների օրինակով այդ դասին բնորոշող լուսանկարներ տեղադրեցին ու համեմատություն անցկացրին

միջնադարի դասերի հետ , դարձյալ օգտվելով այդ կայքի մեկ այլ գործիքից ՝ Վեննի դիագրամ ստեղծելու հնարավորությունից (Venn Diagram)։ Խոսեցին նաև իրենց հատվածից մի քանի նոր եզրույթների մասին՝բանկ, կապիտալիստ, բուրժուա, ֆերմեր։ Դասարանի օգնությամբ լրացրին այս բառերի իմաստները, աշակերտներն այդ ժամանակ գրառումներ կատարեցին իրենց տետրերում և իրենց հատկացված 5 րոպե ժամանակամիջոցն օգտագործեցին արագ հարցեր ուղղելով ընկերներին,ամփոփելով իրենց ներկայացրածն ու ավարտեցին։

2-րդ խմբի անդամները ինչպես նշել էինք օգտագործել էին miro.com մեդիագործիքը , որով պետք է ներկայացնեին քաղաքները։ Սկզբում, մինչ դիագրամը ներկայացնելը, տեղադրեցին 3 րոպե տևողությամբ մի տեսանյութ[5], որտեղ ցույց էր տրվում նոր դարաշրջանում կառուցվող քաղաքը (Լոնդոնը), ցույց էր տրվում, թե ինչ ենթակառուցվածքներ են ավելանում միջնադարյան քաղաքին նոր դարերում։ Այնուհետև տեղադրեցին Վեննի դիագրամը, որից ինչ- որ հատվածներ բաց էին թողնված և դասարանի օգնությամբ պիտի լրացվեր այն, նաև դիտած տեսանյութից կարող էին օգտվել, ինչը և արվեց և նրանք ևս ավարտեցին իրենց հատվածը։ Վերջին խմբի անդամները ներկայացրին դասի իրենց հատվածը դարձյալ classtools.net –ի օգնությամբ, սկզբում տեղադրեցին տնտեսագետ Ադամ Սմիթի հետևյալ խոսքերը. «ազգերի հարստության աղբյուրը աշխատանքն է» և մեկնաբանության համար դիմեցին դասարանին, այնուհետև breakingnews մեդիագործիքի օգնությամբ տեղադրեցին մի տեղեկություն, համաձայն որի ասվում էր, թե «Ուշադրություն!!! գործադուլներ են սկսել աշխատավորները ողջ երկրով մեկ, նրանք հանդես են գալիս պահանջով»։ Այնուհետև սկսեցին պատճառաբանել, թե ինչու են սկսվել գործադուլներ և ինչ հաջողությունների են հասել այդ սոցիալական ակցիաների միջոցով։ Ջուգահեռ ցուցադրում էին լուսանկարներ, որոնք արտահայտում էին սոցիալական ծանր պայմանները հասարակական ցածր խավի ներկայացուցիչների։ Այդ ամենը ներկայացնելուց հետո, երբ դասին մնացել էր 10 րոպե, մենք ամփոփեցինք այս դասը։ Աշակերտները պատասխանեցին ուսուցչի կողմից նախապես կազմված

[5] https://www.youtube.com/watch?v=KtuXUQBchCY

հարցերին,այդ ամենը տևեց 5-7 րոպե, վերջին 3 րոպեներին աշակերտները գնահատվեցին և հանձնարարվեց նոր դաս։

Հաջորդ թեման «Լուսավորության դարաշրջանն» է։ Դասն անցկացնում են դարձյալ 3 խմբերի աշակերտները , ուսուցիչը այս անգամ ևս հանդես է գալիս ուղղորդողի և իրադարձությունները վերահսկողի դերում։ Խմբերի կազմերը աշակերտների խնդրանքով մի փոքր փոփոխվել են և արդեն վերոնշյալ մեդիագործիքները պետք է կիրառեն այս անգամ ևս, դասի ներկայացման ժամանակ։

Դասի անցկացման համար օգտագործվում է ԽԻԿ մեթոդը։ Առաջին խմբին հանձնարարված էր մինչև իրենց թեմային անցնելը սկսել «լուսավորական շարժում» հասկացության հարցումը դասընկերներին՝ մտագրոհի միջոցով։ Այսպիսով մի քանիսը շատ ակտիվ կերպով ասացին ասոցացնող բառեր, բառակապակցություններ, որոնք զուգահեռ գրի էին առնվում գրատախտակին աշակերտներից Էդիկի կողմից ։ Այնուհետև այս խոմբը ներկայացրեց լուսավորական գործիչներից Ջոն Լոքի մասին, այս անգամ classtools.net –ի միջոցով աշակերտները ցիտատների տեսքով ներկայացրել էին վերջինիս գաղափարները, նրանց ազդեցությունը փորձեցին կապել նոր դարաշրջանի մի շարք նվաճումների հետ և նստեցին։ Այս խմբի ընդհանուր ելույթի տևողությունը 10 րոպե էր։

2-րդ խմբի ներկայացուցիչները պետք է ներկայացնեին ֆրանսիացի 3 նշանավոր լուսավորական գործիչների և սկսեցին արդեն իրենց լավ ծանոթ մեդիագործիք կիրառելով ։ Նրանք դարձյալ 3D gallery գործիքի օգնությամբ տեղադրեցին Մոնտեսքյոյի, Վոլտերի և Ռուսոյի լուսանկարները, այնուհետև մի փոքր ներկայացրին նրանց կենսագրական տվյալներից հետաքրքիր տեղեկություններ և անցան բուն գաղափարների ներկայացմանը։ Նախ առանձին ներկայացրին ամենքին, կազմել էին աղյուսակ, որտեղ խառը ներկայացված էին 3 գործիչների ներկայացրած պետության կառավարման ձևերը , աշակերտներն իրենք պետք է ճշգրտեին, թե որ միտքն ով է ասել , և վերջում արդեն ստուգում էին ,թե որքանով են ճիշտ պատասխանել աշակերտներն այդ հարցերին։Այս փուլը բավականին ակտիվ անցավ և տևեց 15 րոպե, երկրորդ խմբի անդամներն այսքանով ավարտեցին։ 3-րդ խմբի անդամները ներկայացրին «Լուսավորյալ միապետներին»։ Սա կշռադատման փուլն էր։ Նրանք ունեին 10 րոպե

ժամանակ՝ ներկայացնելու համար իրենց թեման: 3-րդ խմբի անդամները պատրաստել էին սահիկաշար, որում ներկայացնում էին լուսավորյալ միապետներին: Նրանց կերպարով փորձել էին հիմնավորել բացարձակ միապետության առավելությունը, պայմանով, որ եթե լավ միապետ կառավարի, ապա այն կհաջողի, բերեցին հիմնավոր փաստեր, ապա ընկերներին ուղղեցին նախապես իրենց կողմից պատրաստված հարցերը, որով փորձեցին ստուգել իրենց ներկայացրածը: Տրվեցին և փակ հարցեր (օր.՝ Ո՞մ խոսքերն էին.«Պետությունը ես եմ») և բաց հարցեր (օր.՝ «Արդյո՞ք արքային թույլ կտային իրականացնել միայնակ օրենքներ հրապարակեր»):

Այսպիսով դասի 10 րոպեն օգտագործեցինք քննարկումների, ամփոփման վրա և կատարեցինք գնահատում: Այս անգամ աշակերտները իրենք իրենց պատասխանները գնահատեցին՝ պատասխանելով, թե ինչը հիանալի ներկայացրին և որտեղ մի փոքր թերացան: Հաջորդ դասը, որը հանձնարարվեց իրենց, 2 ժամով պետք է պատրաստեինք: Տրվեց «Հասարակության վերակառուցման հեղափոխական ուղին» մինչև «Ամերիկայի Միացյալ Նահանգների կազմավորումը» հատվածը:

3-րդ դասի անցկացման համար ինչպես նշեցինք դասի մի մասն էր հանձնարարվել: Դասարանն ապահովված էր անհրաժեշտ տեխնիկական բոլոր միջոցներով: Այս անգամ բացի բուն դասից և խմբերի միջև թեմաները բաժանելիս, նրանց նախապես տրվե էին հարցեր,ամեն խմբին մեկ հարց, որն իրենց հատվածից չէր և դա ենթադրում էր , որ իրենք չպետք է բավարարվեին միայն իրեց հատվածի մանրակրկիտ ուսումնասիրությամբ,այլև պետք է ուսումնասիրեին ողջ դասը՝ հարցի պատասխանն իմանալու համար: Դրանք բաց հարցեր էին և խումբն իր հատվածը ներկայացնելուց հետո,պետք է իրեն հատկացված ժամանակամիջոցի ընթացքում պատասխաներ այդ հարցին:

Առաջին խումբն իր հատվածը ներկայացնելու համար ուներ 10 րոպե ժամանակ: Աշակերտներն օգտագործելով classtools.net կայքի մեդիագործիքից, կենտրոնում տեղադրել էին, թե ինչ է հեղափոխությունը, գրել էին այդ բառի հետ ասոցացվող և կապ չունեցող մի շարք բառեր և հասկանալու համար թե ինչ է հեղափոխությունը, դիմեցին իրենց ընկերներին: Աշակերտների մեծ մասն ընտրեց ճշգրիտ ասոցացվող բառ կամ բառակապակցություն, իսկ վերջում նրանք բացեցին

արդեն սահմանումը, որը մեկնաբանեցին, բերեցին օրինակներ: Սա տևեց 7 րոպե, իսկ մնացած ժամանակահատվածում պատասխանեցին իրենց նախապես տրված հարցին, այն է. «Ինչո՞ւ Անգլիայում 17-րդ դարում հակասություններ առաջացան միապետի և խորհրդարանի միջև»: Նշեմ նաև,որ խմբի անդամներից յուրաքանչյուրն իր մեկնաբանությամբ հանդես եկավ, պատասխանը սպառիչ էր և ժամանակն ավարտվելուն պես շարունակեցին 2-րդ խմբի անդամները:

Այս խմբի անդամները հանդես եկան շատ հետաքրքիր մեդիագործիքի կիրառությամբ: Դարձյալ օգտվել էին classtools.net-ից,որի fakebook գործիքով փորձել էին ներկայացնել անգլիական հեղափոխությունը: Ցույց էր տրվում, որ անգլիական հեղափոխությունը սկսվել է սոցիալական կայքում, երբ «խորհրդարանի» էջ բացած անդամները հայտարարություն էին տարածել կայքով, թե սկսում են հեղափոխություն, կայքում գրանցված «ժողովրդի» մեծ մասը հավանություն էր տվել դրան և միապետ Չարլզ 1-ինի դեմ սկսվում են ակցիաներ: Օլիվեր Քրոմվելն ի վերջո ամենաշատ «հետևորդներն» ունենալով,դառնում է պրոտեկտոր: Այս ամենը շատ տպավորիչ էր աշակերտների համար, նրանք սա ներկայացրին 10 րոպեի ընթացքում,քանի որ րենց նյութը համեատաբար ամենածավալունն էր, նրանց ժամանակն ամենաերկարն էր և 5 րոպեն օգտագործեցին իրենց նախապես տրված հարցին պատասխանելով: Հարցը հետևյալն էր. «Արդյո՞ք պրտեկտորատն Անգլիայում երկար կտևեր, ներկայացրեք հիմնավորումներ»: Խմբի անդամները ներկայացրին իրենց հիմնավորումները, ավարտեցին:

3-րդ խմբի անդամները 10 րոպեի ընթացքում պետք ներկայացնեին, թե ինչպես Սահմանադրական միապետություն հաստատվեց Անգլիայում: Այս խմբի աշակերտները edu.glogster.com ծրագրի միջոցով ներկայացրին նոր համակարգի ստեղծումը՝ ներկայացնելով պաստառ, որը ստացել էին այդ ծրագրով, ցուցադրեցին նկարներ, վեննի դիագրամով միապեության և հանրապետության միջանկյալ էին դրել սահմանադրական միապետությունը և ամփոփեցին Անգլիայում հասարակական ցնցումները, նշելով դրանց ձեռքբերումները և դրանով պատասխանելով նաև նախապես տրված հարցին:

Այսպիսով, ամփոփելով այս թեման հարց ու պատասխան ձևով, տեղադրեցինք classtools.net կայքի միջոցով ստացված խաչբառը,որը նախապես կազմել էինք և ներառել հարցեր նախորդ թեմաներից: Աշակերտները կարողացան հաջողությամբ պատասխանել հարցերին և լուծել խաչբառը: Հանձնարարվեց այս դասի շարունակությունը:

4-րդ դասն անցկացնելու համար արդեն խմբերի չէինք բաժանել դասարանին նախապես, սակայն աշակերտներն իրենք պետք է համագործակցեին իրար հետ, այնպես, որ կարողանային ուսուցչի տրված հանձնարարությունները կատարել 45 րոպեի ընթացքում: Դասի թեման էր «Ամերիկայի Միացյալ նահանգների կազմավորումը»: Աշակերտներին հանձնարարվել էր գտնել թեմային համապատասխան ծաղրանկարներ, թեմատիկ տեսանյութ, անկախության գործիչների մասին ինֆորմացվեին և օգտագործեին նկարներ հոչկագրի պատրաստման, պատերազմական գործողությունների թեմաներով, classtools.net կայքի օգնությամբ Ամերիկայի քարտեզով կարողանային ցույց տալ 13 նահանգների տեղը, Անկախության հռչակագրի կազմման վայրը : Այնպես պիտի կատարեին այս առաջադրանքները, որ ընդգրկեր դասի բոլոր կարևորագույն կետերը:

Աշակերտները կատարել էին աշխատանքի բաժանում: Նրանք, ովքեր պետք է ներկայացնեին Ամերիկայում ստրկության առաջացման ու Անկախության պատերազմին վերաբերող տեղեկություններ, սահիկաշարով տեղադրեցին ծաղրանկարներ և դրանց մեկնաբանության համար դիմեցին դասարանի աշակերտներին: Յուրաքանչյուրի մեկնաբանության համար տրվեց 5 րոպե ժամանակ: Այն անցավ շատ ակտիվ. 3 աշակերտներին հիմնականում բավարարեց դասաարանի կողմից հնչող պատասխանները, լրացրին մի փոքր ավելացնելով իրենց կողմից և դասի մի հատվածն անցավ էսպես: 3 հոգի աշխատել էին տեսանյութի որոնման և և այն բացատրելու ուղղությամբ: Տեսանյութն[6] ուներ 10 րոպե տևողություն , ուսուցողական էր և ընթացքում աշակերտները ընդհատելով թարգմանում էին դասարանի համար, եթե դրա անհրաժշտությունն առաջանում էր (տեսանյութը ներկայացվում էր անգլերենով), ներկայացված էին անկախության պատերազմի բուն

[6] https://www.youtube.com/watch?v=diOTAe-sNa4

գործողությունները՝ սկիզբը, ընթացքն ու ավարտը։Նրանք ընթացքում նաև պատասխանեցին աշակերտների համար հետաքրքրողական հարցերին և ընդհանուր 15 րոպե տևեց նրանց ներկայացումը։ Հաջորդ աշխատանքը կատարել էին 3 աշակերտներ դարձյալ օգտվելով classtools.net կայքի այս անգամ hotspot գործիքից։ Նրանք տեղադրել էին Ամերիկայի 18-րդ դարի քարտեզը, նշել էին նահանգները, նրանց տեղադրությունը, այդ տարաքծներում առկա խոշոր նավահանգիտները, նաև հետաքրքրական տեղեկություններ նրանց տնտեսական առավելություններից։ Այս ամենի ներկայացումը տևեց 7 րոպե,նրանց ավարտելուց հետո մոտեցան ևս 3 աշակերտներ, նույն մեդիագործիքի կիրառմամբ շարունակեցին փոխրացնել իրենց ընկերներին։ Այդ քարտեզի վրա կային նշված կարմիր կետեր,որոնց վրա սեղմելով բացվում էին ինֆորմացիա կրող նյութեր հիմնականում լուսանկարներ,որոնք մեկնաբանվում էին դասը ներկայացնող աշակերտների կողմից։ Սկզբում սեղմեցին Ֆիլադելֆիա քաղաքի վրա և բացվեց ինֆորմացիա, հետո լուսանկար, մեկնաբանեցին այդ լուսանկարի գործիչներին և թե ինչ կարևոր իրադարձություն տեղի ունեցավ 1776 թ-ին այդ քաղաքում։ Ապա մի լուսանկար ցուցադրեցին, որը բնորոշում էր Ամերիկայի հաղթանակը պատերազմում ՝ Եվրոպայի մի շարք երկրների օգնությամբ։

Այնուհետև 3 լուսանկարներ տեղադրեցին և հարց ուղղեցին դասարանին,թե այդ լուսանկարների մեջ ինչ կապ կա։ Աշակերտներից մեկը շատ արագ գլխի ընկավ և նշեց, որ նախագահական, Կոնգրեսի և դատարանի շենքերը իշխանության բաժանումն էին ցույց տալիս։ Բոլոր հիմնական կետերին անդրադառնալով շատ հետաքրքիր մեթոդով նրանք և ավարտեցին, իսկ վերջին 3 րոպեն օգտագործեցինք գնահատման ու նոր դասի հանձնարարման վրա։

Տվյալների մշակում և վերլուծում

Այսպիսով, մեր կատարած ուսումնասիրությունների համար թիրախային խումբ էինք ընտրել VIII՝ դասարանը: Փորձելով հասնել որոշակի չափելի արդյունքների, մենք սկսելիս ունեինք մի քանի մտավախություն՝ ճիշտ դիտարկումներ անելու, ժամանակը ճիշտ կառավարելու և մի շարք այլ խնդիրներ: Սակայն գլխավոր մտավախությունն իմ կողմից այն էր, որ չպետք է մեդիագործիքի դերը միայն իրենով համարել արդեն հաջող ու արդյունավետ դասի անցկացման համար, քանի որ դրա դերի գերագնահատումը կարող էր հակառակ էֆեկտն ունենալ դասի համար, դրանից կարող էր տուժել նաև դասարանը, որը կարող էր տարվել մեդիագործիքով աշխատելու իրենց համար հաճելի գործընթացին, բայց բովանդակությունը չհամապատասխաներ վերջինիս, կամ դրանց համընկնումը չլիներ և չունենայինք սպասելիք արդյունքը: Բայց և այնպես կարծում ենք, որ 4 դասի ընթացքում կարողացանք մեծամասամբ դրական արդյունք ապահովել:

Հիմա խոսենք, թե ինչու ենք հենց ընտրել 8-րդ դասարանը:

Այս դասարանի աշակերտները բավականին կարգապահ են, գտնվում են քննադատական մտածողության ձևավորման որոշակի փուլում,սիրում են հարցեր տալ դասի իրենց համար դժվարըմբռնելի հատվածների դեպքում, պատասխանատու են և կատարում են հանձնարարված ցանկացած առաջադրանք: Սրա հետ զուգահեռ նաև նկատելի է այն, որ իրար հետ չեն կարողանում համագործակցել և կամ ունենում են խնդիրներ այդ դեպքերում, ցանկանում են յուրովի աչքի ընկնել, նույնիսկ փորձելով ստվերել ընկերների պատասխանները և հակառակը՝ իրենցն ընդգծել: Հոգեբանի հետ խրհրդակցության արդյունքում նաև համոզվեցինք, որ սրա պատճառներից մեկն էլ սեռահասունացման տարիքին բնորոշ հատկությունների դրսևորմամբ է պայմանավորված, ուստի նկատելի այս փաստերը կարելի էր շտկել նաև խմբային աշխատանքներ հանձնարարելով, որտեղ յուրաքանչյուրն իր դերը կունենար և նրանից կախված կլիներ խմբի արդյունքը: Ինչ վերաբերում է թվային տեխնոլոգիաների կիրառմանը, ապա դասը տեխնոլոգիաների կիրառմամբ անցկացնելը նրանց կարողություններն իմ դիտարկմամբ ավելացրեց: Եթե նախկինում հիմնականում ես էի պատրաստում նյութեր և ներկայացնում նրանց դասի ժամանակ, նրանց մնում էր հարցերին պատասխանելն ու մեկնաբանելը, ապա անցկացված 4 դասերի ընթացքում

նրանք էին, որ գերազանցապես հանդես եկան դասը թե ներկայացնողի, թե մեկնաբանողի, թե պատրաստողի դերում: Այսպիսով նաև դասերը դարձան աշակերտակենտրոն: Մեդիագորիքներով դաս անելը նրանց համար չափազանց հետաքրքիր էր, և իրենց պատրաստած նյութերը տպավորություն էր,թե իրենց հաճույք է պատճառում: Խմբերից յուրաքանչյուրը փորձում էր առավել կրեատիվ ու ստեղծարար մոտենալ իր մատուցվող նյութին: Թիմի ներսում նկատելի էին իրար օգնելու ցանկությունը, որևէ խափանման դեպքում խմբի անդամներից մեկը կարողանում էր հիանալի լրացնել իր խմբի անդամին և միասնական ներկայանալն ու իրար հաջորդաբար շարունակելը շատ սահուն էր երևում: Հանուն արդարության նշենք, որ նրանց նախապես ասել էր, որ խումբը գնահատվելու է այն ժամանակ,երբ հանդես կգա թիմային ոգով և խմբի ադամներից յուրաքանչյուրի աշխատանքը տեսանելի կլինի: Ինչևէ այս խնդիրը կարծես 4 դասերի ընթացքում, գնալով լուծվում էր, ինչը շատ կարևոր ձեռքբերում ենք համարում: Նկատելի էր, որ աշակերտների մոտ ձանձրույթ գրեթե չառաջացավ, քանի որ բոլորին հետաքրքիր էր մյուս թիմերի նյութերը, իսկ ամեն ներկայացնող թիմ իր հերթին պետք է ապահովեր ակտիվ շփում, հարց ու պատասխան դասարանի հետ (սա ևս իմ ցուցումով), ուստի ձանձրանալ գրեթե անհնար էր: Երեխաների մոտ համեմատելու, վերլուծելու, մեկնաբանելու, հարցերին ստեղծագործաբար մոտենալու կարողությունները ևս զարգացան: Դա նկատելի էր իրենց պատասխանների որակից, նրանք նախորդ պատմության դասերին երբեք այդքան մանրամասն չէին մեկնաբանել ծաղրանկար կամ սովորական լուսանկար, տերմինները մտապահելու համար չեն կազմել խաչբառներ, թեմաների հաջորդականությունը պահպանելու, մտապահելու համար համեմատականներ և կռահումներ չէին կատարել, իսկ մեդիագործիքների կիրառմամբ դա շատ ավելի տպավորիչ էր ստացվում: Նրանք տեսան, լսեցին և պատրաստեցին նյութեր, որով ավելի լավ կարողացան յուրացնել դասի նյութը: Իրենց իսկ գնահատմամբ «համաշխարհային պատմության դասերն էսքան հետաքրքիր են փաստորեն ու էդքան էլ բարդ չեն,ինչպես նախկինում էինք մտածում», այսպես ամփոփումներից մեկի ժամանակ ասաց աշակերտներից Լյուսին:

Աշակերտների առաջադիմության հետ կապված ևս արձանագրումներ կատարվեցին: Եթե նախկինում 3-4 աշակերտներ դասերին կարող էին պասիվ լինել,

ապա խմբի ներսում նրանց աշխատանքը ևս տեսանելի էր։ Աշակերտ կար դասարանում, ով կաշկանդվում էր արտահայտվել, հուզվում էր և չէր ցանկանում պատասխանել։ Ուրախալի էր նաև այն,որ նրան ևս ակտիվ տեսա, լսեցի նրա պատասխանը, իր պատասխանն անգամ իր համար էր ուրախալի, դասարանի աշակերտները նշեցին, որ նա թիմի հետ շատ ակտիվ է աշխատել։ Նրա աշխատանքը ես բարձր գնահատեցի։

Այսպիսով, փորձենք այս հավաքագրած տվյալները աշակերտների արդյունքների հետ կապված վերածել տոկոսային թվերի։ Իմ գնահատմամբ, եթե մինչև այս հետազոտությունը աշակերտների ակտիվությունը 65% էր և ինչ-որ աշակերտներ կարող էին ամբողջ դասին պասիվ մնալ, միայն կոնկրետ իրենց ուղղված հարցերին պատասխանեին, ապա հիմա բոլորի ակտիվ ներգրավվածությունը տեսանելի էր և կարող ենք գնահատել 100%-ով։ Եթե դասերը նախկինում այդքան էլ հարուստ չէին մեդիագործիքների կիրառությամբ, ապա մեծացրինք դրանց դերը դասերի անցկացմամբ և դա առավել արդյունավետ էր աշակերտների ընկալման համար,եթե նախկինում այդ ցուցանիշը կարող եմ գնահատել 70%-ով, ապա այժմ այն տատանվում էր 90-95%-ի միջակայքում։ Կարող ենք նշել, որ մեր առջև դրված խնդիրների լուծմանը հասանք։

Ամփոփում

Ամփոփելով հետազոտությունը նշենք, որ համաշխարհային պատմության դասավանդման ժամանակ շատ կարևոր է թվային տեխնոլոգիաներով հարուստ դասի անցկացումը։ Նախ առաջին հերթին այն պատճառով, որ համացանցը հարուստ է կրթական տարատեսակ նյութերով, որոնք հենց թեմատիկ բնույթ ունեն և վերաբերում են մեր թեմաներին, և դրանք դասին չօգտագործելն ուղղակի կսահմանափակի աշակերտների տեսադաշտը։ Թվային տեխնոլոգիաների կիրառմամբ աշակերտների ոգևորվածությունն էլ ավելի մեծացավ։ Աշակերտների նախաձեռնողականությունը ևս բարձրացավ, նրանք ինֆորմացիա ստացողից վերածվեցին ինֆորմացիան մատչելի կերպով ներկայացնողի, բացատրողի, վերլուծողի, ձեռք բերեցին նյութին

քննադատորեն վերաբերվելու հատկանիշներ: Կարող ենք հստակ ֆիքսել, որ նրանց մեդիագրագիտության մակարդակը ևս աճեց, քանի որ իրենց նյութը ներկայացնելիս պահանջվում էր նշել նյութի աղբյուրը, հեղինակին, աշակերտները սկսեցին կարևորել պատմության մեջ այդ գործոնը ևս, առհասարակ դրա կարևորությունը առօրյայում:

Կատարած վերլուծության արդյունքում մենք ևս մեկ անգամ համոզվեցինք , թե թվային տեխնոլոգիաների կիրառությունն ինչ դրական արդյունքներ կարող են ունենալ ուսումնական գործընթացում, մանավանդ այն դեպքերում, երբ համաճարակի տարածման հետևանքով կրթությունը դառում է հեռավար, իսկ մեդիագործիքների կիրառումը կրթության շարունակականությունն ապահովելու հիանալի միջոց, ուստի աշակերտները պետք է տիրապետեն այդ գործիքներին և գրագետ կիրառեն դրանք ուսումնական պրոցեսում:

Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ

1. Digital learning in schools: What does it take beyond digital technology? https://www.sciencedirect.com/science/article/pii/S0742051X21000706
2. EFFECTIVENESS OF DIGITAL LEARNING SOLUTIONS TO IMPROVE EDUCATIONAL OUTCOMES: https://www.unicef.org/media/103246/file/Effectiveness%20of%20digital%20learning%20solutions%20to%20improve%20educational%20outcomes%20-%20A%20review%20of%20the%20evidence.pdf

3. Literature Review on the Impact of Digital Technology on Learning and Teaching.2015
4. Teacher technology change: How knowledge, confidence, beliefs, and culture intersect
   Journal of Research on Technology in Education, 42 (3) (2010), pp. 255-284.
5. https://journals.sagepub.com/doi/10.3102/0034654315582065

Հավելված

Դասապլան
Ուսուցիչ՝ Գայանե Խաչատրյան

Առարկա՝	Համաշխարհային պատմություն	Ամսաթիվ	**28.09.2021**	Կիսամյակ	**I**	Դասարան	**8**
Խմբի բացվածք՝	Աղջիկ: **6** Տղա: **6** ՇՏ ԱՈՒԿ: ՀԵԼ						

Թեմա՝	Արդյունաբերական զարգացման արդյունքները
Օգտագործվող նյութեր՝	Ներկայացվելու է պրեզենտացիաներով,աշակերտներն իրար տալու են հարցադրումներ և լինելու են նաև ծաղրանկարներ,որոնք պետք է մեկնաբնվեն աշակերտների կողմից:
Ամբողջական պատկեր՝	Աշակերտներն արդեն ուսումնասիրել ենթե ինչ է արդյունաբերական հեղափոխությունը: Նախորդող դասի ընթացքում նրանք տեղեկացել են նոր խավի առաջացման և կատարած դերի մասին: Այս դասը տրամաբանական հաջորդականությունն է նախորդի՝նոր փոփոխությունները դիտարկվելու են արդեն սոցիալական միջավայրում: Ավելի կամրպնդի նրանց գիտելիքները և մեդիագործիքների կիրառմամբ ավելի լավ պատկերացում կկազմեն այդ իրադարձության մասին:
Դասի նպատակը՝	Հասկանալ նոր ժամանակներում ձևավորված համակարգի մասին, համեմատել նոր իրադրությունը միջնադարյան ժամանակաշրջանի հետ,գտնել ընդհանրություններ և տարբերություններ,վերլուծել գործադուլների առաջացման պատճառները:
Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ	
Վերջնարդյունքները	• Կկարողնա բացատրել նոր բարփոխումների բերած փոփոխությունները • Կկարողանա վերլուծել հասարակական գործընթացների առաջացման պատճառները • Կկարողանա եզրահանգումներ կատարել հասարակական ակցիաների արդյունավետության մասին:

Ուսուցիչների զարգացման ընթացիկ նպատակները	Նպատակներին հասնելու ռազմավարությունը
Դասարանում բարձր ներգրավվածության ապահովում: Նպաստել աշակերտների հետաքրքրվածությանը՝ տվյալ թեմայի մասին:	Ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների ամրապնդում: Հարցերի, քննարկումների միջոցով՝ բոլորի համար ակտիվության ապահովում: Պատկերավոր նյութերի ներկայացմամբ հետաքրքրության խթանում:

Գործողություններ **(**ժամ/ տևողություն**)**	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Պլանավորած տարբերակում և ՈւԳ ռազմավարություններ Ուսուցիչ	Առանցքային հարցեր Հիմնական ստուգումներ **(**հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին**)**
Մուտք դասարան Գործողություններ. Մաս **I** Ընդհանուր **15** րոպե	Մուտք դասարան: Բոլորը զբաղեցնում են իրենց տեղերը: Աշակերտները ,որոնք բաժանված են խմբերի, ներկայացնում են իրենց հատվածը: Տեղադրում են մեդիագործիքներով իրենց պատրաստած նյութը,ակտիվ կապ պահելով դասարանի հետ հարց ու պատասխան ձևով:	Մտնելով դասարան՝ ողջունում ենք բոլորին: Լինում ենք հետևողական, որպեսզի բոլորը լինեն ակտիվ, պատասխանեն հարցերին:	Առաջին խմբի կողմից նյութի ներկայացում:
Գործողություններ. Մաս **II** **20** րոպե	Ներկայացնել դասի երկրորդ և երրորդ հատվածները Աշակերտները շարունակում են խմբային ձևով	Թեմայի զարգացում . ներկայացնում են պրեզենտացիաներ, classtools կայքի օգնությամբ ներկայացնում, համեմատում, վերլուծում են դասի իրենց հատվածները,տալիս են հարցեր ընկերներին,ամփոփում	Սլայդերի ցուցադրում Հարցեր՝ կապերը լավ հասկանալու համար:

	ներկայացնել իրենց հատվածները,յուրաքանչյուր խմբի համար տրվում է 10 րոպե ժամանակ:	են: Տրվում են հարցադրումներ և քննարկումներ են տեղի ունենում:	
Գործողություններ. Մաս **III** **10** րոպե	Հարցերին ենք պատասխանում և կատարում ենք ամփոփում:	Աշակերտները պատասխանեցին ուսուցչի կողմից նախապես կազմված հարցերին,այդ ամենը տևեց 5-7 րոպե, վերջին 3 րոպեներին աշակերտները գնահատվեցին և հանձնարարվեց նոր դաս:	
Տերմիններ	Բանկ, կապիտալիստ, բուրժուա, բորսա, ֆերմեր, հանրակառք,գործադուլ, արհեստակցական միություն		
Գրագիտություն	Աշակերտները կարողանալու են շարադրել իրենց մտքերը՝ հիմնավորելով պատասխանները. բանավոր խոսքի զարգացում: Նոթագրումների միջոցով՝ գրավոր խոսքի զարգացում:		
Թվագիտություն	Աշակերտները կտեղեկանան կարևոր իրադարձությունների մասին. • 1600թ արևելահնդկական ընկերության ստեղծում • 18-րդ դարում Ադամ Սմիթը խոսքը աշխատանքի հետ կապված • 18-րդ դար, արհեստակցական միությունների ստեղծումը		

	• 19-րդ դարում Փարիզում ու Լոնդոնում սկսեցին գործել հանրակառքեր
Աջակցություն	Նախապատրաստական փուլում ինչ-ինչ հարցերի դեպքում աջակցություն են ստացել ինձնանից:
Գնահատում	-Գնահատվել են մի քանիսը թվանշաններով,իսկ խմբերը ոգևորող գնահատական են ստացել կատարած աշխատանքի համար:
Տնային աշխատանք	Հանձնարարվում է հաջորդ դասը՝ Լուսավորության դարաշրջանը:

Ուսուցիչ՝ Գայանե Խաչատրյան

Առարկա՝	Համաշխարհային պատմություն	Ամսաթիվ	**05.10.2021**	Կիսամյակ	**I**	Դասարան	**8**
Խմբի բացվածք՝	Աղջիկ: **6** Տղա: **6** ՇՏ ԱՈՒԿ: ՀԵԼ						
Թեմա՝	Լուսավորության դարաշրջանը:						
Օգտագործվող նյութեր՝	Ներկայացվելու է դասանյութը մեդիագործիքների տարատեսակ կիրառմամբ, աշակերտներն իրար տալու են հարցադրումներ:Մեզ անհրաժեշտ է գալու համակարգիչ,պրոյեկտոր, տետրեր, գրիչներ,դասարանի կահավորումն էլ պիտի լինի անցկացվող դասին համահունչ:						
Ամբողջական պատկեր՝	Աշակերտներն ուսումնասիրում են, թեինչ կարևոր դեր ունեցավ լուսավորական շարժումը նոր դարշրջանի համար և թե ինչ է արդյունաբերական հեղափոխությունը: Հասկանալու են, թե ինչ կարևոր էին լուսավորական գործիչների գաղափարախոսության ազդեցությունը նոր շրջանի մտքի փոփոխության համար: Այս դասը տրամաբանական հաջորդականությունն է նախորդի՝նոր փոփոխությունները դիտարկվելու են արդեն սոցիալական միջավայրում: Ավելի կամրապնդի նրանց գիտելիքները և մեդիագործիքների կիրառմամբ ավելի լավ պատկերացում կկազմեն այդ իրադարձության մասին:						

Դասի նպատակը՝	Ծանոթանալ լուսավորական գործիչներին, նրանց գործունեությանը, հասկանալ ու արժևորել նրանց դերը այդ ժամանակաշրջանում և ընդհանրապես համաշխարհային պատմության մեջ: Կատարել եզրահանգումներ, թե լուսավորական գործիչների գաղափարները իրավունքների հետ կապված ինչ հայեցակարգային նշանակություն ունեցան իրավական համակարգի համար:
Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ	
Վերջնարդյունք ները	• Կկարողնա բացատրել լուսավորականների գաղափարախոսությունները • Կկարողանա վերլուծել նրանց առաջ քաշած կառավարման ձևերի առավելությունները • Կկարողանա համեմատել միապետական ու հանրապետական կարգերը • Կկարողանա եզրահանգումներ կատարել հասարակության մեջ առաջացած նոր ալիքների և դրանց ազդեցության մասին:

Ուսուցիչների զարգացման ընթացիկ նպատակները	Նպատակներին հասնելու ռազմավարությունը
Դասարանում բարձր ներգրավվածության ապահովում: Նպաստել աշակերտների հետաքրքրվածությանը՝ տվյալ թեմայի մասին:	Ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների ամրապնդում: Հարցերի, քննարկումների միջոցով՝ բոլորի համար ակտիվության ապահովում: Պատկերավոր նյութերի ներկայացմամբ հետաքրքրության խթանում:

Գործողություններ **(**ժամ/ տևողություն**)**	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Պլանավորած տարբերակում և ՈւԳ ռազմավարություններ Ուսուցիչ	Առանցքային հարցեր Հիմնական ստուգումներ **(**հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին**)**
Մուտք դասարան Գործողություններ. Մաս **I** Ընդհանուր **15** րոպե	Մուտք դասարան: Բոլորը զբաղեցնում են իրենց տեղերը: Աշակերտները ,որոնք բաժանված են խմբերի, ներկայացնում են իրենց հատվածը: Տեղադրում են մեդիագործիքներով իրենց պատրաստած նյութը,ակտիվ կապ պահելով դասարանի հետ հարց ու պատասխան ձևով:	Մտնելով դասարան՝ ողջունում ենք բոլորին: Լինում ենք հետևողական, որպեսզի բոլորը լինեն ակտիվ, պատասխանեն հարցերին:	Առաջին խմբի կողմից նյութի ներկայացում:
Գործողություններ. Մաս **II**	Ներկայացնել դասի երկրորդ և երրորդ հատվածները	Թեմայի զարգացում . ներկայացնում են պրեզենտացիաներ, classtools կայքի օգնությամբ ներկայացնում, համեմատում, վերլուծում են դասի իրենց հատվածները,տալիս են	Սլայդերի ցուցադրում Հարցեր՝ կապերը լավ հասկանալու համար:

20 րոպե	Աշակերտները շարունակում են խմբային ձևով ներկայացնել իրենց հատվածները,յուրաքանչյուր խմբի համար տրվում է 10 րոպե ժամանակ:	հարցեր ընկերներին,ամփոփում են: Տրվում են հարցադրումներ և քննարկումներ են տեղի ունենում:	
Գործողություններ. Մաս **III** **10** րոպե	Հարցերին ենք պատասխանում և կատարում ենք ամփոփում:	Աշակերտները պատասխանեցին ուսուցչի կողմից նախապես կազմված հարցերին,այդ ամենը տևեց 5-7 րոպե, վերջին 3 րոպեներին աշակերտները գնահատվեցին և հանձնարարվեց նոր դաս:	
Տերմիններ	Միահեծանություն,հանրապետություն,մերկանտիլիզմ:		
Գրագիտություն	Աշակերտները կարողանալու են շարադրել իրենց մտքերը՝ հիմնավորելով պատասխանները. բանավոր խոսքի զարգացում: Նոթագրումների միջոցով՝ գրավոր խոսքի զարգացում:		

Թվագիտություն	Աշակերտները կտեղեկանան կարևոր իրադարձությունների մասին. • 1643-1715թթ Լուի 14-րդ • 1682-1725թթ Պյոտր Ա • 1765-1790 թթ Յոզեֆ Բ • 18-րդ դար, լուսավորության շրջան
Աջակցություն	Նախապատրաստական փուլում ինչ-ինչ հարցերի դեպքում աջակցություն են ստացել ինձնանից:
Գնահատում	-Գնահատվել են մի քանիսը թվանշաններով,իսկ խմբերը ոգևորող գնահատական են ստացել կատարած աշխատանքի համար:
Տնային աշխատանք	Հանձնարարվում է հաջորդ դասը՝ Հասարակության վերակառուցման հեղափոխական ուղին:

Ուսուցիչ՝ Գայանե Խաչատրյան

Առարկա՝	Համաշխարհային պատմություն	Ամսաթիվ	**12.10.2021**	Կիսամյակ	**I**	Դասարան	**8**
Խմբի բացվածք՝	Աղջիկ: **6** Տղա: **6** ՇՏ ԱՈՒԿ: ՀԵԼ						
Թեմա՝	Հասարակության վերակառուցման հեղափոխական ուղին:						
Օգտագործվող նյութեր՝	Ներկայացվելու է դասանյութը մեդիագործիքների տարատեսակ կիրառմամբ, աշակերտներն իրար տալու են հարցադրումներ:Մեզ անհրաժեշտ է գալու համակարգիչ,պրոյեկտոր, տետրեր, գրիչներ,դասարանի կահավորումն էլ պիտի լինի անցկացվող դասին համահունչ:						

Ամբողջական պատկեր՝	Աշակերտներն ուսումնասիրում են, թեինչ կարևոր դե ունեցավ հեղափոխությունն Անգլիայի համար։Այս դասը տրամաբանական հաջորդականությունն է նախորդի՝նոր փոփոխությունները դիտարկվելու են արդեն սոցիալական միջավայրում։ Ավելի կամրապնդի նրանց գիտելիքները և մեդիագործիքների կիրառմամբ ավելի լավ պատկերացում կկազմեն այդ իրադարձության մասին։
Դասի նպատակը՝	Պարզաբանել, թե որոնք են հեղափոխության առաջացման նախադրյալները։ Ցույց տա և վերլուծի խորհրդարանի և միապետի հակասությունների պատճառները։ Կարողանա համեմատել պրոտեկտորատի ու միապետական կարգերը,գտնի դրանց նմանություններն ու առանձնահատկությունները։ Կարողանա հիմնավորել սահմանադրական միապետության դրական ազդեցությունը հեղափոխական գործընթացները դադարեցնելու առումով։
Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ	
Վերջնարդյունք ները	• Կկարողանա բացատրել հեղափոխության առաջացման նախադրյալները • Կկարողանա վերլուծել հեղափոխության արդյունքներն ու առավելությունները • Կկարողանա համեմատել բացարձակ միապետության ու պրոտեկտորական կարգերը • Կկարողանա եզրահանգումներ կատարել հասարակության մեջ առաջացած նոր ալիքների,հեղափոխական ցնցումների ու դրանց ազդեցության մասին։

Ուսուցիչների զարգացման ընթացիկ նպատակները	Նպատակներին հասնելու ռազմավարությունը
Դասարանում բարձր ներգրավվածության ապահովում։ Նպաստել աշակերտների հետաքրքրվածությանը՝ տվյալ թեմայի մասին։	Ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների ամրապնդում։ Հարցերի, քննարկումների միջոցով՝ բոլորի համար ակտիվության ապահովում։ Պատկերավոր նյութերի ներկայացմամբ հետաքրքրության խթանում։

Գործողություններ **(**ժամ/ տևողություն**)**	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Պլանավորած տարբերակում և ՈւԳ ռազմավարություններ Ուսուցիչ	Առանցքային հարցեր Հիմնական ստուգումներ **(**հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին**)**
Մուտք դասարան Գործողություններ. Մաս **I** Ընդհանուր **15** րոպե	Մուտք դասարան: Բոլորը զբաղեցնում են իրենց տեղերը: Աշակերտները ,որոնք բաժանված են խմբերի, ներկայացնում են իրենց հատվածը: Տեղադրում են մեդիագործիքներով իրենց պատրաստած նյութը,ակտիվ կապ պահելով դասարանի հետ հարց ու պատասխան ձևով:	Մտնելով դասարան՝ ողջունում ենք բոլորին: Լինում ենք հետևողական, որպեսզի բոլորը լինեն ակտիվ, պատասխանեն հարցերին:	Առաջին խմբի կողմից նյութի ներկայացում:
Գործողություններ. Մաս **II** **20** րոպե	Ներկայացնել դասի երկրորդ և երրորդ հատվածները Աշակերտները շարունակում են խմբային ձևով	Թեմայի զարգացում . ներկայացնում են պրեզենտացիաներ, classtools կայքի օգնությամբ ներկայացնում, համեմատում, վերլուծում են դասի իրենց հատվածները,տալիս են հարցեր ընկերներին,ամփոփում	Սլայդերի ցուցադրում Հարցեր՝ կապերը լավ հասկանալու համար:

	ներկայացնել իրենց հատվածները,յուրաքանչյուր խմբի համար տրվում է 10 րոպե ժամանակ:	են: Տրվում են հարցադրումներ և քննարկումներ են տեղի ունենում:	
Գործողություններ. Մաս **III** **10** րոպե	Հարցերին ենք պատասխանում և կատարում ենք ամփոփում:	Աշակերտները պատասխանեցին ուսուցչի կողմից նախապես կազմված հարցերին,այդ ամենը տևեց 5-7 րոպե, վերջին 3 րոպեներին աշակերտները գնահատվեցին և հանձնարարվեց նոր դաս:	
Տերմիններ	Հեղափոխություն, պրոտեկտորատ , պուրիտաններ, սահմանադրական միապետություն:		
Գրագիտություն	Աշակերտները կարողանալու են շարադրել իրենց մտքերը՝ հիմնավորելով պատասխանները. բանավոր խոսքի զարգացում: Նոթագրումների միջոցով՝ գրավոր խոսքի զարգացում:		
Թվագիտություն	Աշակերտները կտեղեկանան կարևոր իրադարձությունների մասին. • 1625-1649թթ Չարլզ Ա • 1660 թ-Անգլիական հեղափոխության սկիզբը • 1642-1649 թթ Օլիվեր Քրոմվել		

	• 1658թ, պրոտեկտորատ • 1688-89թթ Փառահեղ հեղափոխություն
Աջակցություն	Նախապատրաստական փուլում ինչ-ինչ հարցերի դեպքում աջակցություն են ստացել ինձնանից:
Գնահատում	-Գնահատվել են մի քանիսը թվանշաններով,իսկ խմբերը ոգևորող գնահատական են ստացել կատարած աշխատանքի համար:
Տնային աշխատանք	Հանձնարարվում է հաջորդ դասը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների կազմավորումը:

Ուսուցիչ՝ Գայանե Խաչատրյան

Առարկա՝	Համաշխարհային Պատմություն	Ամսաթիվ	**19.10.2021**	Կիսամյակ	**I**	Դասարան	**8**
Խմբի բացվածք՝	Աղջիկ: **6** Տղա: **6** ՇՏ ԱՈՒԿ: ՀԵԼ						
Թեմա՝	Ամերիկայի Միացյալ Նահանգների կազմավորումը:						
Օգտագործվող նյութեր՝	Ներկայացվելու է դասանյութը մեդիագործիքների տարատեսակ կիրառմամբ, աշակերտներն իրար տալու են հարցադրումներ:Մեզ անհրաժեշտ է գալու համակարգիչ,պրոյեկտոր, տետրեր, գրիչներ,դասարանի կահավորումն էլ պիտի լինի անցկացվող դասին համահունչ:						
Ամբողջական պատկեր՝	Աշակերտներն ուսումնասիրում են, թե ինպես կազմավորվեց Ամերիկայում իշխանություն,ինչ առանձնահատուկ կառուցվածք ուներ սոցիումը:Պատկերացում կկազմի,և կկարողանա վերլուծել թե ինչու 13 գաղութները սկսեցի պայքար՝հանուն անկախության:Կկարողանա պատճառաբանել, թե ինչու էին պատերազմի ժամանակ եվրոպական երկրներն օգնում այդ գաղութներին: Ավելի կամրապնդի նրանց գիտելիքները և մեդիագործիքների կիրառմամբ ավելի լավ պատկերացում կկազմեն այդ իրադարձության մասին:						

Դասի նպատակը՝	Ներկայացնել և վերլուծել Ամերիկայում ձևավորված գաղութների կառավարմանը , նրանց գործունեությանը,կարողանա եզրակացնել բազմէթնիկ բնակչության առաջ եկած խնդիրների պատճառները: Բացատրի խորքային պատճառներն այն բանի,թե ինչու սկսվեց անկախության պատերազմ:
Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ	
Վերջնարդյունք ները	• Կկարողանա բացատրել բազմէթնիկ բնակչության խնդիրներն ու մարտահրավերները • Կկարողանա վերլուծել անգլիական գաղութների ազատագրության պայքարի պատճառները • Կկարողանա տալ այլընտրանք այն հարցի,որ եթե չկարողնային գաղութները հաջողություն ունենային և կասի իր տարբերակը: • Կկարողանա եզրահանգումներ կատարել եվրոպական երկրների օգնության վերբերյալ :

Ուսուցիչների զարգացման ընթացիկ նպատակները	Նպատակներին հասնելու ռազմավարությունը
Դասարանում բարձր ներգրավվածության ապահովում: Նպաստել աշակերտների հետաքրքրվածությանը՝ տվյալ թեմայի մասին:	Ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների ամրապնդում: Հարցերի, քննարկումների միջոցով՝ բոլորի համար ակտիվության ապահովում: Պատկերավոր նյութերի ներկայացմամբ հետաքրքրության խթանում:

Գործողություններ (ժամ/ տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Պլանավորած տարբերակում և ՈւԳ ռազմավարություններ Ուսուցիչ	Առանցքային հարցեր Հիմնական ստուգումներ (հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին)
Մուտք դասարան	Մուտք դասարան: Բոլորը զբաղեցնում են իրենց տեղերը:	Մտնելով դասարան՝ ողջունում ենք բոլորին:	Առաջին խմբի կողմից նյութի ներկայացում:

Գործողություններ. Մաս **I** Ընդհանուր **15** րոպե	Աշակերտները ,ոորնք բաժանված են խմբերի, ներկայացնում են իրենց հատվածը: Տեղադրում են մեդիագործիքներով իրենց պատրաստած նյութը,ակտիվ կապ պահելով դասարանի հետ հարց ու պատասխան ձևով:	Լինում ենք հետևողական, որպեսզի բոլորը լինեն ակտիվ, պատասխանեն հարցերին:	
Գործողություններ. Մաս **II** **20** րոպե	Ներկայացնել դասի երկրորդ և երրորդ հատվածները Աշակերտները շարունակում են խմբային ձևով ներկայացնել իրենց հատվածները,յուրաքանչյուր խմբի համար տրվում է 10 րոպե ժամանակ:	Թեմայի զարգացում . ներկայացնում են պրեզենտացիաներ, classtools կայքի օգնությամբ ներկայացնում, համեմատում, վերլուծում են դասի իրենց հատվածները,տալիս են հարցեր ընկերներին,ամփոփում են: Տրվում են հարցադրումներ և քննարկումներ են տեղի ունենում:	Սլայդերի ցուցադրում Հարցեր՝ կապերը լավ հասկանալու համար:
Գործողություններ.	Հարցերին ենք պատասխանում և կատարում ենք ամփոփում:	Աշակերտները պատասխանեցին ուսուցչի կողմից նախապես կազմված հարցերին,այդ ամենը տևեց 5-7 րոպե, վերջին 3 րոպեներին աշակերտները	

Մաս **III** **10** րոպե		գնահատվեցին և հանձնարարվեց նոր դաս:	
Տերմիններ	Կոնգրես, Գերագույն դատարան, դաշնային հանրապետություն:		
Գրագիտություն	Աշակերտները կարողանալու են շարադրել իրենց մտքերը՝ հիմնավորելով պատասխանները. բանավոր խոսքի զարգացում: Նոթագրումների միջոցով՝ գրավոր խոսքի զարգացում:		
Թվագիտություն	Աշակերտները կտեղեկանան կարևոր իրադարձությունների մասին. • 17-18-րդ դարում Ամերիկայում ձևավորվեց 13 գաղութ • 1775-1783 թթ –անկախության պատերազմ • 1776 թ. հուլիսի 4-ին հռչակագիր • 1787 թ-ընդունվեց ԱՄՆ սահմանադրությունը		
Աջակցություն	Նախապատրաստական փուլում ինչ-ինչ հարցերի դեպքում աջակցություն են ստացել ինձնանից:		
Գնահատում	-Գնահատվել են մեծ մասը թվանշաններով,իսկ խմբերը ոգևորող գնահատական են ստացել կատարած աշխատանքի համար:		
Տնային աշխատանք	Հանձնարարվում է հաջորդ դասը՝ Ֆրանսիական մեծ հեղափոխությունը		

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ. ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՆ N5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Գնահատում

Մասնակից՝ Գոհար Գազազյան

Դպրոց՝ Ծիածանի միջնակարգ դպրոց

Վերապատրաստող՝ Կարինե Ավետիսյան

Վաղարշապատ 2021թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի շրջանում ազգային դպրոցի գերնպատակն է կերտել ազգային հենքի վրա ձևավորված համամարդկային արժեքներ կրող իսկական մտավորական և քաղաքացի: Այս ասպարեզում խիստ անհրաժեշտ է իրականացնել հստակ գնահատման համակարգ, որը խթանելու է ուսումնառությունը և նպաստելու է ուսումնառության կատարելագործմանը:

Դպրոցում գնահատումն իրականացվում է ինչպես Հայաստանի Հանրապետության պետական և առարկայական չափորոշիչների և չափանիշների հիման վրա: Հիշյալ փաստաթղթերը սահմանում են սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձեռքբերման մակարդակը: Չափորոշիչները շեշտադրում են սովորողների նկարագրի և բարոյական որակների, արժեքային համակարգի ձևավորումը և շարունակական կատարելագործումը: Գնահատման համակարգը խթանում է սովորողների ուսումնառության գործընթացը:

Սովորողների ձեռք բերած գիտելիքների, կարողությունների գնահատումը ուսուցման և ուսումնառության ողջ գործընթացի անբաժանելի մասն է կազմում: Գնահատումը դպրոցում իրականացվում է հստակ չափանիշներով:

Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների և կրթական գործընթացի արդյունավետությունը հիմնականում պայմանավորված է ուսուցման մեթոդների և հստակ գնահատման ճիշտ ընտրությամբ, որոնք օգնում են հասնել ծրագրի վերջնարդյունքներին, նպաստելով սովորողների կոմպետենցիաների ձեռքբերմանը:

Ուսուցման մեթոդները և գնահատման եղանակները դրանք ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեության միջոցներ են՝ ուղղված կրթական նպատակների ձեռքբերմանը:

Ուսուցման մեթոդներն իրենց մեջ ներառում են դասավանդման, ուսումնառության և գնահատման տարաբնույթ մեթոդներ:

Ուսումնառության մեթոդների օգնությամբ ուսումնառողները ձեռք են բերվում անհրաժեշտ գիտելիքներ, ձևավորվում են կարողություններ և հմտություններ:

Գնահատման մեթոդները միտված են արժանահավատ կերպով աշակերտների կողմից կրթական վերջնարդյունքների ձեռքբերման չափմանը:

Այս մեթոդները փոխկապված են և շատ դեպքերում դասավանդման մեթոդը կարող է հանդես գալ որպես ուսումնառության մեթոդ կամ նաև գնահատման մեթոդ: Օրինակ դերային խաղը կամ թեզը և ուսուցման, և գնահատման մեթոդ է, աշխատանք գրքով և ուսումնառության, և դասավանդման մեթոդ է:

Դասավանդման, գնահատման և ուսումնառության մեթոդները պետք է.

- Լավագույնս նպաստեն կրթական վերջնարդյունքների ձևակերպված գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերմանը աշակերտների կողմից,
- Կիրառվեն աշակերտների գիտելիքների և ընդունակությունների տարբեր մակարդակներում,
- Լինեն բազմատեսակ,
- Խրախուսեն աշակերտների ակտիվությունը լսարանում, ինքնուրույնությունը և տրամադրեն խմբային աշխատանքի հնարավորություններ, ըստ անհրաժեշտության,
- Համապատասխանեն ուսուցման նպատակներին,
- Ավելի արդյունավետ բացահայտեն նյութի բովանդակությունը,

• Աշակերտների և ուսուցիչների հաղորդակցման, փոխհարաբերությունների ոճերը լինեն արդյունավետ,

•Համապատասխանեն նյութատեխնիկական բազայի հնարավորություններին, ուսուցիչների մասնագիտական կարողություններին և թեմային հատկացված ժամաքանակին:

Գիտելիքների գնահատման մեթոդներին ներկայացվում են հետևյալ պահանջները.

•օբյեկտիվությունը,

• ստուգման անհատական բնույթը,

• համակողմանիությունը,

• ստուգման անցկացման ձևերի բազմազանությունը,

• տարբերակված մոտեցումը,

• համակարգայնությունը և կանոնավորությունը:

Գնահատումն ունի հետևյալ չափորոշիչները.

• Նկարագրում են գնահատման առաջադրանքում աշակերտի կողմից կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակը/ աստիճանը:

• Պահանջում եմ սահմանել և հրապարակել կրթական վերջնարդյունքների ձեռքբերման հնարավոր մակարդակները:

• Կարող են ունենալ տարբեր տեսք, սովորոբար՝ նկարագրական ձևաչափ:

• Պարունակում են համառոտ և հստակ տեղեկատվություն գնահատման տվյալ առաջադրանքում աշակերտի կատարողականի տարբեր մակարդակների վերաբերյալ, ինչը տարբեր գնահատողներին թույլ է տալիս իրականացնել հիմնավորված գնահատում:

Ժամանակակից դիդակտիկայում գոյություն ունեն մեթոդների տարբեր դասակարգումներ: Վերջին ժամանակներում դասավանդման կարևոր պահանջներից է աշակերտի ակտիվության ու մասնակցության ապահովումը ուսուցման գործընթացում: Հաշվի առնելով այս չափանիշը ուսուցման մեթոդները դասակարգվում են՝ պասիվ ոու ակտիվ մեթոդների:

Ուսուցման պասիվ մեթոդներ

Դա աշակերտների և ուսուցիչների փոխգործունեության ձև է, որտեղ ուսուցիրը հանդես է գալիս որպես հիմնական գործող և ուսումնական գործընթացի կառավարող, իսկ աշակերտները հանդես են գալիս որպես պասիվ ունկնդիրներ: Ուսուցչի կապը աշակերտների հետ իրականանում է հարցումների, ստուգողական աշխատանքների, թեստերի և այլ աշխատանքների միջոցով:

Ուսուցման ակտիվ մեթոդներ

Դա աշակերտների և ուսուցիչների համագործակցությունն է միմյանց հետ, երբ աշակերտները ուսուցման գործընթացում հանդես են գալիս որպես ակտիվ մասնակիցներ: Այս ուսուցման մեթոդներն ապահովում են աշակերտների արդյունավետ, ստեղծագործական գործունեությունը:

Ուսուցման ինտերակտիվ մեթոդներ

Համագործակցություն է զրույցի երկխոսության շրջանակներում, ի տարբերություն ակտիվ մեթոդների, ինտերակտիվ մեթոդները նպաստում են աշակերտների համագործակցությանը ոչ միայն ուսուցչի, այլ նաև միմյանց հետ:

1. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ Կատարելագործել սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակը, անձնային աճը, ուսումնական

գործընթացը և վերահսկել ուսման որակը՝ խթանելով սովորողի ներուժի առավելագույն զարգացումը:

Գնահատումը՝

- Թույլ է տալիս մշտապես դիտարկել սովորողի ուսումնական գործունեությունը, պարբերաբար ապահովել հետադարձ կապը և արձանագրել ձեռքբերումները:
- Խթանել առարկայի խորը ընկալումը իրական կյանքի համատեքստում իրականացվող հետազոտությունների միջոցով:
- Խթանել քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացումը:
- Հնարավորություն է տալիս սովորողին առարկայական հմտությունները կիրառել միջառարկայական կապեր ստեղծելիս և անհատական նախագիծ իրականացնելիս:
- ՈՒսուցիչներին, դպրոցի տնօրենությանը, համայնքին, նաև վերադաս մարմիններին տրամադրում է լիարժեք և հավաստի տեղեկություն սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակի մասին:
- Ծնողներին տրամադրում է հիմնավորված տեղեկություն յուրաքանչյուր սովորողի ուսումնառության որակի, ձեռքբերումների և առաջընթացի մասին:
- Հնարավորություն է տալիս դիտարկել, բարելավել կրթական ծրագրերի բովանդակությունը, դասավանդման մեթոդական համակարգը:

2. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Դասավանդման հիմնական նպատակներն ու խնդիրներն են.

1. Գիտելիք /աղբյուրներ, պատմական գործընթացներ, քաղաքակրթություն/
2. Կարողություններ ու հմտություններ /վերլուծումներ, եզրահանգումներ, հիմնավորումներ/:

3.Արժեքներ / պատմագիտության հետաքրքրություն, ելույթներ, քննարկումներ։

4/ Հիմնական մաս /մտքերի փոխքննակում/։

5/ Ամփոփում /հարցերի ու առաջադրանքների միջոցով և տնային առաջադրանքներ/։

- Գնահատումը ուսումնառության և դրա կատարելագործման վերաբերյալ փաստեր, հավաստի տվյալներ հավաքելու շարունակական գործընթաց է. արտացոլում և տարբեր կողմերից ներկայացնում է առկա լավագույն փորձը, խթանում է սովորողների և ուսուցիչների համատեղ գործունեության արդյունավետ զարգացումը:
- Արդյունավետ գնահատումը պետք է լինի՝ պլանավորված, հավաստի, համարժեք, անաչառ, արժանահավատ, հուսալի, թափանցիկ1 :
- Գնահատում իրականացնելիս ուսուցիչն իր ուշադրությունը կենտրոնացնում է սովորողների կրթական առաջընթացի վրա՝ կարևորելով ինչպես ողջ գործընթացի, այնպես էլ ստացված արդյունքների որակական կողմը:

3. ԴՊՐՈՑՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՓՈՒԼԵՐԸ

Դպրոցում կիրառվում է գնահատման երկու տեսակ՝ ներքին և արտաքին

- Ներքին գնահատումն իրականացնում են ուսուցիչները, առարկայական հանձնախմբերը և տնօրենությունը:
- Արտաքին գնահատումն իրականացնում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
- Գնահատման ողջ գործընթացը բաժանվում է երեք փոխկապակցված փուլերի
- Ա. Գնահատում. ինչպե՞ս ենք բացահայտում՝ ի՛նչ գիտեն և ի՛նչ են սովորել սաները:
- Բ. Գրանցում. ինչպե՞ս ենք հավաքում, վերլուծում և ամփոփում տվյալները:

•Գ. Հաշվետվություն. ինչպե՞ս ենք ներկայացնում տեղեկատվությունը կամ գնահատման արդյունքները:

Սովորողի ուսումնառության ընթացիկ գնահատման ձևերն են՝ միավորային գնահատումը և ուսուցանող (ձևավորող) գնահատումը

• Ուսուցանող / ձևավորող գնահատում Ուսուցանող / ձևավորող գնահատումը սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման հետ կապված բացթողումների, սխալների ու դժվարությունների բացահայտման և դրանց հաղթահարման, սովորողի մտածողության ու ճանաչողության ոլորտն ընդլայնելու համակարգված գործընթացն է, ինչպես նաև հետադարձ կապի կիրառմամբ ուսումնական (Cambridge Assessment; former Ofqual chief executive) գործընթացում տեղեկությունների հավաքագրման և արժևորման միջոցով կրթական չափորոշիչների, ուսումնական ծրագրերի ու դասավանդման մեթոդների բարելավումը:

Ուսուցանող գնահատման նպատակն է՝

• բարձրացնել ուսուցման գործընթացի արդյունավետությունը

• բացահայտել, վեր հանել ուսումնական նյութի յուրացման հետ կապված խնդիրները

• սովորողին ուղղորդել տվյալ նյութը սովորելու, բացթողումները շտկելու անհրաժեշտության գիտակցմանը

• ճշգրտել կիրառվող դասավանդման ռազմավարությունների և մեթոդների նպատակահարմարությունը:

Ուսուցանող գնահատումը կիրառվում է ուսումնական ողջ գործընթացում. սա անընդհատ իրականացվող գործընթաց է, քանի որ ուսուցանելու, գիտելիքներ և դրանց հիման վրա որոշակի կարողություններ ձևավորելու միտում ունի և չունի նիշային գնահատման նպատակ: Ձևավորող գնահատման օգնությամբ ուսուցիչը մշտապես դիտարկում, գրանցում, նկարագրում և պարբերաբար տեղեկացնում է սովորողի ձեռքբերումների, նրա ուժեղ և թույլ կողմերի մասին: Ուսուցանող գնահատման նպատակով միջին դպրոցում կիրառվում են աշխատանքների հետևյալ տեսակները՝ յուրացման / ինքնուրույն աշխատանք, բանավոր ելույթ, կարճ ժամանակի համար նախատեսվող հայտորոշիչ թեստ, ուսուցանող ստուգում, ստուգող հարցաթերթ, բաց հարցերով քննարկում, խմբային/զույգային համագործակցային աշխատանքներ, գործնական աշխատանք, ինքնագնահատում և փոխադարձ գնահատում, թղթապանակի բովանդակության գնահատում, հաշվետվության ներկայացում և այլն:

Ուսումնական առաջադիմության բարձրացման, արդյունավետ ուսումնական գործընթացի ապահովման նպատակով դպրոցում կարևորվում է ընթացիկ աշխատանքների մշտադիտարկումը, մասնավորապես՝ դասի մասնակցությունը /ներգրավվածությունը, յուրացման առաջադրանքների կատարումը, պարբերաբար իրականացվող ուսուցանող/ձևավորող աշխատանքների և դրանց անդրադարձի կատարումը:

Դասի ընթացքում կատարված մեկնաբանությունները ոչ միշտ են ընկալելի և կառուցողական: Դիտողությունները/դիտարկումները ոչ միշտ են հիմնավորված և հավասարակշռված, երբեմն–երբեմն բովանդակությունից անկախ են հանդես գալիս

անբավարար սանը մեծ դժվարությամբ է հետևում է դասին տրվող հրահանգներին, անուշադիր է, երբ ուսուցիչը / ընկերները ներկայացնում են նոր նյութը կամ իրենց գաղափարները, առաջադրանքները առանց օժանդակ միջամտության չի կատարում: Դասի ընթացքում կատարված մեկնաբանությունները բովանդակությունից կտրված են, ընկալելի եւ կառուցողական չեն:

Լավ Աշակերտը ՝ իրականացրել է հետևողական, համակարգված աշխատանք՝ օգտագործելով իր ողջ ներուժը կատարել է բոլոր պահանջվող առաջադրանքները և հետամուտ է եղել առաջացած հարցերի բացահայտմանը: Հետևել է ուսուցչի հրահանգներին, որոնք բխում են առարկայի առանձնահատկություններից, պահպանել է աշխատանքի կատարման համար սահմանված ժամկետները: Բավարար Աշակերտը ՝ մասամբ է իրականացրել տրված աշխատանքը, հիմնականում կատարել պահանջվող առաջադրանքները, սակայն հետևողական չէ առաջացած հարցերի բացահայտմանը Հետևել է ուսուցչի հրահանգներին, որոնք բխում են առարկայի առանձնահատկություններից, պահպանել է աշխատանքի կատարման համար սահմանված ժամկետները: Անբավարար Աշակերտը ՝ իրականացրել է ոչ համակարգված աշխատանք՝ կատարելով որոշ առաջադրանքներ, չի հետևել ուսուցչի՝ առարկայի առանձնահատկություններից բխող հրահանգներին, չի պահպանել աշխատանքի կատարման համար սահմանված ժամկետները:

Առավել լայն տարածում ունի միավորային գնահատումը: Միավորային գնահատումն ուսումնառության ընթացքում սովորողի ձեռքբերումների մակարդակը թվանշանով արտահայտելն է՝ համաձայն առարկայական չափորոշիչների :

Միավորային գնահատման նպատակը սովորողի առարկայական գիտելիքների և դրանց հիման վրա ձևավորված կարողությունների մակարդակի բացահայտումն է: Այն կիրառվում է սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման աստիճանը ստուգելիս: Միավորային գնահատումն իրականացվում է սովորողի գնահատականը գրանցելու և հաշվառելու միջոցով: Այն ունի վերահսկող դեր, ախտորոշիչ դեր: ՈՒսուցիչը կարողանում է ճշտել ամեն սովորողի ձեռքբերումների որակը և մակարդակը, ապա ըստ այդմ՝ որոշակի փոփոխություններ մտցնել դասավանդման եղանակների, ուսուցման տեխնոլոգիաների և կիրառվող մեթոդների ոլորտում:

Եթե միավորային գնահատման առաջադրանքը կատարելիս սովորողը խախտում է ակադեմիական ազնվության կանոնները (հուշարարություն, արտագրություն ընկերոջից կամ այլ աղբյուրներից), ապա ուսուցիչը նրան զրկում է աշխատանքը շարունակելու իրավունքից և ստանում է նվազագույն միավոր՝ 0 (զրո), նախատեսված բոլոր չափանիշներից՝ առանց աշխատանքը վերահանձնելու իրավունքի:

Խիստ անհրաժեշտության դեպքում, եթե պարբերաբար նկատվում են յուրացման առաջադրանքները չկատարելու կամ թերություններով կատարելու հաճախակի դրսևորումներ, ուսուցիչը իրավասու է ցանկացած ժամանակահատվածում անցկացնելու աշակերտների գիտելիքների կամ կարողությունների ստուգում:

Բոլոր տարիքային խմբերում, որտեղ դասավանդում են 1-ից ավելի ուսուցիչներ պարտադիր է կազմակերպել միավորային աշխատանքների բովանդակության, սանդղակների և արդյունքների ներքին ստանդարտացման գործընթաց՝ ապահովելով չափանիշների համանման ընկալումն ու կիրառումը բոլոր դասարաններում:

Դպրոցի տնօրենությունը և մանկավարժական խորհուրդը մասնակցում է դպրոցական ուսումնա-դաստիարկչական աշխատանքների զարգացման գործընթացին:

- Ուսուցիչը հստակորեն, համագործակցում է առարակայական մյուս հանձնախմբերի ուսուցիչների հետ, ըստ հետազոտական միավորի (unit-planner)՝ կազմում է նպատակային գնահատման առաջադրանքները և դրանց գնահատման սանդղակները:
- Ըստ չափանիշների ստուգում է առաջադրանքը և ապահովում հետադարձ կապ. արդյունքները վերլուծում և քննարկում է սովորողների, անհրաժեշտության դեպքում՝ ծնողների, առարկայական հանձնախմբի մյուս ուսուցիչների հետ:
- Սովորողի առաջադիմության, կարողությունների և հմտությունների (ATL), ձեռքբերումների և բացթողումների մասին ընտանիքին լիարժեք և հավաստի տեղեկություն է տրամադրում:
- Սովորողի դերը Սովորողներն ակտիվ դեր ունեն գնահատման գործընթացում. նրանք ուսուցման գործընթացի վերլուծություն են անում, հասկացությունների և տարբեր երևույթների վերաբերյալ իրենց ուրույն ընկալումներն են դրսևորում՝ քննադատական մտածողության, ինքնագնահատման և փոխգնահատման կարողությունները զարգացնելու նպատակով:
- Սովորողների ընտանիքների դերը Սովորողների ընտանիքները տեղեկանում են իրենց երեխայի(ների)՝ ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների դրսևորումների մասին: Նրանք ստանում են իրենց երեխայի(ների)

անհատական զարգացման և ուսումնական գործունեության վերաբերյալ հավաստի և լիարժեք տեղեկություն՝ դպրոցի կրթադաստիարակչական աշխատանքներին աջակցելու նպատակով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գնահատումը տեղեկատվություն հավաքելու, վերլուծելու և հանրակրթության ու կազմակերպման արդյունքները վերահսկելու գործընթաց է Գնահատումների հիմնական նպատակը սովորողների, գիտելիքների և կարողությունների որակների ստուգումն է և ուսման որակի վերահսկումը:

Ընթացիկ գնահատումը շարունակական տեղեկատվություն է և ապահովում է ուսուցման ընթացքը և ուսումնառության որակը::

Հիմք ընդունելով դպրոցում ուսումնական գործընթացի կազմակերպման ու վերահսկման մոտեցումները, ընթացիկ գնահատման համար սահմանվում են հետևյալ առաջնային նպատակները:

1/ Առաջադիմությունը, դժվարությունը, հաշվառումը և վերլուծությունը:

2/ Բովանդակության յուրացումը, շարունակական փուլերի ստուգումն ու գնահատումը:

3/ Գնահատման համակարգված կիրառումը:

4/ Գնահատման չափանիշների հստակեցումը և ուսումնառության արդյունավետությունը:

Սովորողների ուսումնառության ընթացիկ արդյունքները միավորային գնահատմամբ երաշխավորվում են ստուգման հետևյալ տեսակները:

1/ բանավոր հարցում:

2/թեմատիկ գրավոր աշխատանք:

3/գործնական աշխատանք:

4/կիսամյակային ամփոփիչ աշխատանք:

Ուսուցիչները հիմնականում շեշտում են, որ գնահատման այլընտրանքային մեթոդների կիրառումը նույնպես տալիս է իր դրական արդյունքները, ինչը նկատելի է աշակերտների մեջ տեղի ունեցող դրական փոփոխություններով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Ալեքսանյան Կ. Պատմության դասավանդումը ժամանակակից մեթոդներով: Գյումրի: 2006:

2. Գյուլազյան Վ. Առուշանյան Լ. Գասպարյան Մ. ՈՒսուցչի ուղեցույց տետր: Երևան: 2009:

3.. Լալայան Կ. Պատմության դասերի պլանավորման նմուշ-օրինակնե: Երևան 2009:

4.Խաչատրյան Ս. Ուսուցման արդյունավետ հնարներ: Երևան.Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ: Հայաստան: 2020:

5.Խաչատրյան Ս. Կամուրջներ պատերի փոխարեն: Անտարես:Երևան: 2014:

6.Ղազինյան Գ. Հասարակագիտություն: 8-9: ՈՒսուցչի ձեռնարկ: Երևան:2013:

7.Ղուկասյան Ա. Հայոց պատմություն: 8-9: Ուսուցչի ձեռնարկ: Երևան: 2013:

8.Ղևոնդյան Հ. Պատմության դասավանդման մեթոդիկա:Երևան: 2001:

9.Պապոյան Հ. Պատմության դասավանդման մեթոդիկան. դպրոցում, Եր. 2013թ.

10. Гузеев В. В. Методы и организационные формы обучения М. 2001.

11. Гузеев В. В. Педагогическая техника в контексте образовательной техналогии. М. Нар. образование, 2001

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ. ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՆ N5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Բաց հարցերի դերը աշակերտների քննադատական մտածողության զարգացման գործում

Մասնակից՝ Գոռ Գալստյան

Դպրոց՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Էօրնեկեան հանրակրթական դպրոց

Վերապատրաստող՝ Կարինե Ավետիսյան

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան..... 3

2. Հետազոտական համատեքստ 4

3. Գործնական համատեքստ 5

4. Հետազոտական ընթացք 9

5. Տվյալների մշակում և վերլուծություն..... 13

6. Ամփոփում 15

7. Օգտագործված աղբյուրների եվ գրականության ցանկ 16

8. Հավելվածներ..... 17-28

ՆԱԽԱԲԱՆ

Քննադատական մտածողությունը (անգլ.՝ critical thinking) ապացուցումների համակարգ է, որը կիրառվում է իրերի և իրադարձությունների վերլուծության համար՝ տալով հիմնավորված եզրակացություններ, և ստեղծում է հիմնավորված գնահատականներ, մեկնաբանություններ տալու հնարավորություն[1]:

Քննադատական մտածողության կիրառությունը պարտադիր պայման է որակյալ կրթական համակարգի ապահովման, ինչպես նաև բարելավման և զարգացման համար: Այսու, մեր առաջ դրեցինք այս խնդրի հետազոտությունը միջին դպրոցում, առավել հստակ՝ 7-րդ դասարանում:

Հետազոտական աշխատանքը գրելուս մեր առջև դրեցինք հետևյալ նպատակը՝ առաջարկել միջոցներ աշակերտների՝ պատճառահետևանքային կապերը վերլուծելու, փաստերն ու երևույթները գնահատելու հմտության զարգացման համար, որոնք ինքնին քննադատական և պատմական մտածողության մաս են կազմում:

Թեմայի արդիականությունը: Ժամանակակից աշխարհում ինֆորմացիայի արագ ներհոսքի պայմաններում կարևորագույն խնդիր է դառնում ոչ միայն ինֆորմացիային տիրապետելը, այլև արժևորելը և համապատասխան իրավիճակներում կիրառելը: Այս խնդիրը առկա է հասարակական կյանքի գրեթե բոլոր բնագավառներում, երբ մարդիկ, առանց երևույթների պատճառների մեջ խորամուխ լինելու, չհիմնավորված եզրակացություններ են անում, տալիս են միակողմանի գնահատականներ, առանց վերլուծելու կրկնում են այլոց տեսակետներն ու կարծիքները: Մեր խնդիրն է սովորեցնել առարկայորեն մտածել և առարկայի միջոցով ձևավորել քննադատական մտածողության (այսուհետև՝ ՔՄ) որոշակի փոխանցելի հմտություններ:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

[1] Պետրոսյան Ա., Համակազմ դասարաններում սովորողների քննադատական մտածողության զարգացումը կարդալու միջոցով, Արցախի էլեկտրոնային դասարան, էջ 370: Տե՛ս նաև Պետրոսյան Հ., Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, մոդուլային ուսումնական ձեռնարկ, Երևան, 2008, էջ 120 (հղումը՝ ըստ Ա. Պետրոսյանի):

Սովորողների ճանաչողական կարողությունների ձևավորումն ու զարգացումը ժամանակակից մանկավարժության կողմից դիտարկվում է որպես արդի հասարակական պահանջ և կրթության կարևոր խնդիր: Ճանաչողությունը մարդկային մտածողության մեջ իրականության արտացոլման ու վերարտադրման գործընթաց է, որն ապահովում է ճշմարտության իմացում, գիտելիքների ձեռք բերում, յուրացում, ցանկացած կատարած աշխատանքում ստեղծագործական մոտեցում:

Ուսուցման գործընթացի կատարելագործմանը, սովորողների ակտիվացմանը, ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը մեծապես նպաստում է մանկավարժական տեխնոլոգիաների շարքում իր ուրույն տեղն ունեցող քննադատական մտածողության տեխնոլոգիան: Այն առավել հայտնի է «Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով» ծրագրի շրջանակներում: Քննադատական մտածողության ձևավորման ու զարգացման հիմնախնդիրները դիտարկել են 20-րդ դարի վերջերին ԱՄՆ-ի հոգեբան-մանկավարժներ Ջ. Լ. Սթիլը, Ք. Ս. Մերեդիթը, Չ. Թեմփլը, ինչպես նաև Բ. Բլումը, Ղ. Հասլպերնը, Ղ. Քլուսթերը և ուրիշներ: Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառման խնդիրներին ու արդյունավետությանը ավելի ուշ անդրադարձել են ժամանակակից մանկավարժներ Գ. Սելեվկոն, Ի. Զագաշևը, Ս. Զաիր-Բեկը, Ի. Մուշտավինսկայան, Մ. Կլարինը, Վ. Կուկուշինը, Վ. Միժերիկովը և այլք:

Ուսումնասիելով որոշ հետազոտություններ՝ որոշեցինք մենք էլ որոշ չափով լրացնել գիտության մեջ առկա բացը՝ անելով հետազոտական աշխատանք:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Քննադատական մտածողությունը մտածողության այն տեսակն է, երբ մարդը հարցականի տակ է դնում ստացվող տեղեկույթի հավաստիությունը, սեփական հավատալիքներն ու համոզմունքները: Կա կարծիք, որ անցումը քննադատական մտածողությանը նոր քաղաքակրթության զարգացման անհրաժեշտ և կարևոր նախապայման է: Քննադատական մտածողության ամենավաղ դիտարկումները հանդիպում են Սոկրատեսի ուսմունքներում, որոնք արձանագրվել են Պլատոնի կողմից: Նա կարևորում էր խորը հարցադրումների կատարումը, որոնք հետազոտողը պետք է իրականացնի՝ նախքան վերջնական եզրահանգումները: Սոկրատեսը պնդում էր, որ անձը կարող է ունենալ բարձր դիրք, իշխանություն, բայց և ունենալ խորապես սխալ, ոչ ռացիոնալ մտածողություն: Սոկրատեսը շեշտում էր ապացույցներ փնտրելու, հիմնավոր պատճառաբանություններ և ենթադրություններ կատարելու, հիմնական հասկացությունները վերլուծելու գործընթացի կարևորությունը: Նեղ իմաստով քննադատական մտածողություն նշանակում է պնդումների մտածված գնահատում: Ինչպես նաև մեկնաբանվում է որպես «մտածողություն մտածողության մասին»[2]: Ամենատարածված մեկնաբանություններից մեկն է՝ խելամիտ անդրադարձ (ռեֆլեքսիվ) մտածողություն, որն ուղղված է որոշում կայացնելու, թե ինչին է պետք հավատալ և ինչ է պետք անել: Առավել մանրամասն սահմանումն է՝ կիրառելիության, համադրման և տեղեկույթի գնահատման ակտիվ և հմուտ վերլուծության գործընթաց, հայեցակարգային ձևակերպում, որը ստացվում է ուսումնասիրություններով, փորձով, դատողություններով, հաղորդակցություններով[3]: Լրացուցիչ մեկնաբանություն տալու նպատակով Ռիչարդ Պոլը (1995) առաջարկեց քննադատական մտածողությունը բաժանել երկու տիպի՝ թույլ և ուժեղ: Թույլ իմաստով քննադատական մտածողությունը սահմանվում է որպես բարձր որակավորում ունեցող, բայց եսասիրությամբ մոտիվացված կեղծ-մտավորականի մտածողություն, ով զբաղված է իր բարեկեցության խնդիրներով և լրջորեն չի մտածում իր գործողությունների էթիկական հետևանքների մասին: Նման մտածողության կրողը հաճախ ունի բարձր կրթություն, սակայն օգտագործում է իր գիտելիքները անարդար և եսասիրական

[2] Տե՛ս նույն տեղում: Տե՛ս նաև Պետրոսյան Հ., նույն տեղում, էջ 125 (հղումը՝ ըստ Ա. Պետրոսյանի):
[3] Տե՛ս նույն տեղում:

նպատակներով[4]: Քննադատական մտածողությունն ուժեղ իմաստով՝ առանց եսակենտրոն մոտիվացիաների և սոցիալական ուղղվածության շեղման, օբյեկտիվ ուսումնասիրության նպատակով արված դատողությունն է: Այս իմաստով քննադատական մտածողությունն անկեղծորեն միտված է ճշմարտությանը հասնելու ճանապարհին խոչընդոտները հաղթահարելուն[5]:

Պատմության ուսուցիչ Ռ. Խաչատուրյանն ասում է, որ մանկավարժական գործունեության ընթացքում իր ուշադրության առանցքում մշտապես եղել է աշակերտների ստեղծագործական ու քննադատական մտածողության հմտությունների զարգացումը: Տարվա ընթացքում աշակերտների կողմից իրականացված տարաբնույթ առաջադրանքները ցույց են տվել, որ շատ ավելի բարձր արդյունքներ են արձանագրվում այնպիսի առաջադրանքներ կատարելիս, որոնք ենթադրում են փաստական նյութի չեզոք վերարտադրություն, ավելի հեշտությամբ են պատասխանում այն հարցերին, որոնք ենթադրում են պատմական այս կամ այն փաստի, երևույթի իմացություն: Սակայն դժվարությամբ են համադրում փաստերը, գտնում պատմական երևույթների միջև առկա կապերը, վերլուծում երևույթների պատճառներն ու հետևանքները: Շատ դեպքերում աշակերտներին չի հաջողվում արտահայտել սեփական տեսակետը, ապացուցել այն անհրաժեշտ փաստարկներով, հիմնավորված դատողություններ անել, գնահատել փաստերն ու երևույթները: Այս ամենը հնարավոր է իրականացնել քննադատական մտածողության հմտությունների զարգացման շնորհիվ[6]: Եվ այս փաստը մեզ տվեց հնարավորություն և ստիմուլ, որ վերցնենք այս թեման և մենք էլ կատարենք հետազոտություն:

Քննադատական մտածողությունը մտածողության համակարգ է, որն օգտագործվում է փաստերի ու իրադարձությունների վերլուծության համար, հնարավորություն է տալիս փաստարկված եզրակացություններ անել, հիմնավորված գնահատականներ տալ, մեկնաբանել, կիրառել ստացված արդյունքները նման այլ

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 371: Տե՛ս նաև Մորտիմեր Ադլեր, Ինչպես ընթերցել գիրքը, Գլուխ 7, Թարգմանությունը՝ Մարգարիտ Գյուլբեկի Հարությունյանի:
[5] Տե՛ս Պետրոսյան Հ., նույն տեղում, էջ 131 (հղումը՝ ըստ Ա. Պետրոսյանի):
[6] Խաչատուրյան Ռ., Աշակերտների քննադատական մտածողության պատմության դասավանդման ընթացքում, ՇՊՀ գիտական տեղեկագիր, N1, Պրակ Բ., 2019, էջ 68:

իրավիճակներում: Քննադատական մտածողության բաղադրատարրերը համարվում են գլոբալ մտածողության բաղկացուցիչ և՝

- կանխորոշում են ուսումնառության նպատակները,
- հանգեցնում են կարծրատիպերի հաղթահարման,
- նպաստում են աշխարհի ամբողջական ընկալմանը,
- նպաստում են աշխարհի ճանաչմանը իր բոլոր կողմերով,
- ապահովում են անձի բաց լինելը այլընտրանքի նկատմամբ,
- զարգացնում են պրոբլեմի լուծման ալտերնատիվ ուղիները տեսնելու կարողությունը[7]:

Պատմաբան Ռ. Խաչատուրյանը հոդվածը գրելիս իր առաջ դրել էր հետևյալ խնդիրը, թե հնարավոր է արդյոք դասավանդման միջոցով զարգացնել սովորողի մտածողության հմտություններն առհասարակ, և ինչպիսին են այս ոլորտում առկա գիտական մոտեցումները: Իսկ կա՞ն արդյոք ապացույցներ այն մասին, որ մտածողությունը կարելի է բարելավել: Անցկացվել են մի շարք հետազոտություններ, որոնց արդյունքների ամփոփումը թույլ է տալիս եզրակացնել, որ ուսուցման շնորհիվ հնարավոր է զարգացնել ՔՄ-ը, հատկապես այն դեպքում, երբ ուսումնառությունը միտված է այնպիսի հմտությունների ու կարողությունների ձևավորմանը, որոնք կարելի է կիրառել տարբեր իրավիճակներում և գիտական տարբեր ոլորտներում[8]: Վերոնշյալ հոդվածի հիմնադրույթներն էլ մեզ համար դարձան անկյունաքար և հավաստի ու վստահելի միջոց, որ կարելի և պետք է հետազոտել նշյալ խնդիրը: Չնայած որ չափելիության հետ կարող էին պատահալ օբյեկտիվ խնդիրներ, սակայն մենք որոշեցինք ևս մեկ անգամ այս թեման դնել քննարկման և կատարել հետազոտությունը: Հետազոտության արդյունքները կներկայացնենք մեր աշխատանքի երրորդ, այն է՝ գործնական մասում:

Պատմական մտածողության զարգացման վերաբերյալ հետաքրքիր մոտեցումներ է առաջարկում Լերները: Ուսուցիչը կոնկրետ օրինակի միջոցով կարող է ցույց տալ աշակերտին փաստերի միջև եղած օրինաչափությունները, բացատրել

[7] Տե՛ս նույն տեղում, էջ 69:
[8] Տե՛ս նույն տեղում, էջ 69-70:

այս կամ այն երևույթը: Սակայն սովորողը կարող է առնչվել որևէ ինֆորմացիայի և ստիպված լինել ինքնուրույն պատասխաններ գտնել: Պետք է զարգացնել սովորողների ակտիվությունն ու հասցնել նրան, որ նա մշտապես զգա ավելի լայն փաստեր ու երևույթներ իմաստավորելու պահանջ: Պրոբլեմի լուծման նման մոտեցումը միաժամանակ ցույց է տալիս առհասարակ աշխարհայացքային այլ պրոբլեմների լուծման եղանակները: Արդյունքում սովորողի մոտ ձևավորվում է ընդհանուր մոտեցում վերլուծության նկատմամբ առհասարակ, որը հանգեցնում է սոցիալական երևույթների իմաստավորման և հասանելի որոշակի պրոբլեմների լուծման[9]:

Գ. Հարությունյանն իր ատենախոսության սեղմագրի մեջ նշում է, որ Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումն իրականացվում է ըստ հստակ սահմանված փուլերի՝ խթանում, իմաստավորում և կշռադատում /ԽԻԿ համակարգ/: Այս համակարգն ուղղված է սովորողների ճանաչողական կարողությունների զարգացմանը, որի շնորհիվ խթանվում ու վեր են հանվում սովորողների ունեցած գիտելիքները, իմաստավորվում և կշռադատվում է ուսուցանվող նյութը՝ վերլուծության, համադրության, համեմատությունների ու եզրահանգումների միջոցով: Քննադատական մտածողության տեխնոլոգիան հանդես է գալիս որոշակի մեթոդախմբով, ընդ որում յուրաքանչյուր մեթոդ կիրառվում է ԽԻԿ համակարգի կոնկրետ փուլում՝ ելնելով տվյալ մեթոդի նպատակներից: Օրինակ՝ մտավոր գրոհ մեթոդը կիրառելի է խթանման փուլում, իսկ հինգ րոպեանոց շարադրանքի մեթոդը կամ Վեննի դիագրամ մեթոդը միայն կշռադատման փուլում և այլն[10]: Չնայած այն փաստին, որ ատենախոսը այս մեթոդների կիրառումը ներկայացնում է տարրական դասարանների տեսանկյունից, սակայն մենք կարծում ենք, որ այս բոլոր մեթոդները միանշանակ կարելի է կիրառել նաև միջին դպրոցում, մասնավորապես 7-րդ դասարանում, որտեղ հենց մենք կատարեցինք մեր հետազոտությունը: Աշխատանքի հաջորդ մասում մենք կներկայացնենք մեր

[9] Лернер И. Я. Развитие мышления учащихся в процессе обучения истории. М.: Изд.-во “Просвещение”, 1982. (հղումը՝ ըստ Ռ. Խաչատուրյանի, էջ 70):

[10] Տե՛ս Հարությունյան Գ., Քննադատական մտածողության տեխնոլոգիան որպես կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների զարգացման միջոց արդի դպրոցում, Ատենախոսության սեղմագիր, Երևան, 2014, էջ 11:

հետազոտական ընթացքը, թե ինչպես ենք փորձել հասնել մեր առջև դրած նպատակին:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ

Հասարակագիտության ուսուցիչ

Դպրոցի գրադարանի վարիչ

Բ) տեխնիկականԱնձնական համակարգչային ցանց

Տեսախցիկ

Տեսաձայնագրիչ

Տեսախցիկ

Բ) ներքին

քաղաքացիական և իրավական կրթության և դաստիարակության վերաբերյալ կրթական, մեթոդական, գիտական գրականություն

Համացանց

Նախագծի իրականացման ընթացքում ուսանողները կարողացան ստեղծել բավական գրագետ աշխատանքներ:

I խումբը պատրաստել է.

Ժամանակացույց (հաղորդագրություն)

ուղերձ, սահմանադրության վերաբերյալ ներկայացում

Իմ իրավունքները իմ հարստությունն են (խաչբառ, գրքույկ, թեստ)

II խումբ.

Ես քաղաքացի եմ (գրքույկ, թեստ)

Հեքիաթը սուտ է, բայց դրա մեջ ակնարկ կա (ներկայացում)

III խումբ.

Եվ ես վիրավորվեցի (գրքույկ)

Քեռի Ստյոպա - ոստիկան (հաղորդագրություն)

Այս նախագծի իրականացման արդյունքը դաս էր `« Կլոր սեղան »(տևողությունը 2 ժամ), որը ենթադրվում էր, որ երեխաները կբերեն հետևյալ եզրակացություններին.

Մարդու իրավունքները պաշտպանված լինելու համար բավական չէ դրանք գրել թղթի վրա, անհրաժեշտ է, որ անձը ինքը ցանկանա և իմանա ինչպես պաշտպանել դրանք. Մարդու իրավունքներն իրագործվում են միայն նրա կամքով:

Մեր իրավունքներն ավարտվում են այնտեղ, որտեղ սկսվում է մեկ այլ անձի իրավունքների ոտնահարումը: Եթե այսօր ոտնահարենք թույլերի իրավունքները, վաղը կգտնվի մեկը, ով կխախտի մեր իրավունքները:

Յուրաքանչյուր իրավունք առաջացնում է որոշակի պատասխանատվություն: Իրավունքներն առանց պարտավորությունների տանում են ամենաթողության, իսկ պարտավորություններն առանց իրավունքների ՝ կամայականության:

Յուրաքանչյուր ոք ունի այնքան իրավունք, որքան ցանկանում է և կարող է ունենալ:

Առավել աշխույժ քննարկումը պայմանավորված էր շնորհանդեսով. «Հեքիաթը սուտ է, բայց դրա մեջ ակնարկ կա» խաղը, որը ուսանողները ստեղծեցին ոչ միայն իրենց համար, այլև ՝ Երեխաների իրավունքների մասին պատմելու համար: և կրտսեր ուսանողներ:Այսպիսով, առանց պատմելու մեթոդով դասը կարծում եմ կարելի է համարել ստացված: Սոցիալական գործնական գործունեության այս փորձը

փոխանցվում է ուսանողներին ՝ նրանց մեջ ձևավորելով պատասխանատու վերաբերմունք իրենց և իրենց գործողությունների նկատմամբ, այլ մարդկանց հետ հանդուրժողականության և փոխազդեցության անձնական փորձ ձեռք բերելու և ընկալելու ունակություն:Երկրում փոխակերպման սկզբից շատ ժամանակ է անցել: Կրթության ոլորտում մեծ փոփոխություններ են տեղի ունեցել. Հայտնվել են տարբեր տեսակի կրթական հաստատություններ, մշակվել է կրթական նոր չափանիշ, և կրթության ձևերն ու պայմանները դարձել են ավելի ճկուն, փոփոխական: Կրթության կարևոր առարկան այժմ այն ծնողներն են, ովքեր ավելի բարձր պահանջներ են ներկայացնում ուսուցման որակի նկատմամբ և ովքեր նյութական և ֆինանսական աջակցություն են ցուցաբերում դպրոցին: Variousնողները հատուկ ուշադրություն են դարձնում տեխնոլոգիայի կիրառմանը տարբեր դասերին:Ներկա փուլում հասարակության տեղեկատվականացման գործընթացը դնում է մանկավարժական գիտության առջև խնդիր `կազմակերպել դպրոցականների վերապատրաստումը այնպես, որ նրանք պատրաստ լինեն տեղեկատվական տեխնոլոգիաները նշանակալի և ստեղծագործաբար օգտագործել իրենց կրթական և մասնագիտական գործունեություն... Նման նախապատրաստություն իրականացնելու համար անհրաժեշտ է ստեղծել առավել բարենպաստ պայմաններ ուսանողի ՝ որպես անհատի զարգացման համար:Հասարակագիտությունը հարմար է այս պայմանների իրականացման համար ամենահարմար պահին, ներառում է բազմաթիվ կրթական ոլորտների որոշ հատվածներ (պատմություն, աշխարհագրություն, ֆիզիկա, մաթեմատիկա, ինչպես նաև ստեղծագործական հետազոտությունների ոլորտ (նկարչություն, գրականություն) և այլն: Երեխան ինքն էլ դեռ տեղյակ չէ իր հնարավորությունների, իր հետագծի զարգացումը դեռ պարզ չէ նրա համար: Հասարակագիտության հիմնարար հիմքերի ուսումնասիրությունը կարող է մեծ դեր խաղալ երեխայի ՝ որպես անձի բացահայտման գործում:Ուսուցչի հիմնական և շատ պատասխանատու խնդիրն է բացահայտել երեխայի անհատականությունը, օգնել նրան դրսևորվել, զարգանալ, հաստատվել, ձեռք բերել ընտրողականություն և դիմադրություն սոցիալական ազդեցություններին: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է սկսել ոչ թե ըստ կարողությունների ընտրության և նույնիսկ հասարակության կողմից ցանկալի անհատական հատկությունների ձևավորմամբ, այլ

յուրաքանչյուր աշակերտի ՝ որպես անհատի, որակյալ մանկավարժական ուսումնասիրությամբ:Եվ միայն այն ժամանակ, երբ ուսուցչի կողմից մասնագիտորեն որոշվում են նրա անհատական զարգացման առանձնահատկությունները, ստուգվում դրանց դրսևորման կայունությունը, հնարավոր է որոշել նրա հետագա կրթության ձևերը:Աշակերտակենտրոն ուսուցման տեխնոլոգիան ուսուցման համադրություն է, որը հասկացվում է որպես հասարակության նորմատիվորեն հետևողական գործունեություն և ուսումը `որպես առանձին երեխայի անհատապես իմաստալից գործունեություն: Դրա բովանդակությունը, մեթոդները, տեխնիկան ուղղված են հիմնականում յուրաքանչյուր ուսանողի սուբյեկտիվ փորձի բացահայտմանը և օգտագործմանը, որն օգնում է ձևավորելու իմացության անձամբ նշանակալի ուղիներ ՝ կազմակերպելով ինտեգրալ կրթական (ճանաչողական) գործունեություն:

Գ.Կ. Սելևկոն ավելի մեծ ուշադրություն է դարձնում գերիշխող անձի ինքնակատարելագործման ձևավորմանը, որը ներառում է ինքնակրթության, ինքնակրթության, ինքնահաստատման, ինքնորոշման, ինքնակարգավորման և ինքնաիրացման վերաբերմունք:

Վերջաբան

Յուրաքանչյուր պետության և ազգի հաջող կենսագործունեությունը պայմանավորվածծ է համազգային կենսական շահերի միասնական ընկալմամբ , ապա նաև այդ շահերի շուրջ ձևավորված հասարակական համախմբվածությամբ։Կրթության բովանդակության արմատական փոփոխությանը զուգընթաց անհրաժեշտություն է առաջացել հստակեցնել ու բազմազան դարձնել դասավանդման մեթոդիկան, ուսուցման գործընթացի կազմակերպման և ուսուցման արդյունքների ստուգման ձևերը։Այսօր հանրակրթության բնագավառում ուսուցման կազմակերպման առավել տարածված ձը ինչպես մեր երկրում, այնպես էլ արտասահմանյան երկրների մեծ մասում, Կոմենսկու ստեղծած ուսուցման դաս-դասարանային համակարգն է, այն իր գոյության ավելի քան 300 տարիների ընթացքում այս համակարգը հետագա կիատարելագործման է ենթարկել հազարավոր ուսուցիչների մեթոդիստների կողմից։Դաս-դասարանային համակարգի արմատական բաղկացուցիչ դասն է։ Որպես ամբողջական համակարգ՝ ուսուցման ընթացքում դասի էությունն ու նշանակությունը հանձնում է ուսուցչի և սովորողների խմբային-անհատակիան փոխներգործունեությանը։ Արդյունքում սովորողները ձեռնք են բերում գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, զարգանում է նրանց ինքնուրույնությունը։Դասի հաջողությունը պայմանավորված է ոչ միայն ուսուցչի նախապատրաստվածությամբ, այլ դասին սովորողների պատրաստվածությամբ և հոգեբանական տրամադրվածությամբ։ Ուսումնական ծրագրի բովանդակությունը, դասի ուսումնական, դաստիարակչական և զարգացնող խնդիրները, աշակերտների տարքը, նրանց գիտելիքների մակարդակը, հմտությունները և կարողությունները համատեղ պայմանավորում են նյութի ընտրությունը, դրանում գլխավորի առանձնացումը, ինչպես նաև ուսուցչի օգտագործած մեթոդներն ու հմտությունները։Եվ միայն ստեղծագործական մոտեցման և մանկավարծության և հոգեբանության ձեռքբերումների , առաջավոր փորձի կիրառման շնորհիվ , ավանդական և ժամանակիանից մեթոդներով հնարավոր է հասնել դասավանդման բարձր մակարդակի։

Գրականության ցանկ

1, Հանրակարթական պետական կրթակարգ։ Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ. Երևան 2004:

2 Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, տեսություններ, մեթոդներ, գնահատտում, ձեռնարկ մանկավարժների և ուսանողների . Երևան 2003թ

3 Ձեռնարկ ուսուցիչների վերապատրաստման համար. Երևան ,2003թ

4 Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ, Ձեռնարկներ ուսուցչի Երևան 2004թ

5 Գ. Ղուլումչյան, Մանկավարժություն գիրք 1. Երևան 2005թ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝

ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՄԱՐ

ՏԱՐՈՆԻԿԻ ԳԱՌՆԻԿ ԳԱՌՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑԻՉ՝

ԷԼՄԻՐԱ ՇԱՀԲԱԶՅԱՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցում գնահատում ըիրականացվում է ինչպես Հայաստանի Հանրապետության պետական և առարկայական, այնպես էլ Միջազգային առարկայական չափորոշիչների և չափանիշների հիման վրա: Հիշյալ փաստաթղթերը սահմանում են սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձեռքբերման մակարդակը: Չափորոշիչները շեշտադրում են սովորողների նկարագրի և բարոյական որակների, արժեքային համակարգի ձևավորումը և շարունակական կատարելագործումը: Դպրոցում գնահատման համակարգը խթանում է սովորողների ուսումնառության գործընթացը: Սովորողների ձեռքբերած գիտելիքների, կարողությունների գնահատումը ուսուցման և ուսումնառության ողջ գործընթացի անբաժանելի մասն է կազմում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Կրթական գնահատումը գիտելիքների վերաբերյալ փաստաթղթավորման և օգտագործման համակարգված գործընթացն է:Գնահատման տվյալները կարող են ստացվել աշակերտների աշխատանքի ուղղակի ուսումնասիրությունից :

Ձեռքբերումը գնահատելու համար կամ կարող են հիմնվել այն տվյալների վրա, որոնցից կարելի է եզրակացություններ անել ուսման վերաբերյալ:Գնահատումը հաճախ օգտագործվում է թեստի փոխարեն, բայց չի սահմանափակվում թեստերով:Գնահատումը կարող է կենտրոնանալ անհատական սովորողի, սովորող

համայնքի (դասարան, սեմինար կամ սովորողների այլ կազմակերպված խումբ), դասընթացի, ակադեմիականծրագրի, հաստատության կամ որպես ամբողջություն կրթական համակարգի վրա:

Կրթական գնահատումը ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է:Այն օգնում է պարզել յուրաքանչյուր սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակը, ինչպես նաև ստանալ դպրոցի կողմից առարկայական ու դպրոցական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ամբողջական պատկերը: Գնահատում բառը կրթական համատեքստում կիրառության մեջ է մտել երկրորդ համաշխարհային պատերազմից հետո:Կրթականգնահատումը լայն հասկացություն է, որը նկարագրում է ցանկացած գործունեություն, որը կարող է տեղի ունենալ սովորողի կամ սովորողների գիտելիքների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով:Նոր մոտեցումներով գնահատումը, ոչ միայն սովորողի առաջադիմության փաստագրումն է, այլև ուսուցման ընթացքի խթանման կարգավորման, վերհսկման և բարելավման մեխանիզմ:

Կատարելագործել սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակը, անձնային աճը, ուսումնական գործընթացը և վերահսկել ուսման որակը՝ խթանելով սովորողիներ ուժի առավելագույն զարգացումը:

Գնահատումը՝

•թույլ է տալիս մշտապես դիտարկել սովորողի ուսումնական գործունեությունը, պարբերաբար ապահովել հետադարձ կապը և արձանագրել ձեռքբերումները:

•խթանել առարկայի խորը ընկալումը իրական կյանքի համատեքստում իրականացվող հետազոտությունների միջոցով:

•խթանել քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացումը:

•հնարավորություն է տալիս սովորողին առարկայական հմտությունները կիրառել միջառարկայական կապեր ստեղծել անհատական նախագիծ իրականացնելիս:

•ուսուցիչներին, դպրոցի տնօրենությանը, համայնքին, նաև վերադաս մարմիններին տրամադրում է լիարժեք և հավաստի տեղեկություն սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակի մասին:

•ծնողներին տրամադրում է հիմնավորված տեղեկություն յուրաքանչյուր սովորողի ուսումնառության որակի, ձեռքբերումների և առաջընթացի մասին:

•հնարավորություն է տալիս դիտարկել, բարելավել կրթական ծրագրերի բովանդակությունը, դասավանդման մեթոդական համակարգը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Գնահատումը ուսումնառության և դրա կատարելագործման վերաբերյալ փաստեր, հավաստի տվյալներ հավաքելու շարունակական գործընթացէ. Արտացոլում և տարբեր կողմերից ներկայացնում է առկա լավագույն փորձը, խթանում է սովորողների և ուսուցիչների համատեղ գործունեության արդյունավետ զարգացումը: Արդյունավետ գնահատումը պետք է լինի՝պլանավորված, հավաստի, համարժեք, անաչառ, արժանահավատ, հուսալի, թափանցիկ:Գնահատում իրականացնելիս ուշադրությունը

կենտրոնացնում է սովորողների կրթական առաջընթացի վրա՝կարևորելով ինչպես ողջ գործընթացի, այնպես էլ ստացված արդյունքների որակական կողմը:

ԳՆԱՀԱՏՄԱՆՓՈՒԼԵՐԸ

Գնահատման ողջ գործընթացը բաժանվում է երեք փոխկապակցված փուլերի.

Ա. Գնահատում. ինչպե՞ս ենք բացահայտում՝ ի՛նչ գիտեն և ի՛նչ են սովորել սաները:

Բ. Գրանցում. ինչպե՞ս ենք հավաքում, վերլուծում և ամփոփում տվյալները:

Գ. Հաշվետվություն. ինչպե՞ս ենք ներկայացնում տեղեկատվությունը կամ գնահատման արդյունքները:

Գոյություն ունեն գնահատման 2 փոխկապակցված ձևեր՝ձևավորող (ուսուցանող) և միավորային:

Ձևավորող գնահատման նպատակը ուսումնական գործընթացում ուսուցիչների և սովորողների գործունեության ճշգրտումն ու շտկումն է՝ հիմնվելով ուսումնառության ընթացիկ արդյունքների վրա: Գործունեության շտկումը ենթադրում է ուսուցչի և սովորողների առջև դրված ուսումնական խնդիրների համատեղ լուծում՝ արդյունքները բարելավելու նպատակով:

Առանց հայտորոշման ուսուցիչները չեն կարող անհրաժեշտ մակարդակով կիրառել ձևավորող գնահատումը, իսկ ձևավորող գնահատման որակն իր հերթին ազդում է միավորային գնահատման արդյունքների վրա: Պահպանելով գնահատման

իրականացման հետևողականությունը՝ կարելի է հասնել ուսումնառության արդյունքների բարձր մակարդակի:

ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

Ձևավորող գնահատումը ուսուցչի կողմից գնահատման 5 բաղադրիչների պլանավորված և պարբերական օգտագործումն է ամենօրյա աշխատանքում (Գծակարգ):

Ուսուցչի կողմից արդյունավետ հետադարձ կապի ապահովում:

Ուսուցման գործընթացի ճշգրտում և շտկում՝ հաշվի առնելով գնահատման արդյունքները:

Գնահատման՝ սովորողների մոտիվացիայի և ինքնագնահատականի վրա խորքային ազդեցության գիտակցում, որն իր հերթին կարևոր ազդեցություն ունի ուսուցման արդյունավետության վրա:

Սովորողների կողմից իրենց գիտելիքները ինքնուրույն գնահատելու ունակության ձևավորում:

Ձևավորող գնահատման առանձնահատկությունն է, որ գնահատման հնարները կիրառվում են յուրաքանչյուր դասին:

սովորողների գործուն մասնակցություն սեփական ուսումնառությանը
սովորողների ուսումնառության գործընթացի շտկում
ինքնագնահատում և փոխադարձ գնահատում
ձևավորող գնահատում
հետադարձ կապի ապահովում
սովորողների մոտիվացիայի ապահովում

Նշանակում է՝ուսուցիչը և սովորողները կարող են արդեն ամենավաղ փուլերից սկսած՝ազդեցություն ունենալ ուսուցման և առհասարակ կրթության որակի բարելավման վրա: Ձևավորող գնահատումը կիրառվում է թե՛ուսուցչի, թե՛սովորողի համար ընդունելի հնարներով:

Ուսուցման գործընթացում գնահատման օբյեկտը սովորողի գործունեությունն է (ոչ թե սովորողը), որն ուղղված է սովորողի ուսումնառության նպատակի իրագործմանը: Հետևաբար, գնահատման բոլոր ձևերի ու տեսակների հիմքը ուսուցման նպատակի ձևակերպումն է:

Դասի հիմքը ուսուցման նպատակն է. և՛ուսուցչի և՛սովորողի ողջ գործունեությունը պետք է ուղղված լինի այդ նպատակի իրագործմանը: Նպատակով են պայմանավորվում դասի ընթացքը, մեթոդների, միջոցների ու գնահատման ընտրությունը:

Յուրաքանչյուր դասին ուսուցչի համար կարևոր է խորհել հետևյալ հարցերի շուրջ.

Որքանո՞վ են սովորողները հասկացել անցած նյութը:

Ինչպե՞ս կարող եմ ստուգել:

Ո՞ր առաջադրանքն էր դժվար սովորողների համար:

Եթե առաջադրանքը դժվարություն է առաջացրել, ապա ի՞նչ պետք է փոխել դասավանդման մեթոդներում:

Գոյություն ունեն սովորողների ակտիվության միքանի ուղղություններ.

- Ուսուցման նպատակների և արդյունքների ընկալում,

- Սովորողների կողմից գնահատման չափանիշների ընկալում,
- Ուսուցչի կողմից համապատասխան հնարների կիրառում:

Դասի նպատակի ընկալումը թույլ է տալիս սովորողին դառնալ գործընթացի կազմակերպման գործուն մասնակիցը: Վերջնարդյունքները ևս պետք է հասկանալի լինեն սովորողներին՝նրանց դարձնելով գնահատման չափանիշների մշակման մասնակից: Նպատակներն ու ակնկալվող արդյունքները պետք է ակնառուներ կայացված լինեն (գրատախտակին, պաստառին, էկրանին և այլն), որպեսզի ուսուցիչն ու սովորողները հնարավորություն ունեն անդրադառնալու դրանց և ստուգելու իրենց ձեռքբերումները:

Ձևավորող գնահատումը ուսուցչի և սովորողների համատեղ հետադարձ կապի անընդհատությունն է՝ երկկողմ գործունեության ճշգրտման, ուսուցման գործընթացի բարելավման և արդյունավետության բարձրացման նպատակով: Հետադարձ կապը ուսուցչին հնարավորություն է տալիս պատկերացնելու, թե ինչպես է ընթանում ուսուցման գործընթացը, տեղեկատվություն է տրամադրում սովորողների ձեռքբերումների և դժվարությունների մասին:

Ուսուցանող / ձևավորող/գնահատում

Ուսուցանող / ձևավորող /գնահատումը սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման հետ կապված բացթողումների, սխալների ու դժվարությունների բացահայտման և դրանց հաղթահարման, սովորողի մտածողության ու ճանաչողության ոլորտն ընդլայնելու համակարգված գործ ընթացն է, ինչպես նաև հետադարձ կապի

կիրառմամբ ուսումնական գործընթացում տեղեկությունների հավաքագրման և արժևորման միջոցով կրթական չափորոշիչների, ուսումնական ծրագրերի ու դասավանդ մանմեթոդների բարելավումը: Ուսուցանող գնահատման նպատակն է՝

•բարձրացնել ուսուցման գործընթացի արդյունավետությունը,

•բացահայտել, վեր հանել ուսումնական նյութի յուրացման հետ կապված խնդիրները,

•սովորողին ուղղորդել տվյալ նյութը սովորելու, բացթողումները շտկելու անհրաժեշտության գիտակցմանը,

•ճշգրտել կիրառվող դասավանդման ռազմավարությունների և մեթոդների նպատակահարմարությունը:

Ուսուցանող գնահատումը կիրառվում է ուսումնական ողջ գործընթացում.սա անընդհատ իրականացվող գործընթաց է, քանի որ ուսուցանելու, գիտելիքներ և դրանց հիման վրա որոշակի կարողություններ ձևավորելու միտում ունի նչունի նիշային գնահատման նպատակ: Ձևավորող գնահատման օգնությամբ ուսուցիչը , գրանցում, նկարագրում և պարբերաբար տեղեկացնում է սովորողի ձեռքբերումների, նրա ուժեղ և թույլ կողմերի մասին: Ուսուցանող գնահատման նպատակով միջին դպրոցում կիրառվում են աշխատանքների հետևյալ տեսակները՝ յուրացման / ինքնուրույն աշխատանք, բանավոր ելույթ, կարճ ժամանակի համար նախատեսվող հայտորոշիչ թեստ, ուսուցանող ստուգում, ստուգող հարցաթերթ, բաց հարցերով քննարկում, խմբային/զույգային համագործակցային աշխատանքներ, գործնական աշխատանք, ինքնագնահատում և փոխադարձ գնահատում, թղթապանակի բովանդակության գնահատում, հաշվետվության ներկայացում և այլն:

Դասի պլան

Առարկա	-Հայոց պատմություն 6-րդ դասարան
Թեմա	-Հայ-հռոմեական պատերազմները Ք.ա.69-66թթ.
Ենթաթեմա	-Արածանիի ճակատամարտը և հռոմեական բանակների պարտությունը:Պատերազմի երկրորդ փուլը
Նպատակը	ա)Իմանա Արածանիի ճակատամարտի հաղթանակի նախադրյալները: բ)Հասկանալ Հռոմի վարած քաղաքականությունը Արևելքում: գ)Դասագրքից օգտվելու կարողությունների զարգացում:
Մեթոդ	-Մտագրոհ
Ուսուցման միջոցներ	-Դասագիրք, աշխատանքային տետր և քարտեզ:
Խթանում	-Տիգրանակերտ և կազմակերպել մտագրոհը:



Ք.ա. 69թ. հոկտեմբերի 6

5-6 րոպե կատարել խմբավորում

Մայրաքաղաք - Արքայի նստավայր,թատրոն,շքեղ շինություններ,պարիսպներ:

Մերուժան – Մանկայոս,Լուկուլոս,8000 տաղանդ,գանձեր;

Ճակատամարտ – Ք.ա 69թ. հոկտեմբերի 6:

Պաշտպանություն – Աբստամբություն,հրեա և հույն վարձկաններ

Կշռադատում և գնահատում– Գնահատել Տիգրանակերտի և Արածանիի ճակատամարտերը (կատարել հարցում) անդրադառնալ արդարացի և անարդարացի պատերազմներին:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ. ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՄ ԹԻՎ 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ստեղծարարության զարգացումը միջին և ավագ դպրոցի երեխաների մոտ

Մասնակից՝ Սահակյան Լուսինե

Դպրոց՝ Մուսալեռի Ֆր. Վերֆելի անվան միջնակարգ դպրոց

Վերապատրաստող՝ Ավետիսյան Կարինե

Վաղարշապատ 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան.....3
2. Հետազոտական համատեքստ 5
3. Գործնականհամատեքստ.....7
4. Հետազոտական ընթացք.....11

5. Տվյալների մշակում և վերլուծություն.....17

6. Ամփոփում 19

7. Օգտագործված աղբյուրների եվ գրականության ցանկ 20

8. Հավելվածներ..... 21

ՆԱԽԱԲԱՆ

Սովորականուսուցիչըպատմումէ: Լավուսուցիչըբացատրումէ:

Բարձրակարգուսուցիչըցույցէտալիս: Հանճարեղուսուցիչըոգեշնչումէ:

ՈՒԻԼՅԱՄՈՒՐԴ

Աշխարհը փոփոխվել է… արդյունաբերական հասարակությանը փոխարինելու է եկել տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջանը: Մենք ապրում ենք գլոբալ փոփոխությունների մի ժամանակաշրջան, որի մասին անցած դարի գիտնականներն ու ֆանֆաստ գրողները հազիվ թե կարողանային երևակայել: Տեխնոլոգիաների այս խելագար մրցակցության և համացանցի առկայության պայմաններում փոխվում է ինչպես ուսուցչին առաջադրվող աշխատանքի բնույթը, այնպես էլ կրթության բուն էությունը: Հարցերի հարցն է դառնում, թե ինչպես պետք է կրթել նոր ժամանակի մարդուն, որ նա կարողանա լինել մրցունակ և պահանջված,ինչպիսի գիտելիքներ պետք է ունենա, որ գիտելիքներն ու հմտությունները պետք է զարգացնել նրա մոտ: Արդի աշխարհի հրամայականն է դառնում դաստիարակել ստեղծարար կարողություններով այն անձին, ով ոչ միայն հաճույք է ստանում իր աշխատանքից, այլ նաև մշտապես աշխատում է՝ նորովի ստեղծելու և գործելու կոնցեպտից: Այս մասին է խոսում նաև Սիներջի կոնսորցիումի առաջատար մասնագետ Աննա Կոնջորյանի այն հետաքրքիր դիտարկումը՝ Դավոսում անցկացվող ամենամյա ֆորումների մասին: Նա փաստում է, որ աշխարհի մեծ ընկերությունների էյջառները և այլ տաղանդների ղեկավարման մասնագետները ամեն տարի քննարկում են, թե որ հմտություններն եմ կարևորվելու 5 տարի հետո: 2015թվին ստեղծարարության կարողունակությունը համարվել է ամենավերջին 10-րդ հմտությունը, մեկ տարի անց այն եզրափակել է եռյակը: Ընդորում, առաջին տեղում էր բարդ խնդիրների լուծելու կարողունակությունն էր, որը նկիսով չափ կախված է ստեղծարարությունից:[1]

Եվ այսպես, այս գիտական հետազոտության նպատակն է՝ առաջարկել միջոցներ ստեղծարար մարդու ձևավորման գործընթացի համար: Այս հետազոտության խնդրի արդիականությունը պայմանավորված է կրթության բովանդակության կառուցվածքի

[1] https://www.youtube.com/watch?v=W8I-YQGZAc4&t=1661s

փոփոխությամբ և նոր չափանիշների ու կարծիքների ներդրմամբ, որոնք ստեղծարարական կարողությունների ձևավորման մասն են կազմում:

Այս թեմայի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ցանկանում եմ ինքս ծանոթանալ ստեղծարարական այն արդյունավետ մեթոդներին, որոնք այսօր գործում են աշխարհում: Բացի այդ, ցանկանում եմ ինքնակրթութվել, քանի որ ինքս կարծում եմ, որն լավագույն որակներով նախևառաջ օժտված պետք է լինի դասավանդող ուսուցիչը: Եվ միայն բանիմաց ու երջանիկ ուսուցիչը, ով ձգտում է ինքնաբացահայտման, իվիճակի կլինի սեփական օրինակով ծառայելու և ոգեշնչելու երեխաներին:

Հետազոտական համատեքստ

Բոլոր մարդիկ գործունեության այս կամ այ ոլորտում ունակ են գրանցելու
ստեղծագործական նվաճումներ՝ ճիշտ պայմանների, ինչպես նաև
համապատասխան գիտելիքների և հմտությունների առկայության պարագայում:

Քեն Ռոբինսոն

Հետազոտական համատեքստը կազմելիս առաջներդվել ենք հայ և համաշխարհային ստեղծարարության հիմնահարցերը քննած մի շարք հեղինակների աշխատանքներիով: Շնորհիվ այդ հեղինակների, «մասնակիորեն» հնարավոր եղավ ուսումնասիրել համաշխարհային փորձն ու մեթոդները, որոնք առկա են այս խնդրի շուրջ:

Եվ այսպես, հայ իրականության մեջ հայտնի մանկավարժ «Ստեղծարար մտածողություն» գրքի հեղինակ Վաչագան Սարգսյանն է նշում. «Մարդու մեջ զարգացնել ստեղծարար մտածողություն, նշանակում է նրան օժտել ստեղծագործելու որոշակի մեթոդիկայով, նրա մեջ ձեւավորել ու զարգացնել երեւույթները նորովի, անսովոր տեսանկյունից ներկայացնելու տեխնիկա, ոչ ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու, բազմազան հնարքներ բանեցնելու կարողությունները»:[2]

Օրինակ արդի աշխարհի զարգացման միտումներից ելնելով հրեա հոգեբան և սոցիոլոգ Ա. Մասլոուն գտնում էր, որ պետք է մշակվի ուսուցման նոր տիպ՝ ուղղված նոր, գործունյա, ստեղծարար, ինքն իրեն վստահող, ազատ մարդու ստեղծմանը: [3]

Ստեղծարարության հիմնահարցն արդիական է ինչպես ընդհանուր մանկավարժության, այնպես էլ բնագավառային մյուս ոլորտների տեսակետից: Սկզբունքնորեն հենց այդ միտքն է արտահայտել Տ. Լյուբարտը՝ նշելով, որ ստեղծարարության ուսումնասիրության գործընթացում իրենց ներդրումն ունեն

[2] Առավոտ օրաթերթ Թելեգրամում –՝ https://www.aravot.am/2019/11/07/1076318/

[3] Маслоу А., Дальние пределы человеческой психики, СПб.: Евразия, 1999, 432 с

հոգեբանության այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են փորձարարականը, տարիքայինը, սոցիալականը, բժշկականը: [4]

Յա. Ա. Պոնոմարևի աշխատանքներում ստեղծարարությունը դիտարկվում է իբրև զարգացման, շարժման, փոփոխության հիմք: Նա գտնում է, որ ստեղծարարության էությունը հանգեցվում է ինտելեկտուալ ակտիվությանը և իր գործունեության կողմնակի արդյունքների նկատմամբ սենզիտիվությանը: Հենց գործունեության կողմնակի արդյունքներն ունեն մեծ արժեք ստեղծագործ անձի համար, քանի որ բովանդակում են նորույթ: Իսկ ոչ ստեղծագործող մարդու համար կարևոր են սոսկ ուղիղ, նպատակամետ արդյունքները՝ նպատակին հասնելու համար, այլ ոչ թե նորույթը:[5]

Ստեղծարարության կարողության զարգացման խնդիրների և մեթոդների շուրջ իրենց ավանդն են բերել մի շարք անվանի անձիք, որոնց առաջարկած մոտեցումները կիրառելի են, ոչ միայն իրենց ոլորտներում, այլ նաև դպրոցահասակ երեխաների մոտ ստեղծարարության զարգացման գործում: Այս թվում են՝ Ա. Օսբորնը՝ Ուղեղային գրոհ, Հենրի Ալշտուլերի՝ խնդիրների հայտանգործման տեսություն, Էդուարդ դը Բոնոը՝ լատալ մտածողության, Ուոլթ Դիսնեյը՝ մտքի աթոռներ , ովքեր առաջարկել են այս հրաշալի տեխնիկաները, որոնց մասին առավել հանգամանալից կխոսենք հաջորդիվ:

[4] Любарт Т., Психология креативности. М., Когито-Центр, 2009, 214 с.

[5] Пономарев Я. А., Психология творчества, Тенденции развития психологической науки, М., Наука, 1976.

Գործնական համատեքստ

Բոլերն էլ տաղանդավոր են , քանի դեռ օձին չեն առաջարկում հեծանիվ վարի…

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՍԱՑՎԱԾՔ

Մարդու ստեղծագործական ներուժի արթնացումն արդյունավետ կրթության հիմքն է: Մինչ կանդրադառնանք ստեղծարարության կարողությունների, դրանց բացահայտման մեթոդների համաշխարհային փորձառության մասին եղած տեղեկատվություններին, նախ եկեք սահմանենք, թե ինչ է ստեղծարարությունը, ովքեր են ստեղծարարները…

Ստեղծարարություն բառը ծագել է լատիներեն creo –ստեղծել, արարել, ծնել բառից: Ստեղծարարությունը հատկապես բնութագրիչ է արվեստի մարդկանց համար, սակայն պարզվում է, որ յուրաքանչյուր ոք ունի իրեն բնորոշ տաղանդներ, որոնք յուրաքանչյուրի մոտ յութովի են արտահայտվում: Եվ իլրումն այս մտքի մեջ բերենք աշխարհահռչակ գիտնական Էյնշտեյնի այն միտքը, որ « Մենք բոլորս հանճարներ ենք, բայց եթե Դուք պետք է ձկան մասին դատեք նրա՝ ծառ բարձրանալու կարողությամբ, ապա նա ողջ կյանքը կապրի՝ իրեն ամենավերջին անհաջողակը համարելով» : Հետևաբար ստեղծ՝ -արարության կարողությունների բացահայտումն ու զարգացումը կհանգեցնի ցանկալի արդյունքների:

Կրթությունը նպատակ ունի ձևավորել ստեղծարար մարդ: Եվ այսպես, ով է ստեղծարար մարդը… Այս կերպարը հանդես է գալիս անսովոր ոճով, նա նոր մտքերի և ծրագրերի ծնունդ տվող է: Հաղորդակցման առումով այս մարդիկ վարակում են իրենց բնույթով և իրենց եռանդով, նոր մտքեր են տալիս, ոգևորում են սկսելու նոր ծրագրեր:

Ստեղծագործական կարողությունների բացահայտմանը միտված մի շարք մեթոդներ, մեթոդիկաներ և տեխնիկաներ են ստեղծվել, որոնք նպաստում են յուրօրինակ մտքերի համախմբմանն ու նոր մտքերի ստեղծման գործընթացին՝ օգնելով գտնել առաջացած խնդիրների և դժվարությունների համար նոր, յուրօրինակ մոտեցումներ և լուծներ: Ստեղծագործական գործունեության մեթոդիկաները օգնում են ավելի հստակ ձևակերպել խնդիրները, արագացնում են նոր գաղափարներ գտնելու

գործընթացը, ինչպես նաև ավելացնում են դրանց քանակը, լայնացնում են խնդիրների վերաբերյալ արդեն եղած տեսակետները և ոչնչացնում իմացական արգելքները: Մեթոդիկաները որպես այդպիսին իրենցից ալգորիթմեր չեն ներկայացնում, որոնց հետևելով անպայման խնդիրների լուծումներ կարելի է գտնել, այլ տալիս են ուղղվածություն ու կարգուկանոն մտքերի ու գաղափարների առաջացման ու ուղղորդման համար: Մեթոդիկաները կրճատում են գաղափարների փնտրտուքի ժամանակը՝ կազմակերպելով և դարձնելով ավելի արդյունավետ բուն մտքերի որոնման գործընթացը: Գոյություն ունեն ստեղծարարույթան մեթոդիկաների ինչպես անհատական, այնպես էլ՝ խմբով կամ զույգերով աշխատելու ձևեր:

Եվ այսպես, ստեղծարարության կարողությունները բացահայտող մեթոդներից է Ուղեղային գրոհ: Այն խնդիրների լուծման օպերատիվ տարբերակներից մեկն է, որը հիմնված է ստեղծագործական գաղափարների հավաքագրման վրա, որի ընթացքում մասնակիցներին ասվում է տալ հնարավորինս շատ լուծումների տարբերակներ առկա խնդրին՝ անգամ ամենաֆանտաստիկ ու առաջին հայացքից անհնար թվացող: Որից հետո ասված տարբերակներից ընտրվում են ամենահնարավորները, որոնք կարող են լինել տվյալ իրավիճակի համար լավագույն լուծում: Ուղեղային գրոհը դասվում է արագ գնահատման մեթոդնների շարքին: Այս մեթոդը հայտնագործվել է գովազդային հայտնի կազմակերպության տնօրեններց մեկի՝ Ալեքս Ասբորնի կողմից և նկարագրվել իր՝ «Ի՞նչպես հորինել» գրքում 1942 թ-ին:

Ստեղծարարության զարգացմանը նպաստող հաջորդ մեթոդը Հենրի Ալշտուլերի խնդիրների հայտանգործման տեսությունն է:Մեթոդիկան հիմնվել է 1946 թ-ին գրող-ֆանատիկ Հենրի Ալշտուլերի կողմից: Այն իրենից ներկայացնում է մեթոդոլոգիա, գործիքների համախումբ, գիտելիքների պահոց և տեխնոլոգիաների համախումբ, որոնց շնորհիվ մոդելավում են նորագույն գաղափարներ և որոշումներ: Այն իրենից ներկայացնում է խնդրի ձևավորման գործիքներ և մեթոդներ, որոնց միջոցով կարողանում են ձևակերպել խնդիրներ, կատարել համակարգային վերլուծություն: Ի տարբերություն «Ուղեղային գրոհ» մեթոդիակայի, այս մեթոդիկայի նպատակը համարվում է նոր համակարգի հայտնաբերումը կամ բարելավումը:

Ստեղծարարության զարգացման ամենահետաքրքիր մեթոդներից մեկը, որը, իդեպ չափազանց հարմար է դպրոցահասակ երեխաների շրջանում կիրառելու

համար, առաջարկել է բրիտանացի հայտնի հոգեբան և բժիշկ Էդուարդ դը Բոնոը: Նա հանդիսանում է լատալ մտածողության հեղինակը, որը տարբերվում է սովորական հորիզոնական մտածողության ձևերի վրա հիմնված մեթոդիկաներից նրանով, որ հարցականի տակ է դնում ելքային պայմանները: Լատալ մտածողության տեսակներից մեկն է վեց գլխարկների մեթոդիկան (սպիտակ՝ վերլուծական մտածողություն, կարմիր՝ զգացմունքային մտածողություն, սև՝ քննադատական մտածողություն, դեղին՝ լավատեսական մտածողություն, կանաչ՝ ստեղծագործական մածողություն, կապույտ՝ լայնածավալ մտածողություն): Մետաֆորիկ դիտանկյունից նայելիս՝ մարդը, կրելով գլխարկներից յուրաքանչյուրը, սկսում է խնդրին նայել տարբեր տեսակետներից:

Ուոլթ Դիսնեյի մտավոր աթոռների տեխնիկան: Ուոլթ Դիսնեյի մասին պատմում են, որ նա աշխատելիս մտել է երեք տարբեր դերերի մեջ՝ երազող, իրատես և քննադատ: Երբ նա փոխել է իր դերը, փոխել է նաև իր տեղը, այդ պատճառով նա սկզբում ունեցել է երեք տարբեր աթոռ մտորումների համար, այնուհետև նա սկսել է գործել երեք տարբեր վայրերում: Երազողի աթոռին նստողը, կապված տվյալ իրավիճակի հետ, հորինում եք ամենատարբեր բաներ: Նա խաղում է ամենատարբեր հնարավորությունների և անհնարինությունների հետ: Իրատեսի աթոռին դեպքում աշակերտը փորձում է փաստել իրականությունը, միացնել առողջ միտքը: Երրորդ աթոռի դեպքում աշակերտը զարգացնում է երազողի խելագար գաղափարները: Տարիներ անց այս միտքը զարգացնելով Դիսնեյը ստեղծել է Քննադատի աթոռը, որին նստելով, պետք է քննադատական մոտեցում ցուցաբերվի տվյալ գաղափարի շուրջ: ՈՒսուցիչը պետք է հետևի, որպեսզի աշակերտը երկար չնստի մի աթոռին: Նույնիսկ մի հարցի շուրջ անպայման փոխելով աթոռները: [6]

Հաճախ խնդիրների ստեղծագործական մոտեցում տալու նպատակով կիրառվում են գաղափարների գրաֆիկական պատկերներ՝ քարտեզների, դիագրամների տեսքով: Այս բոլոր մեթոդները , ոչ միայն նպաստում են ալտերնատիվ մտածելակերպի ձևավորմանն ու զարգացմանը, այլ առաջին հերթին դասերը դարձնում են ուրախ, հետաքրքիր և ամրակայվում են երեխայի երկարատև հիշողության պահոցում:

[6] Վիկիպեդիայի ազատ հանրագիտարան, Ստեղծագործական մտածողության մեթոդներ

Այս հրաշալի տեխնիկաներից բացի մասնագիտական գրականությունը մեզ է մատուցում նաև մի շարք վարժություններ, որոնք էականորենխթանում են աշակերտի մոտ ստեղծարար մտքի զարգացմանը:

Մեզ բոլորիս հայտնի «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» խաղը այլ կոնցեպտով է հանդես գալիս: Վարժության ժամանակ աշակերտներին, նստած կլոր շրջանով, ցույց է տրվում դասի հետ կապված ինչ-որ անսովոր առարկա, որի նշանակությունը հասկանալի չէ (կարելի է օգտագործել նույնիսկ այդ առարկայի նկարը): Մասնակիցներից յուրաքանչյուրը հերթականությամբ պետք է պատասխանի երեք հարցի՝ ի՞նչ է սա, որտե՞ղից, ինչպե՞ս կարելի է օգտագործել: Կրկնությունը բացառվում է, յուրաքանչյուր մասնակից պետք է մտածի նոր պատասխան: Հոգեբանական իմաստը Ինտելեկտուալ մարզանք է, որն ակտիվացնում է մասնակիցների մտածողության արագությունը, խթանում է նրանց անսովոր մտքեր և զուգորդություններ առաջադրելուն: Քննարկում Հարցերին տրված պատասխաններից որո՞նք էին ամենահետաքրքիրները և յուրահատուկը, որո՞նք հիշվեցին մասնակիցների կողմից:[7]

Հաջող արդյունք է արձանագրում նաև «Ստեղծարար նվագախումբ» վարժությունը, որի ժամանակ մասնակիցները շրջան են կազմում, վարողը պատմում է դասի սկիզբը այնուհետև առաջարկում է մասնակիցներին շարունակել պատմությունը: Բոլորը հերթականությամբ շարունակում են՝ յուրաքանչյուրև 3-4 նախադասությամբ, մինչև ավարտվի դասի վերարտադրման փուլը: Նույն սխեմայով փորձ ենք կատարում շրջանում գտնվողների մոտ կազմակերպել մեկական հարց և պատասխանի հնչեցումը:

Հարկ է նշել նաև, որ այս մեթոդներից, վարժություններից օգտվելիս, մենք՝ ուսուցիչներս, հաճախ, մեր սեփական մոտեցումներն ենք ցուցաբերում, երդեմն զարգացնելով վեր նշված գործիքակազմը, ելնելով մեր սեփական փորձառությունից ստեղծում ենք նոր վարժություններ:

[7] Սոնա Պողոսյան, Ստեղծարար կառավարում մեթոդական ուղեցույց, Երևան 2018, էջ 66

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ

Այսպես, հետազոտական աշխատանքի կատարման համար ընտրվեց 6-րդ դասարանը, իսկ որպես առարկա՝ Հին աշխարհի պատմությունը: Հետազոտական աշխատանքի իրականացմանընթացքի համար ընտրվել են հետևյալ 3 թեմաները (4 ժամ)՝

1. Հին քարի դար (պալեոլիթ)
2. Միիջիհ և Նոր քարի դար. անցում նստակյացության
3. Նախնադարյան հասարակության անկումը

Հին քարի դար (պալեոլիթ) թեմայի ուսումնասիրությունը կազմակերպելու համար նախևառաջ հոգ էի տարել դասարանի կահավորման համար: Փորձել էի ստեղծել հատակին հարմարավետ տեղավորվելու պայմաններ իսկ կենտրոնում դրել էինք երևակայական կրակը՝ մի քանիսի պայուսակները տեղակայելով: Երբ բոլորս զբաղեցրինք մեր տեղերը երևակայական կրակի շուրջ, և ստեղծվեց պատշաճ մթնոլորտ նոր նյութի ուսումնասիրության համար: Այս ամենից հետո երեխաներին առաջարկեցի, որ մի պահ մտովի փորձենք տեղափոխվել մեզանից 50.000 տարի առաջ՝ երբ չկա հաց, ջերմության մշտական աղբյուր, հաղորդակցման միջոցներ և մեզ հայտնի շատ հարմարություններ: Ներկայացվեց այն ամենօրյա պայքարը, որ նախամարդը մղում էր ջուր , սնունդ հայթայթելու, կենդանիներից պաշտպանվելու և կյանքի այլ դժվարություններ հաղթահարելու համար: Որից հետո հարց ուղվեց աշակերտներին, թե «ինչ միջոցների պետք է դիմի նախամարդը այդ դժվարությունները հաղթահարելու համար»:

Նախամարդուն առաջադրված խնդիրների լուծումը պատկերավոր գիտակցելու համար աշակերտները մտան դերային խաղի մեջ և փորձեցին ներկայացնել մարդկային հոտերը: Այստեղ նրանք իմացան, որ մարդկային հոտի թիվը հասնում էր 15-ից 20 հոգու: Փորձեցինորոշել, թե ով է լինելու ղեկավարը, և այստեղ իրենց համար զարմանալիորեն բացահայտեցին մայրիշխամության համակարգը: Այս թեման

զարգացնելով՝ երեխաների հետ որոշեցինք, թե ինչպիսի աշխատանքային բաժանում է եղել: Այս ամենին հետևեց, թե ինչպիսի հաղորդակցման միջոցներ են օգտագործվել: Փորձեցինք վեր հանել այն ժամանակների կենցաղային պայմանները, որտեղ չափազանց հետաքրքրական էր աշխատանքային գործիքների հետազոտումը, որտեղից էլ բացահայտեցինք, թե ինչու են այս և մյուս ժամանակաշրջանները անվանակոչվել և ինչ փուլաբաժանումների է ենթարկվել: Կենցաղի ուսումնասիրությունը մեզ հասցրեց այնտեղ, թե ինչ են կերել նախամարդիկ, և հատկապես մսակերությունը ինչպես անդրադարձավ նրա տեսակի զարգացման վրա, և ինչպես առաջացավ առաջին բանական մարդը՝ մոտ 40-ից 35 հազար տարի առաջ:

Ալտամիրյան քարայրի օրինակով բացահայտեցինք նախամարդու հոգևոր ընկալումները և ստեղծագործելու կարողությունները: Այս փուլում աշակերտներին ներկայացվեց կրակի հայտնագործման և կիրառման կարևորությունը ՝ իբրև նախամարդու կենսաապահովման և զարգացման ամենակարևոր գործոններից մեկը:

Դասի ավարտական՝ կշռադատման փուլը սկսեցինք նրանից, թե արդյոք աշակերտների մոտ կան չպարզաբանված հարցեր: Հնչեցին մի շարք հարցեր, որոնցից հետաքրքրական էր երեխաներից մեկի այն հարցադրումը, թե «որտեղից ենք մենք այսքան մանրամասն տեղեկություններ իմանում այս ամենի մասին»: Նշեմ, որ ինքս երկրորդ մասնագիտությամբ լինելով հնագետ հանգամանալից և սպառիչ տրվեց այս հարցի պատասխանը:

Ամփոփելով դասաը անդրադարձանք խմբի աշխատանքին՝ կատարելով դիտարկումներ և լրացումներ:Իրենց ինացություններով և կարողություններով աչքի ընկած երեխաներին տրվեց ձևացորող գնահատականներ:Այնուհետ հանձնարարվեց տնային առաջադրանքներ:

Դասի անցկացման համար օգտագործվել է Էվրիստիկ զրույցի, դերային խաղերի,հարց ու պատասխանների մեթոդները

Դաս 2Միիջիհ և Նոր քարի դար. անցում նստակյացության

Երկրորդ դասի սկզբում ևս մեկ անքամ պարզաբանվեց, թե արդյոք կան չհասկացված հարցեր: Ստուգվեցին տնային հանձնարարությունները: Երեխաներին

նախորդ դասին առաջարկել էի հնարավորության դեպքում բերել նախամարդու կողմից օգտագործված քարի տեսակներ: Ի զարմանս ինձ՝ բացահայտեցի, որ դասարանի մեծամասնությունը հայթայթել էր մի շարք քարի տեսակներ՝ մասնավորապես սատանի եղունգ օբցիդյանը, մարմարի կտորներ գետաքարեր և այլն, իսկ որոշները փորձել էին ստանալ գործիքներ, հատկապես նետի ծայրակալներ:

Դասի հարցումը կազմակերպելու համար օգտվեցինք ստեղծարարությունը զարգացնող մի վարժությունից, որը կոչվում է«Ստեղծարարնվագախումբ»: Նորից կազմեցինք շրջան, որի մեջ բնդգրկված էին դասրանի բոլոր աշակերտները: Առաջին աշակերտը իրենից աջ կանգնած երեխային տալիս էր հարց , եթե նա կարողանում էր պատասխանել հարցին, մնում էր շղթայում, եթե ոչ, դուրս էր մնում հարցումից, իսկ եթե պատասխանել էր իրեն տրված հարցին, արդեն ինքն էր իր հաջորդին տալիս հարց: Խմբից դուրս մնացած երեխաները կարող էին վերադառնալ խումբ, եթե կարողանային պատասխանել հարցը չիմասող երեխայի հարցին: Այսպես եվստուգվում էր նրանց դասի իմացությունը, և ձևավորվում էր հարցեր ձևակերպելու կարողությունը, և ապահովվում է դասարանի ընդգրկվածությունը, և նպաստում է բազմաթիվ այլ կարողություններ ու հմտություններ: Իդեպ խաղը կարելի է շարունակել այնքան, մինչև երեխաների մոտ գիտելիքը ամրապնդվի, իսկ առավելագույն արդյունքի դեպքում կբացահայտվի ամենաարագ և պատրաստված երեխան: Այս ամենից հետո կատարեցինք որոշներին ձևավորող, որոշներին ընթացիկ գնահատում:

Դասաժամին մնացած 25 րոպեն տրամադրվեց նոր նյութի ուսումնասիրմանը: Երեխաների ուշադրության խթանման փուլում կատարեցինք մտագրոհ «միջին և նոր քարի դար» եզրույթների շուրջ:

Հաջորդ փուլում գծեցինք ժամանակի շղթա, որի վրա տեղակայեցինք քարի դարի բոլոր փուլերը իրենց զբաղեցրած ժամանակահատվածներով: Այդ նույն շղթայից արդեն հորիզոնական գծեցինք երկու գիծ, և յուրաքանչյուր դարաշրջանի տակ գրեցինք նրա զարգացման յուրահատկություններն ու հայտնագործությունները: Երեխաներին բացատրվեց ցեղ և ցեղի առաջնորդ եզրույթները:

Նախամարդու հոգևոր ընկալումները բացահայտելիս, երեխաների մոտ հուզական և երևակայական ֆոնը բարձրացնելու համար պատմեցի նախամարդու մի քանի

հետաքրքրական սովորությունների մասին, մասնաւորապես հոգիների մասին գիտելիքների առաջացման, հնագույն թաղման ծեսերի մասին: Նրանց ցուցադրվեց նաև այդ և դրանից ուշ ժամանակաշրջաններին վերաբերող իմ կողմից պեղված դամբարանների և գտածոների մասին նյութ: Դասը ավարտեցինք տնային առաջադրանքների հանձնարարությամբ:

Դաս 3.Նախնադարյան հասարակության անկումը

Երրորդ դասը սկսեցինք նորից այն հարցադրումով, թե կա՞ն արդյոք չհասկացված հարցեր, որին հետևեց տնային գրավոր առաջադրանքների ստուգումը: Այս գործընթացի ավարտից հետո երեխաներին հանձնարարվեց կատարել մի այսպիսի առաջադրանք. նվազագույնը 15 տողի սահմանում ներկայացնի իր ուսումնասիրած դարաշրջանի մարդու կենցաղը և հավատալիքները՝ հանդես գալով հենց այդ դարաշրջանի մարդու անունից: Երեխաներին օգնելու համար հստակ սահմանեցինք մի քանի հարցադրումներ, որոնց շուրջ պետք է ծավալվեր աշխատանքը.ի՞նչ է քո անունը, ինչպիսի՞ն է քո տունը, որտե՞ղ է այն գտնվում, ի՞նչ ոճի երաժշտություն ես սիրում լսել, ինչպիսի՞ գործիքներ ու զենքեր ունի պապան, իսկ պապի՞կը… ինչպիսի՞ ծեսեր և հավատալիքներ կան, ինչպիսի՞ն է ձեր տոհմը, քանի՞ հոգուց է բաղկացքած, ի՞նչ հագուսըներ են կրում մարդիկ, ինչպե՞ս են դրանք պատրաստվում, կցանկանայի՞ր այն ժամանակ ապրել, թե՞ հիմա և այլն այլն, մնացած դեպքերում ի՞նչ կարող ես համադրել այդ ժամանակաշրջանի մասին քո իմացությունների հետ:

Այսկերպ երեխան կարողանում է սեփական մտքով հասնել այն հարցադրմանը, թե ինչպես է ձևավորվել այդ ժամանակների մասին եղած շատուշատ պատկերացումներ: Բացի այդ մեթոդը և թեման թույլ են տալիս ստուգել երեխայի իմացական ու ստեղծագործական գիտելիքները: ինչպես նաև դասապրոցեսի մեջ ընդգրկվում են բելերը անխտիր:

15-17 րոպեից մենք անցանք նոր նյութի ուսումնասիրությանը: Դասի Խթանման փուլուը կազմակերպեցի ստեղծարարության հմտությունը զարգացնող «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» վարժությունից: Երեխաներին ներկայացրեցի մի արտեֆակտ, որը օգտագործել էին բրոնզի դարում: Յուրաքանչյուր երեխա շոշափելով և զննելով այն

պետք է ենթադրեր , թե ինչ է դա և ինչի համար են օգտագործել և երբ: Յուրաքանչյուր երեխա պետք է տար այնպիսի պատասխան, որ փորձեր չկրկներ նախորդը կարծիքը: Այսպիսով՝ դա մի իր էր, որը իրենից ներկայացնում է աղավնու տեսք ունեցող կախիկ: Իրականում դրանցից բազմաթիվ օրինակներ հայտնաբերվում են Սևանա լճի բրոնզեդարյան դամբարաններից: Այդ թռչնակերպ կախիկը օգտագործել են կախելով հանգուցիալի պարանոցին, որպեսզի այն իր հետ մարդուն հոգին վեր հանի դեպի երկինք: Նույն կոնցեպտի հետ է կապվում վերվերի պարը, և այլ ծիսական արարողակարգեր, որոնց ակունքը հասնում է բրոնզի դար: Այսկերպ երեխայի մոտ խթանվում է հուզական կապը դասանյութի հետ: Այդ իրի շուրջ սկսում ենք կառուցել դասը՝ սկսելով նրա նյութական բաղադրությունից, տալով բրոնզի ստացման մասին գիտելիքներ, այնուհետև երեխայի մոտ կառուցում ենք բրոնզեդարյան մարդու հոգևոր ընկալումները: Բացատրելով դասում առկա անհասկանալի եզրույթները՝ գրի ենք առնում դրանք տետրում: Երբ անդրադառնում ենք երկաթի դարին, երեխաների մտածողություն խթանելու համար հարցում ենք կատարում, թե ինչով երկաթի կիրառումը նպաստեց պետությունների առաջացմանը:

Ամփոփելով դասաը անդրադարձանք խմբի աշխատանքին՝ կատարելով դիտարկումներ և լրացումներ: Իրենց ինացություններով և կարողություններով աչքի ընկած երեխաներին տրվեց ձևացորող գնահատականներ: Այնուհետ հանձնարարվեցին տնային առաջադրանքներ:

Դաս 4. Ամփոփում

Հաջորդ դասին 15 մեզ հայտնի և մեր գործընթացին հարմարեցված «Ստեղծարարնվագախումբ» վարժության միջոցով, հարցադրումներով, վեր հանեցինք հանձնարարված նյութի իմացությունը:

Մնացած 30 րոպեում երեխաների հետ միասին գծեցինք աղյուսակ մեր անցած այս երեք դասերի շուրջ: Սա նման էր հայտորոշիչ թեստի, որի միջոցով փորձեցինք հասկանալ, թե արդյոք հասե՞լ ենք այն ցանկալի արդյունքին, որ ներկայացվում է կրթության սահմանած չափորոշիչը:

Աղյուսակը ուներ հետևյալ տեսքը

	Հին քարի դար	Միջին քարի դար	Նոր քարի դար	Պղնձի և քարի դար	Բրոնզի դար	Երկաթի դար
Այլկերպ կոչվում են նաև…						
Ջբաղեցրած ժամանակաշրջանը						
Հայտնագործություններ						
Աշակերտի առաջարկած կատեգորիա						

Տվյալների մշակում և վերլուծություն

Ահա հասանք կատարված ուսումնասիրության ամենաէական հատվածին, ուր պետք է արտացոլվի կատարված աշխատանքի արդյունքները: Եվս մեկ անգամ հիշեցման կարգով նշենք, որ հետազոտությունը միտված էր բացահայտելու դպրոցահասակ երեխաների մոտ ստեղծարարության կարողության բացահայտման ու

զարգացման հիմնահարցին: Հարկ է նշել, որ այս թեմայով հետազոտությունը կարող էր հատկացված ժամաքանակի պարագայում հնարավոր չլիներ ցուցաբերել արդյունքների չափելիություն, այնուամենայնիվ չխորշեսինք և կատարեցինք այս հաճելի գործընթացը:

Իբրև թիրախային խումբ մեր կողմից ընտրվեց 6-րդ դասարանը, քանի որ այս տարիքի երեխաները առավել բաց և անկաշկանդ են ստեղծարար մտքի հանդեպ, և , անպարկեշտ չհնչի, կրթության կաղապարի մեջ դեռ չեն հասցրել ոսկրանան նրանց մտքերը: Հրաշալի տարիք է ստեղծարար հմտությունների ձևավորման համար: Բացի այս հայեցակետից խնդիր էինք դրել նաև ստեղծարարության զարգացումը խթանող մեթոդների , հնարների , վարժությունների միջոցով ապահովել , ոչ միայն դասարանի բոլոր 28 աշակերտների ակտիվ մասնակցությունը, այլ յուրաքանչյուրի մոտ բացահայտել ստեղծարար կարողություններ: Իդեպ դասընթացի ժամանակ կիրառված վարժությունների, փոքրիկ գրավոր շարադրանքի, ամփոփման ժամանակ իմ և աշակերտնեիր կողմից ստեղծած աղյուսակի միջոցով, մեզ հաջողվեց ստուգելի դարձնել երեխաների ստեղծարար կարողությունների բացահայտումը:

Կատարվածա աշխատանքի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ, դասարանի 75 տոկոսը `21 աշակերտ, կարողանում են ձևակերպել հարցեր տարբեր բարդությունների:

Հանձնարարված փոքրիկ շարադրանքի տեսքով գիտելիքների ստուգման ժամանակ , ճիշտ է երեխաները հիմնականում տուրք էին տվել իրենց երևակայությանը, բայց նաև նույն համատեքստից մենք քաղեցինք կայուն իմացությունների արդյունքներ, ինչը մինչև 20 երեխայի դեպքում ակնառու երևում էր: Մյուսների դեպքում նույնպես պատկերը կար , բայց, ոչ նույնքան հստակ:

Մեր աշխատանքի արդյունավետությունը էլ ավելի ակնառու դարձրեց ամփոփման ժամանակ կիրառված , իր բնույթով հայտորոշիչ թեստ հիշեցնող , իմ և աշակերտների կողմից ձևավորած աղյուսակը, որի արդյունքները չափորոշիչահեն էին, ապահովելով Ա, Բ մակարդակի իմացություններ: Այս ամփոփիչ ուսումնասրիրությանը մասնակցեց 25 աշակերտ ` դասարանի 86 տոկոսը: Չի մասնակցել 4 երեխա՝ 14 տոկոս, 5 հոգի բավարար գիտելիքներ են ցուցաբերել՝ պատասխանելով աղյուսակի առաջին և

երրորդ սյուննակների պահանջներին, 9 երեխա գնահատվել է լավ , քանի որ կարողացել են լրացնել առաջին 3 սյունակների պահանջները: Մյուս 13 երեխայի մոտ կար սեփական նախաձեռնությամբ կազմված սյունակը, որն էլ իդեպ հուշում էր նրանց ստեղծարար մտքի առկայության մասին:

Ամփոփում

Ավարտելով այս բովանդակալից և հրաշալի հետազոտությունը, պետք է փաստեմ, որ ինձ համար իբրև բոլոր կարողություններից լավագույնը ստեղծարարությունն է, բնույթ ՝ որով նկարագրում ենք նաև մեր Արարիչ Աստծուն: Անչափելի համարվող ստեղծարարության կարողությունը համեմատելի է մարդկային հոգու անսահմանության հետ…

Բաց թողնելով թեմայի հետ կապվա այս խոհափիլիսոփայական մոտեցումը, և վերադառնալով բուն կոնտեքստին, չեմ կարող չանդրադառնալ, այս վերապատրաստման դասընթացների ժամանակ ինձ համար բացահայտված Բենջամեն Բլումի տաքսոնոմիային: Այստեղ ևս ստեղծելու կարողությունը դիտվուն է ամենաբարձր հատկանիշը:

Ամփոփելով թեման նշեմ, որ իբրև ուսուցիչ և պարզապես հայ մարդ, կարծում եմ, որ ստեղծարարության կարողությունը պետք է դրվի միայն ու միայն լավագույն արժեքների կողքին՝ բարի ու ստեղծարար, ձգտող և ստեղծարար, ինքնաճանաչ և ստեղծարար, և ի վերջո ՀԱՅ և ստեղծարար, արժեքների համադրումը կբերի մեր երկրում նոր որակների ձևավորմանն ու զարգացմանը:

Օգտագործված աղբյուրների եվ գրականության ցանկ

1. Վաչագան Սարգսյանն , «Ստեղծարար մտածողություն», Երևան 2019
2. Սոնա Պողոսյան, Ստեղծարար կառավարում մեթոդական ուղեցույց, Երևան 2018
3. Առավոտ օրաթերթ Թելեգրամում - https://www.aravot.am/2019/11/07/1076318/
4. Վիկիպեդիայի ազատ հանրագիտարան, Ստեղծագործական մտածողության մեթոդներ
5. Любарт Т., Психология креативности. М., Когито-Центр, 2009
6. Пономарев Я. А., Психология творчества, Тенденции развития психологической науки, М., Наука, 1976
7. Маслоу А., Дальние пределы человеческой психики, СПб.: Евразия, 1999
8. https://www.youtube.com/watch?v=W8I-YQGZAc4&t=1661s
9. https://www.youtube.com/watch?v=JrxQXrVpb0U&t=2085s

Վաղարշապատի Մ. Գորկու անվան N 5 ավագ դպրոց

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ:

ԴՊՐՈՑ՝ ՀԱՅԹԱՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ՄԱՍՆԱԿԻՑ՝ ԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ՝ ԿԱՐԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Վաղարշապատ 2021

ՆԱԽԱԲԱՆ

Կրթության մատչելիությունն ու հասանելիությունը՝ որպես հասարակության զարգացման ու առաջընթացի հիմնական միջոցներ, ամրագրվել են դեռևս 1990-ականներին, երբ ՄԱԿ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ երկրների կողմից ընդունվեցին «Երեխաների իրավունքների մասին կոնվենցիան» (1989թ. , ՄԱԿ) և «Կրթությունը բոլորի համար համաշխարհային հռչակագիրը» (2002թ. , Դակար)։

Ես խորապես հավատացած եմ, որ կենսունակ և ուժեղ ժողովրդավարության համար այս արժեքներով առաջնորդվող հասարակությունը հիմնական շարժիչ ուժն է երկրում։ Իսկ ահա արժեքահեն և իրավագիտակից հասարակության ձևավորման հիմնասյուներից կարևորագույնը որակյալ կրթությունն է։

Որակյալ և արդիական կրթության ապահովման համար անհրաժեշտություն եմ համարում այն հանգամանքը , որ յուրաքանչյուր ուսուցիչ, յուրաքանչյուր դասարանում պետք է վարի տարբերակված ուսուցում՝դրա ռազմավարությունները օգտագործելով ուսումնառության խթանման համար։

Ինքս լինելով արդի կրթական համակարգի ջատագով՝ սույն

հետազոտության միջոցով փորձելու եմ անցկացնել տարբերակված ուսուցման ռազմավարությունների կիրառման դասեր՝ դրանով խթանելով ուսուցումը։Հետազոտությունս անցկացնելու եմ 7-րդ դասարանի 3 աշակերտների շրջանում։

Որպես դասավանդող ուսուցիչ հետազոտությունը անցկացնելիս հետապնդել եմ հետևյալ նպատակները.

ա.ճանաչել աշակերտների անհատական առանձնահատկությունները։

բ. Համապատասխան մեթոդներ կիրառել այս աշակերտների ուսումնառությունը բարշձրացնելու համար

ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Տարբերակված ուսուցման նպատակն է, ընդհանուր կրթության բովանդակության յուրացման գործընթացում, յուրաքանչյուր աշակերտի համար ապահովել պայմաններ նրա ըմդունակությունների,հետաքրքրությունների ,պահանջմունքների բավարարման , զարգացման համար:

Տարբերակված ուսուցումը թույլ է տալիս ուսումնական գործընթացը կազմակերպել՝հաշվի առնելով անձի անհատական առանձնահատկությունները: Այն ապահովում է բոլոր աշակերտների կողմից կրթության բովանդակության յուրացումը:Այս տիպի ուսուցում կազմակերպելու դեպքում յուրաքանչյուր աշակերտ գտնում է դեպի կրթություն տանող իր բանալի՝մաքսիմալ ապահովելով վերջինիս մետիվացիան:

Տարբերակման մեթոդի կիրառումը դասարանում.

Ֆրոնտալ աշխատանքի եղանակն ուսուցչին հնարավորություն չի տալիս հաշվի առնել առանձին աշակերտների միջև առկա տարբերությունները:

Աշակերտների միջև տարբերությունների առաջացման պատճառները՝

- նախնական գիտելիքների տարբերությունը՝կախված այն հանգամանքից, թե ինչպիսի ընտանիքից է տվյալ աշակերտը (նրա բառապաշարը, արժեքային համակարգը, գիտելիքը).
- ճանաչողական կարողությունների տարբերությունները՝
  1. – ընկալումը (ի՞նչ կարելի է դասավանդել սահմանափակ հնարավորություններով, օրինակ՝տեսողության կամ լսողության խնդիրներ ունեցող աշակերտներին).

– կենտրոնացած ուշադրությանտևողությունը.

– հիշողությունը.

– միտքն ու լեզուն ՝յոթ տեսակի ընդունակություններ՝

լեզվական–խոսակցական, տրամաբանական–

մաթեմատիկական,տեսողական,

շարժողական/կինետիկ/,

երաժշտական,

միջանձնային,

ներանձնային.

- տարբեր բնավորության տեր աշակերտների մոտ տարբերեն՝

– սովորելու ոճը,

– մղումը,

– վերաբերմունքը,

– հետաքրքրությունները,

– ուղեղի կիսագնդերի դոմինանտությունը.

- սեռը.
- էթնիկական ծագումը։

Ուսումնական գործընթացը տարբերակման մեթոդով կազմակերպելու հիմնական սկզբունքները.

Վերը նշված տարբերություններն անխուսափելի են դարձնում ուսուցիչների կողմից դասավանդման մեթոդաբանության մեջ նոր մոտեցումներ որդեգրելը և իրենց աշխատանքում նոր մեթոդներ ու եղանակներ ներառելը։

Այս առումով անհրաժեշտ է, որ ուսուցիչը գտնի հետևյալ հարցերի պատասխանները՝

- ինչպե՞ս կարող եմ ավելի արդյունավետ դասավանդել.
- ինչպե՞ս կարող եմ օգտակար լինել.
- ինչպե՞ս կարող եմ իմ աշակերտների վերաբերմունքը դպրոցի նկատմամբ ավելի դրական դարձնել։

Տարբերակման մեթոդով ուսումնական գործընթացի կազմակերպման տարբեր մակարդակները.

Խմբերի ձևավորում ըստ աշակերտների հետաքրքրությունների

Խումբը պետք է ունենան միատարր (հոմոգեն) կառուցվածք, միևնույն խմբի մեջ ներառված աշակերտներին պետք է տրվի նույն առաջադրանքը։ Պարտադիր չէ, որ խմբի անդամները համագործակցեն միմյանց հետ, տրված առաջադրանքները նրանք կարող են կատարել ինքնուրույն, իրարից անկախ։Նման դեպքերում հնարավոր է ստեղծել ավելի մեծ խմբեր։

Այնուհանդերձ, եթե առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ է, որ խմբի անդամները համագործակցեն միմյանց հետ, ապա խմբում պետք է ընդգրկված լինի ոչ ավելի, քան 3–5 աշակերտ։ Խմբերի ձևավորման այս եղանակը հատկապես հարմար է շնորհալի երեխաների հետ աշխատանքի համար կամ այնպիսի իրավիճակներում, երբ անհրաժեշտ է, որ որոշ աշակերտներ առաջադիմության առումով հետ չմնան իրենց դասընկերներից։

Տարբերակումն ըստ կարողությունների

Այս դեպքում երեխաները բաժանվում են խմբերի ըստ իրենց ընդունակությունների։Քանի որ խմբերի անդամներն ինքնուրույն են աշխատում, անհրաժեշտություն չկա ստեղծելու փոքր (3–5 անդամից բաղկացած) խմբեր։Յուրաքանչյուր աշակերտ իր առաջադրանքը կատարում է ինքնուրույն, մասամբ անհատական մոտեցմամբ։

Խմբերի կազմակերպումը

- Համագործակցություն անդամների միջև

- 3–5 անդամ ունեցող խմբերը կարող են ունենալ միատարր (հոմոգեն) կամ բազմատարր (հետերոգեն) կառուցվածք
- Խմբի անդամները նույն առաջադրանքն են կատարում
- Խմբում ընդգրկված՝ տարբեր ընդունակություններով աշակերտներին հանձնարարված աշխատանքները տարբերվում են իրենց բովանդակությամբ։

Ուսուցմանը ներկայացվող պահանջների տարբերակումը

Տարբերակման այս եղանակը նպաստում է ուսման դժվարություններ կամ սահմանափակ կարողություններ ունեցող աշակերտների ինտեգրմանը։ Աշակերտներն ընդգրկվում են խմբերում ըստ իրենց ընդունակությունների։ Նույն դասարանի տարբեր աշակերտների համար ուսումնական ծրագրով նախատեսվում են տարբեր պահանջներ։ Այդ աշակերտներն իրենց առաջադրանքները կատարում են ինքնուրույն կամ խմբի մյուս անդամների հետ միասին։

Տարբերակման հիմնական սկզբունքները

Տարբեր մեթոդների իմացությունը

Որպեսզի կազմակերպման այդ տարբեր եղանակներն արդյունավետ լինեն, ուսուցիչը պետք է ծանոթ լինի նշված հասկացություններին, գիտենա, թե ինչպես են դրանք օգտագործվում, տեղյակ լինի, թե ինչպիսի առավելություններ է տալիս դրանց կիրառումը, ինչպես նաև պետք է կարողանա կարգավորել այն խնդիրները, որոնք կարող են ծագել դասավանդման գործընթացում։

Մոտեցումը

Դասավանդման այս եղանակը կարող է իսկապես արդյունավետ լինել, եթե ուսուցիչը հետամուտ լինի ուսմանբազմամակարդակ գործընթացին և կարողանա այն իրագործել։

Տարբերակման հայեցակետերը

Կազմակերպման եղանակները մշտապես կախված են՝

- Առարկայի բովանդակությունից
- Կրթությանը ներկայացվող պահանջներից ու դասավանդման եղանակներից

- Աշակերտների անհատական կարիքներից։

Ճկունությունը

Տարբերակում կատարելը չպետք է դառնա աշակերտների «պիտակավորման» կամ «հայեցողական ընտրության» պատճառ։ Յուրաքանչյուր աշակերտ պետք է ստանա տվյալ պահին իր համար օպտիմալ ծավալի աշխատանք։

Ըստ ամերկացի մանկավարժ Քերլ Էն Թոմլինսոնի տարբերակումը պետք է իրականացնել ըստ բովանդակության, դասակարգման ,ըստ գործողությունների , ըստ վերջնարդյունքի և ըստ միջավայրի:Նա ասում է , որ տարբերակումը իրականացնելիս պետք է հաշվի առնել աշակերտի պատրաստակամությունը և կարողունակությունները. հետաքրքրությունների շրջանակը և ուսումնառության ոճը: Այս ամենը մեզ հնարանորություն է տալիս ընդլայնել սովորողի շարունակական զարգացումը, ապահովել աշակերտի մոտիվացիան և վերջապես հասնել արդյունավետության:

Հետազոտությունը,ինչպես վերը նշեցի , անցկացրելեմ 7-րդ դասարանի 3 աշակերների շրջանում, նպատակ ունենալով ճանաչել այս աշակերտների անհատական առանձահատկությունները ուսումնառության մեջ և կարողանալ հնարներ օգտագործել այս աշակերտների ուսումնառությունը բարձրացնելու համար:Աշակերտներից Ռոբերտը պարփակված է և ուսուցման նկատմամբ հետաքրքրություններ չունեցող աշակերտ է, Գուրգենը խելացի է ,բայց ծույլ,Հայկը դժվարանում է արտահայտման և շփման մեջ, քանի որ ոչ ստանդարտ մտածելակերպ ունի դպրոցի և շրջապատող աշխարհի նկատմամբ:

Հետազոտության համար ընտրել եմ հայոց պատմություն առարկան ,որպես ժամանակահատված՝ սեպտեմբերի 10-ից հոկտեմբերի 8-ը: Աշխատանքի կատարման համար ստորև ներկայացնում եմ 4 դասի պլան ,որոնց միջոցով լուծելու եմ հետազոտության մեջ առաջ քաշած խնդիրները:

ԴԱՍԻ ՊԼԱՆ 1

Դասարան - 7

Առարկան-Հայոց պատմություն

Թեման-Ավատատիրության ձևավորումը

Դասի նպատակը –

ա.Իմանալ , թե ինչ է ավատատիրությունը;

բ.Ծանոթանալ հողաիրության ձևերին:

գ.Կարևորել հասարական դասերի առաջացման պատճառները:

Դասի վերջանարդյունք-

ա.Աշակերտները պատկերացում կունենան ավատատիրական հասարակարգի մասին:

բ.Կիմանան միջնադարյան Հայաստանի հողատիրության տեսակները:

գ.Կկարևորեն ազատների ու անազատների դասերի գործունեությունը:

Դասի մեթոդները-Մտագրոհ,դասախոսություն.տեաձև աղյուսակ,ԽԻԿ համակարգ

Դասի տիրպը-Նոր նյութի ուսումնասիրում:

Դիդակտիրկ նյութեր - Դասագիրք, աշխատանքային տետր , լրացուիչ նյութ

Միջառարկայական կապ- Հայոց պատմություն ,համաշխարհային պատմություն

ա .Խթանում – Գրատախտակին գրել ավատ բառը և կազմակերպել մտագրոհ՝գրառելով աշակերտների մտքերը:

բ. Իմաստի ընկալում- Համառոտ դասախոսել ավատատիրության , հողատիրության ձևերի և հասարակական դասերի մասին:

Դասախոսությունը լսելուց հետո աշակերտները ինքնուրույն լրացնում են T_աձև և m-աձև աղյուսակներ՝ համապատասխանաբար հողատիրության ձևերի և հասարակական դասերի վերաբերյալ:

գ.Կշռադատման փուլ-Վերլուծել ինքնուրույն աշխատանքը և գնահատել:

Տնային աշխատանք- Կրկնել դասարանական աշխատանքը ,հավելյալ տեղեկություններ գրել հասարակական դասերի մասին:

Այս դասի համար հետազոտվող 3 աշակերտնեիրց Ռոբերտին,ով

հետաքրքրություն չուներ ուսուցման նկատմամբ ,որոշեցի տալ հետևյալ հանձարարությունը՝իրեն առաջադրելով հետևյալը հարցը.եթե դու լիների երկրի գլխավոր ավատատերը, ապա ինչ նոր հողատիրության ձևեր առաջ կքաշեիր:
Որպես մեթոդ ընտրել էի արդյունավետ ուսուցման 7 մոտեցումներից զարմանք , անսպասելիությունմոտեցումը:
Ռոբերտը հաջորդ դասի սկզբին ներկայացրեց իր տեսակետը/կարճ շարադրանքի տեսքով/ , ասելով ,որ նա հող կտար առաջնահերթ ունեզուրկ գյուղացիներին:Մի հարցի պատասխանելով ստացավ 5, որը նրան շատ ոգևորեց:
Գուրգենը , ով խելացի էր , բայց ծույլ տրամաբանորեն պատասխանեց ,թե ով է երկրում գլխավոր ավատատերը և կարողացավ տրամաբանորեն ներկայացնել ազատների և անազատների իրավունքները .նրա նկատմամբ կիրառեցի գուշակություն մոտեցումը:Գուրգենը ևս 5 գնահատվեց:
Հայկը ,ով ունի շփման դժվարություններ, հանձնարարեցի դասընկերոջ հետ դուրս բերել իրեն դուր եկած 3 միտք :Բայց հաջորդ դասին պարզվեց Հայկը աշխատանքը չի կատարել, քանի որ տարաձայնություն է ունեցել դասընկերոջ հետ:Փաստորեն այս աշակերտի դեպքում մտաբերում մոտեցումը սխալ է կիրառել:

ԴԱՍԻ ՊԼԱՆ 2

Դասարան -7

Առարկան _Հայոց պատմություն

Թեման –Պետական կառավարման համակարգ

Դասի նպատակը-

ա.Իմանալ տեղեկություններ Արշակունիների պետական կառավարման համակարգից:

բ.Թվարկել արքունի գործակալությունները `իրենց գործառույթներով:

գ.Կարևորել հայոց բանակի դերն ու գործառույթները:

Դասի վերջնարդյունք

ա.Աշակերտը պատկերացումև կունենա պետական կառավարման համակարգից:

բ .Կներկայացնի գործակալությունները իրենց գործառույթներով:

գ.Կարժևորի բանակ ունենալու

գործոնը:

Միջառարկայական կապ- Հայոց պատմություն, Համաշխարհային պատմություն

Դասի մեթոդները- ԽԻԿ համակարգ, համառոտ դասախոսություն, m_աձև աղյուսակ,տրամագիր վարժություն:

Դիդակտիկ նյութեր-Դասագիրք , աշխատանքային տետր, սահիրկահանդես:

Դասի ընթացքը- Խթանում-Գրատախտակին գրել թագավորություն բառը և կազմակերպել մտագրոհ`ստուգելու համար աշակերտների նախնական գիրտելքները:

Իմաստի ընկալում-Ներկայացնել արքունի գործակալությունները, խոսել նաև Արշակունիների բանակի , դրա ստորաբաժանումների մասին`ընթացքում ցուցադրելով սահիկ՝ արքունի գործակալություններիվերաբերյալ:

Կշռադատում-Գրատախտակին լրացնել m-աձև աղյուսակ, այն անցկացնել տետրերում:Կատարել գնահատում:

Այս դասի ընթացքում հետազոտվող աշակերտներից երկուսին Ռոբերտին և Հայկին ,ովքեր ունեին շփման դժվարություններ, հանձնարարել էի լսել

Գուրգենի պատասխանը ,և տեսնելով նրա լրացրած աղյուսակը ,կատարել գնահատում:Այս քայլով իմ առջև խնդիր դրեցի ապահովել շփումը թե միմյանց միչև , թե դասարնի. վերջին քայլով նաև ստուգելով նրանց ուսունառության առաջընթացը, քանի որ , եթե նյութը գնահատում ես , ապա նախորոք պետք է լավ պատկերացում ունենաս դասանյութի մասին:

Վերջիններս ոգևորվելով արագ յուրացրեցին դասը, և յուրացման շնորհիվ կարողացան կատարել գնահատում: Իսկ ինչ վերաբերում է Գուրգենին , ով ուներ լավ ընդունակություններ, իմանալով , որ իր գնահատումը կատարելու են ընկերները, ավելի շահագրգռվեց, և ուշադրությամբ լսելով ինձ, ճիշտ լրացրեց աղյուսակն ու պատասխանեց հարցերին:

Աշխատանքը կատարելուց հետո Ռոբերտն ու Հայկը գնահատվեցին 6, իսկ Գուրգենը `7:

ԴԱՍԻ ՊԼԱՆ 3

Դասարան - 7

Առարկան –Հայոց պատմություն

Դասի թեման- Հայաստանի հզորացումը

Դասի նպատակը.

ա.Ծանոթանալ Տրդատ 3-րդի գործունեությունը երկրի հզորացման ուղղությամբ:

բ.Իմանալ առաջին տիեզերական ժողովին հայերի մասնակցությամ մասին:

գ.Կարևորել Խոսրով 3-րդ Կոտակի և՛ շինարարական և՛ ռազմական գործունեությունը:

Դասի վերջնարդյունք՝

ա.Աշակերտը կիմանա Հայաստանի հզորացման նախադրյալների մասին:

բ.Կներկայացնի Հայաստանի այս շրջանի հոգևոր կյանքը:

գ.Կարժևորի Խոսրով 3-րդ Կոտակի բազմաճյուղ գործունեությունը:

Միջառարկայական կապ-Հայոց պատմություն, համաշխարհային պատմություն

Դասի տիպը- Նոր նյութի ուսումնասիրություն

Դիդակտիկ նյութեր- դասագիրք, քարտեզ

Դասի մեթոդները_ ԽԻԿ, ինքնուրույն աշխատանք 3,2,1 հնար և դասի քարտեզագրում:

Խթանում- Դասարանը բաժանել 3 խմբի և հանձնարարել ինքնուրույն աշխատանք. խմբերով ուսումնասիրել նոր նյութը:

Իմաստի ընկալում՝

Խմբերին հանձարարել առանձացնել 3 կարևոր փաստ , 2 հետաքրքիր դրվագ և 1 հարց դասից :

Կշռադատում ՝

Խմբերը գրատախտակին քարտեզագրում են դասը և ներկայացնում են ըստ խմբերի յուրաքանչյուրը 3 կարևոր փաստ ,2 հետաքրքիր դրվագ և 1հարց

Կատարվեց ինքնագնահատում:

Այս դասի ժամանակ հետազոտվող աշակերտները ներգրավված էին առանձին

խմբերում:Նախկինում շփման դժվարություններ ունեցող Հայկը մոտիվացվեց դասապրոցեսին և սեփական նախաձեռնությամբ դարձավ խմբի ավագ՝համակարգելով ամբողջ աշխատանքը:

Վերջինիս աշխատանքը խմբում 7 գնահատվեց :

2-րդ խմբում Ռոբերտին իմ խորհուրդով ընկերները վստահել էի փաստական կարևոր տվյալների վերհանումը:Այստեղ ճիշտ է թերացումներ կային , բայց շնորհիվ խմբային աշխատանքի Ռոբերտը կարողացել էր շտկումներ անել:Խմբում նրա աշխատանքը 6 գնահատվեց:

Գուրգենը , ով 3-րդ խմբում էր ընկերների կողմից ստացել էր դասի քարտեզագրման հանարարությունը, որը նրան առաջ էր մղել ուշադիր ընթերցանության և դասի սերտման:Նրա կատարած քարտեզագրումը լրացվեց ընկերների կողմից և խումբը իր աշխատանքը 7 գնահատեց:

ԴԱՍԻ ՊԼԱՆ 4

Դասարան -7

Առարկան _Հայոց պատմություն

Թեման – Թագավորության պահպանման վերջին փորձերը

Դասի նպատակը-

ա.Իմանալ 387թ.-ի Հայաստանի բաժանման մասին

բ.Ներկայացնել Խոսրով 4-րդ և Վռամշապուհ թագավորների գործունեությունը

գ.Պարզաբանել Արշակունյաց թագավորությա անկման գործընթացը:

դ.Կարևորել Արշակունյաց թագավորության թագավորության կործանումից հետո հայ նախարարական համակարգի ազգապահպան գործունեությունը:

Դասի վերջնարդյունքը _

ա.Աշակերտը պատկերացում կունենա Հայաստանի բաժանման մասին:

բ.Կներկայացնի Խոսրով 4-րդ և Վռամշապուհ թագավորների օրոք տեղի ունեցած կարևոր իրադարձությունները:

դ.Պատկերացում կունենա Արշակունիների անկմանպատճառներին:

գ.Կարժևորի հայ նախարարական համակարգի ազգապահպան գործունեությունը:

Դասի մեթոդները-ԽԻԿ, վեննի դիագրամ, դասախոսություն:

Դիդակտիկ նյութեր-Դասագիրք, քարտեզ , տետր

Միջառարկայական կապ- Հայոց պատմություն, համաշխարհային պատմություն

Դասի տիպը-Նոր նյութի ուսումնասիրություն

Դասի ընթացը

ա.Խթանում-Համառոտ դասախոսության միջոցով պատմել Հայաստանի բաժանման մասին, ներկայայացնել հայ 2 թագավորների գործունեության և Արշակունյաց թագավորության մայրամուտի մասին:

բ.Իմաստի ընկալում- Աշակերտները լսելով դասախոսությունը պետք է առանձնացնեին դասի կարևոր փաստական տվյալները և գծել վեննի դիագրամ ու համաեմատել Խոսրով 4-րդ , Վարազդատ և Վռամշապուհ

թագավորների գործունեությունը:Աշխատանքները գրառել գրատախտակին:

գ.Կշռադատման փուլ-Վերլուծել աշխատանքները և կատարել գնահատում:

Հետազոտության ենթարկված 3 աշակերտներից Գուրգենին հանձնարարեցի դասախոսությունը լսելուց հետո կարևոր փաստերը գրել գրատախտակին, որով զարկ տվեցի նրա մտածողության զարգացմանը:Նրա դիտարկումները աշակերտները գրառում են տետրերում:

Հայկն ու Ռոբերտը ընկերների օգնությամբ լրացրեցին վեննի դիագրամը :

3 աշակերտներն էլ գնահատվեցին.Գուրգենը `8, քանի որ ուներ մի քիչ բացթողումներ,Հայկն ու Ռոբերտը `7:Վերջին գնահատականը տղաների համար դրական դինամիկա էր ,քանի որ նրանք իրենց թույլ աշակերտ համարվելով չէին սովորել ու հետ էին մնացել ուսումնական գործընթացից:





ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտությունը կատարելով եկա այն եզրահանգման , որ եթե յուրաքանչյուր ուսուցիչ կիրառի տարբերակված ուսուցման մոդելը, ապա դասապրոցեսից հետ մնացած աշակերտներըիրենց կվերագտնեն և կսկսեն սովորել:

Այս ամենի հետ մեկտեղ տարբերակումը ունի իր դրական և բացասական կողմերը:Հիմնական առավելությունների շարքում կարելի է դասել հետևյալը.

- Տարբերակումը կարող է արդյունավետ լինել ինչպես գիտակ , այնպես էլ թույլ ունակություններ ունեցող աշակերտների համար:
- Երեխաներին տարբերակելով նրանց դաձրնում ենք ավելի պատասխանատու ուսուցման գործընթացում :
- Ուսման մեջ ներգրավվածությունը ձգտում է ավելի ուժեղ լինել, քանի որ այն վերաբերում է երեխաներին, որպես աճի հավասար հնարավորություններ ունեցող անհատներ:

Ֆիքսված կողմում տարբերակված դասավանդումը ունի իր սահմանափակումները.

- Տարբերակված ուսուցումը պահանջում է ավելի շատ ժամանակդասիպլանավորմանհամար:
- Այն կարող է պահանջել ավելի շատ ռեսուրսներ և՛դպրոցի, և՛դպրոցականների շրջանում:

Մասնավորապես իմ կատարած հետազոտությունը կարելի է դրական համարել այնքանով, որ ես հասա այն նպատարների իրագործմանը, որոնք դրել էի իմ առջև տարբերակված ուսուցման ռազմավարությունները օգտագործելիս:Այն

աշակերտները ,որոնց շուրջ կատարվել է այս հետազոտությունը , ունեցան դրական դինամիկա ուսումնառության մեջ:

Գրականություն

1. Ամիրջանյան Յու.,Սահակյան Ա.Ս. ,, Մանկավարժություն,,

Երևան 2004թ

2.101 գաղափար նորարական մեթոդներ կրիառող ուսուցիչների համար:

Բուդապեշտ, 2006թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան էջ 1

Տարբերակված ուսուցում էջ 2-14

Եզրակացություն էջ 15

Գրականություն էջ 16

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ. ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՆ N5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Առանց պատմելու դասավանդման ռազմավարության կիրառումը

Մասնակից՝ Ամիրջանյան Մարինե

Դպրոց՝ Ծաղկալանջի միջնակարգ դպրոց

Վերապատրաստող՝ Կարինե Ավետիսյան

Վաղարշապատ 2021թ.

Այն ինչ սովորում եմ ինձ համար օգտակար է:

Առանց պատմելու դասավանդման ռազմավարության կիրառումը

(նոր նյութի ուսումնասիրության փուլում)

1. Նախաբան
2. Ինչու՞ կիրառել ակտիվ ուսումնառության ռազմավարություններ
3. Դասավանդման ռազմավարություններիցանկի օգտագործում
4. Սովորողներին նոր նյութ ներկայացնելու ակտիվ ուսումնառության ռազմավարությունների ցանկ

   5.1 Շատ քիչ պատրաստվածություն և միջոցներ պահանջող մեթոդներ

   5.2 Թերթիկների ու քարտերի միջոցով կիրառվող մեթոդներ

6. Մի փոքր ավելի շատ պատրաստվածություն պահանջող աշխատանքներ

Մասնակցությունն առավելագույնին հասնելու նպատակով ակտիվ ուսումնառության ռազմավարությունների արդյունավետ կառավարում

Դասավանդումը բաղկացած է երեք փուլից, որից յուրաքանչյուրը համապատասխան մեթոդներ է պահանջում:

Հետազոտական համատեքստ

1 Ներկայացում : Այս փուլում սովորողներին նոր նյութ ներկայացնելու կամ նյութն անձամբ ուսումնասիրելու համար կան խթանող մեթոդներ: Դրանք կարող է ներառել փաստեր, տեսություններ, հասկացություններ, պատմություններ կամ այլ բովանդակություն:

2 Կիրառում: Այս փուլում կիրառվող մեթոդները պահանջում են սովորողներից կիրառել նրանց ներկայացված նոր նյութը: Միայն այսպես կարելի է համոզվել, որ սովորողները գաղափար են կազմում նոր նյութի մասին, որպեսզի կարողանան հասկանալ, մտաբերել և հետագայում այն պատշաճ կերպով կիրառել:

3 Ամփոփում: Կիրառվող մեթոդները դրդում են աշակերտներին վերհիշելու նախկինում սովորածը՝ հստակեցնելովև շեշտադրելով գլխավոր կետերը, ամրապնդելով ըմբռումը, մարզելով և ստուգելով հիշողությունը:

Այս աշխատանքի առանցքում սովորողներին նյութի ներկայացման փուլում կիրառվող ակտիվ մեթոդներ են: Մյուս աշխատանքներում արծարծվում են կիրառման և ամփոփման փուլերին բնորոշ մեթոդները:

Ներկայացման փուլում տարածված մեթոդները ինչպես օրինակ՝ պատմելու մեթոդը, չափից երկար լինելու դեպքում կարող է ձանձրացնել սովորողներին, այդ պատճառով էլ ներկայացման փուլի ակտիվ ռազմավարությունները խիստ օգտակար են: Կատարյալ կլինի եթե, ներկայացման ակտիվ ռազմավարությունը ներառի կիրառման փուլի աշխատանք, որին կհաջորդի հակիրճ ամփոփման ակտիվ ռազմավարությունը: Այդ դեպքում ակտիվորեն բավարարվում են բոլոր սովորողների կարիքները:

Գործնական համատեքստ

Ինչու՞ կիրառել ակտիվ ներկայացման ռազմավարություններ.

Հետազոտությունները ցույց են տալիս, որ այդ ռազմավարություններն աշխատում են.

Բոլոր հետազոտությունները ցույց են տալիս, որ մենք սովորում ենք անելով, այսինքն՝ մեր սովորածը կիրառելով: Այսպես սովորողները մշակում են տեղեկատվությունը և յուրովի են այն ընկալում: Սա կոչվում է «կառուցողականություն»:

Հետազոտություններն ընդգծում են, որ ակտիվ մեթոդները՝

- Խորացնում են ուսումնառությունը և ավելացնում ձեռքբերումները
- Բարելավում են սովորողների հիշողությունը
- Զարգացնում են սովորողների բարձր մակարդակի տրամաբանական հմտությունները
- Սովորողների կողմից ավելի սիրված են: ակտիվ ուսումնառությունը ստիպում է սովորողներին նյութը յուրովի իմաստավորել և ըմբռնել: Հենց սա էլ կոչվում է «ուսումնառություն»:

Վերահսկվում է ուսումառությունը.

- ✓ Ստանում ենք հետադարձ կապ սովորողների՝ նոր նյութի ըմբռնման վերաբերյալ և կարող ենք շտկել նրանց թյուրըմբռնումը:
- ✓ Սովորողները զարգացնում են իրենց տրամաբանական հմտությունները, առարկայի փաստացի գիտելիքները և այն հմտությունները, որոնցով գնահատնելու են:
- ✓ Նպաստում է սովորողների ակտիվ, կառուցողական մասնակցությանը:
- ✓ Դասերը ավելի մեծ ազդեցություն են ունենում և ավելի հետաքրքիր են դառնում:

Առարկայական, թեմատիկ կամ դասընթացային, թիմը կարող է օգտագործել ցանկը՝ որպես ռազմավարության մի մաս՝

- Գտնելու առարկայի դեպքում աշխատող մեթոդներ
- Ընտրելու կոնկրետ թեմաների կամ դասերի համար որոշակի ռազմավարությունները.

- Փոխանակելու և ցանկին ավելացնելու թիմի լավագույն դասավանդման ռազմավարությունները
- Առարկայական ծրագրի որոշակի դասերի թեմաների կամ հատվածների համար աշխատանքային պլանում ներառելու դասավանդման ռազմավարությունների մշակման ձեռնարկը: Ներկայացնել՝ մանրամասն մշակելով ռազմավարությունները և դրանց համապատասխան ռեսուրսները:
- Հրատարակել ձեռնարկը էլեկտրոնային կամ թղթային տարբերակով:

Կարելի է մշակել աշխատանքային կամ թեմատիկ պլան՝ ներառելով թեմայի դասավանդման յուրաքանչյուր փուլին փուլին համապատասխան աշխատանք: Սա կարելի է անել թիմի կողմից, այնպես որ լավագույն մեթոդները հասանելի դարձնել ամբողջ թիմի համար:

Հետազոտության ընթացք

1. Հարցադրումներով դասավանդում

Դասի պլան 1 16.09.01թ.

V դասարան

Դասի թեման – Աշխարհի և մրդու ստեղծումը

Նպատակը – ուսումնասիրել աշխարհի և մարդու ստեղծման Աստվածաշնչյան պատմությունը, որի համաձայն աշխարհը և մարդը ստեղծվել են Աստծո կողմից.

Վերջնարդյունք – աշակերտները կսովորեն, որ տիեզերքի ամենահրաշալի ստեղծագործությունը մարդն է: Զարգացնել աշակերտների բանավոր և գրավոր խոսքը երևույթները և տեսակետները համեմատելու կարողությունները ստեղծագործական մտածողությունը և երևակայությունը, հիշողությունը և կամային որակները:

Խթանման փուլ – հատուկ մշակված հարցերի միջոցով աշակերտների հիշողության մեջ վերականգնում է «Աստվածաշունչ, ՀԻն կտակարան» դասից և մյուս առարկաներից ստացած այն գիտելիքները, որոնք անհրաժեշտ են « Աշխարհի և մրդու ստեղծումը» թեման հարստացնելու համար:

Իմաստի ընկալում – հարցադրումների և հմտությունների ստուգացանկ՝

1. Տալի՞ս ենք այնպիսի հարցեր, որոնց պատասխաններն աշակերտները հաջողությամբ են գտնում:
2. Տալի՞ս ենք աշակերտներին մտածելու ժամանակ օրինակ՝ զույգերով աշխատանքի կիրառմամբ:
3. Օգտագործու՞մ ենք «Մարմնի լեզուն» /աչքերի կոնտակտ, ժպիտ, հոնքերի բարձրացում, գլխով հաստատում և այլն/ պատասխանները խրախուսելու համար:
4. Միշտ շնորհակալություն հայտնում, գովեստի արժանացնու՞մ կամ այլ կերպ երախտապարտ լինու՞մ ենք պատասխանների համար:

Սույն աղյուսակում երկայացված է հարցադրումների վեց ռազմավարություն, որտեղ յուրաքանչյուրը հինգ կարևոր չափանիշի համար գնահատվում է աստղանիշներով:

Ստույգ գնահատումը կարող է փոփոխվել՝ կախված մեր դասարանից և յուրաքանչյուր ռազմավարության կիրառման կոնկրետ եղանակից օրինակ՝ հարց տալուց հետո որքա՞ն ենք սպասում նախքան պատասխան ստանալը:

Մեր դասարանում սովորում է Գոհար անունով թույլ, քիչ մոտիվացված աշակերտուհին, սիկ մենք կիրառում ենք «հարց-պատասխան, պատասխանում են կամավորները» ռազմավարությունը: Գոհարը շուտով կհասկանա որ հարց ու պատասխանի ընթացքում կարող է ոչինչ չանել, պարզապես ձեռքերը ծալած նստել: Նա չի մասնակցի, իսկ մենք չենք իմանա որևէ դժվարության մասին:

Բայց, եթե կիրառենք «Դիսկուսիոն խմբեր, պատասխանում են անվանակոչածները» ռազմավարությունը, Գոհարը կհասկանա, որ միգուցե նրան հանձնարարենք պատասխանել իր խմբի անունից: Նա այդ ժամանակ կմասնակցի՝ համոզվելով, որ կարող է բացատրել իր խմբի պատասխանը: Խմբերը չեն սիրում սխալ մեկնաբանություններ, այդ պատճառով դասընկերների կողնից ճնշում է առաջանում, որ վերջինս ուշադիր հետևի հարցերին և խմբի պատասխանները հավաստիորեն զեկուցի: Դասերի ժամանակ որոշակի փուլում հարց-պատասխանի բոլոր ռազմավարություններն էլ կարող են տեղին լինել: Հարցադրումները կարող են կիրառվել նաև նախկին աշխատանքը ներհիշելու կամ վերանայելու համար:

Ամփոփում

Հարցադրումների մեթոդն ունի գերագույն կարևորություն: Առանց դրա հնարավոր չէ զարգացնել յուրահատուկ հասկացողություն կամ այլ բարձր մտավոր հմտություններ: Այն ստիպում է աշակերտներին ինքնուրույն մտածել և ստեղծում է բարձրորակ փոխանցելի գիտելիք: Այն թույլ է տալիս աշակերտներին կիրառել իրենց ուսուցանվող հասկացություններն ու սկզբունքները, իսկ ուսուցիչնեին հնարավորություն է տալիս այս կիրառությունը ստուգել ու շտկել: Հարցադրումների շնորհիվ ուսուցիչները ստանում են նաև հետադարձ կապ ուսումնառության գործընթացի վերաբերյալ և «չեն կորցնում» աշակերտներին: Աշակերտների համար հարցադրումներով զրույցը հետաքրքիր և հաճելի գործընթաց է, հատկապես քանի որ ճիշտ պատասխանները նրանց վստահության և հաջողության զարգացողություն են պարգևում: Նույնիսկ այն աշակերտները, որոնք անձամբ չեն պատասխանում, բայց ինքնուրույն գտնում են ճիշտ պատասխանը, վստահություն են ձեռք բերում: Այս

վստահությունն ու հաջողությունը գովասանքի ու հավանության ուղեկցությամբ մոտիվացիայի առաջ մղման պատճառ են հանդիսանում:

Այնուամենայնիվ շատերիս համար հարցադրումների մեթոդն անծանոթ է, չնայած մի փոքր փորձառնությունից հետո բնականոն երևույթ է դառնում:

Դասի պլան 2 08.10.21թ.

V դասարան

Դասի թեման – Նոյը և ջրհեղեղը.

Նպատակը – աշակերտներին պատկերացում տալ առաջին մարդկանց, Ադամի ու Եվայի դրախտից արտաքսման մասին:

Բացատրել այ պատճառները, որոնց հետևանքով տեղի ունեցավ ջրհեղեղը:

Վերջնարդյունք – կսովորեն համեմատել, վերլուծել, գլխավորը երկրորդականից առանձնացնել:

Նոյի, նրա կողմից տապանի կառուցման, Արարատ լեռան վրա հանգրվանելու, ջրհեղեղը դադարելու մասին:

Խթաման փուլ – նյութի ուսումնասիրման մեթոդներն ու մեթոդական հնարները բազմազան են: Օրինակ՝ կարելի է կիրառել բացատրական ըթերցանություն կամ հարցազրույց: Նախնական տեղեկություն տալ ջրհեղեղի մասին, հետո դիմել աշակերտներին. Արդյո՞ք նրանք տեսել են մեր օրերում տեղի ունեցած ջրհեղեղ կամ լսել դրա մասին, ի՞նչ ազդեցություն է թողել այդ ջրհեղեղը նրանց վրա:

Երբ հարցադրումները կիրառում ենք որպես դասավանդման մեթոդ, ի հայտ է գալիս ևս մեկ էական առավելություն: Երբ խոսում էինք մոտիվացիայի մասին, աշակերտները պետք է իմանան, որ ուսումնառության մեջ հաջողություն են գրանցում: Ոչինչ այնքան չի մոտիվացնում, որքան աշակերտի բավարարվածության զգացումը: Երբ նա հարցին ճիշտ է պատասխանում և ամնիջապես արժանանում ուսուցչի ջերմ գովասանքին:

Վերլուծություն

Հետևաբար ամփոփելով ներկայացնում եմ հարցադրումները որպես դասավարդման մեթոդ կիրառելու առավելությունները:

- Ցույց է տալիս թեմայի տրամաբանությունն ու առաջ անցնում խրախուսելով ոչ թե անգիր անելը, այլ հասկանալը:
- Ապահովում է, որ ուսումնառությունը կառուցողաբար հիմնվի նախկինում ստացած գիտելիքի վրա:
- Ստեղծում է փոխանցելի գիտելիք:
- Տալիս է ակնթարթային հետադարձ կապ /թե՛ ուսուցիչներին, թե՛ աշակերտներին/ սովորելու գործընթացի վերաբերյալ:
- Դասի ընթացքը համապատասխանեցնում է աշակերտի տեմպին:
- Աշակերտների համար ակտիվ և հետաքրքիր գործընթաց է:
- Աշակերտներին թույլ է տալիս գործնական կիրառել մեր հաղորդած և նրանց կողմից վերջերս յուրացված գաղափարներն ու բառապաշարը:
- Վերհանում է սխալ գաղափարներն ու ենթադրությունները թույլ տալով, որ տեղի ունենա «սովորածը մոռանալու» գործընթացը /այսինքն ապահովում է ուսումնառության «ստեղծելու և շտկելու » բաղադրիչը/:
- Մոտիվացնում է, քանի որ հնարավորություն է տալիս աշակերտներին հաջողություն գրանցել ուսումնառության ընթացքում:
- Անհատական հարցադրումների միջոցով մեզ հնարավորություն է տալիս բացատրել այն դժվարությունը, որին միգուցե հանդիպել է «փակուղում հայտնված աշակերտը»:
- Կարող է կիրառվել աշակերտին կարգապահ դարձնելու համար:
- Թույլ է տալիս ուսուցչին գնահատել ուսումնառությունը:
- Խրախուսում է բարդ մտածողության հմտությունների զարգացումը:

Գրականություն

1.Գ.Ե.Ղույումչյան, «Մանկավարժություն», գիրք 1-ին, էջ 14, Երևան, 2005 թ
2.Алехин А.Ю. Общие методы обучения в школе. — К.: Радянська школа, 1983. — 244с.
3.Давыдов В. В. Теория развивающего обучения. — М.: ИНТОР, 1996. — 544 с.

Բովանդակություն

Նախաբան 1 էջ

Հետազոտական համատեքստ ---------- 2 էջ

Գործնական համատեքստ ---------- 3 էջ

Հետազոտական ընթացք ---------- 5 էջ

Վերլուծություն 13 էջ

Ամփոփում 15 էջ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ.ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՆ N 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Տարբերակված ուսուցման ազդեցությունը սովորողների առաջադիմության վրա

Մասնակից՝ Ն. Մովսեյան

Դպրոց՝ Վաղարշապատի <<Ներսիսյան N 6 հիմն. դպրոց>>

Վերապատրաստող՝ Կարինե Ավետիսյան

Վաղարշապատ 2021թ.

Բովանդակություն

1. Նախաբան էջ 1
2. Հետազոտական համատեքստ էջ 3
3. Գործնական համատեքստ և էջ 6
   հետազոտական ընթացք
4. Տվյալների մշակում և վերլուծություն էջ 12
5. Ամփոփում էջ 14
6. Գրականության ցանկ էջ 15

   Հավելվածներ էջ 16

Նախաբան

Կրթությունը չի նախապատրաստում կյանքին:
Կրթությունը ինքնին կյանք է
Ջոն Դյուի

Անդրադառնալով Ջոն Դյուիի վերը նշված տողերին կփորձեմ այդ <<Կյանքը>> դարձնել ավելի հետաքրքիր, նպատակային և արդյունավետ: Սակայն ժամանակաշրջանը, որում մենք ապրում ենք, առանձնանում է նրանով, որ դեպքերն ու իրադարձությունները զարգանում են առանձնահատուկ արագությամբ, հաճախ մենք չենք հասցնում հասնել դրանց հետևից: Այս փոփոխությունները անդրադառնում են նաև նոր սերնդի վրա, փոխվում է նրանց հետաքրքրությունների շրջանակը. Ավանդական դաս-դասարանային համակարգը ժամանակակից սերնդի համար դարձել է անհետաքրքիր, ոչ նպատակային: Ելնելով այս փոփոխություններից անհրաժեշտ է բարեփոխել կրթական համակարգը: Բնական է այդ ամենը պահանջում է մեծ ջանքեր և աշխատանք: Այսօր դպրոցներում դասավանդվող բոլոր առարկաների դասավանդման որակի վրա դրվում է հստակ պահանջներ: Հատկապես կարևորվում է պատմություն առարկան, որը հումանիտար առարկաների առաջատարն է: Ըստ Ի. Լերների <<Պատմությունը երեխաների մոտ դաստիարակում է հարցեր տալու, փաստեր ուսումնասիրելու, կարծիք հայտնելու, վերլուծություն անելու արդարացնելու, համեմատելու, բացատրելու կարողություն>>: Ժամանակակից մանկավարժական պահանջները ստիպում են պատմության ուսուցիչներին համապատասխանեցնել ավանդական մանկավարժական մեթոդները ժամանակակից, նորարարական մեթոդների հետ: Վերը նշված նորարարություններից է տարբերակված ուսուցումը, որը հատկապես արդյունավետ է պատմության դասավանդման ընթացքում: Որպեսզի կարողանամ կիրառել տարբերակված ուսուցումը պատմության դասաժամերին ինքս իմ առջև նպատակ եմ դրել:

- Բացահայտել տարբերակված ուսուցման էություն

- Թեորիապես ուսումնասիրել տարբերակված ուսուցման հիմունքները:

- Ուսումնասիրել մեթոդներ, որոնք կիրառելի են տարբերակված ուսուցման ընթացքում:

- Որպես ուսուցիչ խնդիր եմ համարում զարգացնել երեխայի ստեղծագործական և անհատական կարողությունները, բարձրացնել առաջադիմությունը, սովորեցնել սովորել, բարձրացնել ինքնագնահատականը:

- Աշխատանքի նպատակն է կիրառել ավելի նպատակային մեթոդներ տարբերակված մոտեցման միջոցով ուսուցման պրոցեսը արդյունավետ և հետաքրքիր դարձնելով:

Եթե պատմություն դասավանդելիս կիրառենք տարբերակված ուսուցում՝ հաշվի առնելով աշակերտների առանձնահատկությունները ապա.

- սովորողները ավելի լավ կյուրացնեն ուսուցանվող նյութը

- կբարձրանա սովորողների ինքնուսուցման պատրաստակամությունը:

Տարբերակված ուսուցումը կրթական գործընթացի կազմակերպման ձև է, որի ժամանակ ուսուցիչը աշխատում է սովորողներին խմբավորել ըստ իրենց ուսուցման մակարդակի:

Մանկավարժական գրականության մեջ հեղինակները տարբեր կերպ են մեկնաբանում տարբերակված ուսուցումը.

Տարբերակումը՝ դա սովորողների բաժանումն է խմբերի ըստ իրենց կարողությունների և առանձնահատկությունների:

Ի Ունտ.

Տարբերակումը՝ դա ինդիվիդուալ ուսուցման միջոց է:

Վ. Մոնախով, Վ. Օրլով, Վ.Ֆիրսոն

Դա միջոց է ուսումնական գործընթացը կազմակերպելու, որի ժամանակ հաշվի է առնվում սովորողների առանձնահատկությունները՝ ըստ նյութի յուրացման աստիճանի:

Ի. Օսմոլովսկայա

Տարբերակված ուսուցման տեսակները ըստ Քերոլ Էն Թոմլիսոնի հետևյալն են.

1. Ըստ բովանդակության դասակարգման
2. Ըստ գործողությունների
3. Ըստ վերջնարդյունքների
4. Ըստ միջավայրի:

Տարբերակված ուսուցման նպատակն է, ընդհանուր կրթության յուրացման բովանդակության գործընթացում, յուրաքանչյուր աշակերտի համար ապահովել պայմաններ՝ նրա ընդունակությունների, հետաքրքրությունների, հակումների, ճանաչողական պահանջմունքների բավարարման ու մաքսիմալ զարգացման համար: Տարբերակված ուսուցումը թույլ է տալիս ուսումնական պրոցեսը կազմակերպել՝ հաշվի առնելով անձի անհատական առանձնահատկությունները:Այն ապահովում է բոլոր3 աշակերտների կողմից կրթության բովանդակության յուրացումը: Այդ տիպի կրթության կազմակերպման դեպքում սովորողների յուրաքանչյուր խումբ, որոնք ունեն նման

առանձնահատկություններ, գնում են իրենց ճանապարհով: Տարբերակված ուսուցման պայմաններում ուսուցման պրոցեսը մաքսիմալ ձևով մոտեցվում է երեխաների ճանաչողական պահանջմունքներին և անհատական առանձնահատկություններին:

Տարբերակված ուսուցումը իրականացվում է 3 հիմնական փուլերով

- Ճանաչել յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունները
- Խմբավորել սովորողներին ըստ իրենց անհատական առանձնահատկությունների:
- Տարբերակել յուրաքանչյուր խմբի ուսումնական գործընթացը:

Տարբերակված ուսուցումն իրականացնելիս հաշվի է առնվում սովորողների.

- Պատրաստակամությունը կամ կարողությունները
- Հետաքրքրությունների շրջանակը
- Ուսումնառության ոճը

Արդյունքում ապահովում ենք սովորողների շարունակական զարգացումը, սովորողների մոտիվացիայի դրսևորումը, արդյունավետությունը:

- Ընթերցողական – Տրամադրել դասագրքեր
- Տեսողական – տրամադրել նյութը բացատրող տեսադասեր
- Լսողական – տրամադրել աուդիո դասագրքեր
- Կինետիկ – հանձնարարել առցանց ինտերակտիվ հանձնարարություններ:

Դասապրոցեսն ավելի արդյունավետ կազմակերպելու համար կարևոր է նաև ուսուցչի օժանդակությունը: Ուսուցչի օժանդակությունը ըստ գործողության տիպերի

- Խմբային աշխատանք.

- Ելնելով սովորողների հետաքրքրության շրջանակներից ստեղծել <<Կրթակայաններ>> թեմաները բաժանելով խմբերի միջև:

- Ելնելով սովորողների կարողություններից՝ հիմնական բովանդակությունը բազմաշերտ փողկապակցված առաջադրանքների միջոցով բաշխել խմբերի միջև:

- Անհատական աշխատանք: Ելնելով սովորողների կարիքներից կազմել անհատական աշխատանք:

Ինչպես իրականացնել տարբերակումն ըստ վերջնարդյունի: Վերջնարդյունքը դա սովորողի կողմից դասի թեմայի վերջում ստեղծած պրոդուկտն է՝ բովանդակության և հմտությունների մակարդակը ցուցդրելու համար:

Ուսուցիչը ելնելով սովորողների ուսումնառության ոճից և նախապատվություններից, կարող է սովորողներին հանձնարարել կատարել այնպիսի առաջադրանքներ, որոնցում կամփոփվեն դասի հիմնական հայեցակարգային պահանջները .

օրինակ ՝ թեստ, նախագիծ, հաշվետվություն և այլն:

Գործնական համատեքստ և հետազոտական ընթացք

Թեորիապես ուսումնասիրելով տարբերակված ուսուցման էությունը, որոշեցի այն կիրառել իմ պրակտիկայում:

Քանի որ իմ խնդիրն է նպաստել սովորողների առաջադիմությանը՝ տարբերակված ուսուցումը կիրառելու համար ընտրեցի VIII-գ դասարանը, որտեղ սովորողների առաջադիմության ցուցանիշը բավականին ցածր է:Այս դասարանում սովորում են աշակերտներ, որոնք դժվարությամբ են հաղթահարում նվազագույն գիտելիքի շեմը: Այս աշակերտների առաջադիմության համար կցուցաբերեմ տարբերակված մոտեցում և այն կկիրառեմ 4 դասաժամերի ընթացքում:

Տարբերակված ուսուցումը իրագործելու համար՝ ըստ առաջադիմության և կարողությունների, անհրաժեշտ է մտովի աշակերտներին բաժանել 3 խմբի:

I - Ցածր առաջադիմությամբ աշակերտներ – դժվարանում են յուրացնել նյութը, փաստերը, տարեթվերը, իրադարձությունները չեն կարողանում մտապահել, խոսքը զարգացած չէ:

II – միջին առաջադիմությամբ աշակերտներ – տիրապետում են լավ գիտելիքների, սակայն չունեն վերլուծելու կարողություն:

III - Բարձր առաջադիմությամբ աշակերտներ – տիրապետում են խորը գիտելիքների, կարողանում են վերլուծել, համեմատել, ապացուցել:

Սովորողները կստանան իրենց կարողություններին համապատասխան առաջադրանքներ: Որպես թիրախային խումբ ընտրել եմ 4 աշակերտի՝

- Աբգարյան Սյուզաննա
- Ասլանյան Լևոն
- Թաթուլյան Սարգիս
- Կիրակոսյան Վիրաբ

Այս խմբի աշակերտները ցուցաբերում են անտարբերություն առարկայի նկատմամբ, նրանց չի հետաքրքրում գիտելիքը, դանդաղ են մտածում և դանդաղ յուրացնում նյութը, դժվարանում են վերարտադրել սովորածը, բառապաշարը աղքատ է:Բնական է այս

խնդիրներից ելնելով ցածր է նաև նրանց ինքնագնահատականը, վստահ չեն իրենց ուժերի վրա և երբեմն դրանից ելնելով խուսափում են մասնակցել դասապրոցեսին:Այս խնդիրները հաղթահարելու համար տարբերակված ուսուցման ընթացքում կկիրառեմ մեթոդներ և հնարներ, որոնք կնպաստեն սովորողների առաջադիմությանը:

Դաս I - <<Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման նոր փուլը>>:

Խթանման փուլը սկսվեց նախորդ դասի հիմնահարցերի քննարկմամբ: Նոր նյութի ուսումնասիրության համար թիրախային խմբի աշակերտներին հանձնարարվեց լրացնել նախորդ դասին տետրերում գծված աղյուսակի միայն առաջին երկու սյունակը: Բացի դա նրանք իրենց համար պետք է առանձնացնեին դասից 3 կարևոր փաստ.

Ստորև աղյուսակը

Պատերազմ	Տարեթվեր	Կարևոր իրադարձություններ	Պայմանագրի կնքման վայր	Հիմնական արդյունքներ
I ռուս-պարսկական				
II ռուս-պարսկական				

Միջին առաջադիմությամբ աշակերտներին հանձնարարվեց սովորել առաջին ենթավերնագրի բովանդակությունը:

Բարձր առաջադիմությամբ աշակերտներին հանձնարարվեց տետրերում գրել պատերազմի պատճառները և հետևանքները:

Վիրաբը կարողացավ ինքնուրույն աշխատել և առանձնացնել 3 կարևոր տարեթիվ: Սակայն մյուս 3 աշակերտները առաջադրանքը կատարելիս ստացան որոշակի օգնություն

Կշռադատման փուլի համար գրատախտակին գծվեց m-աձև աղյուսակ, որտեղ <<ընթացքը>> սյունակը հանձնարարվեց լրացնել Լևոնին, Վիրաբին, Սարգիսին և Սյուզաննային:Նրանցից յուրաքանչյուրը գրեց 1 տարեթիվ և իրադարձություն:

Ռուս-պարսկական II պատերազմը

Պատերազմի պատճառները	Ընթացքը	Հետևանքները և արդյունքը

Դաս II – Հայկական մարզը: 1836թ. եկեղեցական կանոնադրությունը:

Խթանման փուլն սկսվեց նախորդ դասի հարցերի քննարկմամբ: Հիմնական շեշտը դրվեց Թուրքմենչայի հաշտության պայմանագրի վրա:Սարգիսը և Վիրաբը ակտիվ պատասխանում էին հարցերին: Այն հարցին <<թե ինչ տվեց մեզ Թուրքմենչայի հաշտության պայմանագիրը>>, Սարգիսը պատասխանեց, որ <<շնորհիվ այդ պայմանագրի մենք այսօր նստած ենք այս դասարանում>>:

Նոր նյութի ուսումնասիրության ժամանակ սովորողները բաժանվեցին 3 խմբի՝ ըստ ունակությունների:

I խմբին հանձնարարվում է դասից դուրս գրել կարևոր տարեթվերը և իրադարձությունները և դրանց հիման վրա կազմել հարցեր

II խմբին հանձնարարվում է կարդալ և սովորել <<Հայկական մարզի կազմավորումը>> ենթավերնագիրը:

III խմբին հանձնարարվում է տրամագիր վարժության միջոցով ներկայացնել 1836թ. եկեղեցական կանոնադրության դրական և բացասական կողմերը:

I խմբի սովորողները, այս դասի ընթացքում, իրենց առջև դրված առաջադրանքը ավելի վարժ էին կատարում, քան նախորդ դասին: Դժվարություններ առաջացան հարցեր կազմելիս, այս հարցում նրանք ստացան որոշակի օգնություն:

Կազմվեցին հետևյալ հարցերը, որոնք կշռադատման փուլում ուղղվեցին II խմբի սովորողներին:

1. Ե ±րբ է ստեղծվել Հայկական մարզը:
2. Ո ±վ էր 1830-38թթ. Հայկական մարզի վարչության պետը:
3. Ո ±ր գավառներն էին մտնում Երևանի նահանգի մեջ:
4. Ե±րբ է Ռուսաստանի կողմից հաստատվել հայ եկեղեցու կանոնադրությունը:

Բացի Լևոնից մյուս 3 աշակերտներն էլ ակտիվորեն մասնակցեցին դասին և գնահատվեցին:

Դաս III – <<Արևմտյան Հայաստանը XIX դարի I կեսին>>:

Խթանման փուլն սկսվեց նախորդ դասի քննարկմամբ: Ընդհանուր դասարանին տրվեցին այն հարցերը, որոնք կազմել էին նախորդ դասին I խմբի աշակերտները: Խրախուսելի էր, որ իրենք իրենց կազմած հարցերի պատասխանները մտապահել էին:

Նոր նյութի ուսումնասիրության համար գրատախտակին գրվում է <<Արևմտյան Հայաստան>>, որի տակ անմիջապես գծվում է ԳՈՒՍ գծապատկեր:

Արևմտյան Հայաստան

Գիտեմ	Ուզում եմ իմանալ	Սովորեցի

Սովորողներին հանձնարարվեց առաջին սյունակում գրել Արևմտյան Հայաստանի վերաբերյալ իրենց նախնական գիտելիքները: Երկրորդ սյունակում սովորողները գրեցին, թե ինչ են ուզում իմանալ Արևմտյան Հայաստանի մասին:

Նոր նյութի յուրացման փուլում ներկայացվեց Արևմտյան Հայաստանի վարչական բաժանումները, քարտեզի վրա ցուցադրվեց 6 նահանգները: Ռուս-թուրքական պատերազմները ներկայացվեց m-աձև աղյուսակի միջոցով:

Կշռադատման փուլում հանձնարարվեց լրացնել ԳՈՒՍ –ի վերջին սյունակը՝ այսինքն սովորողները այս սյունակում գրեցին իրենց ձեռք բերած գիտելիքները: Առաջադրանքը դժվարացավ կատարել Լևոնը,սակայն դասընկերների կողմից նա ստացավ որոշակի օգնություն: Լևոնին խրախուսելու համար գնահատեց 4: Բացի Լևոնից գնահատվեցին ակտիվություն ցուցաբերած մյուս աշակերտները:

Դաս IV – Թեմատիկ գրավոր աշխատանք.

Այս աշխատանքի միջոցով սովորողները իրենց ուսումնասիրած նյութը ներկայացնում են գրավոր աշխատանքի տեսքով: Աշխատանքն ընդգրկում է չափորոշչային պահանջներին համապատասխան առաջադրանքներ: Աշխատանքը տրվում է թեստերով, որում ներառված են ծրագրում առկա տարաբնույթ առաջադրանքներ.

- Ճիշտ պատասխանի ընտրությամբ

- Կարճ պատասխան պահանջող

- Համապատասխանեցման պահանջով

- Իրադարձությունները ժամանակագրական հաջորդականությամբ դասավորելու պահանջով

- Պատասխանի ընդարձակ շարադրմամբ:

Թեմատիկ գրավոր աշխատանքը ներառում է I, II և III կարգի բարդության առաջադրանքներ:

ԹԵՄԱՏԻԿ ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ

1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ 8-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ /2-րդ ՏԱՐԲԵՐԱԿ/

1. Ե±րբ է կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին էջմիածնում գումարել ժողով:
   ա/ 1699թ., բ/ 1677թ., գ/ 1701թ., դ/1708թ.
2. Նշվածներից ո±րը սղնախ չէր:
   ա/ Գյուլիստան, բ/ Ջրաբերդ, գ/ Քալագլուխ, դ/Երևան
3. Ե±րբ Նադիր շահի հրահանգով ստեղծվեցին Խամսայի մելիքությունները:
   ա/ 1722թ., բ/ 1736թ., գ/1735թ., դ/ 1771թ.
4. Նշվածներից ո±վ էր հնդկահայ գործիչ:
   ա/ Հ. Էմին , բ/ Իսրայել Օրի, գ/ Դավիթ Բեկ, դ/ Մխիթար սպարապետ
5. Ո±վ ազատագրեց Երևանի բերդը:
   ա/ Պասկևիչ, բ/ Մադաթով, գ/ Գուդովիչ, դ/ Աշտարակեցի
6. Ե±րբ ստեղծվեց Հայկական մարզը:
   ա/ 1804թ. բ/ 1813թ. գ/ 1828թ. դ/ 1830թ.

7. Կատարել համապատասխանեցում.

1. 1804թ	ա/ Ռուս-պարսկական 2-րդ պատերազմի սկիզբը
2. 1826թ. հուլիս	բ/ Ռուս-պարսկական պատերազմի սկիզբը

3. 1812թ. գ/ Թուրքմենչայի պայմանագիր
4. 1813թ. հոկտեմբերի 12 դ/ Բուխարեստի պայմանագիր
5. 1828թ. փետրվարի 10 ե/ Ադրիանապոլսի պայմանագիր
6. 1829թ. սեպտեմբերի 2 զ/ Գյուլիստանի պայմանագիր
7. 1826թ. սեպտեմբերի 3 է/ Երևանի բերդի գրավումը
8. 1827թ. հոկտեմբերի 1 ը/ Շամխորի ճակատամարտ

1	2	3	4	5	6	7	8

8. Դասավորել հաջորդականությամբ.
   ա/ Հայկական մարզի վերացումը
   բ/ Հալիձորի ճակատամարտը
   գ/ Հայկական տպարանի հիմնումը Մադրասում
   դ/ Ադրիանապոլսի պայմանագիր

1	2	3	4

9. Ի±նչ էին կոչվում Արևելյան Հայաստանի վարչական նահանգները և որոնք էին դրանք:

   ---
10. Ներկայացնել Արևմտյան Հայաստանի վիճակը 19-րդ դարի սկզբին:
    1-6-րդ հարցերը – 0,5 միավոր, 7-8-րդ հարցերը -2մ., 9-րդ հ. -1 մ., 10-րդ հ.-2մ

Տվյալների մշակման վերլուծություն

4 դասաժամերի ընթացքում Վիրաբը, Սյուզաննան և Սարգիսը ցուցաբերեցին բավականին մեծ ակտիվություն, հետաքրքրված էին առարկայով, սիրով կատարում էին

իրենց առջև դրված հանձնարարությունները, երկրորդ և երրորդ դասերին արդեն կարողանում էին ինքնուրույն կատարել առաջադրանքները,պատասխանում էին հարցերին, իրենք էին ուղղում հարցեր և անգամ հայտնում սեփական կարծիք, սա բավականին լուրջ տեղաշարժ էր: Լևոնը ճիշտ կատարում էր իմ հրահանգները, բայց դժվարությամբ և անտարբերությամբ: Լևոնի հետաքրքրությունների շրջանակը բավականին նեղ է, սակայն կատարված առաջադրանքների համար Լևոնը 1 անգամ գնահատվեց 4:

Թեմատիկ գրավոր աշխատանքի ժամանակ թիրախային խմբի աշակերտները լրացրել էին հիմնականում ա մակարդակի պահանջները և ինքնուրույն հաղթահարել նվազագույն պահանջների շեմը: Տարբերակված ուսուցման շրջանակներում կիրառված մեթոդներն ու հնարները օգնեցին աշակերտներին ինքնուրույն աշխատանք կատարելու մեջ հմտանալ, բարձրացավ նրանց ինքնագնահատականը և հավատը սեփական ուժերի նկատմամբ: Ինքնավստահության բարձրացումը օգնեց նրանց արտահայտվել առանց կաշկանդվելու և մասնակցել քննարկումներին:Կարծում եմ սա ամենամեծ ձեռքբերումն էր:

△ Ստորև ներկայացնում եմ այն արդյունքները, որոնք երեխաները գրանցել են մինչ այս ուսուցումը և հետո.

Աշակերտ	գնահատական	
Լևոն	2	
Սարգիս	2	
Սյուզաննա	4	
Վիրաբ	4	2

Աշակերտ	I օր	II օր	III օր	Թեմատիկ
Լևոն	-		4	4

Սարգիս	-	5		4
Սյուզաննա	-	5		5
Վիրաբ	-	5		5

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով տարբերակված ուսուցումը համեմատաբար դժվար և արդյունավետ աշխատանքի ձև է: Այն ուսուցչից պահանջում է մեծ ջանքեր, հմտությունների փորձ: Այն պահանջում է հետևողական և համակարգված մոտեցում: Նշեմ, որ արդյունքները արդարացրեին իմ առջև դրված նպատակները: Տարբերակված ուսուցման կիրառման արդյունքները հետևյալն էին.

-դրական վերաբերմունք առարկայի հանդեպ

- Սովորողների ճանաչողական հետաքրքրության բարձրացում

-Սովորողների ինտելեկտի բարձրացում

-Ստեղծագործական և ինքնուրույն աշխատանք կատարելու կարողություն.

Այսպիսով, ժամանակակից կրթական պահանջների համաձայն, ուսուցիչը պետք է կարողանա մոտիվացնել, ձևավորել շարժառիթներ, դրթել ինքնազարգացման, հաշվի առնելով սովորողի ակտիվությունը՝ նպաստել նրա առաջընթացին:

Այսպիսով տարբերակված ուսուցումը հնարավորություն տվեց ուսումնական պրոցեսին մասնակցել անխտիր բոլորին՝ անկախ հնարավորություններից և կարողություններից: Դրա համար էլ վստահաբար կարող եմ նշել, որ պատմության ուսումնասիրությունը տարբերակված ուսուցման միջոցով համապատասխանում է կրթական ժամանակակից պահանջներին: Այն նաև հնարավորություն է տալիս սովորողներին ինքնուրույն աշխատել, որը ևս հաջողության գրավականներից մեկն էր: Ասածս վկայակոչում եմ չինական իմաստուն մտքով .

Ասա ինձ - և ես կմոռանամ

Ցույց տուր ինձ - և ես կհիշեմ

Հանձնարարիր անեմ - և ես կհասկանամ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Յուրի Ամիրջանյան - Մանկավարժություն

Լ. Ասատրյան – Մանկավարժություն

http:www-den-zo-dnem.ru>school

ՀԱՎԵԼՎԱԾ

Օրվա դասի պլան

Ուսուցիչ - Մովսեսյան Ն.

Առարկա - Հայոց պատմություն

Թեմա – Հայկական մարզը: 1836 թ. եկեղեցական կանոնադրությունը:

Դասարան – VIII

Նպատակ – Հայաստանի վարչական բաժանումները Ռուսաստանի կազմում: 1836 թ. Եկեղեցական կանոնադրությունը:

Վերջնարդյունք - Իմանալ - Կարևոր տարեթվերը և իրադարձությունները, կարողանա բացատրել Հայկական մարզ, եկեղեցական կանոնադրություն հասկացողությունները:

Կարողանա՝ ներկայացնել Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո Հայաստանի վարչական փոփոխությունները

Համեմատի՝ եկեղեցական կանոնադրության դրական և բացասական կողմերը

Դասի տիպը – Նոր նյութի հաղորդում.

Մեթոդ – Խմբային աշխատանք; տրամագիր.

Դիդակտիկ նյութեր – պաստառ, քարտեզ, գրքեր

Դասի ընթացքը – կազմակերպչական մաս

Խթանում Նախորդ նյութի կարևորագույն հարցերի քննարկում

Իմաստի ընկալում - Կազմակերպվում է խմբային աշխատանք, յուրաքանչյուր խումբ ստանում է իր կարողություններին համապատասխան առաջադրանք.

Կշռադատում - սովորողները պատասխանում են I խմբի կազմված հարցերին և ներկայացնում իրենց աշխատանքները: Տրամագրի միջոցով համեմատում են եկեղեցական կանոնադրության դրական և բացասական կողմերը

Ամփոփում - 3, 2, 1 սկզբունքի կիրառմամբ դասն ամփոփվում է:

Օրվա դասի պլան

Ուսուցիչ - Մովսեսյան Ն.

Առարկա - Հայոց պատմություն

Թեմա –«Վահանանց ապստամբությունը»

Դասարան – VII

Նպատակ – Վահանանց ապստամբության պատճառները և ընթացքը: Նվարսակի հաշտության պայմանագիրը:

Վերջնարդյունք - Իմանալ - իմանա Վահաբաբց ապստամբության տարեթվերը (481 – 484 թթ), գլխավոր ճակատամարտերը: Նվարսակի հաշտության պայմանագրի թիվը (484 թ.):

Կարողանա՝ ներկայացնել դասի փուլերը և ներկայացնի պատճառահետևանքային կապերը:

Վերլուծի՝ Նվարսակի պայմանագիրը և նրա կետերը:

Դասի տիպը – համակցված.

Մեթոդ – զրույց, m – ա ձև աղյուսակ.

Միջառարկայական կապ – Հայոց Եկեղեցու պատմություն

Դիդակտիկ նյութեր – պաստառ, քարտեզ, գրքեր

Դասի ընթացքը – կազմակերպչական մաս

Խթանում Նախորդ նյութի հարցում, ամփոփում, գնահատում:

Իմաստի ընկալում - Գրատախտակին գծել m – ա ձև աղյուսակ և լրացնել.

Առիթ	Ընթաց	Հետևանք

Կշռադատում - ներկայացնել կարևորագույն իրադարձությունները, ճակատամարտերը և դրանց ելքերը։

Օրվա դասի պլան

Ուսուցիչ - Մովսեսյան Ն.

Առարկա - Հայոց պատմություն

Թեմա –«Արևելյան Հայաստանի պատերազմը՝ Ռուսաստանին միացման նոր փուլը»

Դասարան – VIII

Նպատակ –XIX դ-ի ռուս-պարսկական պատերազմը և արդյունքները։

Վերջնարդյունք - ա) Իմանալ՝ ռուս-թուրքական պատերազմի կարևոր տարեթվերը և իրադարձությունները, կարողանա ինքնուրույն աշխատանք կատարել։

բ) Կարողանա՝ ներկայացնել դասի հիմնական բովանդակությունը և համեմատի XIX դ-ի ռուս-պարսկական 2 պատերազմները։

գ) Վերլուծի՝ պատերազմի արդյունքները։ Արժևորել Թուրքմենչայի պայմանագրի նշանակությունը։

Մեթոդներ , հնարներ – խմբային աշխատանք, m – ա ձև աղյուսակ

Օգտագործվող պարագաներ - քարտեզ, գրքեր

Դասի տիպը –նոր նյութի հաղորդում.

Դասի ընթացքը – կազմակերպչական մաս

Խթանում սկսվեց նախորդ նյութի հիշեցմամբ և տնային հանձնարարության ստուգմամբ։

Իմաստի ընկալում - Այս փուլում սովորողներին՝ ըստ իրենց կարողությունների տրվում են հանձնարարություններ.

Կշռադատում - Այս փուլում գրատախտակին գծվում է m – ա ձև աղյուսակ, որը լրացվում է սովորողների կողմից

Ամփոփում - Ամփոփման փուլում 3, 2, 1 սկզբունքով սովորողները ներկայացնում են իրենց ներ ձեռք բերած գիտելիքները։

Օրվա դասի պլան

Ուսուցիչ - Մովսեսյան Ն.

Առարկա - Հայոց պատմություն

Թեմա – «Արևելյան Հայաստանը 19-րդ դ-ի կեսին»

Դասարան – VIII

Նպատակ – Հայաստանի վարչական բաժանումները 1806 - 1812 թթ. ռուս-թուրքական պատերազմը Ադրիանապոլիսի հաշտության պայմանագիրը։

Վերջնարդյունք - Իմանալ - Իմանա Արևելյան Հայաստանի սոց. -տնտեսական և հաս. - քաղաքական կյանքի հետ կապված կարևոր փաստերը։ Կարողանա բացատրել Վիլայեթ, սանջակ, էսնաֆություն հասկացությունները։

Կարողանա՝ բացատրել ռուս-թուրքական պատերազմների պատճառները։

Վերլուծել՝ ռուս-թուրքական պատերազմների հետևանքները։

Դասի տիպը – Նոր նյութի հաղորդում.

Մեթոդ – զրույց, m – ա ձև աղյուսակ, ԳՈւՍ .

Դիդակտիկ նյութեր – պաստառ, քարտեզ, գրքեր

Դասի ընթացքը – կազմակերպչական մաս

Խթանում Նախորդ դասի քննարկում և գնահատում։

Իմաստի ընկալում - Գրատախտակին գրվում է «Արևմնտյան Հայաստան», որի անմիջապես տակը գծվում է ԳՈւՍ աղյուսակ։ Սովորողները լրացնում են աղյուսակի միայն առաջին երկու սյունակը։ Դասը ներկայացվում է m – ա ձև աղյուսակի միջոցով։

Կշռադատում - սովորողներին ուղղված հարցերով դասն ամփոփվում է։

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ.ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՆ N5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Հարցադրումների մեթոդի կիրառման ազդեցությունը աշակերտների ակտիվացման համար

Մասնակից՝ Ս.Դավթյան

Դպրոց՝ Վաղարշապատի Մ.Խորենացու անվան թիվ 10 ավագ դպրոց

Վերապատրաստող՝ Կ.Ավետիսյան

Վաղարշապատ 2021

Բովանդակություն

Նախաբան 3

Հետազոտական համատեքստ, գործնական համատեքստ…4

Տվյալների մշակում և վերլուծում 20

Ամփոփում.....21

Գրականություն 22

Նախաբան

Հարցերի կիրառումը դասավանդման գործընթացում ամենաիզոր գործիքներից մեկն է,և դրանց ճիշտ օգտագործումը կարող է զգալիորեն բարձրացնել ուսուցման որակը և ավելանել սովորողների ներգրավվածությունը դասապրոցեսին:

Քրիստիան Չինը իր աշխատություններից մեկում նշում է,որ իրական ուսուցում ապահովվելու համար պետք է օգտագործել մարդու միտքը և ոչ թե հիշողությունը:

Ըստ նրա դա բացահայտումների փուլ է ,որտեղ հիմնական դերում աշակերտն է և ոչ թե ուսուցիչը:Խնդիրը հետևյալն է.հարցադրումների միջոցով դասարանում պասիվ աշակերտներին դասին ընդգրկելը: Աշխատանքի նպատակն է վերջնաարդյունքում ներկայացնել հարցադրումների այն ռազմավարությունները, որոնք կիրառվում են սովորողների գիտելիքները գնահատելու, ուսուցանվող նյութն ավելի խորն ըմբռնելու, քննադատական մտածողություն զարգացնելու, աշակերտների ներգրավվածության աստիճանը բարձրացնելու, մոտիվացիան խթանելու համար: Ավելին, ճիշտ և դասի նպատակներից բխող հարցերի առաջադրումը կարող է հիմք հանդիսանալ նոր գաղափարների առաջացման, ավելի խորքային ուսումնասիրությունների համար:Հարցեր տալու և հարցերին պատասխանելու կարողությունն ուսումնառության մեջ առանցքային և կարևոր տեղ է զբաղեցնում:ՈՒսուցման արդյունավետության և աշակերտների ներգրավվածության համար դիտարկվել է հարցադրման մի քանի ռազմավարություններ:Պատմության դասի մեջ հարցադրումների մեթոդի կիրառումը դասավանդման գործընթացի կարևոր և բաղկացուցիչ մասն է կազմում:Հարցադրումների կիրառմամաբ կարելի է ստուգել նախկինում յուրացված գիտելիքների աստիճանը,ինչպես նաև մեծացնել աշակերտների ակտիվացումը դասապրոցեսին: Ստորև ներկայացնում եմ հարցադրումների մի քանի ռազմավարություններ որոնք նպաստում են աշակերտների ակտիվացմանը դասապրոցեսին:

Հետազոտական համատեքստ, գործնական համատեքստ

ՈՒսումնառությունը իրականացնելու համար ընտրել եմ 11-րդ լեզվաբանական հոսքը:Դասարանում կա 17 աշակերտ:Դասարանը ակտիվ է,խելացի,բայց նրանցից մի քանիսը աչքի են ընկնում իրենց պասիվությամբ:Այդ աշակերտներն են՝

1.Վարդանյան Իզաբելլա

2.Վարդանյան Հասմիկ

3.Սարգսյան Սյուզաննա

4.Պողոսյան Էլլա

Նպատական է նրանց ավելի շատ ընդգրկել դասապրոցեսին:Ընտրել եմ հարցադրումների մի քանի տեսակներ,որոնք կնպաստեն աշակերտների ներգրավվաշության մեծացմանը և ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

1. Ամբողջ դասարանին ուղղվող ընդհանուր հարցերի ռազմավարությորն:

Սա ամենատարածված մեթոդն է,որի ընթացքում հնարավորություն կտրվի իմանալու նյութի յուրացման մակարդակը կամ պարզել,թե որքանով են աշակերտները յուրացրել նյութը:

Դասի թեման էր՝ Ազատագրական պայքարը 18-րդ դարի երկրորդ կես:

Դասի պլան

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ՝ Հնդկահայ ազատագրական կենտրոն

ԱՌԱՐԿԱՆ՝Հայոց պատմություն

ԴԱՍԱՐԱՆ՝ 11-րդ լեզվաբանական հոսք

ԴԱՍԻ ՏԻՊԸ՝ գիտելիքների և կարողությունների ստուգման և շտկման դաս

ՄԵԹՈԴՆԵՐ և ՀՆԱՐՆԵՐ ՝ Հարցաղրումներ

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐ՝ Գրատախտակ, դասագիրք,քարտեզ

ԴԱՍԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 45ր.

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	ա) ակադեմիական՝ Իմանա Հայաստանի ազատագրության համար ինչ քայլեր ձեռնարկվեցին Հնդկաստանում և ով էր Շ. Շահամիրյանը: բ) սոցիալական՝Կարողանա ներկայացնել և համեմատել <<Նոր տետրակ որ կոչի հորդորակ>> և<< Որոգայթ փառաց գրքերը>>: Համեմատի Հ.Արղությանի,Մ.Սարաֆյանի և Շ.Շահամիրյանի ծրագրերը:
ԴԱՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ	Ժամանակաշրջանի ճիշտ ընակալում Ճիշտ վերլուծել Հայաստանիհամար ստեղծված իրավիճակը: Գնահատի և արժևորի ժամանակի գործիչների գործունեությունը:

Խթանում 10 րոպե	Հարց – պատասխան: 1Երբ էին հայերը հաստատվել Հնդկաստանում: 2) Ով էր Հովսեփ Էմինը: 3)Ինչ քաղաքականություն էր վարում Սիմեոն Երևանցի կաթողիկոսը: 4)Ինչ դեր էր ստանձնել հայոց եկեղեցին պետականության բացակայության պայմաններում:
Իմաստի ընկալում Կշռադատում 15 րոպե	Արդյոք եկեղեցին ճիշտ դիրքորոշում էև բռնել Հայաստանի ազատագրության հարցում:
Նոր դասի հաղորդում 15 րոպե	Դասն անցկացրել եմ Էլեկտրոնային դասարանում : Նկարների և նյութերի առկայությամբ:
Գնահատում և	2 աշակերտ ստացել են 8 և 1 աշակերտ 9

տնային աշխատանքի հանձնարարում 2 րոպե	
	Կարևոր տեղեկությունները դուրս բերել և սովորել:

Դասի ինքնաանդրադարձ

Կցվում է դասի պլանին

Ուսուցիչ՝ Ս.Դավթյան

Դպրոց՝ Վաղարշապատի Մ.Խորենացու անվ. թիվ 10 ավագ դպրոց

Դասարան՝11 լեզվաբան դասարան։ Ամսաթիվ՝ 04.10.2021 Ի՞նչն այս դասին լավ ստացվեց:

Աշակերտները ակտիվ էին ,նախաձեռնող և հիմնականում ներգրավված էին դասապրոցեսում:

Ի՞նչն անակնկալի բերեց ինձ:
Աշակերտները ունեցան յուրահատուկ մոտեցում ազատագրական ծրագրերին առաջ քաշելով իրենց սեփական տեսակետները:

Ի՞նչը պլանավորվածի պես չստացվեց:

ՈՒշադրությունս ավելի շատ սևեռված էր թիրախային խմբի վրա:

Ի՞նչը կփոխեի:
ՈՒշեղ աշակերտների համար ավելի բարդ հարցեր կնախապատրաստեի:

Ի՞նչ ստացան աշակերտները այս դասից:

Արժևորեցին անկախ պետականության ունեալու գաղափարը:
Հասա՞ արդյոք վերջնարդյունքներին: Ինչպե՞ս դա իմացա:

Այո կարևոր ձեռքբերումներից մեկն այն էր,որ թիրախային խմբի աշակերտներից մեկը գնահատեց անկախ պետականության դերը այսօր առավել քան երբևէ

Ի՞նչն էր այսօր իմ ուշադրության կենտրոնում: Դա աշխատե՞ց:

ՈՒշադրության կենտրոնում թիրախային թույլ խումբն էր,որոնք աշխատեցին բավականին արդյունավետ:

Արդյոք նպաստեց հնդկահայ բուրժուազյան հայ ազատագրական շարժման գործում:

3 աշակերտ պատասխանեց << Ոչ>> 2 աշակերտ պատասխանեց <<Այո>> մի մասն էլ ընդհանրապես ձայն չհանեցին:

Ներգրավվածությունը բարձրացնելու նպատակով փորձեցի հարցս այլ կերպ ձևակերպել:

Ինչ փաստեր և օրինակներ կարող եք բերել,որ հայ բուրժուազյան նպաստեց կամ չնպաստեց ազատագրական պայքարի աշխուժացմանը:

Հարցը սկսվեց դասարանում շատ ակտիվ քննարկվել և աշակերտների հիմնական մասը այդ թվում նաև պասիվ աշակերտները սկսեցին մասնակցել քննարկմանը:

Այնուհետև հարցերի շրջանակն ավելի ընդլայնվեց:Աշակերտներին հանձնարարվեց ներկայացնել այս ժամանակաշրջանի գործիչներին ,որոնք զբաղվում էին ազատագրական գործընթացով:Աշակերտների ներգրավվածությունը ավելի մեծացավ:Սխալ և ճիշտ պատասխաններ հնչեցրած աշակերտները ակտիվ քննարկումից հետո հանգեցին համապատասխան եզրահանգման:

Այս ռազմավարության շրջանակում պարզ է դառնում ,որ հարցերի ճիշտ ընտրությունը և դրանց ճ իշտ ձևակերպումը էականորեն կարող է աշակերտների ակտիվացման և դասապրոցեսին ակտիվ մասնակցելուն:Եթե հարցադրման սկզբում դասին մասնակցում է 5-6 աշակերտ ապա դասի վերջում ավելի շատ աշակերտ էր մասնակցում նաև այն աշակերտները որոնք պասիվ էին՝ Իզաբելլան,Հասմիկը, Էլլան և Սյուզաննան:

Դասից հետո արեցի եզրակացություն՝ Պատասխանին սպասելու ժամանակ բարձր մտածական գործընթացների զարգացման համար էական կարևորություն ունի սպասելու ժամանակը, քանի որ այն ազդում է պատասխանների որակի և քանակի, ինչպես նաև հետագա երկխոսության առաջացման վրա: Սպասելու ժամանակը հարցի և աշակերտի պատասխանի միջև ընկած ժամանակահատվածն է կամ ուսուցչի առաջին և երկրորդ հարցերի միջև ընկած ժամանակահատվածը: Եթե հարցը լսելուց հետո աշակերտները չեն արձագանքում համեմատաբար կարճ ժամանակահատվածում, ուսուցիչը հաճախ պետք է փորձի առաջ տանել զրույցը՝

կրկնելով, վերաձևակերպելով հարցը կամ դիմելով աշակերտներին: Ավելի բարդ հարցերի դեպքում, որոնք պահանջում են բարդ կոգնիտիվ վերլուծություններ, հնարավոր է անհրաժեշտ լինի տրամադրել աշակերտներին 1-2 րոպե, նախքան պատասխանելը: Սխալ է, երբ ուսուցիչը պատասխանում է իր իսկ հարցերին, և այդպիսի վարքագիծը արագորեն դառնում է ինքնախաբեության ձև: Արդյունքում աշակերտները զրկվում են հարցը «բռնելու» և իրենց սեփական պատասխանները ձևակերպելու հնարավորությունից, ինչը կարևոր գործընթաց է աշակերտների ներգրավածությունը բարձրացնելու համար: Անընդհատ պատասխանելով հարցերին աշակերտների փոխարեն, ուսուցիչը անուղղակիորեն «ասում է», որ նորմալ է, որ նրանք չեն պատասխանում հարցերին, քանի որ ուսուցիչը ի վերջո ինքը կպատասխանի: Արդյունքում աշակերտների սովորելու և դասին մասնակցելու գործընթացը մասնակիորեն դադարեցվում է: Իրականացված հետազոտությունների շրջանակում պարզվել է, որ պատասխանին ավելի երկար սպասելով՝ գրանցում են հետևյալ հաջողությունները. • Սովորողների պատասխաններն ընդարձակվում են: Ամբողջական նախադասություններ և վստահության ավելացում: Հայեցողական մտածողության դրսևորում: Ավելանում են սովորողի հարցերը և աշակերտների ակտիվությունը:

2.Հարցական բառերի ռազմավարություն

Հաճախ հարցերի իմաստն ընկալվում է որպես հնարավոր պատասխանների ամբողջություն: Հարցերի գործառույթների սպեկտրը, սակայն, շատ լայն է.

- նոր տեղեկատվություն ստանալ.
- ունեցած տեղեկատվությունը պարզաբանել.
- խոսակցության թեման փոխել.
- ճիշտ պատասխանը հուշել.
- իրավիճակի մասին կարծիք կամ գնահատական արտահայտել.

- հարցի իմաստային կամ զգացմունքային լիցքը փոխելը:

Հարցը խթանում է նաեւ իմացական գործունեությունը, օգնում է որոշակի դարձնել եւ ձեւակերպել խնդիրները:

Երեխայի՝ հարցեր տալու կարողությունը ցարգացնելու համար

- Հարցին պատասխանելու երեխայի անկարողությունն անհրաժեշտ է դիտել որպես նորմալ երևույթ: Եթե խոսքը ստուգողական աշխատանքին կամ հսկողության այլ ավանդական ձևերին չի վերաբերում, ապա պատասխանելիս դժվարության առաջ կանգնելն ինքնին պետ է դիտվի որպես դրական երևույթ:

Այս մեթոդն օգտագործեցի հաջորդ դասին: Նախօրոք աշակերտներին հանձնարարվել էր ծանոթանալ նյութին: Դասի թեման էր՝ Արևելյան Հայաստանը 19-րդ դարի առաջին կեսին:

Դասի պլան

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ՝ Արևելյան Հայաստանը 19-րդ դարի կեսին

ԱՌԱՐԿԱՆ՝ Հայոց պատմություն

ԴԱՍԱՐԱՆ՝ 11-ի լեզվաբանական

ԴԱՍԻ ՏԻՊԸ՝ Խառը համակցված

ՄԵԹՈԴՆԵՐ և ՀՆԱՐՆԵՐ ՝ Հարցադրման մեթոդ,Տ-աձև աղյուսակ ,

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐ՝ դասագիրք,քարտեզ,գրատախտակ

ԴԱՍԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 45ր.

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	ա)1. ակադեմիական՝աշակերտները պետք է իմանան արևելյան Հայաստանի վարչաքաղաքական իրավիճակը 2.Այսրկովկասում հայաբնակ րկրամասերը 3.Անդրկովկասում Ռուսաստանի նպատակները բ) սոցիալական՝Կարողանա ներկայացնել ռուսաստատանի հավակնությունները Անդրկովկասում .Բացատրի ռուսական զորքերի Երևանյան 1 և 2 արշավանքները և դրանց հետևանքնեևը .Ներկայացնի հայերի մասնակցությունը 1804-1813թթ ռուս-պարսկական պատերազմին : .Վերլուծի Գյուլիստանի հաշտության պայմանագիրը
ԴԱՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ	Ցույց տալ քաղաքական իրավիճակը Այսրկովկասում. .Ռուս-պարսկական պատերազմներԸ . հայերի ակնկալիքները Ռուսաստանից

ԴԱՍԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	Աշակերտը պետք է իմանա Արևելյան Հայաստանի վարչական բաժանումները,կառավարման համակարգը,սոցիալ-տնտեսական իրավիճակը: Վերլուծի1804_1813թթ.ռուս-պարսկական պատերազմի պատճառները Արժևորի հայերի մասնակցությունը պատերազմի հաղթական ավարտին Գնահատի Գյուլիստանի հաշտության պայմանագիրը:

Դասը իրականացվում է ԽԻԿ համակարգով

	Դասի ընթացքը
Կազմակերպական մաս 3 րոպե	-աշակերտների բացակայության հաշվառում- դասարանի ավագը ներկայացնում է բացակա աշակերտներին -դասի նպատակների ներկայացում – ուսուցիչը ներկայացնում է դասի նպատակներն ու խնդիրները

Խթանում 10 րոպե	Հարց – պատասխան: 1) Թվարկել Արևելյան Հայաստանի խանությունները,իմանա կառավարման ձևը 2) Ներկայացնել այս ժամանակի նշանավոր իշխանական տոհմերին ``մելիք Աղամալյաններ,Դավիթ և Դանիել եպիսկոպոսներին 3) Արևելյան Հայաստանի Որ տարածքներն անցան Ռուսաստանաին 1813թ.հոկտեմբերի 12-ին
Իմաստի ընկալում Կշռադատում 15 րոպե	ԻՆչու սկսվեց ռուս-պարսկական պատերազմը; Ինչ դերակատարում ունեցան հայերը պատերազմում Ինչ արդյունքներ և հետևանքներ ունեցավ ռուս-պարսկական պատերազմը հայերի համար:
Նոր դասի հաղորդում 15 րոպե	-Ներկայացնել Արևմտյան Հայաստանի վարչաքաղաքական իրավիճակը 19-րդ դ. սկզբին Ազգային և կրոնական հալածանքները -1806-1812թթ. ռու-թուրքական պատերազմը և հայերը -

Գնահատում և տնային աշխատանքի հանձնարարում 2 րոպե	4 աշակերտ 8, 2 աշակերտ 6
	Համեմատել Արևելյան և Արևմտյան Հայաստանը գտնել ընդհանրություններն ու տարբերությունները

Այս դասին նկատվեց թիրախային խմբի աշակերտների ակտիվություն, որոնք նախօրոք մտածել էին հարցեր և մասնակցություն էին ունենում դասապրոցեսին:

Ուսումնառության համար ընտրված վերջին թեման էր Արևմտյան Հայաստանը 19-րդ դարի առաջին կեսին:

Դասի պլան

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ՝ Արևմտյան Հայաստանը 19-րդ դարի սկզբին

ԱՌԱՐԿԱՆ՝ Հայոց պատմություն

ԴԱՍԱՐԱՆ՝ 11-րդ լեզվաբանական

ԴԱՍԻ ՏԻՊԸ՝ Խառը համակցված

ՄԵԹՈԴՆԵՐ և ՀՆԱՐՆԵՐ ՝ Մտագրոհ,Հարցաղրումների մեթոդ,բանավեճ,

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐ՝ դասագիրք,քարտեզ,գրատախտակ վենի դիագրամ

ԴԱՍԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 45ր

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	ա) ակադեմիական՝աշակերտները պետք է իմանան արևմտյան Հայաստանի վարչաքաղաքական իրավիճակը 2.Հայաշատ նահանգները՝՝առանձնացնել էրզրումը 3.Իմանա ովքեր էին կեսկեսները 4.Իմանա որքան հայ էր ապրում Օսմանյան թուրքիայի տարածքում բ) սոցիալական՝կարողանա ներքայացնել Արևմտյան Հայաստանի հայաբնակ նահանգները ըստ իրենց կարևորության .Վերհանի ազգային և կրոնական հալածանքների պատճառները .Գնահատի հայակական կիսաանկախ իշխանությունների դերը .Արժևորի 1806-1812թթ.ռուս-թուրքական պատերազմին հայերի մասնակցությունը .Մեկնաբանի Բուխարեստի պայմանագրի կետերը
ԴԱՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ	Համեմատելով հայաստանի երկու հատվածների սոցիալ-տնտեսական քաղաքական իրավիճակը ցույց տա Արևմտյան Հայաստանի գլխավոր խնդիրները: Ցույց տալ Ռուսաստանի և Թուրքիայի քաղաքականությունը Այսրկովկասում,որից մեծապես տուժում էր արևմտահայությունը

ԴԱՍԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	Իմանա 1806-1812 թթ ռուս-թուրքական պատերազմի պատճառը, սկիզբը, ավարտը:Ներկայացնի հայերի մասնակցությունը ռուս թուրքական պատերազմին:

Դասը իրականացվում է ԽԻԿ համակարգով	
Կազմակերպական մաս 3 րոպե	Դասի ընթացքը -աշակերտների բացակայության հաշվառում- դասարանի ավագը ներկայացնում է բացակա աշակերտներին -դասի նպատակների ներկայացում – ուսուցիչը ներկայացնում է դասի նպատակներն ու խնդիրները

Խթանում 10 րոպե	Հարց – պատասխան: 1) Ներկայացրեք Արևմտյան Հայաստանի վարչաժողովրդագրական պատկերը 19-րդ դ. սկզբին 2) Ինչ իրավիճակում էին թուրքահպատակ քրիստոնյաները 19-րդ դ սկզբին՝՝ազգային կրոնական հալածանքներ 3)Ներկայացրեք ռու-թուրքական պատերազմի սկիզբն ու ընթացքը և հետևանքները
Իմաստի ընկալում Կշռադատում 15 րոպե	Որն էր թուրքերի հայահալաշ քաղաքականության պատճառները Ինչու էին հայերը հակված դեպի ռուսները Կար արդյոք և ռուսներից և թուրքրից խուսափելու ճանապարհ

Նոր դասի հաղորդում 15 րոպե	-Սահիկաշարի կիրառություն -Ամփոփելով նախորդ 2 դասերը ներկայացնել Ռուսաստանի նոր քաղաքականությունը՝՝Հայաստանը որպես գաղութ Ռուսաստանի կազմում ընդգրկելու քաղաքականությունը: -
Գնահատում և տնային աշխատանքի հանձնարարում 2 րոպե	2 աշակերտ ստացան 8 և 3աշակերտ 7
	Ցույց տալ ռուս –պարսկական և ռուս-թուրքական պատերազմների արդյունքում հայկական տարածքներ գաղութացման փուլերը

Տվյալների մշակում և վերլուծում

Մանրամասն ուսումնասիրելով և հետազոտելով հարցաղրումների մեթոդը տեսա,որ այն շատ արդիական է:Այն նպաստեց թիրախային խմբում գտնվող աշակերտների ակտիվացմանը:

Նրանց բոլորի մոտ նկատվեց դրական տեղաշաժ:

Նախնական արդյունքներն էին՝

1.Վարդանյան Իզաբելլա-միջին գնահատական 6

2.Վարդանյան Հասմիկ- միջին գնահատական 6

3.Սարգսյան Սյուզաննա- միջին գնահատական 6

4.Պողոսյան Էլլա- միջին գնահատական 6

ՈՒսումնառությունն իրականացնելուց հետո՝

1.Վարդանյան Իզաբելլա-միջին գնահատականը 7

2.Վարդանյան Հասմիկ- միջին գնահատական 7

3.Սարգսյան Սյուզաննա- միջին գնահատական 7

4.Պողոսյան Էլլա- միջին գնահատական 7

Ամփոփում

Կրթության որակի ապահովումը կրթական համակարգի տարբեր աստիճաններում այսօր արդեն անմիջական կապ ունի նոր մեթդների ներգրավման հետ:

Կրթության կարևորությունը գիտակցելով պետք է հասկանանք,որ կրթության միջոցով կարող ենք հասնել հասարակական մտածողության,հոգևոր,բարոյական և մշակութային արժեքների զարգացման:

ՈՒսուցման գործընթացի արդյունավետությունը կախված է նրանից,թե որքանով է ուսուցիչը կոմպետենտ հարցադրումների կիրառման և այդ մակարդակում գիտելիքների կիրառման և այդ մակարդակում գիտելիքների փոխանցման , ժամանակի հետ համահունչ քայլելու հարցերում:

Մանկավարժական գործունեությունը մանկավարժից պահանջում է գիտելիքների և մասնագիտական կարողությունների անընդհատ ավելացում նոր մեթոդներով դասերի անցկացում:

Աշխատանքը լուրջ և մանրամասն հետազոտության արդյունք է, որի նպատակն էր քննարկել հարցադրումների մեթոդը դասի ընթացքում :

Հետազոտության արդյունքում պարզ եղավ, որ այս մեթոդը նպաստում է աշակերտների ակտիվացմանը դասապրոցեսին:

Գրականության ցանկ

1. Հովհաննիսյան Հ. և ուրիշներ, Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Երևան, 2004թ., 157 էջ:

2. Gose, M. (2009). When Socratic dialogue is flagging: questions and strategies for engaging students. J Coll Teach Learn. 57(1):45–49.

3. Chin, C (2007). Teacher questioning in science classrooms: what approaches stimulate productive thinking? J Res Sci Teach. 815–843

4.Համացանց՝ հղումներ

- https://www.vsu.am/grqer/2018/bprak/xukasyanasya.pdf
- https://kznakhimnadram.blogspot.com/p/blog-page_16.html
- http://www.mskh.am/sites/default/files/user/44/files/hartseri_kareworowtyowne.docx

Հավելված

Ձևավորող դասալսման ձևաթուղթ

Հյուրընկալվող ուսուցիչ Ս.Դավթյան Դպրոց՝Վաղարշապատի թիվ 10 ավագ դպրոց Դասարան՝ ՝10ընդ. Հյուրընկալող ուսուցիչ Վ.Ներսեսյան Ամսաթիվ՝ 20.10
Դասի կառուցվածքային բովանդակությունը ԹեմաՎանի թագավորությունը Սարդուրի 2 և նրա հաջորդների օրոք Նպատակներ ա) ակադեմիական՝ - իմանա արքաներին իրենց ժամանակագրական հաջորդականությամբ,նրանց կարևոր ձեռնարկումները և կարևոր իրադարձությունները,ցույց տա քարտեզի վրա Վանի թագավորության սահմանները բ) սոցիալական՝ - համեմատի Արգիշտի 1 և Սարդուրի 2 գործունեությունը՝ քարտեզագրման մեթոդով - գնահատի Վանի թագավորության դերը տարածաշրջանում և վերհանի անկման պատճառները Վերջնարդյունքներ Իմանա Վանի թագավորության արքաներին իրենց ժամանակագրության մեջ,արժևորի խաղացած դերը հայ ժողովրդի նհամաշխարհային պատմության մեջ : Սկզբնաղբյուրները վերլուծելով անի սեփական եզրահանգումը:

Դասի ուժեղ կողմերը, առանձնահատկությունները .Աշակերտների մեծամասնության ընդգրկվածությունը դասապրոցեսին .Ատլասներով աշխատելու հմտություն .Դասի անկցկացումը էլեկտրոնային դասարանում՝ օգտագործելով ՏՀՏ միջոցներ	Հարցեր, որոնք առաջացան դասալսման ժամանա Որոնք էին Վանի թագավորության նանկման պատճառները:

Եթե Դուք անցկացնեիք այս դասը , ինչպե՞ս կանեիք, ի՞նչը կփոխեիք: Ի՞նչ կթողեիք նույնը:

Դասը կանցկացնեի էլեկտրոնային տարբերակով ,նյութը լավ ամրապնդելու համար կօգտագործեի հարցադրումների մեթոդ

Ի՞նչ եք կարծում, աշակերտներն ի՞նչ ստացան / սովորեցին այս դասի ընթացքում /:

Դասը ուսանելի էր աշակերտները հիմնարար գիտելիքներ ստացան Վանի թագավորության վերաբերյալ:

Հասա՞վ արդյոք ուսուցիչը վերջնարդյունքներին: Ինչպե՞ս դա իմացաք:
Դասը ստացված էր որովհետև ուսուցիչը օգտագործելով էլեկտրոնային գրատախտակը հնարավորինս տեսանելի էր դեարձնում դասը տարբեր տեսանյութերի միջոցով և սովորողներն էին ցույց տալիս իրենց գիտելիքները ,կարողություններն ու հմտությունները օգտվելով համացանցի ընձեռած հնարավորություններից:
Ի՞նչ սովորեցիք / վերաիմաստավորեցիք այս դասալսման արդյունքնում /:
Համեմատելով ավանդական դասի հետ ՏՀՏ- ի կիրառմամբ դասը շատ ավելի արդյունավետ և ուսանելի էր:

Որևէ բան կկիրառե՞ք Ձեր դասին:

Հնարավորիս շատ կօգտագործեի ՏՀՏ մեթոդները դասն ավելիտեսանելի դարձնելու համար:

Հայաստանի քաղաքական իրավիճակը I դարի I կեսին: Տրդատ Արշակունու գահակալությունը:

Թեմայի դասավանդման մեթոդիկա

Եվրոպական կրթական համակարգի հետ ինտեգրման ուղի բռնած մեր հանրապետության կրթական համակարգի համար հրամայական անհրաժեշտություն է կրթա-մշակութային քաղաքականության ազգային դիմագծի պահպանումն ու խորացումը, քանզի միայն այդ դեպքում այն կարող է նպաստել պետության հետագա զարգացմանը և ազգային անվտանգության ապահովումը: Այդ առումով կարևոր դեր կարող է ունենալ ուսումնական հաստատությունում հումանիտար առարկաների, հատկապես Հայոց պատմության բովանդակության ու դասավանդման մեթոդների կատարելագործումն ու արդիականությունը:

Մեթոդիկան է, որ հնարավորություն է ընձեռում պատմական նյութը մատուցել համեմատությունների, պատճառահետևանքային կապերի բացահայտման միջոցով: Ըստ որում, այն առաջնահերթ նպատակ ունի նպաստել աշակերտության ու ուսանողության կողմից պատմության խոր, ամբողջական ընկալմանը, նրանց հայրենասիրական ոգով դաստիարակելուն:

Այս առումով կարևոր նշանակություն ունեն Հայոց պատմության առանձին ժամանակաշրջանների դասավանդման ուսումնամեթոդական խնդիրները: Կարևոր նշանակություն ունի հայ ժողովրդի պատմության հին շրջանի ուսումնասիրման, առանձին դեպքերի և անհատների

գործունեության բովանդակության վերահանումը և պարզաբանումը այժմյան տեսակետից և փորձել համեմատության մեջ դնել մեր այժմյան իրականության հետ:

I դարի պատմությունը դասավանդելիս անհրաժեշտ է կանգ առնել մի շարք հարցերի պարզաբանման վրա: Կարևոր նշանակություն ունի աշակերտներին բացատրել Ք.ա I դարի վերջին տեղի ունեցած իրադարձությունները, դրանց պատճառահետևանքային կապերը մեր թվարկության I դարի, իսկ ավելի կոնկրետ I դարի I կեսի իրադարձությունների հետ: Անհրաժեշտ է աշակերտներին բացատրել պետականության դերը, դրա գաղափարաբանական նշանակությունը ժողովրդի համար: Այս ամենը հասկանալուց հետո աշակերտները կկարողանան ավելի լիարժեք գաղափար կազմել I դարի Հայաստանի պատմության վերաբերյալ:

Թեմայի լիարժեք ըմբռնման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի 2թ.-ի հերոսական ապստամբության պարզաբանման ընթացքը, հայ ժողովրդի հերոսական պայքարը արտաքին ուժի՝ տվյալ դեպքում Հռոմեական կայսրության դեմ, որը չնայած ավարտվեց պարտությամբ, բայց ունեցավ որոշակի հետևանքներ: Բացատրել այն միտքը, որ չնայած անհաջողություններին՝ հայ ժողովուրդը հետևողականորեն պայքարում էր անկախության վերականգնաման համար, երբեմն ոչնչացնելով Հռոմի դրածո թագավորներին, երբեմն էլ գնալով որոշակի զիջումների:

Դասավանդման ընթացքում պետք է ուշադրություն դարձնել Հայաստանի նկատմամբ տվյալ ժամանակաշրջանում տարածաշրջանում հզոր տերությունների՝ Հռոմի և Պարթևստանի վարած ագրեսիվ քաղաքականությանը: Եթե Հռոմը ձգտում էր Հայաստանում օտար երկրների արքայատոհմերի ներկայացուցիչներին թագավոր դարձնելով երկիրը պահել իր ազդեցության շրջանակներում և հակառակորդ Պարթևստանի

նկատմամբ այդպես ունենալ առավելություն, ապա Պարթևստանը ձգտելով վերականգնել Աքեմենյանների աշխարհակալությունը, փորձում էր Հայաստանում հաստատել Արշակունիների իշխանությունը: Պետք է բացատրել աշակերտներին, որ պատմական գրեթե բոլոր ժամանակներում, ինչպես մեր օրերում, այս տարածաշրջանում բախվել են մեծ պետությունների շահերը և հաճախ Հայաստանի շահը զոհ է գնացել այդ տերությունների քաղաքականությանը: Այս միտքը պարզաբանելու համար կարող են օրինակներ բերել ավելի ուշ շրջանի դեպքերից (387թ.-ի Հայաստանի բաժանումը Հռոմի և Պարսկաստանի մեջ, նորագույն շրջանում հայերի մեծ ողբերգությունը՝ Մեծ եղեռնը և այլն):

Թեմայի դասավանդման համար կարևոր նշանակություն ունի բացատրել անկախության վերականգնման և ժառանգական թագավորական իշխանության ստեղծման փորձերը: Բացատրել, թե ինչպես հայ ավագանին գլխավորում էր ժողովրդական զանգվածների պայքարը: Թեմայի դասավանդումն իրականացնելիս հարկավոր է աշակերտների ուշադրությունը գրավել ներքաղաքական պայքարի ծանր հետևանքի վրա պետության համար (դա կարելի է հիմնավորել Պարթևստանի օրինակով) և բարձրացնել կենտրոնական ամուր իշխանության նշանակությունը: Բացատրել, թե ինչու հայ ավագանին և ժողովուրդը միահամուռ կերպով պաշտպանեցին Պարթևստանի թագավորի փորձը՝ Հայաստանում հաստատել Արշակունիների դինաստիայի իշխանությունը՝ ի դեմս Տրդատ Առաջինի:

Թեմայի դասավանդման համար կարևոր նշանակություն ունի պարզաբանել 10-ամյա պատերազմի ընթացքը, նպատակները, դրա արդյունքները և ունեցած նշանակությունը: Չնայած տեղեկությունների սղությանը՝ փորձել ներկայացնել Տրդատին որպես թագավոր, բացատրել նրա գործունեությունը:

Թեմայի դասավանդումն ամբողջացնելու համար անհրաժեշտ է ամրապնդել այն գաղափարը, որ համազգային շահը, անկախության վերականգնումը և պահպանումը վեր է ամեն տեսակի անձնական շահերից և երկրի առաջ ծառացած խնդիրները կարելի է լուծել միայն միասնական ջանքերի գնով և հասնել անկախ պետականության գերիզորացման և զարգացման:

Աշակերտների մոտ արժեքային համակարգի ձևավորումը Հայոց պատմության դասերին

Նպատակ ունենալով աշակերտների և երիտասարդության շրջանում բարձրացնել պատասխանատվության զգացումը հայրենի երկրի և բանակի դերի ու նշանակության մասին, կարևորելով ու արժևորելով ազգ-բանակ և պետություն-հասարակություն կոնցեպտները, փորձենք անցյալի հերոսական օրինակներով ցույց տալ դրանց կարևորությունը և արդիականությունը մեր օրերում:

Հայկական լեռնաշխարհում և հարակից տարածաշրջաններում պատմական տարբեր ժամանակահատվածներում իրադարձությունների կտրուկ փոփոխությունների արդյունքում արժևորվում է բանակի դերն ու նշանակությունը : Բանակը եղել և մնում է պետական կառավարման համակարգի բաղկացուցիչ մասը: Դրանով էլ պայմանավորված ՝ անհրաժեշտ է եղել առանձնահատուկ վերաբերմունք ցուցաբերել զինված ուժերի նկատմամբ: Հայաստանում բանակը չի դիտարկվել որպես զուտ ռազմական «մեքենա», այլ եղել է հասարակության անքակտելի մաս՝

իրականացնելով պետության պաշտպանության և անվտանգության ապահովման գործառույթ:

Հայոց բանակը մեր անկախության և անվտանգության առանցքն է եղել՝ ապահովելով հասարակության սերն ու համակրանքը:Այս միտքը հիմնավորվում է այն փաստով, որ ժողովուրդը խորը հարգանք է տածել բանակի նկատմամբ, օրհասական պահերին ազգովի կանգնել բանակի կողքին:Մեր պատմության մեջ բազմաթիվ են դեպքերը,երբ պատերազմի ժամանակ բանակը համալրվել է ժողովրդական աշխարհազորով:

Հայաստանի համար բանակի նշանակությունը ավելի կարևորվում է նրանով, որ բարդ տարածաշրջանային հարաբերություններում մենք մեր պետականությունը և անկախությունը պահպանելու համար ստիպված ենք եղել պայքարել տարբեր աշխարհակալությունների և կենտրոնների դեմ: Հարկ է նշել, որ հայկական բանակի ուսուցման և դաստիարակության հիմքում ընկած էր գաղափարաբարոյական և ֆիզիկական դաստիարակությունը, քանի որ արտաքին ներխուժման վտանգը պահանջում էր համախմբվածություն և ամուր պաշտպանություն: Կարևոր է նշել, որ հայկական ազգային ու պետական դրվածքում ուրույն դեր է ունեցել զինվորական դաստիարակությունը, տիրասիրությունը և հայրենասիրությունը:

Բանակի հաջողության գրավականը նաև ճիշտ ռազմավարության և մարտավարության կիրառումն է :

Խեթական աղբյուրները վկայում են, թե ինչպես Հայասայի Աննիաս թագավորը խելացի մարտավարության (գիշերային մարտերի) շնորհիվ տևական ժամանակ կարողացել է պայքարել խեթական թագավորների դեմ և դուրս քշել երկրից: Վանի թագավորության շրջանում ռազմարվեստը ավելի կատարելագործվեց.կռիվների ժամանակ լայնորեն օգտագործվում էր տեղանքի նպաստավոր դիրքը, նախապես ստեղծված հենակետերը, զորատեսակների հարձակման հերթականությունը և այլն: Հետագայում հայկական բանակը ավելի է կատարելագործվում.Արտաշեսյան ժամանակահատվածում կատարվեցին ռազմական բարեփոխումներ, որոնք

ապահովեցին հայկական պետության անվտանգությունն ու տարածքային ընդարձակումը (Տիգրան Մեծի աշխարհակալությունը):

Հայոց բանակին անդրադառնալիս հարկ է նշել, որ այս ժամանակաշրջանում ունեցել է կառուցվածքի համակարգված և ֆունկցիոնալ բաժանում՝ գունդ, գումարտակ, վաշտ, երբեմն նաև հարյուրյակ, բանակային կարգուկանոն,զինվորների նվիրվածություն իրենց հրամանատարներին:

Հայկական բանակն իր մարտունակությամբ հռչակված էր Հին աշխարհում: Նույնիսկ պետականության և անկախության կորստից հետո պահպանեց իր դերն ու նշանակությունը:

Պետականության բացակայության պայմաններում հայոց զորական փառքը պահպանել ու ավելի է բարձրացրել հայոց այրուձին, որի վերաբերյալ կան բազմաթիվ հիշատակություններ հայ և օտար հեղինակների աշխատություններում:Որպես օրինակ կարելի է հիշատակել Գավգամելայի ճակատամարտը, որտեղ հայոց այրուձին փախուստի մատնեց Ալեքսանդ Մակեդոնացու ձախ թևին և հայտնվեց Մակեդոնացու թիկունքում: Մյուս լավագույն օրինակը Արածանիի ճակատամարտն էր, որտեղ Տիգրան Մեծը միայն հեծելազորով ջախջախիչ պարտության մատնեց հռոմեացիներին: Պահպանվել են տեղեկություններ, որ հայոց այրուձիու ծառայություններից լայնորեն օգտվել են Սասանյան Պարսկաստանը և Բյուզանդիան՝ շռայլորեն վարձատրելով հայ զինվորականությանը ծառայության համար: Հայոց այրուձիի հզորության վկայություն է այն, որ պարսիկները,վախենալով այրուձիի մարտական ուժից, կրճատեցին հայկական հեծելազորի թիվը՝ դարձնելով այն 30000:

Հայոց այրուձիի նշանակությունն է վկայում նաև այն փաստը, որ 652թ հայ-արաբական պայմանագրով արաբները համաձայնեցին, որ ստեղծվի 150000 հայկական այրուձի, ընդ որում նրա պահելու ծախսերը հոգում էին արաբները: Սակայն զուտ թվական տվյալներ եթե հաշվի առնենք, ապա մեզ հասած տեղեկություններով հայկական այրուձին առավել թվաքանակ ունեցել է Պապ թագավորի ժամանակ՝ 90000:

Հայոց այրուձիի հերթական ռազմական փայլատակումը արձանագրվեց 1071թ Մանազկերտի ճակատամարտից հետո,երբ հայկական այրուձին գնաց Արևելք: Թյուրքական ներխուժման դեմ պայքարող Եգիպտոսի Ֆաթիմյան խալիֆների կոչով հայոց այրուձին կարգ ու կանոն հաստատեց երկրում՝ գրավելով Կահիրեն, Ալեքսանդրիան , Վերին Եգիպտոսում ճնշելով բեդվինների ապստամբությունը:

Հայկական զինուժը նոր մակարդակի հասավ Կիլիկիայի հայկական պետականության ժամանակ: Հայկական նոր պետությունը մշտապես պատերազմների մեջ էր, ուստի կարիք ուներ մշտական կանոնավոր և ուժեղ բանակի:Այդ նպատակով բանակի կազմակերպումը սկսվեց հենց Ռուբինյան առաջին իշխանների օրոք:Խաղաղ ժամանակ պահվում էր 30000 զորք, որը պատերազմի ժամանակ դառնում էր 60000: Կիլիկյան բանակի առանձնահատկությունն այն էր, որ զինված ուժերում կարևոր դեր ուներ ռազմական նավատորմը, առանց որի Կիլիկիայի ծովեզրյա շրջանների պաշտպանությունը արդյունավետ չէր լինի: Հարկ է նշել, որ ռազմական նավատորմն ապահովում էր նաև ծովային առևտրի ապահովությունը:

Կիլիկիայի հայկական պետականության անկումից հետո հայկական զինուժի ռազմական տաղանդը փայլատակեց արդեն օտար բանակների կազմում: Մասնավորապես, տեղեկություններ կան, որ հայկական այրուձին մասնակցություն է ունեցել 1410թ. Գրյունվալդի հայտնի ճակատամարտին, իսկ արդեն 17-18-րդ դարերում հայերը Հնդկաստանում ակտիվ պայքար են մղում անգլիական տիրապետության հաստատման դեմ:

Հարուստ ռազմական ավանդ ունեցեղ հայկական զինուժի հերթական փայլատակումը եղավ 1720-ական թվականներին, երբ Դավիթ Բեկի գլխավորությամբ ծավալվեց Սյունիքում ծավալվեց ազգային-ազատագրական պայքար և հայկական փոքրաթիվ ուժերը հերոսական հաղթանակներ տարան պարսկական ու թուրքական մեծաքանակ ուժերի նկատմամբ: Իսկ արդեն 19-րդ դարի վերջերին հայկական ռազմական տաղանդը փայլատակեց ոչ կանոնավոր բանակի տեսքով ծավալված ֆիդայական պայքարի ժամանակ:

Դարավոր ընդմիջումից հետո, երբ 1918թ վերականգնվեց հայկական պետականությունը, դրա վերակերտման ու օտար հրոսակների հարձակումներից պաշտպանության պատվավոր առաքելությունը ստանձնեց նորաստեղծ հայկական բանակը և սպայական կազմը, որոնց ռազմական տաղանդը փայլատակեց թուրքական հրոսակների դեմ Սարդարապատում, Բաշ Ապարանում և Ղարաքիլիսայում տարած հերոսական հաղթանակներում: Մեր օրերում արդեն հայկական բանակը ծնվեց մեզ պարտադրված Արցախյան պատերազմի ճակատամարտերի բոցերում ու փայլուն կերպով իրականացրեց մեր պատմական տարածքների մի մասի ազատագրումը և հաստատուն կերպով կանգնած է հայկական պետականությունը պաշտպանելու իր առաքելության իրականացման ճանապարհին:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ պետք է փաստել, որ հարկավոր է սովորողների մոտ որպես արժեհամակարգ ձևավորել սերը, հարգանքը դեպի բանակը, պետությունը, պատրաստ լինել առաջին իսկ անհրաժեշտության դեպքում արձագանքելու կանչին , պատրաստ լինել չխնայել ոչինչ հանուն այդ բարձր արժեքների պահպանման ու զարգացման:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ.ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՆ N 5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ավարտական հետազոտական աշխատան

Թեմա՝ Տրբերակված ուսուցման ազդեցությունը՝ աշակերտների անուշադրության վերականգնման գործում:

Մասնակից՝ Վ.Մ.Ղազարյան

Դպրոց՝ Լուսագյուղի միջնակարգ դպրոց /ՊՈԱԿ/

Վերապատրաստող՝ Կ.Գ.Ավետիսյան

Վաղարշապատ 2021թ.

Նախաբան

<< Միայն այն ուսուցիչն է հմուտ ով լավ գիտի,թէ ինչ է պետք իմանան իր աշակերտները և ինչ ճանա-պարհով է պետք հասնել այդ գիտելիքներին>>:

/Վ.Ա.Սախումլինսկի/

Հետազոտությունները ցույց են տվել,ու բոլոր սովորողների կարիքները բավարարելու ամենաարդյունավետ ուղիներից մեկն՝ուսուցումն տարբերակելն է:

Տարբերակվածուսուցման ռազմավարության նպատակն է ընդհանուր կրթության,բովանդակության յուրացման գործընթացում յուրաքանչյուր աշակերտի համար ապահովել պայմաններ՝նրա ընդունակությունների,հակումների,ճանաչողական պահանջմունք-ների բավարարման ու մաքսիմալ զարգացման համար:

Տարբերակված ուսուցումը թույլ է տալիս ուսումնական պրոցեսը կազմակերպել՝հաշվի առնելով անձի անհատական առանձնահատկությունները:

Այն ապահովում է բոլոր աշակերտների կողմից կրթության բովանդակության յուրացումը: Այդ տիպի կրթության կազմակերպման դեպքում սովորողների յուրաքանչյուր խումբ,որոնք ունեն նման անհատական առանձնահատկություններ,գնում են իրենց ճանապարհով:

Տարբերակված ուսուցման պայմաններում,ուսուցման պչոցեսը մաքսիմալ ձևով մոտեցվում է երեխաների ճանաչողական պահանջմունքներին և անհատական առանձնահատկություններին :

Տարբերակումը բնորոշվում է սովորողների այնպիսի խմբերի ստեղծումով,որտեղգործունեության նպատակը,բովանդակությունը,մեթոդները,ձևերն ու արդյունքները տարբերվում են:

Տարբերակված ուսուցումն իրականացվում է 3 հիմնական փուլերով՝

1. Ճանաչել յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունները
2. Խմբավորել սովորողների ըստ իրենց անհատական առանձնահատկությունների

3. Տարբերակել յուրաքանչյուր խմբի ուսումնական գործընթացը:

Ընտրելեմ<<Տարբերակվածուսուցմանառավելավարությունների կիրառումը՝ուսումնառությանխթանմանհամար>>թեման,քանիորունեմանհանգստացնողխնդիրևայսհետազոտականաշխատանքիմիջոցովկփորձեմլուծելխնդիրըևավելիբարձրացնելդպրոցիսևհատկապեստվյալխնդրահարուցդասարանիուսուցմանարդյունավետությունը:

Խնդիրը հետևյալն է.

Ութերորդ դասարանում աշակերտների մի մասի մոտ նկատվում է դասի նկատմամբ անուշադրություն,ցրվածություն,հոգնածություն,անտարբերություն,ոչ կենտրոնացվածություն, որը մեծապես մտահոգում է ինձ:

Տվյալ դասարանում հետազոտական աշխատանք անցկացնելով կփորձեմ բացահայտել խնդրի խորությունը,բարդությունները և վեր հանելով դա,փորձել լուծում տալ այն բացթողումները,որը պատճառ է դարձել աշակերտների մոտ տվյալ խնդրի ի հայտ գալուն:

Որոշ դիտարկումներ վերլուծություններ,մանկավարժական խմբի հետ զրույցներ անցկացնելով՝ հանգել եմ այն մտքին,որ դասարանում պետք է հաճախակի կիրառել նոր,հետաքրքիր,տարբերակվող,մոտիվացնող մեթոդներ,նոր ռազմավարություններ. Այսինքն ուսուցումը լինի անհատական և տարբերակված:

Կարծում եմ այս հետազոտական աշխատանքը տվյալ խնդրահարույց դասարանում կիրառելուց հետո,կունենամ դրական փոփոխություններ և առաջընթաց տվյալ աշակերտների մոտ:

<< Աշակերտներին պետք է սիրով գրավել և երբեմն՝ զիջումով նվաճել>>

/ Ն. Աղբալյան /

Հետազոտական համատեքստ

Ժամանակակից դասի արդյունավետության բարձրացումը ենթադրում է մի շարք ուղիների գործադրում:

Նոր դարը,նոր հազարամյակը մարդկության առջև նոր խնդիրներ են դնում,որոնք հնարավոր կլինի լուծել աճող սերնդին որակապես նոր կրթություն տալու դեպքում: Խոսքը ոչ միայն կրթության ոլորտում ,քանակական փոփոխությունների,այսինքն՝սովոչողներին տրվող գիտելիքների ծավալը մեծացնելու,այլ նախ և առաջ որակական փոփոխությունների մասին է:

Գրտելիքից բացի սովորողին ահրաժեշտ է նաև դրանք կիրառելու իրական կարողություններ և հմտություններ՝ընդգրկելով նրան ճանաչողական գործունեության մեջ,ստեղծագործական միտք ձևավորել,ուղղորդել նրա ներքին ուժերը ու հնարավորությունները:

Տարբերակված ուսուցման մասին իր կարծիքն է հայտնել ամերիկացի մանկավարժ Քորոլ ԷնԹոմլինոնը: Նա տարբերակված ուսուցումը բաժանել է 3 տեսակների .

.Ըստ բովանդակության դասակարգում

1. Ըստ գործողությունների
2. Ըստ վերջնարդյունքների
3. Ըստ միջավայրի

Տարբերակված ուսուցման իրականացնելիս հաշվի է առնվում սովորողի՝

1. Պատրաստակամությունը կամ կարողությունները
2. Հետաքրքրությունների շրջանակը
3. Ուսումնառության ոճը

Այս անենը կիրառելու արդյունքում բարձրանում է

1. Սովորողի շարունակական զարգացումը
2. Սովորողի մոտիվացիայի դրսևորումը
3. Արդյունավետությունը

Գերմանացի մանկավարժ,փիլիսոփա,գրող,հասարակական և քաղաքական գործիչ Ադոլֆ Դիստերվեգը ականավոր դեմոկրատ-մանկավարժներից մեկն է, << Գերմանացի ուսուցիչների ուսուցիչը>>: Նրա բազմամայա հասարակական-մանկավարժական գործունեությունը ցայտուն կերպով արտահայտված առաջադիմական բնույթ ուներ: Դիստերվեգը պայքարել է ուսուցման դոգմատիզմի դեմ,նա ուսուցման և դաստիարակության խնդիրները լուծում էր որպես նորարար և ձգտում էր իր ժամանակի դիդակտիկան ազատել ձևականության տարրերից: Նա ձգտել է ժամանակակից կրթությունը վերակառուցել առաջավոր գազափարների հիմունքներով,ժողովրդական ուսուցիչներին զինել գիտելիքներով և մանկավարժական վարպետությամբ ,պաշտպանել նրանց քաղաքացիական իրավունքները:

Տարբերակված ուսուցման մեթոդների և հատկապես ակտիվ մեթոդի մասին իրենց կարծիքներն,օրինակներն և փորձարկումներն են ներկայացրելն Է.Ս.Վիգոտսկին, Վ.Ն.ԿրուգլիկովըԳ.Աբրամովան,Յու.Ս.Հարությունովը,Ս.Խաչատրյանը,Ս.Ս.Էգորովը,Վ.Մ.Եֆրիմովը,Վ.Ա.Պլատովը, Ա.Մ.Սոմոլկինը և ուրիշներ:

Ակտիվ ուսուցման մեթոդներ նշանակում է ուսուցում գործունեությամ մեջ : Ուսուցմանը հետևում է զարգացումը,իսկ անձը զարգանում էգործունեության մեջ: Մեթոդների տարածման գործում մեծ դեր ունեցավ նրանց գործնական կիրառումը՝խաղային մեթոդները,որպես ակտիվ ուսուցման հիմք:

Այսպիսով տաբեր մեթոդիստների,մանկավարժների կիրառական փորձը ցույց է տվել որ տարբերակված ուսուցումն ունի իր արդյունավետության բարձր սանդղակը: Ամենակարևորը . նման ուսուցման միջոցով աշակերտի մոտ ձևավորվում է ինքնքվստահություն ,ավելի ինքնուրույն և կայուն է դառնում, էլ ավելի վստահ է լինում սեփական գիտելիքի վրա,կարողանում է կարծիքներ և տեսակետներ արտահայտել:

Տարբերակված ուսուցումն իսկապես կարևոր ռազմավարություն ունի դպրոցի կրթական գործում:

Գործնական համատեքստ

<<Մենք բոլորս հանճարներ ենք,բայց եթե դուք պետք է

ձկան մասին դատեք նրա ծառ բարձրանալու կար-

ողությամբ,ապա նա ողջ կյանքը կապրի՝իրեն

ամենավերջին անհաջողակը համարելով>>:

/ Ալբերտ Էյնշտեյն/

Ուսուցչի մասնագիտությունը պատվավոր է և հրապուրիչ՝միաժամանակ այն պատաս – խանատու մասնագիտություններից է :Նրա դերն ու նշանակությունը միշտ էլ մեծ է եղել հասարակության զարգացման համար մղվող ընդհանուր պայքարում : Հենց այդ պայքարում էլ առանձնահատուկ դեր նունի պատմության ուսուցիչը: Նոր մարդու դաստիարակման գործում նրան հատկացված է գլխավոր տեղերից մեկը և նրա վրա դրված են մեծ պարտականություններ :Պատմության դասընթացի յուրացումը կախված է ուսուցչից,մեթոդներից,ուսուցման կազմակերպման ձևերից ,մեթոդներից,դպրոցականների հետ ունեցած փոխհարաբերություններից:

Նախ ՝ ընդհանրապես մանկավարժական աշխատանքի համար անհրաժեշտ են որոշակի տվյալներ. Սեր երեխաների նկատմամբ,մտքի և խոսքի աշխուժություն, մտածողության,տրամաբանության ճկունություն,պահանջկոտություն,որոնք պետք է զուգակցվեն սովորողների նկատմամաբ մեղմ վերաբերմունքին,նրանց ներթաքուն մտքերը,հետաքրքրությունները,ցանկությունները հասկանալու կարողություն:

<< Ուսուցչի աշխատանքը սրտի և նյարդերի աշխատանք է, -գրում է Սուխոմլինսկին,- հսկայական հոգևոր ուժերի ամենօրյա,ամենժամյա ծախսում>>:*

Կարևոր նշանակություն ունի ուսուցչի անձնական օրինակը, դա այն անշեջ հուրն է, որ ջերմացնում, բոցավառում է աշակերտի հետաքրքրությունը,մանավանդ երբ խոսքի և գործի ներդաշնակություն կա,չէ որ մարդու բնավորությունը չի ձևավորվում միանգամից: Դպրոցում դաստիարակաում ենք ամենից առաջ ոչ թէ այս կամ այն մեթոդով ,այլ սեփական անձի ,անհատականության ազդեցությամբ:

*Վ.Ա.Սոխոմլինսկի <<Սիրտս նվիրում եմ երեխաներին>> Եր.<<լույս>>1977 էջ 35

Սակայն այդ ընդհանուր տվյալները բավական չեն պատմության ուսուցիչ դառնալու համար: Պատմության ուսուցիչը պետք է զինված լինի պատմական գիտության խոր իմացությամբ: Պատմության ուսուցիչը պետք է խորությամբ իմանա հոգեբանություն և ընդհանուր մանկավարժություն,որոշակի գիտելիքներ ունենա միջնակարգ դպրոցում դասավանդվող հարակից այլ առարկաներից: Նա լավ պետք է հասկանա և միջազգային կյանքը, և երկրի ներքին կյանքը,պետք է լինի մեծ հայրենասեր:

Միջնակարգ դպրոցը միշտ էլ կարիք ունի լավ ուսուցիչ-դաստիարակողների, մանկավարժական գործի վարպետների,մանկավարժի աշխատանքը սիրողների: Պետք է միշտ հիշել,որ մեծ չափով պատմության ուսուցչից է կախված մեր երկրում երիտասարդության շրջանում կուռ աշխարհայացքի և բարոյականության զարգացման մակարդակը:

Ժամանակակից դասի արդյունավետության բարձրացումը ենթադրում է մի շարք ուղիների գործադրում:

Առաջին ուղին,որ շատ կարևոր է,ուսուցչի պրոֆեսիոնալ պատրաստվածությունն է: Ուսուցիչը պետք է սիրի իր մասնագիտությունը,սիրի երեխաներին: Լիարժեք տիրապետի այն առարկային ,որը դասավանդում է: Ունենա մեթոդական,հոգեբանական,հարուստ գիտելիքներ,լինի համակողմանի զարգացած,ունենա լայն մտահորիզոն: օժտված լինի բարձր բարոյական որակներով:Իր մեջ մարմնավորի իսկական ուսուցչի կերպարը:

Երկրորդ ուղին դասի նպատակների,խնդիրների ճիշտ որոշումն է :

Երրորդ ուղին դասի ընթացքում սովորողների գործունեության բարձրացումն է : Այստեղ զարգացվում է սովորողի ճանաչողական , ստողցագործական ընդունակություններն ու կարողությունները: Հարկավոր է հասնել նրան,որ սովորողները և դասի ընթացքում , և դասից դուրս կարողանան կիրառել իրենց ձոռք բերածգիտելիքները,դրանց մեջ տեսնեն գլխավորը,առանձնացնեն հիմնականը: Դասի ընթացքում և ուսուցիչը, և աշակերտը պետք է հանդես գան որոնողի դերում:

Չորրորդ ուղին ուսուցման կազմակերպող դիդակտիկական նոր համակարգերի խելացիորեն գործադրումն է:

Դա նշանակում է իմանալ, թէ դասի որ փուլում կիրառել պրոբլեմային,ծրագրավորված կամ անհատականացված ուսուցման տարրերը:

Հինգերորդ ուղին աշակերտների անհատական առանձնահատկությունների ճանաչումն ու դրանց հաշվի առնումն է:

Վեցերորդ ուղին դասի ընթացքում դիտազննական պարագաների,ուսուցման տեխնիկական միջոցների ճիշտ,ուղեղի օգտագործումն է:

Դասի արդյունավետության բարձրացման միջոցներից են մեթոդները: Ուսուցման մեթոդները,փոխներգործուն գործընթաց է ուսուցչի և աշակերտի միջև,ինչի արդյունքում տեղի է ունենում գիտելիքի,հմտությունների և կարողությունների փոխանցում ու յուրացում՝նախատեսված ուսումնառության բովանդակությամբ: Յուրաքանչյուր ուսուցիչ դասարան մտնելուց առաջ անպայման իր առջև դնում է երկու կարևոր հարց. << Որն է կրթության նպատակը, և ինչ պետք է սովորեցնի ինքն իր աշակերտներին>>: Ուսումնական գործընթացի հաջող իրականացման համար ուսուցչին անհրաժեշտ է տարբեր մեթոդների իմացություն: Սակայն դա դեռևս բավարար չէ արդյունավետ ուսուցում իրականացնելու համար: Որքան էլ ուսուցիչը ազատ է մեթոդների ընտրության հարցում,սակայն այդ գործողությունը չի կարող կամայական բնույթ կրել: Այդ խնդրի իրագործման հաջողությունը պայմանավորնած է մի շարք գործոներով:

1. Ուսուցման նպատակը,խնդիրները
2. Բովանդակությունը
3. Նյութի քանակը և բարդությունը
4. Սովորողների տարիքային առանձնահատկությունները
5. Սովորողի պատրաստվածության մակարդակը
6. Ուսումնական ժամանակը
7. Ուսուցչի պատրաստվածության մակարդակը

Տարբերակված ուսուցման արդյունավետությանը բարձրացնող ուսուցման կազմակերպման ձևերից են՝համագործաքցային ուսուցումը,խմբային աշխատանքը,զույգերով աշխատանքը, անհատական աշխատանքը:

Այս հետազոտական աշխատանքը անցկացնում եմ 8-րդ դասարանում,Սեպտեմբերի 27-ից Հոկտեմբերի 8-ը,քանի որ այստեղ ունեմ խնդիր, և կփորձեմ այն հաղթահարել: Խնդիրը հետևյալն է.Դասի ընթացքում՝ ակտիվ քննարկումների,հարց պատասխանների, ինչպես նաև դասապատրաստվածության,տնային առաջադրանքները կատարելու մեջ թերանում են Սամվելը,Կարենը,Լուսինեն և Ռոստամը: Նրանք դասի ընթացքում շատ անտարբեր և անուշադիր են, ցրված,հոգնած,ոչ կենտրոնացված, մի խոսքով կարծես դասին ներկա չլինեն:

Այս խնդիրը հաղթահարելունպատակով ընտրելեմ<<Տրբերակված ուսուցման ազդեցությունը՝ աշակերտների անուշադրությանը վերականգնման գործում>>թեման , և այն լիարժեք կիրառելով՝ կփորձեմ հասնել նպատակիս:

Աշակերտներիս մոտ այս անտարբեր վիճակն վերացնելու և խնդիրն հաղթահարելու միակ ճանապարհը տեսնում եմ դասավանդման,դասի մատուցման,հարցման ընթացքը ավելի հետաքրքիր,գունագեղ,մոտիվացնող դարձնելու մեջ:

Տարբերակված ուսուցումն լիարժեք հնարավորություն է տալիս կիրառել նոր մեթոդներ, հնարներ,որ խթանում է դասի արդյունավետությանը: Մեթդները բազմազան են և հետաքրքիր, սակայն ուսուցչից պահանջվում է մեծ հմտություն, որպեսզի յուրաքանչյուր դասի համար ընտրի ճիշտ և օգտավետ մեթոդ: Երբեմն սխալ ընտրված մեթոդները,շատ ավելին խանգարում են դասապրոցեսին,քան օգնում. Հետևաբար ուսուցչի մանկավարժական հմտությունը և դասին նախնական պատրաստվելն շատ կարևոր է:

Նախ առաջինը դասը հետաքրքիր անցկացնելու համար պետք է այն վարել ակտի մեթոդով: Ակտիվ մեթոդը բավականին բարձրացնում է ուսուցման արդյունավետությունը,այն չափվում է ոչ միայան և ոչ այնքան աշակերտի յուրացրած գիտելիքներով,որքան նրա ձեռք բերած կարողություններով՝շետը դնելով արդյունքի վրա,այսինքն՝ ի՞նչ կարող է նա անել:

Այս խնդիրը լուծելի է դառնում,երբ ուսուցման ընթացքում վերաբաշխվում են հիմնական արժեքները.

. Ուսումնառության ընթացքում աշակերտը պասիվ ընկալողից վերածվում է ակտիվ և գործուն մասնակից:

. Ուսուցիչ հրաժարվում է սովորեցնողի,վերահսկողի,խրատողի իր դերից և դառնում էայդ գերծընթացը կազմակերպող,խորհրդատու,և որպես գործընկեր՝ աշակերտի հետ մասնակցում է որոնողական աշխատանքներին:

Գիտության զարգացումը մեզ լավ հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես է տեղի ունենում սովորելուգործընթացը: Դիտարկենք այն: Երբ արտաքին աշխարհից տեղեկատվություն ենք ստանում,այն սկզբում առնչվում է մեր կարճաժամկետ կամ աշխատանքային հիշողությանը:Որպեսզի կարողանանք արտաքին աշխարհից տեղեկություն ստանալ,մեզ պետք է ուշադրության կենտրոնացում:Ուշադրությունը կարևոր է ոչ միայն ուսուցման համար,այլև այսօր համարվում է մարդու կյանքի կարևորագույն ռեսուրսը: Բիզնես ընկերությունները վաղուց են հասկացել,որ մարդու վրա ազդելու համար առաջնայինը նրա ուշադրությունը գրավելն է:Եթե կարողանաք մարդու ուշադրությունը գրավել,ապա կարող եք տիրանալ նրա ժամանակին,փողերին ու ազդել նրա վրա:

Պատահական չէ,որ Նոբելյան մրցանակի դափնեկիր Հերբերտ Սայմոնը շրջանառության մեջ է դրել <<ուշադրության տնտեսություն>>արտահայտությունը:Ժամանակակից կրթության մեծագույն խնդիրներից մեկն այն է , որ աշակերտների ուշադրությունը գրավված է տարբեր բիզնես ինդուստրիաների,գործնեության տեսակների կողմից:Եվ այդ մրցակցության մեջ կրթությունը պարտվողի դերում է :Աշակերտներին բավականաչափ զբաղեցնում են նաև սոցիալական ցանցերը :Մի խոսքով՝ սովորելու ժամանակ շատ քիչ է մնում: Որպեսզի սովորելու գործընթացը հնարավոր լինի , կրթության համակարգը պետք է փորձի գրավել աշակերտների ուշադրությունը:Այսպիսով՝ սովորելը հնարավոր դարձնելու առաջին քայլը ուշադրության կենտրոնացումն է:Մանագետները խորհուրդ են տալիս նոր նյութը սովորեցնել կապակցված,օգտագործել գծապատկերներ,պատմություններ,նկարներ, որպեսզի աշակերտները կարողանան լավ յուրացնել նյութը: Նման դասավանդման արդյունքում աշակերտի մոտ կարճաժամկետ հիշողությունից անցում է կատարվում

երկարաժամկետ հիշողությանը: Նման արդյունքին կարելի է հանգել միայն նոր մեթոդներ կիրառելու դեպքում: Այդ դիդակտիկ նյութերն,գծապատկերները,նկարները,խաղային մեթոդներն են ստիպում աշակերտին նյութը հեշտությամբ և հաճելի յուրացնել և երկար հիշել:

Հետազոտության ընթացքը

Հետազոտական աշխատանքի ընթացքում կարևորել եմ և առանձնացրել արդյունավետ ուսուցման յոթ մոտեցումները,ինչպես նաև այլ մեթոդներ և հնարներ,որը կներկայացնեմ ստորև: Առաջինը դա՝

1. Մտաբերում

Վերջին տարիներին բազմաթիվ մասնագետներ նշում են,որ մտաբերումը ուսուցման առավել արդյունավետ ձևերից է: Մտաբերումը մտապահված գիտելիքի ակտիվացումն է,իմացածը դուրս բերելը:

2. Նյութի սփռում ժամանակի մեջ

ԱՄՆ-ի Հարավային Դակոտայի համալսարանի պրոֆեսրների՝Դուգ Ռոհերի և Քելլի Թայլորի անցկացրած գիտափորձից եկել են այս հետևության.Կարճ ժամանակում սովործը շատ ավելի արագ է մոռացվում,քան երկար ժամանակում սովորածը:

3. Խառը ուսուցում

Խառը ուսուցումը կապված է ժամանակի մեջ նյութի սփռման հետ: Հետազոտությունները ցույց են տվել,որ ուսուցումն առավել արդյունավետ է,երբ ուսումնական նյութը մատուցվում է խառը:

4. Մանրամասնում

Ոսուցման արդյունավետ գործիքներից մեկը մանրամասնումն է:Շատ արդյունավետ հնար է մանրամասնող հետադարձ կապը: Հաճախ հետադարձ կապ տալիս ուսուցչները միայն նշում են, թե ինչն է ճիշտ կամ սխալ,մինչդեռ կարևոր է մանրամասնել ,թե ինչու՞ է դա սխալ:

5. Օրինակներով ուսուցում

Եթե ուսուցիչը մեկի փոխարեն երկու կամ երեք օրինակ բերի,ապա նյութը հասկացող աշակերտների թիվն էապես կավելանա:

6. Պատկերի և տեքստի համադրում

Աշակերտները շատ ավելի լավ են յուրացնում այն ամենը,ինչ ուղեկցվում էպատկերներով: Դրանք կարող են լինել նկարներ, լուսանկարներ, գծանկարներ, գծապատկերներ, ինֆոգրաֆիկաներ և այլն:

7.Մետաիմացություն

Ուսուցման գործընթացում շատ մեծ դեր ունի այն հանգամանքը,թե որքանով են աշակերտները տեղյակ իրենց իմացածից ու չիմացածից:Այս երևույթը կոչվուն է մետաիմացություն: Այս դեպքում աշակերտը կարողանում է իրեն կողքից նայել և հասկանալ իր իմացածն ու չիմացածը:

Դասի սկիզբ

Յուրաքնչյուր հաղորդակցության մեջ կարևոր է սկիզբը: Հազորդակցման առաջին րոպեներին է մարդը որոշում դիմացինին լսել,թե ոչ:Այդ առումով դասի հաջող սկիզբը շատ կարևոր է : Եթե ուսուցչին հաջողվի դասի առաջին րոպեներին գրավել աշակերտների ուշադրությունը,ապա դա էապես կնպաստիդասի արդյունավետ ընթացքին: Ներկայացնենք դասը սկսելու մի քանի հնարներ:

1. Խորհրդավորություն
2. Գուշակություն
3. Զրմանք,անսպասելիություն
4. Մեջբերումներ
5. Գիտեմ,ուզում եմ իմանալ,սովորեցի
6. Մտագրոհ
7. Համգործակցություն,հակամարտություն,համակեցություն

Այս մեթոդներից իմ առաջին դասի ընթացքում կիրառեցի մտագրոհ հնարը: Թեման էր. Ազատագրական շարժման հնդկահայ կենտրոն: Մտագրոհ վարժությամբ փորձեցի անդրադարձ կատարել և վերհիշել <<Ի՞նչ է գաղթօջախը,ի՞նպես է այն ձևավորվում>> և <<Ո՞րն է համարվում գաղթօջախ>> մտքերի շուրջ: Այնուհետև կարճ դասախոսության միջոցով ներկայացրեցի նոր նյութը:

Նոր նյութի բացատրության ժամանակ պետք է հաշվի առնել այն հանգամանքը,որ աշակերտը միանգամից չի կարող շատ բան սովորել:Հետևաբար՝նոր նյութը բացատրելիս ուսուցիչը պետք է ուշադիր լինի,որպեսզի չգերազանցի այդ ծավալը: Կարևոր փաստերից է նաև երկար և կարճ նախադասությունների օգտագործումը: Օրինակ ՝լավ կլինի երկար նախադասությունից հետո օգտագործել կարճ նախատասություն:Հետո միջին չափի նախադասություն,որպեսզի դասի նյութը աշկերտի մոտ պարզ և հասկանալի լինի:

Այնուհետև ստեղցեցի 4-5 հոգուց բաղկացած խմբեր: Քանի որ դասարանում աշակերտների թիվը քիչ է ,ձևավորվեց երկու խումբ: Խմբերին հանձնարարվում է ծանոթանալ տեքստին: Մի խումբը ստանում է հետազոտական կենտրոն անվանումը, մյուսը բացահայտողների կենտրոն: Կենտրոններ ձևավորելուց հետո յուրաքանչյուր խումբ սկսում է աշխատել հանձնարարված թեմայի շուրջ:Հետազոտական կենտրոնը, հետազոտում և ուսումնասիրում է Հովսեփ Էմինի անցած ուղին,իսկ բացահայտողների կենտրոնը փորձելու է բացահայտել հնդկահայ ազատագրական կենտրոնի դրական գործունեությունը:

Հետազոտողների կենտրոն

Այս կենտրոնում աշխատողները ընթերցում են տեքստը նօգտվելով այդ պահին ձեռքի տակ եղած այլ աղբյուրներից՝համացանց,գրականություն,փորձում են լրացուցիչ հետաքրքիր նյութեր հայթաթելտեքստի վերաբերյալ:

Բացահայտողների կենտրոն

Այս կենտրոնում աշխատողները ընթերցում են տեքստը,կատարում նշումներ,վեր հանում վերջինիս հիմնական միտքը,ենթատեքստը և ներկայացնում ընկերներին:

Հանձնարարված նյութերին ծանոթանալուց հետո,խմբերն անցնում են աշխատանքի: Հետազոտական խումբը գրատախտակին գծում և նշում է Հ.Էմինի անցաց ճանապարհը. Խմբի մյուս աշակերտը քարտեզի վրա փակցնում է գունավոր կպչուկներ տվյալ երկրների,քաղաքների վրա,որտեղ եղել է Էմինը:

Բացահայտողների խումբն էլ A4 ֆորմատի թղթի վրա և ներկայացնում՝հանդկահայ ազատագրական կենտրոնի դրական գործունեությունը.

. տպարանի հիմնում

. հայ երիտասարդների մոտ ազգային ոգու,հայրենասիրության ձևավորում և այլն...

Այս բոլոր առաջադրանքները կատարելուց հետո , մի քանի հարցերի միջոցով ամրապնդեցինք դասը և առավել ակտիվներին գնահատեցի:Ռոստամին գնահատեցի 5 քարտեզի վրա աշխատելու և ակտիվություն ցուցաբերելու համար: Մյուս խնդրահարույց աշակերտները պասիվ էին այս դասին: Այս ամենը կարող են փաստել իմ գործընկերները. /Տես հավելված բաժնում/:

Վերջում. Տնային հանձնարարություն.Պատասխանել դասի հարցերին.Գրել նոր հասկացությունների բացատրությունը.

Հաջորդ հետազոտական դասընթացների ժամանակ,խմբային աշխատանքները,նոր մեթոդները և հնարները մի փոքր ակտիվացրեցին Լուսինեին,Սամվելին և Կարենին:

Վերջին հետազոտական դասի ընթացքում կիրառեցի,ինձ համար նոր բացահայտված մի հնար,սովորածը պարզելու հնարը՝լուսակիր մեթոդի միջոցով: Այս մեթոդը բավականի հետաքրքիր և արդյունավետ էր.

Լուսակի մեթոդ.

Ժամանակի սղության պատճառով շատ հաճախ ուսուցիչներս դասպրոցեսում տված հարցերին մեկ-երկու աշակերտից պատասխան ստանալուց հետո առաջ ենք անցնում: Այս մոտեցումն ուսուցչին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմելու,թե ինչ չափով է տվյալ թեման յուրացրել դասարանի բոլոր աշակերտները: Նման իրավիճակում օգտակար է լուսակիր հնարի կիրառումը: Թեման ավարտելուց հետո ուսուցիչը դասարանին հարցնում է թեմայի յուրացման մասին:Յուրաքնչյուր աշակերտ բարձրացնում էիրմոտ գտնվող կանաչ,դեղին, կարմիր թղթերից մեկը: Եթե աշակերտը բարձրացնում է կանաչ թերթիկը,նշանակում է ամբողջությամբ յուրացրել է տվյալ թեման:

Եթե բարձրացնում է դեղին թերթիկը,նշանակում է մասնակի է յուրացրել թեման:Իսկ կարմիր թերթիկ բարձրացնում են այն աշակերտները,ովքեր չեն յուրացրել թեման:Եթե կարմիր և դեղին թերթիկներ բարձրացնող աշակերտների թիվը շատ մեծ է,ապա նախընտրելի է,որ ուսուցիչը նորից անդրադառնա թեմային:Իսկ եթե թիվը մեծ չէ,ապա

կանաչ գույն բաձրացրած աշակերտներին կարելի է հանձնարարել աջակցել իրենց դասընկերներին:

ԳՆԱՀԱՏՈՒՄ



Ամփոփում

Այս հետազոտական աշխատանքը իրականացնելիս եկա այն եզրակացության,որ տարբերակված ուսուցումը ամենաարդյունավետ ռազմավարությունն է՝կրթության որակի խթանման համար: Եթե յուրաքանչյուր ուսուցիչ կիրառի տարբերակված ուսուցման մոդելը,ապա կհասնի իր նպատակին:

Հետազոտական աշխատանք իրականացնելիս դիտարկումներ եմ կատարել նաև 9-րդ և 12-րդ դասարաններում,որտեղ ևս առկա է նման խնդիրներ: Գործընկերներիս հետ Հարցումների, քննարկումների,վերլուծությունների արդյունքում եկանք այն կարծիքի, որ տարբերակված ուսուցումը ունի իր մեծ,դրական առավելությունը կրթական որակի բարելավման գործում: Դասալսող գործընկերներս էլ դրական գնահատեցին դասարանում անցկացվող հոտազոտական աշխատանքս:/Տես հավելված բաժնում/:

Տարբերակված ուսուցումը իր մի շարք դրական կողմորից զատ ունի նաև բացասական կողմեր:

Դրական կողմերն են՝

1. Չափազանց արդյունավետ է օժտված և հատուկ կարիք ունեցող սովորողների համար:
2. Առաջադրանքների ընտրության հնարավորությունը սովորողին դարձնում է ավելի պատասխանատու սեփական ուսման հանդեպ.
3. Ուսման մեջ ներգրավվածությունը աշակերտի մոտ ձևավորում է ձգտում, ինքնուրույնություն և ինքնավստահություն.

Բացասական կողմն այն է,որ՝

1. Տարբերակված ուսուցումը պահանջում է ավելի շատ ժամանակ դասի պլանավորման համար.

2. Այն կարող է պահանջել ավելի շատ ռեսուրսներ և դպրոցի, և դպրոցականների շրջանում:

Այս հետազոտական աշխատանքս կարող եմ գնահատել դրական,քանի որ մասնակիորեն կարողացա հասնել՝ նախաբանում,հետազոտական համատեքստում վեր հանված խնդրի լուծմանը:

Այս աշխատանքի ընթացքում եկա այն եզրահանգման, որ նման խնդիրը ամբողջությամբ հաղթահարելու,վերջնաարդյունքը տեսնելու և աշակերտների մոտ մեծ, դրական առաջընթաց ունենալու համար, անհրաժեշտ է երկարաժամկետ հետազոտության ընթացք:

Բովանդակություն

1. Նախաբան էջ2
2. Հետազոտական համատեքստ էջ4
3. Գործնական համատեքստ էջ 6
4. Հետազոտական ընթացք էջ 11
5. Ամփոփում էջ 17

Գրականություն

1. Ս.Խաչատրյան - Ուսուցման արդյունավետ հնարներ. Եր. 2020թ. Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ.
2. А.А.Балаев - Активныеметодыобучения .
3. М.М.Анцибор - Активныеформыиметодыобучения.
4. Յու.Կ.Բաբանսկի -Մանկավարժություն. Եր.1986թ.
5. Ժամանակակիցմանկավարժականմոտեցումներըգործողության մեջ. - Եր.2005թ.

Հավելվածներ

1. Դասի պլան էջ 20
2. Ձևավորող դասալսման ձևաթուղթ էջ 24
3. Ինքնաանդրադարձ էջ 30
4. Հարցաթերթիկ.Խմբային աշատանք. Էջ 32

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Մ.ԳՈՐԿՈՒ ԱՆՎԱՆ N5 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ ՏՀՏ օգտագործումը որպես ուսուցման արդյունավետ հնար՝ ուսումնական գործընթացում սովորողների մոտիվացիան և ներգրավվածությունը բարձրացնելու նպատակով

Մասնակից՝ Ներսեսյան Վարսենիկ

Դպրոց՝ Վաղարշապատի Մ. Խորանեցու անվան թիվ 10 ավագ դպրոց

Վերապատրաստող՝ Կարինե Ավետիսյան

Վաղարշապատ 2021թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ…….
3

ՀԵՏԱՋՈՏԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ ՏՀՏ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀՆԱՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄՈՏԻՎԱՑԻԱՆ ԵՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ .....
4

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ…….

12

ԱՄՓՈՓՈՒՄ .....
18

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....
19

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ……
20

ՆԱԽԱԲԱՆ

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներն (ՏՀՏ) արագորեն մուտք են գործում կրթական գործունեության տարբեր ոլորտներ: Դրան նպաստում են ինչպես արտաքին գործոնները, որոնք պայմանավորված են հասարակության համատարած տեղեկութացմամբ և համապատասխան մասնագետների նախապատրաստման անհրաժեշտությամբ, այնպես էլ ներքին գործոններով, որոնք կապված են կրթական համակարգերում ժամանակակից համակարգչային տեխնիկայի և ծրագրային ապահովման տարածման, կրթության տեղեկութացման պետական և միջպետական ծրագրերի ընդունման, մանկավարժների շրջանում տեղեկութացման անհրաժեշտ փորձի ի հայտ գալուն:

Թեմայի արդիականությունը. Ընտրված թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ այս թեմայով մենք ի ցույց ենք դնում կրթության մեջ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը: ՏՀՏ կիրառումը ստեղծում է նպաստավոր պայմաններ սովորողի անձի ձևավորման համար և բավարարում ժամանակակից հասարակության պահանջները: Այստեղ նկատի ունենք տեղեկատվության աղբյուրի գրագետ օգտագործումը, նրա հուսալիության գնահատումը, նոր տեղեկատվության համեմատումը նախապես ստացված գիտելիքների հետ, տեղեկատվական գործընթացի ճիշտ կազմակերպման կարողություն

Հետազոտման նպատակը, խնդիրները և մեթոդները. աշխատանքի հիմնական նպատակն է ներկայացնել ՏՀՏ կիրառումը դպրոցական դաընթացի ժամանակ, դրանց կարևորությունը սովորողների ուսումնական գործաընթացում:

Խնդիրները. աշխատանքի նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

- Ներկայացնել ՏՀՏ դերը ուսուցման գործընթացում ○ Ներկացնել փոփոխությունները որոնք կատարվում են ՏՀՏ կիրառելիս ○ Ցույց տալ ՏՀՏ դերը դպրոցականների ուսուցման գործում, դերը և նշանակությունը

Հետազոտության գիտական նորույթը. Սույն աշխատանքի գիտական նորույթն է հանդիսանում այն, որ մենք ներկայացրել ենք ՏՀՏ կիրառումը որես սովորողների մոտիվացման, և ուսուցման արդյունավետությունը զարգացնելու միջոց

ՏՀՏ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀՆԱՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄՈՏԻՎԱՑԻԱՆ ԵՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

Հայտնի է, որ երեխաները ավելի արդյունավետ են սովորում, եթե հնարավորություն են ունենում ընտրություն կատարելու, ակտիվ համագործակցելու միմյանց հետ, շարժվելու իրենց հետաքրքրություններով: Օգտագործելով դասավանդման տարբեր ձևաչափեր՝ մենք ցանկանում ենք երեխաների մեջ սերմանել սեր, ձգտում դեպի գիտելիքը, դաստիարակել ստեղծագործ և սոցիալապես պատասխանատու անհատներ: Կրթական բարեփոխումները շատ ավելի հաջող կստացվեն, եթե յուրաքանչյուր մանկավարժ իր ամենօրյա դասը հարստացնի նորարարություններով՝ ներդնելով սեփական փորձն ու գիտելիքները [1]: Մենք՝ մանկավարժներս, հաճախ սովորեցնում ենք այնպես, ինչպես սովորեցրել են մեզ՝ հաճախ հիմնվելով դասավանդման արդեն ընդունված ավանդական մեթոդների վրա՝ անտեսելով ժամանակակից ուսումնասիրություններն ու տեխնոլոգիաները, որոնք թույլ են տալիս աշակերտներին լիարժեք ներգրավել դասի մեջ: Մարդկության զարգացման պատմության մեջ երբևէ չեն եղել փոփոխությունների ավելի հզոր ուժ և խթան, քան տեխնոլոգիաները: 21-րդ դարում տեխնոլոգիաները փոխել են ամեն ինչ՝ մարդկանց ապրելակերպը, սնվելու ձևը, տեղափոխվելու միջոցները, հաղորդակցման ձևը և անգամ մտածելակերպը:

Չպետք է մոռանալ Սուխոմլինսկու խոսքերը. «Կա հաջողություն՝ կա սովորելու ցանկություն» [2] որը շատ ավելի տեղին է տարրական դպրոցում, որտեղ երեխան չի կարողանում հաղթահարել դժվարությունները, և ամեն մի ձախողում նրա համար վերածվում է անձնական ողբերգության: Երեխաներին կրթելիս պետք է հաշվի առնել, որ նոր սերունդը, որը մեծացել է բջջային հեռախոսների և համակարգիչների հետ շփվելով, պահանջում է մշտական տեսողական խթան, արագ և ճկուն ուսումնական գործընթաց:

[1] «ՄԽԻԹԱՐ ԳՈՇ» գիտամեթոդական հոդվածներ, 2020, №2
[2] В.А. Сухомлинский «Сердце отдаю детям»-2016, ст.145

Ներկայիս դպրոցականը սովոր է համակարգչային խաղերի և հեռուստատեսային գունեղ տեսահոլովակների: Երեխաների մի քանի սերունդ արդեն մեծացել է տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (այսուհետև՝ ՏՀՏ) միջավայրում և դրանց ակտիվ կիրառմամբ:

Կրթության արդիականացման ռազմավարությունը շեշտում է բոլոր մակարդակներում ուսուցման մեթոդներն ու տեխնոլոգիաները փոխելու, նրանց քաշը մեծացնելու անհրաժեշտությունը, որոնք կազմում են տեղեկատվության վերլուծության, ինքնուսուցման, ուսանողների անկախ աշխատանքը խթանելու գործնական հմտություններ և ձևավորում պատասխանատու ընտրության և պատասխանատու գործունեության փորձ: Անհրաժեշտություն կար ուսանողակենտրոն կրթություն, որը կառուցվել է ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների հիման վրա [3] : Կրթության մասնագետներն ու հետազոտողները տարբեր երկրներում ընդունում են, որ 21-րդ դարի երեխաների մոտ զարգացել է ներըմբռնում՝ ինտուիցիա, և որ նրանց ճանաչողական ու մտավոր պրոցեսները տարբերվում են նախորդ սերունդներինից: Ներկայիս երեխաներին հիրավի համարում են «թվային բնիկներ», քանի որ ՏՀՏ-ի օգտագործումը ներդաշնակ և «օրգանական» է նրանց մտածողությանը, և նրանք շատ ավելի արդյունավետ են օգտագործում ՏՀՏ-ը՝ որպես ապրելու, սովորելու ու շփվելու միջոց:

ՏՀՏ-ի սրընթաց զարգացումն արդի ժամանակաշրջանում բնականաբար նոր պահանջներ է դրել նաև կրթական համակարգերի առջև ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում: ՏՀՏ-ը դարձել են որակյալ և արդիական կրթության հրամայական ու ուսուցման նորարարական գործիք: Ժամանակակից կրթական համակարգերում դրանք անչափ գործունակ միջոց են, որոնք խթանում են ստեղծագործ մտածողությունը, օգնում են սովորողներին ակտիվորեն ընդգրկվել ուսումնական գործընթացում, խորացնել ուսուցանվող նյութի իմացությունը, հասնել դպրոցական առարկաների առավել ընդգրկուն ընկալման, բարձրացնել առաջադիմությունը և հետաքրքրվածությունը, ստանալ անձնական

[3] https://monster-evo.ru/hy/belinskijj/chto-takoe-ikt-v-obrazovanii-vidy-sovremennyh-informacionnokommunikativnyh-tehnologii-i-trebovaniya/

պահանջմունքներին ավելի համապատասխան գիտելիքներ, ինչպես նաև կիրառել ժամանակակից ուսուցման, գնահատման ու ինքնագնահատման մեթոդներ: Դրանք նպաստում են ուսուցչների աշխատանքի որակի բարձրացմանը, նրանց մասնագիտական գիտելիքների ու ՏՀՏ հմտությունների զարգացմանը: ՏՀՏ-ը հնարավորություն են ընձեռում մուտք գործել մի հրապուրիչ ուսուցողական միջավայր, որտեղ հասանելի են գրեթե անսահմանափակ քանակությամբ բազմազան նյութեր ու տեղեկություններ, և ամենակարևորը՝ գիտելիքի ձեռքբերման նպատակով ընդլայնել ուսումնական ծրագրերի ու դասագրքերի շրջանակները, փոփոխել հին մոտեցումները, առաջադրել և իրագործել բոլորովին այլ՝ որակապես նոր խնդիրներ: Ի վերջո ՏՀՏ-ը թույլ են տալիս ուսուցչին ու աշակերտին հաղորդակցվել միևնույն միջավայրում և նույն «լեզվով»: «ՏՀՏ-ն ունեն նորարարության զարգացումն արագացնելու, սովորողների գիտելիքները հարստացնելու ու խորացնելու, հմտությունները զարգացնելու, ինչպես նաև նրանց մոտիվացիան բարձրացնելու և ուսման մեջ արդյունավետ ներգրավելու ներուժ: Դրանք բարելավում և կատարելագործում են ուսումնական գործընթացը և օգնում դպրոցներին վերափոխել»:[4] Բացի այդ, գիտական բազմաթիվ հետազոտություններ ապացուցել են, որ ՏՀՏ-ը ապահովում են կրթության մեջ հավասար և համընդհանուր ընդգրկում, բարձրացնում կրթական ծառայությունների մատուցման ճկունությունը՝ ապահովելով սովորողների ներառումն անկախ ժամանակային և աշխարհագրական խոչընդոտներից: Միևնույն ժամանակ ակնհայտ է, որ հասարակության տեխնոլոգիապես ամենից քիչ զարգացած ոլորտներից մեկը Հայաստանում մնում է կրթությունը: Այս իրավիճակի արդյունքն աճող խզումն է տնտեսության ու աշխատաշուկայի պահանջների և կրթության համակարգի ներկայիս իրողության միջև: Ի թիվս այլնի՝ այդ խզումը տեղի է ունենում այն պատճառով, որ ուսումնական ծրագրերը, դրանց կառուցվածքը, ուսուցման մեթոդներն ու միջոցները հնանում են շատ ավելի արագ, քան զարգանում են տեխնոլոգիաները: Դպրոցն իր ավանդական միջավայրով, տպագիր գրքերը, տետրերը, թուղթն ու գրիչն այլևս չեն համապատասխանում երեխաների իրական հետաքրքրություններին ու

[4]Davis, N.E., & Tearle, P. (Eds.). (1999). A core curriculum for telematics in teacher training. Available at: www.ex.ac.uk/telematics.T3/corecurr/tteach98.htm

ձգտումներին՝ թողնելով բացեր, որոնք լրացվում են համակարգչային խաղերով և ոչ թե կրթական համակարգչային ծրագրերով:

ՏՀՏ-ների օգտագործման հիմնական առանձնահատկությունները, որոնք կօգնեն ուսուցչին դասի ժամանակ ստեղծել բարենպաստ պայմաններ և հասնել նյութի յուրացման բարձր մակարդակի.

- դիդակտիկ նյութերի ստեղծում և նախապատրաստում /առաջադրանքների տարբերակներ, աղյուսակներ, սխեմաներ, գծագրեր, ցուցապաստառներ և այլն/
- ուսումնական նյութի վերաբերյալ պրեզենտացիայի /շնորհանդես/ ստեղծում
- պատրաստի ծրագրային արտադրանքի օգտագործում
- դասին նախապատրաստվելու, արտադասարանական միջոցառումների, ինքնակրթության համար ինտերնետ ռեսուրսների փնտրում և օգտագործում
- կրթության և դաստիարակության արդյունքներին հետևելու համար մոնիթորինգի ստեղծում
- տեքստային աշխատանքների ստեղծում

ՏՀՏ-ների օգտագործմամբ ուղեկցվող դասերը իրենց պարզության, գեղեցկության և տեսանելիության շնորհիվ ուսումնական նյութի ընկալման ընթացքում առավել մեծ տպավորություն են թողնում սովորողների հոգեբանա-հուզական ֆոնի վրա: Մուլտիմեդիան նյութի և գործընթացների ներկայացումն է ոչ թե ավանդական տեքստային նկարագրությամբ, այլ ֆոտոնկարների, տեսանյութերի, գծագրերի, շարժանկարների, ձայնի օգնությամբ: Դասի անցկացումը մեդիայի շնորհիվ գրավում է կրտսեր դպրոցականներին: Այդ տիպի դասերի ընթացքում դասարանում ստեղծվում է իրական շփման իրավիճակ, որի ժամանակ երեխաները ձգտում են իրենց մտքերն արտահայտել սեփական բառերով, հաճույքով են կատարում առաջադրանքները, ուսումնական նյութի հանդեպ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում:

ՏՀՏ-ի օգտագործմամբ ցանկացած նյութի ուսուցում աշակերտներին նոր հնարավորություններ է տալիս մտածելու և մասնակցելու դասի նյութի ստեղծմանը, որն ուղեկցվում է առարկայի նկատմամբ նրանց հետաքրքրության զարգացմամբ: Նոր կրթական տեխնոլոգիաները բնորոշվում են ուսումնական նյութերի իրագործման համակարգչային հատուկ տեխնոլոգիաների կիրառմամբ, որոնցից են համակարգչային դիզայնի, հիպերտեքստի և մուլտիմեդիայի տեխնոլոգիաները: Համակարգչային դիզայնի տեխնոլոգիայի կիրառմամբ ուսումնական փաստաթղթերի նյութերը կարող են ձևավորվել որոշակի ձևաչափերով, կազմակերպվել որոշակի կառուցվածքներով և արտապատկերվել տարրերի որոշակի կազմություններով: Դրանք բավարարում են տեսային տեղեկատվության ներկայացման գեղագիտական պահանջները, դրա ընկալման առանձնահատկությունները և ապահովում փաստաթղթերի հարմար ընթերցումը և տեղեկատվության արդյունավետ ընկալումը[4]:

ՏՀՏ-ի օգտագործումը դասի տարբեր փուլերում.

- սովորողների նախապատրաստում նոր նյութի յուրացմանը
- նոր նյութի յուրացում
- նոր նյութի ամրապնդում
- դասի ամփոփում
- տնային առաջադրանք

Մեդիադասերը օգնում են լուծել հետևյալ դիդակտիկ խնդիրները.

- յուրացնել թեմայի վերաբերյալ հիմնական գիտելիքները
- համակարգել ձեռք բերած գիտելիքները
- ձևավորել ինքնակառավարման հմտություններ
- ամբողջությամբ ձևավորել սովորելու շարժառիթ

[4] Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումն ուսուցման գործընթացում, Դասավանդման մեթոդիկա 2013 № 1, էջ 140:

- ուսումնամեթոդական օգնություն ցուցաբերել սովորողներին՝ ուսումնական նյութի ստեղծման ինքնուրույն աշխատանքում

Այս տեխնոլոգիան կարելի է դիտել որպես ուսուցման բացատրական-զննական մեթոդ, որի հիմնական նպատակը ուսումնական նյութի հաղորդման ճանապարհով սովորողների՝ տեղեկատվության յուրացման կազմակերպումն է և դրա հաջող ընկալման ապահովումը, որը ընդլայնվում է, երբ զուգահեռ միանում է նաև տեսողական հիշողությունը:

Կրտսեր դպրոցում մեդիատեխնոլոգիաների օգտագործումը դասի ընթացքում սկզբունքորեն չի փոխում դասի կառուցվածքը: Նրա մեջ նախկինի պես պահպանվում են բոլոր հիմնական փուլերը, փոխվում են միայն դրանց ժամանակավոր բնութագրերը: Մեդիաներկայացման /պրեզենտացիա/ կառուցվածքային դասավորությունը զարգացնում է համակարգված, վերլուծական մտածողությունը: Բացի դրանից, պրեզենտացիայի օգնությամբ կարելի է օգտագործել ճանաչողական գործունեության կազմակերպման զանազան ձևեր՝ ֆրոնտալ, խմբային և անհատական: Մուլտիմեդիա շնորհանդեսը, այդպիսով, ավելի օպտիմալ և արդյունավետ է համապատասխանում դասի երեք միասնական դիդակտիկ նպատակներին.

- ✓ կրթական առումով՝ սովորողների կողմից ուսումնական նյութի ընկալումը, ուսումնասիրության օբյեկտների կապերի և հարաբերությունների ըմբռնումը
- ✓ զարգացման առումով՝ սովորողների ճանաչողական հետաքրքրությունների զարգացումը, ընդհանրացնելու, վերլուծելու, համեմատելու հմտությունները, սովորողների ստեղծագործական գործունեության ինտենսիվացումը
- ✓ դաստիարակչական առումով՝ գիտական աշխարհայացքի ձևավորում, ինքնուրույն և խմբային աշխատանքների հստակ կազմակերպման հմտություններ, ընկերության, փոխադարձ օգնության զգացումների դաստիարակում

Մեդիատեխնոլոգիաները կարող են օգտագործվել՝

1. Թեմայի նշման համար

- դասի թեման ներկայացված է սլայդների միջոցով, որտեղ համառոտ շարադրված են ուսումնասիրվող հարցի հիմնական կետերը:

2. Որպես ուսուցչի բացատրությունների ուղեկից

- կարող են օգտագործվել կոնկրետ դասերի համար ստեղծված մեդիա կոնսպեկտ-շնորհանդեսներ, ստեղծելով համառոտ տեքստ, հիմնական բանաձևեր, գծագրեր, նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ:

3. Որպես տեղեկատու-ուսուցողական ձեռնարկ

- ուսուցման մեջ այսօր հատուկ շեշտադրում է դրվում սովորողի ինքնուրույն գործունեության վրա: Ուսուցիչն այս դեպքում հանդես է գալիս որպես ուսուցման պրոցեսի կազմակերպիչ, սովորողների ինքնուրույն գործունեության ղեկավար, ով անհրաժեշտ օգնություն և աջակցություն է ցույց տալիս:

4. գիտելիքների ստուգման համար

- համակարգչային թեսթավորման օգտագործումը բարձրացնում է ուսումնական պրոցեսի արդյունավետությունը, ակտիվացնում է դպրոցականների ճանաչողական գործունեությունը: Թեսթերը կարող են լինել հարցաշարերի տարբերակով, որոնց պատասխանները սովորողը գրառում է տետրում կամ հատուկ բլանկի վրա:

Կարելի է տարբերակել այս տեխնոլոգիայի հետևյալ առանձնահատկությունները.

1. Կավիճով գրված պատկերի որակը չի կարող համեմատվել էկրանի վրայի կոկիկ, պայծառ, հստակ և գունավոր պատկերի հետ

2.գրատախտակի և կավճի օգնությամբ դժվար է և անհարմար տարբեր գործիքների օգնությամբ բացատրել աշխատանքը

3.շնորհանդեսի ներկայացման ժամանակ , նույնիսկ պրոյեկտորի օգտագործման դեպքում, սովորողի աշխատանքային տարածքը բավականին լավ լուսավորված է

4. տեսանելի մակարդակի բարձրացում դասի ժամանակ

5.դասի արդյունավետության բարձրացում

6.միջառարկայական կապերի հաստատում

7. Ստեղծող և ՏՀՏ օգտագործող դասավանդողը ստիպված է մեծ ուշադրություն հատկացնել ուսումնական նյութի մատուցման տրամաբանությանը, որը դրական է անդրադառնում սովորողների գիտելիքների մակարդակի վրա:

8. փոխվում է վերաբերմունքը ԱՀ-ի (անհատական համակարգիչ) նկատմամբ: Երեխաները սկսում են ընկալել այն որպես ունիվերսալ գործիք մարդկային գործունեության ցանկացած բնագավառի աշխատանքի համար, այլ ոչ թե որպես գործիք՝ խաղալու համար:

Հանրակրթության նպատակը ոչ միայն գիտելիք փոխանցելն, այլ նաև գիտակից քաղաքացի ձևավորելն է, ով կկարողանա կողմնորոշվել ժամանակակից աշխարհում: Զարգացած երկրները վաղուց են համոզվել, որ առանց կրթության մեջ հաղորդակցական տեխնոլոգիանրի կիրառության այսօր գրեթե անհնար է հասնել այդ նպատակներին[5][6]: Այսպիսով անվիճարկելի այն փաստը, որ ժամանակին համընթաց կարևոր է ՏՀՏ կիրառումը դպրոցական դասընթացների ժամանակ: ՏՀՏ միջոցները օգնում են սովորողներին ավելի արդյունավետ կերպով յուրացնել թեման: համակարգչային տեխնոլոգիաները կարելի է համարել, որ գիտելիքների փոխանցման նոր եղանակը, որը բավարարում է երեխայի ուսման եւ զարգացման որակապես նոր բովանդակությունը: Այս մեթոդը երեխային թույլ է տալիս սովորել, գտնել տեղեկատվության աղբյուրներ, նոր գիտելիքներ ձեռք բերելու հարցում բերում է անկախություն և պատասխանատվություն, զարգացնում է մտավոր գործունեության կարգապահությունը[7]:

[5] http://www.osf.am/wp-content/uploads/2017/11/%D5%8F%D5%80%D5%8F-%D5%AF%D5%AB%D6%80%D5%A1%D5%BC%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A

[6] -%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%A4%D5%BA%D6%80%D5%B8%D6%81%D5%B6%D5%A5%D6%80%D5%B8%D6%82%D5%B4%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%BC%D5%B8%D5%BF%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80.pdf

[7] https://srcaltufevo.ru/hy/ispolzovanie-ikt-v-obrazovanii-informacionno-kommunikativnye-tehnologii-v.html

Դասի պլան N1

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ՝ Վանի թագավորությունը Սարդուրի 2-րդի և նրա հաջորդների օրոք

ԱՌԱՐԿԱՆ՝ Հայոց պատմություն

ԴԱՍԱՐԱՆ՝ 10-րդ ընդ. հոսք

ԴԱՍԻ ՏԻՊԸ՝ Խառը համակցված

ՄԵԹՈԴՆԵՐ և ՀՆԱՐՆԵՐ ՝ Մտագրոհ,M_աձև և T-աձև աղյուսակ,հարցադրումներ,սահիկաշար

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐ՝ դասագիրք,ատլաս համակարգիչ, էլեկտրոնային գրատախտակ

ԴԱՍԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 45րոպե

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	ա) ակադեմիական՝Իման Վանի թագավորության արքաների անունները և նրանց գահակալման ժամանակահատվածները ,կարևոր ձեռնարկեւմները,տեղեկություններ հաղորդի ասուրա-ուրարտական բախումների մասին,բնութագրի Վանի թագավորությունը որպես համահայկական պետություն : բ) սոցիալական՝Ներկայացնի Վանի թագավորության կազմավորման ևհզորացման պայմանները Առաջավոր Ասիայում,Վանի թագավորության թուլացմա և անկման պատճառները կարողանա համեմատել և համադրել Մենուա,Արգիշտի 1,և Սարդուրի 2 արքաների ներքին և արտաքին ձեռնարկումները,գնահատի նրանց դերը Վանի թագավորության հզորացման գործում, վերլուծի Վանի թագավորության և Ասորեստանի հարաբերությունները և գնահատի դրանց ազդեցությունը Հայոց պետականության զարգացման վրա սեձական տեսանկյունից գնահատի և արժևորի Վանի թագավորության դերը Հայոց պատմության մեջ:

ԴԱՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ	Ցույց տալ Վանի թագավորությունը որպես աշխարհակալություն,միջազգային դերը և նրա անկման ներքին և արտաքին պատճառները:
ԴԱՍԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	Աշակերտները պետք է կարողանան ներկայացնել Վանի թագավորության արքաներին ժամանակագրական հաջորդականությամբ նրանց ներքին և արտաքին ձեռնարկումները ,վեր հանեն Վանի թագավորության անկման պատճառները,գնահատեն Վանի համահայկական թագավորության տեղն ու դերը հայոց պատմության մեջ:
Դասը իրականացվում է ԽԻԿ համակարգով	

Կազմակերպական մաս 3 րոպե	Դասի ընթացքը -աշակերտների բացակայության հաշվառում- դասարանի ավագը ներկայացնում է բացակա աշակերտներին -դասի նպատակների ներկայացում – ուսուցիչը ներկայացնում է դասի նպատակներն ու խնդիրները
Խթանում 10 րոպե	Հարց – պատասխան: 1) Ովքեր էին Սարդուրի 2-րդի նախորդները 2)Ով էր 4 ծովերի տիրակալը 3)Ինչ հետևանք ունեցավ ասուրա-ուրարտական բախումները 4)Ռուսա 2-րդը ինչպես կարգավորեց հարաբերությունները կիմմերների հետ 5)Ինչու անկում ապրեց Վանի թագավորությունը
Իմաստի ընկալում Կշռադատում 15 րոպե	Տ-աձև աղյուսակով ցույց տալ արքաների իրենց ժամանակագրական հաջորդականությամբ Մ-աձև աղյուսակով համեմատել Մենուա ,Արգիշտի,և Սարդուրի 2-րդի գործունեությունը Վեր հանեն թագավորության անկման պատճառները և գնահատեն դերը հայոց պատմության մեջ - քննարկվում են դասի վերաբերյալ անհասկանալի հարցերը
Նոր դասի հաղորդում 15 րոպե	-Սահիկաշարի կիրառություն

	-Ցույց տալ տնտեսության և առևտրի,քաղաքաշինության համար նպաստավոր պայմանները՝աշխարհագրական դիրքը,պետական կառավարման համակարգը՝գործակալությունները -Բանակի կառուցվածքը
Գնահատում Տնային աշխատանքի հանձնարարում 2 րոպե	Գնահատում 2աշակերտ 9,2աշակերտ 8 և 1 աշակերտ 6
	Տնային աշխատանքի հանձնարարում Վանի թագավորության տնտեսությունը,պետական կարգն ու բանակը ներկայացնել աղյուսակի տեսքով:Ցույց տալ տնտեսության ճյուղերը,քաղաքները,կառավարման համակարգը և բանակի կառուցվածքը:

Ի՞նչն այս դասին լավ ստացվեց:

Քանի որ դասը նախապես պլանավորված էր այն անցավ արդյունավետ.օգտագործեցի նախապես ընտրված մեթոդները `M –աձ և և T-աձև աղյուսակները,խառը հրցադրումների մեթոդը ,տեսանյութերի կիրառումը նպաստեց աշակերտների ուսումնական պրոցեսին մոտիվացնելուն:

Ի՞նչն անակնկալի բերեց ինձ:

Դասարանում նախապես ընտրելով թիրախային խումբ՝5 հոգուց բաղկացած,համեմատաբար թույլ սովորող ,հանձնարարվեց տեղում դասի վերաբերյալ կատարել 3,2,1 վարժությունը:ԵՎ այս խումբը ներկայացրեց Մուծածիրի առեղծվածը

Ի՞նչը պլանավորվածի պես չստացվեց:

Ժամանակի ոչ բավարարլինելը:

Ի՞նչը կփոխեի:

Հարցադրումները ավելի կպարզեցնեի:

Ի՞նչ ստացան աշակերտները այս դասից:

Փաստագրված տեղեկություններ ստացան այս դասի վերաբերյալ:

Հասա՞ արդյոք վերջնարդյունքներին: Ինչպե՞ս դա իմացա:

Այո հասա դասի վերջնարդյունքին:դասի ավարտին աշակերտները հիմնականում կարողացան գնահատել և արժևորել դասը և մի քանի աշակերտներ առաջ քաշեցին սեփական դասի վերաբերյալ:

Ի՞նչն էր այսօր իմ ուշադրության կենտրոնում: Դա աշխատե՞ց:

.Հետաքրքրվածությունը

.Ներգրավվածությունը

.Մոտիվացիան

Հիմնականում աշակերտները ներգրավված էին դասապրոցեսին,հետաքրքրված էին դասանյութով,իսկ ՏՀՏ-ի օգտագործումը մոտիվացնում էր նրանց :

Ամփոփում

1. Տեղեկատվական տեխնոլոգիաները ոչ միայն հնարավորություններ են բացում կրթական գործունեության փոփոխականության, դրա անհատականացման և տարբերակման համար, այլ նաև թույլ են տալիս կազմակերպել ուսման բոլոր առարկաների փոխազդեցությունը նոր ձևով, կառուցել կրթական համակարգ, որում սովորողը ակտիվ և հավասար մասնակից է լինելու կրթական գործունեության:
2. Տեղեկատվական տեխնոլոգիաները զգալիորեն ընդլայնում են կրթական տեղեկատվության ներկայացման հնարվորությունները, սովորողներին ներգրավում են ուսումնական գործընթացում՝ նպաստելով նրանց կարողությունների ամենալայն բացահայտմանը, խթանելով մտավոր գործունեությունը:
3. ՏՀՏ-ների կիրառումը բարձրացնում է հետաքրքրությունը դասի նկատմամբ, ակտիվացնում սովորողների իմացական գործունեությունը, զարգացնում է նրանց մշակութային հնարավորությունները, հնարավորություն է տալիս կազմակերպելու ինքնուրույն և խմբակային աշխատանք, դասի ժամանակ օգնում է բարելավելու սովորողների գործնական կարողությունները և հմտությունները, թույլ է տալիս որոնել, մշակել և յուրացնել տարբեր աղբյուրների,ինչպես նաև համացանցի տեղեկատվությունը:
4. ՏՀՏ միջոցների հետ աշխատանքի ընթացքում փոփոխվում է աշակերտների մտածողական գործունեության անձնական կարգավորումը. բարձրանում են անձի պաշտպանողական մեթոդների դերը, նպատակի հասանելիության սուբյեկտիվ մակարդակը, փոփոխվում են գործունեության հսկման մեթոդները, կարգավորվում են շարժառիթները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «ՄԽԻԹԱՐ ԳՈՇ» գիտամեթոդական հոդվածներ, 2020, №2
2. Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումն ուսուցման գործընթացում, Դասավանդման մեթոդիկա 2013 № 1
3. В.А. Сухомлинский «Сердце отдаю детям»-2016, ст.145
4. Davis, N.E., & Tearle, P. (Eds.). (1999). A core curriculum for telematics in teacher training. Available at: www.ex.ac.uk/telematics.T3/corecurr/tteach98.htm
5. http://www.osf.am/wp-content/uploads/2017/11/%D5%8F%D5%80%D5%8F-%D5%AF%D5%AB%D6%80%D5%A1%D5%BC%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8-%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%A4%D5%BA%D6%80%D5%B8%D6%81%D5%B6%D5%A5%D6%80%D5%B8%D6%82%D5%B4%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%BC%D5%B8%D5%BF%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80.pdf
6. https://monster-evo.ru/hy/belinskijj/chto-takoe-ikt-v-obrazovanii-vidysovremennyh-informacionno-kommunikativnyh-tehnologii-i-trebovaniya/
7. https://srcaltufevo.ru/hy/ispolzovanie-ikt-v-obrazovanii-informacionnokommunikativnye-tehnologii-v.html

Դասի պլան N1

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ՝ Վանի թագավորությունը Սարդուրի 2-րդի և նրա հաջորդների օրոք

ԱՌԱՐԿԱՆ՝ Հայոց պատմություն

ԴԱՍԱՐԱՆ՝ 10-րդ ընդ. հոսք

ԴԱՍԻ ՏԻՊԸ՝ Խառը համակցված

ՄԵԹՈԴՆԵՐ և ՀՆԱՐՆԵՐ ՝ Մտագրոհ,M_աձև և T-աձև աղյուսակ,հարցադրումներ,սահիկաշար

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐ՝ դասագիրք,ատլաս համակարգիրչ, էլեկտրոնային գրատախտակ

ԴԱՍԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 45րոպե

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	ա) ակադեմիական՝Իման Վանի թագավորության արքաների անունները և նրանց գահակալման ժամանակահատվածները ,կարևոր ձեռնարկեւմները,տեղեկություններ հաղորդի ասուրա-ուրարտական բախումների մասին,բնութագրի Վանի թագավորությունը որպես համահայկական պետություն : բ) սոցիալական՝Ներկայացնի Վանի թագավորության կազմավորման ևհզորացման պայմանները Առաջավոր Ասիայում,Վանի թագավորության թուլացմա և անկման պատճառները կարողանա համեմատել և համադրել Մենուա,Արգիշտի 1,և Սարդուրի 2 արքաների ներքին և արտաքին ձեռնարկումները,գնահատի նրանց դերը Վանի թագավորության հզորացման գործում, վերլուծի Վանի թագավորության և Ասորեստանի հարաբերությունները և գնահատի դրանց ազդեցությունը Հայոց պետականության զարգացման վրա սեձական տեսանկյունից գնահատի և արժևորի Վանի թագավորության դերը Հայոց պատմության մեջ:

ԴԱՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ	Ցույց տալ Վանի թագավորությունը որպես աշխարհակալություն,միջազգային դերը և նրա անկման ներքին և արտաքին պատճառները:
ԴԱՍԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	Աշակերտները պետք է կարողանան ներկայացնել Վանի թագավորության արքաներին ժամանակագրական հաջորդականությամբ նրանց ներքին և արտաքին ձեռնարկումները ,վեր հանեն Վանի թագավորության անկման պատճառները,գնահատեն Վանի համահայկական թագավորության տեղն ու դերը հայոց պատմության մեջ:
Դասը իրականացվում է ԽԻԿ համակարգով	

Կազմակերպական մաս 3 րոպե	Դասի ընթացքը -աշակերտների բացակայության հաշվառում- դասարանի ավագը ներկայացնում է բացակա աշակերտներին -դասի նպատակների ներկայացում – ուսուցիչը ներկայացնում է դասի նպատակներն ու խնդիրները
Խթանում 10 րոպե	Հարց – պատասխան: 1) Ովքեր էին Սարդուրի 2-րդի նախորդները 2)Ով էր 4 ծովերի տիրակալը 3)Ինչ հետևանք ունեցավ ասուրա-ուրարտական բախումները 4)Ռուսա 2-րդը ինչպես կարգավորեց հարաբերությունները կիմմերների հետ 5)Ինչու անկում ապրեց Վանի թագավորությունը
Իմաստի ընկալում Կշռադատում 15 րոպե	Տ-աձև աղյուսակով ցույց տալ արքաների իրենց ժամանակագրական հաջորդականությամբ Մ-աձև աղյուսակով համեմատել Մենուա ,Արգիշտի,և Սարդուրի 2-րդի գործունեությունը Վեր հանեն թագավորության անկման պատճառները և գնահատեն դերը հայոց պատմության մեջ - քննարկվում են դասի վերաբերյալ անհասկանալի հարցերը
Նոր դասի հաղորդում 15 րոպե	-Սահիկաշարի կիրառություն

	-Ցույց տալ տնտեսության և առևտրի,քաղաքաշինության համար նպաստավոր պայմանները՝աշխարհագրական դիրքը,պետական կառավարման համակարգը՝գործակալությունները -Բանակի կառուցվածքը
Գնահատում Տնային աշխատանքի հանձնարարում 2 րոպե	Գնահատում 2աշակերտ 9,2աշակերտ 8 և 1 աշակերտ 6
	Տնային աշխատանքի հանձնարարում Վանի թագավորության տնտեսությունը,պետական կարգն ու բանակը ներկայացնել աղյուսակի տեսքով:Ցույց տալ տնտեսության ճյուղերը,քաղաքները,կառավարման համակարգը և բանակի կառուցվածքը:

Դասի պլան N2

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ՝Վանի թագավորության տնտեսությունը և պետական կարգը

ԱՌԱՐԿԱՆ՝ Հայոց պատմություն

ԴԱՍԱՐԱՆ՝ 10-ի բնագիտական

ԴԱՍԻ ՏԻՊԸ՝ Խառը համակցված

ՄԵԹՈԴՆԵՐ և ՀՆԱՐՆԵՐ՝ Մտագրոհ,հարցադրումներ,քարտեզագրում,ՏՀՏ մեթոդներ

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐ՝ դասագիրք,համակարգիչ

ԴԱՍԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 45ր.

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	ա) ակադեմիական՝գծապատկերի միջոցով ներկայացնի Վանի թագավորության տնտեսության ճյուղերը ,պետական կարգը և բանակը բ) սոցիալական՝կարողանա բացատրի տնտեսության որ ճյուղերն էին զարգացած ՈՒրարտույում և ինչ նախադրյալներ կային .Ըստ նշանակության դասակարգել քաղաքները .Բուրգի տեսքով ցույց տա պետական կառավարման համակարգը .Գնահատի բանակի դերը,առանձնացնի արքայական գունդը և համեմատի բանակը տարածաշրջանի մարտունակ բանակների հետ
ԴԱՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ	Դիտարկել Վանի թագավորությունը որպես տարածաշրջանի զարգացած տնտեսություն,պետական կարգ և բանակ ունեցող երկիր:

ԴԱՍԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	Աշակերտները պետք է իմանան գյուղատնտեսության զարգացման մեջ ոռոգման ցանցի առկայությունը .Ստրուկների օգտագործում .Քաղաքները ըստ իրենց նշանակության և կարևորության ``առանձնացնել էրեբունին .Իմանա կառավարման ձևը,տիպը,գործակալություններն ու կատարած դերը .Վկայակոչելով Սարդուրյան տարեգրությունը ցույց տա բանակի թիվը կազմը ,ստորաբաժանումները և սպառազինությունը:
Դասը իրականացվում է ԽԻԿ համակարգով	

Կազմակերպական մաս 3 րոպե	Դասի ընթացքը -աշակերտների բացակայության հաշվառում- դասարանի ավագը ներկայացնում է բացակա աշակերտներին -դասի նպատակների ներկայացում – ուսուցիչը ներկայացնում է դասի նպատակներն ու խնդիրները
Խթանում 10 րոպե	Հարց – պատասխան: 1) Որոնք էին տնտեսության զարգացած ճյուղերը 2) Որոնք էին հայտնի քաաքաները 3)Ինչպես էր կառավարվում երկիրը 4)Ինչպիսի կազմ ուներ բանակը
Իմաստի ընկալում Կշռադատում 15 րոպե	3,2,1 մեթոդով ներկայացնել 3 կարևոր 2 հետաքրքիր փաստ և 1 հարց: Ինչն էր նորություն ինձ համար այս դասի ընթացքում -
Նոր դասի հաղորդում 15 րոպե	-Ցույց տալ ,որ Հայկական լեռնաշխարհի հարավ արևմուտքում7 –րդ դ. առաջին կեսին ձևավորված առաջին համահայկական պետությունը հանդես եկավ Վանի տարածքում և այստեղից հիմնավորել Վանի թագավորության հայկական լինելու հարցը:Ներկայացնել Պարույրին

	առաջին թագավոր և նրա հաջուդ Երվանդին որպես նոր տոհմի հիմնադիր: Աքեմենյան Պարսկաստանի և հայաստանի փոխհարաբերությունները.Տիգրան Երվանդյան Բեհիսթունյան արձանագրություն.Քսենոփոնի վկայակոչությունները հայաստանի մասին
Գնահատում և տնային աշխատանքի հանձնարարում 2 րոպե	Յաշակերտ 8 1 աշակերտ 9
	Բերել հետաքրքիր նյութեր այս ժամանակի Հայաստանի մասին

Դասի պլան N3

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ՝ Առաջին աշխարհամարտի ավարտը և հանրագումարը

ԱՌԱՐԿԱՆ՝ Համաշխարհային պատմություն

ԴԱՍԱՐԱՆ՝ 11-ի բնագիտական

ԴԱՍԻ ՏԻՊԸ՝ Խառը համակցված

ՄԵԹՈԴՆԵՐ և ՀՆԱՐՆԵՐ ՝ Քարտեզագրում,հարցադրումներ,բանավեճ T_աձև աղյուսակ,

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐ՝ դասագիրք ,քարտեզ,համակարգիչ,լրացուցիչ գրականություն

ԴԱՍԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 45ր

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	ա) ակադեմիական՝Աշակերտները պետք է իմանա 1. Աշխարհամարտում ներգրավված երկրները ,խոշոր ճակատամարտերը,ռազմական տեխնիկայի նորամուծությունները 2. ԵՎրոպայում առաջացած նոր պետությունները 3. Իմանա միջազգային հարաբերությունները առաջին աշխարհամարտում բ) սոցիալական՝Աշակերտները պետք է կարողանան ներկայացնել քաղաքական նոր քարտեզը 2. Ներկայացնի գաղութային համակարգի հետևանքները 3. Վերլուծի առաջին աշխարհամարտի պատճառները,ընթացքը և հետևանքները: 4. Գնահատի միջազգային հարաբերություններում տեղի ունեցած փոփոխությունների ընթացքը և հետևանքները,մեկնաբանի պատերազմին պատրաստվող երկրների իմպերիալիստական գաղափարաղոսությունը:

	5.Վերհանի պատերազմի հետևանքները:
ԴԱՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ	Ցույց տալ առաջին աշխարհամարտի անխուսափելիությունը,շարունակական լինելը:Պատերազմմի ընթացքը և հետևանքները:
ԴԱՍԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ	Աշակերտը պետք է իմանա պատերազմում ներգրավված հակամարտող կողմերին``եռյակ միություն և Անտանտ դաշինք: Երկրների ծավալապաշտական քաղաքականությունը,պատերազմին ներքաշվելու պատճառները: Պատերազմի ընթացքը,ավարտը և հանրագումարը: Պատերազմի արդյունքում քաղաքական քարտեզի փոփոխությունը :
Դասը իրականացվում է ԽԻԿ համակարգով	

Կազմակերպական մաս 3 րոպե	Դասի ընթացքը -աշակերտների բացակայության հաշվառում- դասարանի ավագը ներկայացնում է բացակա աշակերտներին -դասի նպատակների ներկայացում – ուսուցիչը ներկայացնում է դասի նպատակներն ու խնդիրները
Խթանում 10 րոպե	Հարց – պատասխան: 1) Որոնք էին առաջին աշխարհամարտի պատճառները: 2) Կարելի էր արդյոք կանխել պատերազմը: 3)Քաղաքական ինչ գործընթացներ էին տեղի ունենում պատերազմից առաջ ,ընթացքում և հետո
Իմաստի ընկալում Կշռադատում 15 րոպե	1.Որն էր պատերազմի կուլմինացյոն պահը 2.Ինչը ստիպեց Գերմանիային գնալ զինադադարի 3.Ինչ քաղաքական ,մարդկային ,նյութական հետևանքներ ունեցավ առջին համաշխարհային պատերազմը մարդկության պատմության մեջ

Նոր դասի հաղորդում 15 րոպե	Թեմայի ամփոփում,գործնական աշխատանքի նախապատրաստում
Գնահատում և տնային աշխատանքի հանձնարարում 2 րոպե	2աշակերտ ստացան 8 ,1 աշակերտ 6 1աշակերտ 4
	Նախապատրաստում գործնական աշխատանքին